Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

ЛЮДМИЛА ПЕТРУШЕВСКАЯ

# ЛЮБОВЬ. СЧАСТЬЕ. РЕКВИЕМ

**Рассказы**

Перевод на армянский язык - Гаянэ БАХТАМЯН

Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»
ինքնավար ոչառեւտրային կազմակերպության
աջակցությամբ, Ռուսաստան:

LUDMILA PETRUSHEVSKAYA

# LOVE. HAPPINESS. REQUIEM

**Stories**

Translations into Armenian - Gayane Bakhtamyan

Stepanakert 2016

ԼՅՈՒԴՄԻԼԱ
ՊԵՏՐՈՒՇԵՎՍԿԱՅԱ

# ՄԵՐ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՌԵՔՎԻԵՄ

**պատմվածքներ**

Թարգմանիչ՝ Գայանե ԲԱԽՏԱՄՅԱՆ

Ստեփանակերտ 2016

ՀՏԴ 821.161.1-32 Պետրուշևսկայա
ԳՄԴ 84(2Ռ)-44
Պ 500 «Գեղarm» հանդեսի մատենաշար

**Լ. Պետրուշևսկայա**
Պ 500 **Սեր. Երջանկություն. Ռեքվիեմ:** Պատմվածքներ:
Թարգմանությունները ռուսերենից՝ Գ. Բախտամյանի:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2016, 328 էջ:

Գիրքը ներառում է արդի ռուսական արձակի ճանաչված ու ամենաընթերցվող դեմքերից մեկի՝ Լյուդմիլա Պետրուշեւսկայայի պատմվածքների ընտրանին: Մարդկային հոգեբանության խորը դիտարկումներով է հեղինակը պատմում իր նախընտրած հերոսների ու նրանց միջավայրի մասին, եւ ինչի շուրջն էլ պտտվում է պատումը, նկարագրվող գրեթե բոլոր իրադարձությունները համեմվում են սիրով ու ատելությամբ, երջանկությամբ ու դժբախտությամբ, հավատարմությամբ ու դավաճանությամբ, տոկունությամբ ու անկումներով: Այնուհանդերձ, հեղինակային գլխավոր շեշտադրումներն անվրեպ ուղղվում են անձնուրաց սիրուն ու անմնացորդ նվիրումին, հոգեւոր արժեքներ, որոնց վերաբերյալ արձակագրուհու խոսքը գրավիչ ոճավորումով հասնում է ընթերցողի սրտին:

ՀՏԴ 821.161.1-32
ISBN 978-9939-1-0368-6 ԳՄԴ 84(2Ռ)-44

© Ludmilla Petrushevskaya
The publication of the book was negotiated through Banke, Goumen & Smirnova Literary Agency (www.bgs-agency.com)

© «Ոգի-Նաիրի» /թարգմանության համար, 2016/

Ես սիրում եմ քեզ

Ժամանակի ընթացքում նրա բոլոր երազանքները կարող էին իրականանալ, և նա կմիանար իր սիրած կնոջը, բայց նրա ուղին երկարեց եւ ոչ մի հանգրվանի չբերեց: Միակ բանը, որ ուղեկցում էր նրան այդ երկար ու ապարդյուն ճանապարհին, ամսագրի պատկերն էր սիրած կնոջ լուսանկարով, ընդ որում՝ միայն նրա աշխատավայրում մի քանի հոգի գիտեին, թե ով է նկարված. ոտքեր են՝ և վերջ, բավականին թմբլիկ, մերկ, բարձրակրունկ բոկոտիկներով. նա ինքն էլ անմիջապես ճանաչեց իրեն՝ իր պայուսակն ու իր շրջազգեստի փեշը: Որտեղի՞ց կարող էր նա իմանալ, որ լուսանկարում են հենց իր ներքևի կեսը. լուսանկարիչը դուրս թռավ փողոցում եւ չխկչխկացրեց մեկ-երկու անգամ, իսկ հրապարակեցին միայն շրջազգեստի փեշն ու ոտքերը: Նա, այն մարդը, ում մասին է խոսքը, պահում էր այդ լուսանկարը իր տանը, սեղանի գլխավերևում սևեռակներով ամրացված, և կինը չէր դժգոհում, չնայած խստաբարո կին էր եւ կառավարում էր ողջ տունը, անգամ մորը, ու հետո երեխաներին, էլ չեմ խոսում հեռավոր բարեկամների ու սեփական աշակերտների մասին: Սակայն, մյուս կողմից, նա բարեհոգի, առատաձեռն, աղ ու հացով տնային տնտեսուհի էր, միայն թե երեխաներին երես չէր տալիս, իսկ մայրն էլ միշտ հնազանդ էր՝ անկողնում պառկած ընթերցում էր թոռների համար, քանի դեռ կարող էր, բավականություն էր ստանում ջերմությունից, հանգստությունից, հեռուստացույցից, իսկ հետո երկար ու անտրտունջ մեռնում էր, արդեն համարյա չէր շարժվում, իսկ հետո անձայն հեռացավ:

Իսկ նա, թաղելով զոքանչին, համբերատար սպասում էր, թե երբ է մեռնելու կինը: Չգիտես ինչու, նա գիտեր, որ կինը մեռնելու է ու ազատելու իրեն, և ակտիվորեն պատրաստվում էր դրան. վարում էր առողջ, սպորտային կենսակերպ, առավոտները վազում էր, անգամ ծանրաքարերով էր պարապում, ուտում էր հատուկ կանոնակարգով և,

ընդսմին, հասցնում էր շատ աշխատել, եւ հասավ բաժնի պետի պաշտոնին, մեկնում էր արտասահման ու շարունակ սպասում: Նրա ընտրյալը՝ թմբլիկ, բարետես խարտյաշ կինը, յուրաքանչյուր տղամարդու երազանք էր, գրեթե Մերելին Մոնրո, աշխատում էր կողքին, և երբեմն նրա հետ մեկնում էր գործուղման, եւ ահա այնտեղ սկսվում էր իսկական կյանքը՝ ռեստորաններ, հյուրանոցներ, զբոսանքներ ու գնումներ, համաժողովներ ու էքսկուրսիաներ: Որքան էր նա թախծում գիշերներով՝ վերադառնալով դրախտից դժոխք, տաքուկ, աղքատիկ իր բույնը, որտեղ թանձրանում էր ծանրաշարժ ընտանեկան կյանքը, որտեղ հիվանդանում, խելքահան լինում ու գժվում էին երեխաները, խանգարելով կենտրոնանալ, և նրանց պետք էր հնազանդեցնել, և բանը հասնում էր կաշեգոտուն, ինչից հետո հայրն իրեն ավելի ստորացված ու վիրավորված էր զգում: Կինն էլ էր գոռում երեխաների վրա, կինը ոչինչ չէր հասցնում, հազիվ էր շուռ գալիս. տանը, ինչպես ընդունված է յուրաքանչյուր կարգին ընտանիքում, նաև կատու ու շուն էին ապրում, և կատուն խռպոտ վայնասուն էր բարձրացնում գիշերները, երբ գալիս էր դրա ժամանակը, իսկ փոքրիկ շնիկը հաչում էր վերելակի ամեն բարձրանալու վրա: Եվ հենց գիշերներն էին այդ ընտանիքի հոր համար ամենադաժան պահերը. նա պառկած իր անկողնում՝ ընկղմվում էր թախծալի երազանքների մեջ, տենչում էր ջերմություն, հանգստություն, թովչանք, որ ծորում էին նրա անօրեն ընկերուհուց, գործուղումների օրերին: Մնացած ժամանակ խարտյաշ կնոջը նույնպես կյանքը երես չէր տալիս՝ ամուսինն ու սկեսուրը պարզապես նստած էին նրա վզին, սկեսուրը ստիպում էր շաբաթ օրերը ամոնիակի սպիրտով մաքրել ամբողջ բնակարանը, ընդհուպ մինչև բաղնիքի սալիկները: Ամուսինը հարբում էր եւ խեղճին չէր թողնում գնալ ծառայողական երեկույթներին,

ծննդյան օրերին և այլն: Գործուղումներից առաջ միշտ կռիվներ էր սարքում, կասկածում էր, նրանք երկուսով՝ սկեսուրի հետ միասին խեղդում էին նրան, ինչպես Սցիլան ու Հարիբդան, և բացի դրանից, նրանք կռվում էին նաև իրար հետ, ամուսինն ու նրա մայրը: Սկեսուրը հանդիմանում էր խեղճ խարտյաշին, թե ինչու ամուսինը խմելուց հետո մի բան չի ուտում և ընդհանրապես քիչ է ուտում, անգամ դրանում էին նրան մեղադրում: Շիկահերը աշխատավայրում տրտնջում էր իմիջիայլոց, ծածուկ էր ու ոչինչ ուղղակի երեսին չէր շպրտում, ինչպես կինը: Լինում են, չէ՞, այդպիսի կանայք՝ մտածում էր անկողնում փլված միայնակ ամուսինը, իսկ պատի մյուս կողմում, քնի մեջ լաց էին լինում ու բացականչում նրա երեխաները, տղա և աղջիկ, և խռմփացնում էր հիվանդ սրտով նրա կինը, ավելի ու ավելի ծերացող և ավելի ու ավելի սիրող: Հասկանալ չէր լինի, թե ինչպես էր այդ տարիքով՝ քառասուն և ավելի տարեկան կինը սիրում ու գոհացնում նրան: Ըստ երևույթին՝ նա երբեք էլ չէր հավատացել, որ նա՝ այդ փառահեղ, ճերմակած քունքամազերով տղամարդը՝ իր ամուսինը, սիրում է իրեն, և անընդհատ ինքն իրեն նսեմացնելով՝ հրաժարվում էր նրա հետ ինչ-որ տեղ գնալ: Ինքն իր համար շորեր էր կարել՝ միատեսակ, պարզ ձևի, երկարափեշ ու պարկանման, որպեսզի թաքցներ գերությունն ու կարկատած գուլպաները, որոնց համար երբեք փողը չէր հերիքում: Բազմաթիվ հյուրերի ու բարեկամների լեզվով դա կոչվում էր «հագնվել համեստ և ճաշակով». հյուրերը խմբերով ժամանում էին բոլոր տոն օրերին, պաշտում էին նրա թխվածքները, բլիթներն ու աղցանները, նրա հյուրերը՝ նրա համադասարանցիները, հասակա-

կիցները, բարեկամները, հիշում էին նրան երիտասարդ, գրավիչ, այտերի փոսիկներով, հաստ ծամով, և չէին նկատում, որ նա արդեն այն չէ, որ մարել է:

Եվ իսկապես, նա վաղուց արդեն մոռացել էր իր փոսիկների ու ծամի մասին, հոգ էր տանում ամուսնու ու մոր մասին, հետևում էր երեխաներին, իր կյանքի տիրոջ համար հավատարմորեն վազում էր շուկա, ոչ մի տեղ չէր հասցնում, բայց ինչ-որ հրաշքով ամեն տեղ լինում էր ժամանակին: Այնքան էր ձգտում ապրել ըստ կարգի և, բնականաբար, մինչև ուշ գիշեր նստում էր խոհանոցում, գրքերի շուրջ, նախապես ամբողջ ընտանիքը պառկեցնելով քնելու, կամ լրացուցիչ փող էր վաստակում նույն այդ խոհանոցում աշխատելով, կամ պատրաստվում էր պարապմունքներին: Աշխատանքից վերադառնալով՝ նա հեքիաթներ էր պատմում իր ուսանողների մասին, երբեմն պատրաստում էր մի դույլ կոտլետներ ու մի դույլ շիլա, և նրան այցելում էին նրա աշակերտները. բերում էին ծաղիկներ, երկչոտաբար աղմկում էին, ուտում էին ամբողջ եղածը և զվարճացնում էին իրեց դասատուին անհեթեթ խմբային երգեցողությամբ: Բայց դա պատահում էր միայն այն ժամանակ, երբ տերը մեկնում էր գործուղման, միայն այդպես:

Երբ ծնվեցին երեխաները՝ տղա և աղջիկ, ապա այդ ժամ էլ նրան մտահոգողը ամուսինն էր՝ նրան աշխատանքի ճամփել նախաճաշով, նրան աշխատանքից դիմավորել տաք ճաշով, լսել այն ամենն, ինչ նա կպատմեր: Եղավ միայն մեկ ընդմիջում, երբ սկսեց մահանալ, և երեք տարվա ընթացքում մահանում էր նրա մայրը. այդ ժամանակ ամեն ինչ բարձիթողի էր, և ընտանիքի հայրը մենակ նա-

խաճաշում էր սեղանի վրա դրածով, և ճաշում էր նույնպես մենակ, ինքն իր ափսեն լցնում էր եւ հոնքերը կիտած հեռանում իր սենյակը, բայց, այնուամենայնիվ, դագաղը տանողների մեջ առաջինն էր՝ հանգուցյալի ոտքերի մոտ, և իր անկեղծ անձկության մեջ չէր տարբերվում մնացածներից: Հուղարկավորությունից հետո մայրիկի սենյակը մնում էր փակ ու դատարկ, ուժ չկար, և տանտիրուհին էլ կամացուկ դիմադրում էր, քնում էր մեծ սենյակում, երեխաների հետ, ավելի ճիշտ՝ շարունակում էր նստել խոհանոցում, քունը նրան մոտ չէր գալիս:

Ամուսնու համար նույնպես դա դժվար ժամանակաշրջան էր: Նրա սերը սկսել էր քմահաճություններ անել և պահանջում էր լիարժեք, անկախ ընտանեկան կյանք, հրաժարվում էր նրա հետ հանդիպել ծանոթների դատարկ բնակարաններում, ինչպես որ նա արդեն հարմարեցրել էր տանել նրան իր ճաշի ընդմիջումների ժամանակ, և անգամ ավելի հեռուն էր գնացել՝ պչրական պահվածք էր ցուցաբերում կողքի սենյակների հետ ու բուֆետում, և տղամարդիկ զգալով, որ նա «առջևից թուլացել» է, ինչպես ասում էին գործընկերները, դեպի նրա սենյակ ուղի հարթեցին, և հեռախոսն էր զանգում, և ինչ-որ մեկը մեքենայով ուղեկցում էր կնոջը և այլն: Մեր ամուսինը կրեց դժոխային տանջանքներ, սերն ու պարտքը խժռում էին նրան ներսից, նա հաստատուն և աննահանջ դիրք բռնեց իր ընկերուհու նկատմամբ, չնայած երբեմն թեթևացած լաց էր լինում նրա կրծքին, եթե հաջողվում էր: Իսկ ի՞նչ պիտի աներ:

Կինը, չնայած իր հուսահատ վիճակին, այնուամենայնիվ, նկատեց, որ ամուսինը մի տեսակ ցամաքել է, որ նրա

աչքերը խամրած են, և նա կարծես կամաց-կամաց ցնորվում է: Կինը սթափվեց, արագ փոքրիկ վերանորոգում կազմակերպեց մոր սենյակում և երեխաների հետ բնակվեց այնտեղ, իսկ մեծ սենյակը նորից դարձավ հանդիպումների, զրույցների ու փոքրիկ տոնակատարությունների վայր, և ամուսինը ներկայանում էր հյուրերին, որպես հիանալի երեխաների հայր ու ընտանիքի գլուխ (ոչ թե լքված, անտուն շուն), և սիրելի ու որպես աստվածություն պաշտելի ամուսին (ոչ թե շան հարսանիքի վերջից երրորդ թեկնածու): Հիմա նախաճաշը նրան մատուցվում էր բոլորից առաջ, անգամ մի քանի նոր զգեստներ շտապ կարվեցին, կիրակի օրերը կինը սկսեց երեխաներին երկարաժամկետ զբոսանքների տանել մեկ զբոսայգի, մեկ՝ կրկես, մեկ՝ աստղադիտարան: Իսկ ամուսնու սենյակում սեղանի վերևի մասում շարունակում էին կախված մնալ շրջազգեստի տակի թմբլիկ, բոկոտն ոտքերը կրունկների վրա. նա չէր հանձնվում:

Վերջապես ճայթեց որոտը, և շիկահերի ամուսինը, մեր ամուսինը, ինչպես նրան անվանում էր անօրեն զույգը, լրիվ սանձազերծվեց, կատաղեց, եւ կացինը ձեռքին ընկավ շիկահերի հետևից, վերջինս մինչև երեկո փակվեց լոգասենյակում, իսկ երեկոյան մի կերպ ծլկեց տնից: Նա ավտոմատից զանգեց մեր հերոսին, սա շտապ վազեց շիկահերի մոտ, վերադարձավ գրեթե լուսաբացին, առավոտյան նրան նորից անկողնուց հանեց սարսափելի, ինչպես արևածագի ժամին բոլոր լուրերը, զանգը՝ այն ամուսնուն նրա հարազատ մայրը գտել է դռնից կախված: Բնականաբար, հաջորդ ամիսը խեղճ նոր այրին անցկացրեց ինչ-որ ընկերների սրտացավ ընտանիքում: Մեր հերոսը

չհամարձակվեց տանել նրան իրենց տուն: Այնտեղ էլ, այն բարեկամական ընտանիքում, տանտիրուհին ի մի բերեց ուժերը և տնից դուրս վռնդեց վշտահար խարտյաշին, որին չափազանց սազում էր սգո դալկությունը: Դա անհնար էր կողքից հանդուրժելը, մանավանդ, որ տանտերը սկսել էր խարտյաշի նկատմամբ պլատոնական ընկերության և կարեկցանքի զգացմունքներ տածել, ինչը շատ ավելի վտանգավոր էր, քան սովորական մարդկային կեղտը՝ հրմշտվեցին ու ցրվեցին:

Ոչ անմիջապես, բայց ամեն ինչ կարգավորվեց, խարտյաշը առանձին բնակարան ստացավ: Պառավ սկեսուրի քանդված տունը ինչ-որ մեկի սրտովը եղավ ու սկեսուրին համոզեցին այդ ահավոր վայրը փոխանակել զարմուհուն ավելի մոտ գտնվող բնակարանի հետ, խարտյաշը բնակարան ստացավ ավելի հեռվում ու ավելի վատ վիճակի, սակայն սեփականը, և այստեղ մեր ամուսինը, մեր հերոսը պիտի վերջնական որոշում կայացներ՝ այո, թե ոչ, և ձեռնամուխ լիներ իր ընտրյալի նոր կացարանի վերանորոգմանը, կահույքի գնմանը, էլեկտրական լարերը փոխելուն, տաքացներ պատուհանները և այլն: Դրա փոխարեն նա կրկնակի եռանդով սկսեց բնավորվել սեփական տանը, երեխաների հետ պաստառեց մեծ սենյակը, վերսկսեց մարմնամարզությունը, ջրցողումները և վազքը, սկսեց ջերմեռանդորեն զբաղվել երեխաներով և խստավարժեցնել նրանց, քանի որ ժառանգները աննկատ մեծացել ու արդեն խանգարում էին, ահա թե ինչումն էր բանը: Շիկահերի հետ նա մնաց խորհրդատուի ու այցելուի կարգավիճակում, շիկահերն ամեն ինչ ինքնուրույն կազմակերպեց, դա զբաղեցրեց նրան. նա խորհրդակցում էր,

ինչ-որ գծագրեր էր ցույց տալիս, և արդեն հակված էր դեպի ոմն մեկը, ով մեքենայով լոգասենյակի համար սալիկներ էր բերում և խոհանոցի կահույք: Շիկահերը ինչ-որ բան կռահել էր և տեսադաշտից բաց չէր թողնում ոչ ոքի, աչքի առաջ ունենալով մենակության հեռանկարը:

Նկարը առաջվա պես կախված էր սեղանի գլխավերևում, արդեն կար հաստատուն օր, երբ ամուսինը այցելում էր շիկահերին. նա հիմա, իմիջիայլոց, տեղափոխվել էր ուրիշ ինստիտուտ, որտեղ ավելի շատ էին վարձատրում, և հարաբերություններն էլ նախկին աշխատավայրում խիստ բարդացել էին՝ շիկահերի պաշտոնը պետք է բարձրացվեր, և նրան հասնում էր ավելի բարձր պաշտոն, սակայն մասսայի զայրույթի պատճառով չստացավ այն: Ինքն էլ ի նշան բողոքի հեռացավ ու խոստացավ հետագայում նրան տանել իր մոտ, իսկ կինը ոչինչ չհասկացավ ու թեթևացած շողում էր, և տանը նորից տոն էր, թխվում էին կարկանդակներ, որ ամուսինը վերջապես հեռացավ նրանից, սակայն նկարը դեռ մնում էր պատին:

Նա հեռացավ ու լավ էլ տեղավորվեց նոր աշխատավայրում, երեխաները մեծանում էին՝ մարզված, ճգված, խստակրթված, ինչպես որ լինում էր, երբ ընտանիքում հաստատված էր լինում հոր պաշտամունքը՝ ինքնակամ հանձնված մոր հնազանդությամբ ու պատկառանքով: Հայրական խոսքը օրենքի ուժ ուներ, և նրանք այդպես խիտ շարքով էլ գնում էին՝ հայրը առջևում, երեխաները ուս ուսի, հետևից աննշան թխսամերը, որ ղեկավարում էր ընտանիքը հեռավորության վրա: Հաճելի էր նայել նրանց, սակայն, այնուամենայնիվ, ոտքերի նկարը դեռ առկա էր:

Ընտանիքի մայրը սպասեց, երբ տղան՝ փոքրը ընդունվեց ինստիտուտ և լրիվ հանձնվեց, ինչպես և նրա մայրը՝ միանգամից: Խոհանոցում կանգնած ժամանակ, երեկոյան, բոլորի աչքի առաջ, նա գետնին տապալվեց: Տապալվեց, խռխռացրեց ու այդպես խռխռում էր երեք օր ու գիշեր, մնալով հիվանդանոցում: Կարգապահ ու աշխատասեր ընտանիքը վերախմբավորվեց, սահմանվեց հերթապահություն, ներգրավվեցին հին ընկերներն ու մերձավորները, նախկին ու դեռևս հավատարիմ աշակերտները, և ամուսինը կնոջը դուրս բերեց գերեզմանից, մահվան ու մոռացության ճիրաններից: Երբ նրան տուն բերեցին, կինն արդեն փոքրիկ պառավ էր, թեթևակի կարողանում էր շարժել միայն աջ ձեռքը, խոսում էր անպարզալուր և աչքերից հաճախ արցունքներ էին հոսում: Նա կարծես իր ամբողջ տեսքով ներողություն էր հայցում իր վիճակի համար, ներողություն էր հայցում ամբողջ անցած կյանքի համար, որ չկարողացավ իր պաշտամունքի համար ոչինչ ստեղծել ու վերջում էլ կաթվածահար եղավ, իր հետ այդ պատմության մեջ քարշ տալով և ամուսնուն: Ժամանակի ընթացքում տնեցիները հարմարվեցին այդ ծանր բեռին, չնայած երբեմն ջղայնանում էին ու գոռգոռում մեկը մյուսի վրա, այնուամենայնիվ, բոլոր այդ տակը դնելու անոթները, ամենօրյա շփելով լվացումները, պառկելախոցերը և ակամայից մտքերն այն մասին, թե քանի տարի կարող է շարունակվել այդ ամենը, այդպիսի կենդանական կամ բուսական գոյությունը, այդ ամենը տանջում էր: Իսկ հայրը կարծես հանկարծ հանգստացավ, նրա հոգին ասես պարզվեց, կնոջ շուրջ նրա բոլոր շարժումները սահուն էին, համբերատար, ձայնը՝ քնքուշ: Երեխաները դեռ գո-

ռում էին մեկմեկու և մոր վրա, նրանք էլ անորոշության մեջ էին՝ նրանք զրկվել էին մորից, ասել է թե՝ նեցուկից ու հիմքից, և դարձել դեռ աղվամազոտ ու թույլ ծնողներ իրենց մոր համար. նրանք զգում էին, որ այստեղ ինչ-որ բան այն չէ, չկա հեռանկար, ավելի ճիշտ՝ այն կա, բայց սարսափելի: Երեխաները մեղադրում էին միմյանց, ջրի երես հանում, այ քեզ դժբախտություն, մոր ներկայությամբ: Սակայն նրանց ճիգը չէր մարում, նրանց հիվանդը մաքուր էր, թարմ, նրա ականջի տակ հաճախ ռադիոընդունիչ էին դնում և երբեմն էլ բարձրաձայն կարդում էին նրա համար: Սակայն, այնուամենայնիվ, հիվանդը հաճախ լաց էր լինում, բոլորովին անտեղի և փորձում էր ինչ-որ բան ասել միայն ձայնավորներով, առանց լեզվի:

Այն գիշեր, երբ նա մահացավ և նրան տարան, ամուսինը փլվեց ու քնեց, և հանկարծ լսեց, որ կինն այստեղ է, գլուխը դրել է նրա բարձին ու ասում է. «Ես սիրում եմ քեզ», և նա շարունակում էր խաղաղ քնել, և հուղարկավորության ժամանակ հանգիստ էր ու հպարտ, չնայած խիստ նիհարել էր, և ազնիվ էր ու հաստատակամ, և հոգեհացի ժամանակ, արդեն տանը, բոլոր հավաքվածների ներկայությամբ բոլորին ասաց, որ կինն իրեն ասել է «ես սիրում եմ քեզ»: Եվ բոլորը լուռ էին, որովհետև գիտեին, որ դա իսկը ճշմարտություն է, իսկ նկարն արդեն չկար: Նկարն անհետացավ նրա կյանքից, այն ամենը հոդս ցնդեց, անհետաքրքիր դարձավ այդ պահին, և նա անսպասելիորեն, հենց սեղանի շուրջ, սկսեց բոլորին ցույց տալ կնոջ ու երեխաների ընտանեկան գունատ լուսանկարները՝ զբոսայգիներով ու աստղադիտարաններով բոլոր այն զբոսանքները, որոնց նա չէր մասնակցել, նրանց բոլոր

զվարճանքները՝ աղքատիկ, բայց երջանիկ, որոնք կազմակերպում էր կինը երեխաների համար, նրա բոլոր փորձերը՝ կյանք կառուցել իրեն բաժին մնացած այն քչի, այն կղզյակի վրա, որտեղ նա իրենով պաշտպանում էր երեխաներին, և որտեղ տարածության մեջ ամեն ինչից վեր էր բարձրանում, ամեն ինչ ստվերի տակ էր թողնում ամսագրից այն անիծյալ նկարը, բայց չէ՞ որ այն վերացավ, ամեն ինչ լավ վերջացավ, և «ես սիրում եմ քեզ» արտահայտությունը նա հասցրեց ասել՝ առանց խոսքերի, արդեն մահացած, բայց հասցրեց:

# Հրեության Վերոհկան

Մեր ծանոթության առիթը շալվար կարելն էր, ասացին, որ հիանալի շալվար կարող կա՝ Վերան: Հեռավոր ժամանակներ էին, և շալվարները նոր-նոր էին մոդայիկ դառնում, և ես արդեն մի շալվար էի կարել քաջառույգ դերձակի՝ Մոսկվայում առաջին ձեռներեցի մոտ, նրան կոչում էին Ն.: Նա բոլոր չափսերի համար ձևվածքներ պատրաստեց, կար անող ու բնակարան վարձեց և պատվիրատուներից միայն չափս էր հարցնում՝ քառասունվեց, թե քառասունչորս: Ես նրան այցելեցի երկու անգամ: Ահավոր շփոթ էր, կողքի սենյակում կար էր անում դերձակուհին, իսկ Ն.-ը (քորոցն ատամներով պահած և ատամների միջով խոսելով) հանճարեղ էր մտածել՝ որոշակի չափսի ձևվածք անելով և շուլալելով. նա այդ կիսապատրաստուկը թարս հագցնում էր հաճախորդին ու լայն տեղերն անմիջապես սեղմում էր քորոցով, մեկ-երկու և վաղն արի շալվարի հետևից: Սակայն այդ շալվարի հետ ինչ-որ բան չստացվեց և արդյունքում ստիպված էի այն ծածկել սվիտերով, և հաջորդ անգամ, արձակուրդից առաջ, ծանոթների միջնորդությամբ ես գտա Վերոչկային:

Վերոչկան ինձ ընդունեց իր սենյակում, որ գտնվում էր ոմն մեկի անվան պողոտայում տեղակայված մեծ գենեբալական տանը. շքեղ պատուհաններ և բարձր առաստաղներ: Սակայն Վերոչկան մեկ սենյակ ուներ, պատի մյուս կողմում, ըստ երևույթին՝ ապրում էին հարևանները: Շալվար կարող Վերոչկայի սենյակը հոյակապն էր, ասես երիտասարդ նկարչուհու սենյակ լիներ՝ մեծ քանակությամբ գրքեր, հայելիներ, վարագույրներ, ամեն ինչ մուգ գույնի էր ու շողշողուն, գորգեր ու բարձիկներ: Ինքը Վերոչկան, ինձ նույնպես հիացրեց՝ փոքրիկ, նրբագեղ,

դեմքն ասես լուսեղեն ձու լիներ կարճ կտրած մուգ մազերի բնի մեջ, հսկայական, հայելանման ու շատ հանգիստ աչքեր: Հենց նա էլ հմուտ վարպետի պես ամեն ինչ արեց, չափեց-գրեց, մի անգամ ես եկա չափսափորձման, հաջորդ անգամ ես արդեն ստացա իմ շքեղ, սպիտակ անդրավարտիքը, որը պարծանքով հագնում էի երկար տարիներ: Վատը միայն այն էր, որ կտորը էժան էր ու սպիտակ, հաճախ էի լվանում, հետո լցնում էի ծակերը, իսկ այնուհետև շպրտեցի, բայց շատ տարիներ անց:

Ես կրում էի այդ անդրավարտիքը և որպես լուսավոր երազ փայփայում էի Վերոչկային նորից այցելելու միտքը: Իսկ Վերոչկան, ի դեպ, պարզվեց, որ ոչ թե անդրավարտիք կարող էր, այլ ուսանողուհի և հրատարակչության խմբագիր: Շալվարները նեցուկ էին առօրյա հոգսերը հոգալու համար, քանի որ (ինչպես հասկացա) Վերոչկան հեռացել էր ծնողներից՝ ունևոր մարդկանցից, ստացել էր նրանցից իր ճոխ սենյակը և այդուհետ պետք է ապրեր ինքնուրույն:

Նա ապրում ու վաստակում էր ազնվորեն ու ճոխ, բայց ես նրան հետո այդպես էլ չտեսա, իմ գործերը այդքան էլ լավ չէին ընթանում և հերթը շալվարների չէր հասնում: Սակայն մի քանի տարի անց նորից եկավ գարունը ու նրա հետ ահավոր խնդիրը՝ թե ինչ հագնել: Ես դեռ պահում էի հոգուս խորքում հիշողությունները հոյակապ Վերոչկայի մասին, նոր Ռոբինզոնի մասին, կենցաղային փոթորիկների միջի բարեկարգ կղզու մասին, և սպիտակ անդրավարտիքի մասին, որն իմ միակ հագուստի ձևն էր ամբողջ ամառվա ընթացքում՝ հագար ու մարդ ես, ու ամոթ չէ և այդպես շարունակ, և ինչքան կարևոր է երիտասարդ

կնոջ համար սեփական արտաքինից չամաչելը, կուչ չգալն ու անկյուններում չպատսպարվելը:

Լավ է Վերոչկայի համար, մտածում էի ես, նա ասես կինոաստղ լիներ իր հայելային շոկոլադե աչքերով, հագնված է ասես անգլիական արքայադուստր, գործում և կարում է, և ամեն ինչ իր համար դասավորել է այնպես, ինչպես ինքն է ուզում: Կարճ ասած, ես զանգեցի նրան:

- Դուք չգիտե՞ք, ի՞նչ է,- չոր արտաբերեց մի կին:- Վերոչկան այստեղ չէ, արդեն վաղուց: Դուք նրա ծանոթուհի՞ն էք:

Ես ասացի, որ շատ հեռավոր ծանոթուհի եմ, Վերոչկան ինձ համար բան էր կարել:

- Կարում էր,- վշտահար բացականչեց կինը:- Կարում էր: Վերոչկան մահացել է, դուք չգիտեի՞ք:

Դադար:

- Վերոչկան երեք տարի առաջ է մահացել, կրծքի քաղցկեղից: Աստված իմ, իմ փոքրիկ Վերոչկա:

Դադար:

- Վերոչկան շատ էր ուզում երեխա ունենալ, բայց նրան արգելել էին կրծքի քաղցկեղի պատճառով: Սակայն նա չընդհատեց հղիությունը, այլ ծննդաբերեց: Նա մահացավ, երբ երեխան յոթ ամսական էր: Նա հղիության ժամանակ ճառագայթման չէր գնում ու ոչ մի դեղ չէր ընդունում, որպեսզի երեխային չվնասի: Վերոչկան: Ահա այսպես է եղել:

Կինը լռեց: Ես նույնպես լռեցի:

- Վերոչկան ծննդաբերեց մենակ, առանց ամուսնու: Նա շատ էր սիրում մի մարդու, որը սակայն ամուսնացած էր:

- Իսկ ի՞նչ եղավ երեխայի հետ:

- Մենք, հրեաներս,- ասաց հարևանուհին,- մենք մեր երեխաներին չենք թողնում, այո: Հայրը նրան այցելում է: Առնում է՝ ինչ-որ պետք է, չնայած այնտեղ սեփական փոողերն էլ հերիքում են: Այնտեղ նրան խնամում են:

Ըստ երևույթին՝ Վերոչկայի ծնողները վերցրել են երեխային իրենց մոտ:

- Ծնողներն են վերցրել երեխային,- հաստատեց հարևանուհին,- չնայած որ նրանց հարաբերությունները վատն էին: Վերոչկան նրանցից ոչինչ չէր վերցնում:

Ես դա հիշում եմ:

Հարևանուհին դանդաղ հրաժեշտ տվեց ինձ, դանդաղ ու նշանակալից, իսկ Վերոչկան հիմա նայում է երկնքից իր երեխային ու անհանգստանում նրա համար, նրանք այնտեղ բոլորն են մեզ համար անհանգստանում, բոլորը, ովքեր մեզ սիրել են: Հրեուհի Վերոչկա - հայտնի չէ, թե որ դրախտում է նա:

# ԿՈԱ

## ՅՄԽԻՄՈՒՄՈՒՄ

## ԱԱՈՍԱՍԽԱՑ

## ԼՔՍ

Իսկ ո՞վ պատասխան կտա Վերա Պետրովնայի անմեղ արցունքների համար, նախքան մեռնելը հիվանդանոցային մահճակալի վրա թափած նրա անզոր, ծերունական արցունքների համար: Ո՞վ կլուծի Վերա Պետրովնայի արյան վրեժը, ոչ թե բառացիորեն արյան համար, արյունը չի թափվել, այլ սառել է երակների մեջ, բայց այդպես է ընդունված ասել՝ ո՞վ պատասխան կտա արյան համար և այն բանի համար, որ կյանքի մայրամուտին, դեղամիջոցների բազմազանությունից Վերա Պետրովնան խելքը թոցրել էր: Նա բոլորովին անմեղ լինելով՝ տառապում էր ինչ-որ անհասկանալի ու տարօրինակ տանջանքներից և իր գործընկերուհիներին դիմում էր հետևյալ խոսքերով. «Ցույց տվեք՝ ինչպիսի՞ն են կիսավարտիքները»: Աղջիկները պտտվում էին կիսաշրջազգեստները հագած, իրենց խղճուկ խելքներով ոչինչ չընկալելով, չցանկանալով ոչինչ ընկալել. կանայք հաճախ են իրար ցուցադրում կրծքակալները ու կիսավարտիքները, ով որտեղից է գնել և քանիսով: Սակայն կյանքի մայրամուտի այդ համառ ու թախծալի «ցույց տուր կիսավարտիքները», երբ բոլորը գիտեին, որ Վերա Պետրովնան մեռնում է և տանջանքների մեջ կմեռնի շուտով, այն շարունակում էր նրանց ականջներին մնալ անգամ Վերա Պետրովնայի մահից երկար ժամանակ անց: Իսկ Վերա Պետրովնան մեռավ՝ աղբակույտի մեջ պառկած, միջանցուկ քամիների մեջ, միջանցքում, ինչ-որ քոսոտ հիվանդանոցում, որ նախատեսված է քրոնիկ և անհույս հիվանդների համար, ինչպես նաև միայնակ հիվանդների, ում մասին ոչ ոք հոգ չի տանում, որպեսզի նրանց տեղավորեն ավելի լավ հիվանդանոցում, այլ ոչ թե թողնեն մեռնելու այս խոնավության, կեղտի, միջանցուկ քամիների ու գարշահոտության մեջ: Աղջիկների հիշողության մեջ դա էլ է մնացել, քանի որ նրանք մի քանի անգամ մեկնել էին հեռու ծայրամաս՝

հիվանդանոցում Վերա Պետրովնային այցելելու համար: Նրանք երկչոտորեն անկողնու վրա էին դնում սննդամթերքը, իսկ Վերա Պետրովնան նախատում էր ու լաց լինում՝ գտնվելով պարզ գիտակցության մեջ, նախատում էր այս ամբողջ կյանքը, այն, որ ժամանակին չի դիմել բժիշկներին ու հիվանդությունը ծանրացել է: «Աղջիկներ, թույլ չտաք ծանրանա»,- լացի միջից ասում էր Վերա Պետրովնան, ասես աղջիկների մոտ ևս արդեն ինչ-որ բան էր սկսվում և նրանց սպասում էր այն ճանապարհը, որ անցել էր Վերա Պետրովնան՝ ոչ երիտասարդ, բայց առույգ ու ճղճղան կնոջից մինչև մորուքով, բեխերով արարած, որ քշված էր միջանցք՝ մեռնելու չգիտես ում մահճի վրա:

Հետո այդ աղջիկներն էլ ստիպված էին թաղել Վերա Պետրովնային, սակայն դրանով էլ ամեն ինչ ավարտվեց, և շիրմաքար կամ գերեզմանի այցելություն Զատկի առաջին օրն արդեն նախատեսված չէր: Դե ինչ, Վերա Պետրովնայի շուրջը արդեն գոյացել էին ուրիշ գերեզմաններ, որ այնչափ ծածկված չէին խոտերով, և դրանց մոտ որոշ օրերի, այնուամենայնիվ, գալիս են հարազատները, հետները խմելու և ուտելու ինչ-որ բան վերցրած, այնուամենայնիվ, այնտեղով թռչուններ են թռչում և նստում են Վերա Պետրովնայի համեստ հանգրվանին, այնուամենայնիվ, ծառեր են աճում: Իսկ աղջիկները, նախկին աղջիկները, արդեն մեծացել են, հասունացել և լուռ ծերանում են, հոգում պահելով Վերա Պետրովնայի «ցույց տուր կիսավարտիքները» բառերից այն զգացողությունը, երբ նրանք կուլ էին տալիս իրենց վախը և ուրախ թռչկոտում էին, որպեսզի հանկարծ, աստված չանի, չմատնեին ու չվախեցնեին ծեր կնոջը, որի այտերին արդեն ածելի էր դիպել, սակայն որը ոչ մի բանում մեղավոր չէր: Մեղավոր չէր, ինչպես և մենք բոլորս՝ կավելացնենք մենք:

# Ներով տիկինը

Կինն արդեն մահացել էր, տղամարդն էլ չկար, վերջացել էր նրանց անճոռնի սիրավեպը, և հետաքրքիրն այն էր, որ սիրավեպը վերջացել էր նրանց մահից շատ առաջ: Շատ, գրեթե տաս տարի դրանից առաջ նրանք արդեն բաժանվել էին. տղամարդն ապրում էր ինչ-որ տեղ, իսկ կինը եկավ ու բնակվեց Ստեղծագործողների տանը, ասես ցուցադրաբար, մենակ, շան հետ: Քանի որ այստեղ դեռ կենդանի էին հիշողությունները նրա արտառոց արարքների ու աղմկոտ վիճաբանությունների, նրանց կոնծաբանությունների մասին, ինչպես նաև այն մասին, որ նա արվեստի խոշոր գործչի կին էր, բայց՝ նախկին: Սակայն հիշում էին նաև, որ նա նախկին ժամանակների խոշոր գործչի դուստր էր, և անկարող լինելով հակառակվել, նրան շքասենյակ հատկացրին ու նա բնակվեց այնտեղ շան հետ ու ապրում էր խաղաղ՝ բարձրաձայն խոսելով միայն շան հետ: «Դու գժվել ես»,- ասում էր նա շանը պատշգամբում (հարևան պատշգամբներում լսում էին նրա անսովոր բարձր ձայնը. կան բնածին բարձր ձայներով այդպիսի գործիչներ, ասենք՝ առաջնորդներ, հրամանատարներ ու ճարտասաններ, սակայն, որպես կանոն, պարզապես կռվարարներ):

Առաջներում այնտեղից հարևան պատշգամբներում լսում էին ողջագուրանքների հյութեղ համբույրներ, կրունկների տկտկոցներ, հյուրերի (նույնպես) բարձր ձայներ, աթոռների քաշքշուկ ու բաժակների զրնգոց. բոլորին առանձնակի տհաճություն էին պատճառում հյութեղ, պարզ, մինչև հեռուներ տարածվող, դերասանական դրվածքով ձայները, որոնցով նրանք սարսափելի աղմկում էին: Ասում են՝ սենյակում արդուկներ էին թռչում, սակայն ամեն ինչ անվնաս մնաց, ձեռքերն ու գլուխները: Մի

գեղեցիկ օր լուր տարծվեց, որ նրանք բաժանվել են, տղամարդն է ամեն ինչ գրողի ծոցը նետել ու հեռացել ինչ-որ կնոջ մոտ: Եվ ահա ձեզ շնով, ավելի ճիշտ՝ շներով կնոջ հայտնությունը, քանզի նա բազմիցս հայտնվում էր ինչ-որ ստորակարգ, կեղտոտ, ակնհայտորեն ոչ իր ափսեում գտնվող, օտար ու շփոթված մի շուն աղվեսի մորթու պես ուսով գցած, ասես՝ քրքրված ու ցեցը կերած: Կինը հանդիմանում էր իր պուդելին, որ նա իրավունք չունի քշել այս դժբախտին, այս գեշին, երբ նրան ուզում են ուտելու բան տալ: Բոլորն ապրելու իրավունք ունեն, գոռում էր (ինչպես իրեն էր թվում՝ ասում էր ցածր ձայնով) այդ Բրիջիդ Բորդոն, չի կարելի ոչ ոքի քշել: Մի քշիր, ու քեզ էլ չեն քշի: Նա քայլում էր այդպես և մարդիկ ուղղակի փախչում էին նրանից, քանի որ նա ինքն էլ զարմանալիորեն հիշեցնում էր քրքրված, պատառոտված, կարծես հալածվող կենդանի, եւ սոված՝ անկախ ամեն բանից, ճաշարանի ամեն տեսակ կերակուրից: Նա ուսի վրա կրում էր մինչև արմունկները ցեխոտ ոտքերով բակապահ շուն՝ շփոթված գզգզյակի տեսքով, իսկ կողքով վազում էր խնամված, նույնպես բոլորովին շփոթահար պուդել, և շուրջբոլորը թեքում էին հայացքները, միայն երեխաներն էին ակնապիշ նայում: Ի դեպ, նա ատում էր երեխաներին, իր սեփական մեծահասակ երեխայի հետ նույնպես անընդհատ վիճաբանությունների մեջ էր, և մարդիկ լսում էին, որ նա հաճախ կրկնում էր, թե կենդանիները միակ արարածներն են, որ երբեք չեն հանդիմանել իրեն:

Նրա արտաքին տեսքը ապահարզանից հետո խիստ փոխվել էր. նստել էր երբեմնի փարթամ կուրծքը, թևերը թառամել էին, նախկինում նա մազերը կրում էր հպարտորեն և մեջքն ուղիղ պահած, իսկ հիմա դրանք թաքցնում էր

փաթաթուկների տակ, և միակ բանը, որ նրա մոտ պահպանվել էր, դա զիզի-բիզի բաների նկատմամբ սերն էր: Դրանք իսկապես տարուբերվում ու շրխկշրխկում էին ամեն տեղից՝ ականջներից, պարանոցի ու ոսկրոտ դաստակների շուրջ: Շները նրան չէին հանդիմանում, զիզի-բիզի բաները սիրում էին նրան, և դա էր այն ամենը, ինչ նրան մնացել էր: Միայն մեկ անգամ նա ափերից դուրս եկավ, ինչ երբեք չէր եղել, երբ ցուցադրեց կեղծավորի ու պառաված օրիորդի իր նոր էությունը: Երբ մի հարկով բարձր պատշգամբում հյուրեր հավաքվեցին, թխթխկացրին կրունկներով, լսվեցին բարձր, հյութեղ ձայներ, զրնգաց ամանեղենը, հոսեց ու ղլղլաց, նա, ծածուկ դժգոհելով, համբերեց մինչև կեսգիշեր, իսկ հետո իր պատշգամբում հյութեղ, գիտակցաբար ու հատ-հատ արտաբերեց մի արտահայտություն, որը ոչ ոք չջոկեց, և որը ոմանք ներկայացնում են որպես «խանգարում եք իմ շան քունը», իսկ մյուսները՝ «անգամ շանն է պետք հանգստանալ»: Կարճ ասած, ինչ-որ անհեթեթ ու անկապ բան՝ իր կեղծ էության, բայց հստակ մտադրության մեջ՝ եկել է հաջորդ սերնդի տոնելու ժամանակը, որի հետ նա արդեն ոչ մի կապ չուներ, ինչպես և ընհանրապես ոչ մի բանի հետ: Արդեն բոլորը գիտեին, որ նա ապրուստի միջոց չուներ, ամուսինը նրան բնակարան էր թողել և՝ վերջ: Նա արդեն չէր կարող աշխատել, ինչպես և չէր կարող վերադառնալ իր հիմնարկը հոգեբուժարանից հետո, որտեղ նա հայտնվել էր կախվելու փորձ անելուց հետո: Այդ հիմնարկում նրան ընդհանրապես արդեն հազիվ էին հանդուրժում իր գույնզգույն հագուստով, բիժուտերիայով, վառ դիմահարդարումով, ուշացումներով ու պարապուրդներով, ազդեցիկ ծանոթների միջոցով այս կամ այն գործը գլուխ բերե-

լու ճոռոմ խոստումներով, ինչպես նաև նրա սենյակում ուրիշի փողի անհետացման տարօրինակ պատմությամբ: Հանցագործության վայրում մեր տիկնոջը ոչ ոք չի բռնել, սակայն ասեկոսեներ սկսվեցին եւ լրջորեն զգուշանում էին նրանից, չնայած աշխատում էին թաքցնել դա, խուսափելով այդ խորապես վիրավորված կենդանուն լրիվ սպանելուց: Հետո՝ ավելին, նա զանգահարեց երկու-երեք կանանց, ընտանիքատեր ու զբաղված, ուշ գիշերով, որ հիմա կկախվի և դուռը կողպած չէ, թող գան ու դուրս հանեն: Կանայք, ասես խոսքները մեկ արած, համոզում էին հետ կանգնել այդ քայլից, սակայն երբ նա զանգեց երրորդին, առաջին երկուսը պայմանավորվեցին ու զանգահարեցին հոգեբուժարան տեղափոխողներին, որոնք եկան, բացեցին դուռը և մեր տիկինը վախից ցատկեց աթոռից՝ օդակը վզին գցած ու հեռախոսափողը ձեռքին, ցատկեց՝ սպիտակ խալաթները տեսնելուց անակնկալի գալով: Այլապես գուցե և չցատկեր, մտածում էին նրա գործընկերները: Բայց սանիտարը հասցրեց բռնել ինքնասպանին, նրա նուրբ, կարապի վզի ողերը չվնասվեցին, և տակն էլ չարեց, ու լեզուն էլ չկծեց- նման ոչ մի անճոռնի բան նրա հետ չկատարվեց:

Սակայն ոչ ոք չգիտի, թե իրականում նա ինչպես մահացավ, որ մահճի վրա հանգչեց, կարծես՝ քաղցկեղից ու տանջանքների մեջ: Ինչ-որ բանով պետք է վերջանար այդ ամենը, այդ անճոռնի կյանքը, չգիտես ինչով այլանդակված, բայց չափազանց աղմկոտ ու բուռն՝ մեր օրերի համար: Սակայն, ինչպես ասում են, ոչ մի շուն նրան չխղճաց, բոլորը միայն թեթևակի հոգոց հանեցին, ականջ դնելով հեռվից եկող լուրերին: Իսկ ի՞նչ եղավ նրա սեփական շնիկը, նրա պուդելը՝ վերջինը ցեղի մեջ, և ոռնու՞մ էր,

արդյոք, շունը նրա դիակի վրա, նստո՞ւմ էր, արդյոք, նրա գերեզմանին. կենդանիների մասին պատմվածքներից այս բոլոր հորինվածքները կարելի է լուրջ չընդունել, ոչ ոք նման բան թույլ չի տա մեր օրերում: Պարզ է միայն մի բան, որ իր Տիկնոջ, իր միակ Տիկնոջ մահից հետո շան համար դժվարին օրեր վրա հասան:

# Գլուխ Է

## Կյանքը մեզանում

Սաշան զգուշորեն էր ապրում, այսինքն՝ ինչպես թե զգուշորեն. լինելով անտուն կին՝ ոչ մի բանի չէր խառնվում, և այն տեղերում, որտեղ գիշերում էր, անգամ ձայն չէր հանում, ներկա լինելով ընտանեկան տեսարանների, որոնք ուղեկցվում էին ամանեղենի կոտրատումով և ոստիկանություն կանչելու սպառնալիքներով: Կուչ էր գալիս իր ներքնակի վրա և կյանքի նշույլ անգամ ցույց չէր տալիս, Աստված գիտի, թե ինչի մասին էր մտածում, երևի վախենալով, որ տեղի ունեցող ամեն ինչը կատարվում է ցույց տալու համար, թե ով է այդտեղ տերը և ում հիմա այստեղից դուրս կվռնդեն – ինձ՝ հավանաբար մտածում էր նա՝ Սաշան (իսկ տանտերերը հատկապես ամաչում էին նրանից, չնայած չէին կարողանում զսպել իրենց. խայտառակ անզսպություն և, ավաղ, կոմնակի մարդկանց ներկայությամբ): Ոչ ոք չի կարող զսպել իրեն, եթե, օրինակ, տանտերերի որդին գիշերելու է բերել կասկածելի մի տղայի, իսկ տանտիրուհին, օրինակ, գիշերելու է թողել այս նույն Սաշային: Ահա և աղմուկ-աղաղակը. տղային՝ դուրս, իսկ Սաշայի մասին ոչ մի խոսք. Սաշա՛, դու պառկիր:

Կարճ ասած, Սաշան տեղաշարժվում էր քաղաքում բնակարանից բնակարան, սենյակից սենյակ, գետնին գցած ներքնակից՝ ծալովի մահճակալ, և ամեն առավոտ զգուշորեն դուրս գալով հերթական օտար բնից, ըստ երևույթին խորամանկորեն պլանավորում էր իր հաջորդ քոչատեղը, մինչև որ ընդմիշտ չքոչեց, բայց այդ մասին հետո:

Այդպես նա տեղից տեղ էր գնում, ամեն ինչ իր հետ խնամքով տանելով պայուսակի մեջ: Հայտնի չէ, թե որ-

տեղ էր լվանում շորերը, ինչպես էր դրանք արդուկում, սակայն խնամված տեսք ուներ և ապրում էր օրինավորապես, ոչ ոքի չէր ձանձրացնում, ոչ մի բանի չէր խառնվում: Ազատ չէր ապրում, այլ այնպես, ինչպես թելադրում էր իրականությունը, արմունկներն իրեն էր պահում, շարժում էր միայն դաստակները և այն էլ զգուշորեն, կոկիկ: Քայլվածքը սահուն էր, չնայած թեթևակի նման էր բադի քայլվածքի. բայց ոչինչ, նրան ամեն ինչ ներվում էր այն բանի համար, որ Սաշան ռեժիսոր էր: Սաշան դիպլոմավոր ռեժիսոր էր, ներկայացումներ էր դնում մեկ մի խմբում, մեկ ուրիշ, փոքր ստուդիաներում, բայց երբեք՝ ոչ թատրոնում: Թատրոն չէիր կարող մուտք գործել կանոնավոր կյանքով, ցածր ձայնով, այդ գեղեցիկ ակնոցներով՝ հատուկ, մանրակրկիտ ընտրված, ոչ մի բանի հետևից Սաշան այդպես չէր վազում, ինչպես գեղեցիկ ակնոցի շրջանակների հետևից, և այդ գեղեցիկ շրջանակների հետևում ջրիկ կապույտով փայլում էին միշտ փոքր-ինչ լայնացած աչքերը, ինչպես լինում էր շիկակարմիրների մոտ՝ վարդագույն կոպեր, վարդագույն հոնքեր, նոսր երկար թարթիչներ, մեծ երկնագույն աչքեր, բայց ամենևին ոչ գեղեցիկ, ոչ, չնայած, որ Սաշան գեղեցկության սրահում խնամքով ներկում էր իր բարակ հոնքերն ու թարթիչները սև ներկով:

Սաշան գեղեցկուհի չէր, չնայած կոկիկ էր ու խնամված, զգույշ, երիտասարդ ակնոցավոր կին էր, որը սակայն բոլորովին չէր ամաչում իր ոչ գեղեցիկ լինելուց, և ապրում էր որպես ազատ, ցանկալի ու արժեքավոր կին: Ինքն էր զգուշորեն ընտրում՝ ում ուզում էր, երբեմն անգամ սիրում էր երկուսին, բայց ոչ մեկին երկար չէր կապվում, միշտ ինչ-որ մի բան նրա սրտովը չէր լինում: Կարճ ասած,

թափառում էր կյանքով, ըստ երևույթին՝ նպատակ ունենալով ուսումնասիրել հենց կյանքը, այստեղից էլ՝ գաղտնիքներն ու մշտական թերասածությունները: Ուսումնասիրում էր իր բոլոր այդ գիշերակաց-ներկաները, դրանց տերերին, պաշարում էր շտեմարանում, իր ջրիկափայլ աչքերով հավաքում էր լուռ ու աննկատ, խմբավորում էր բոլորին, քնում էր ամեն տեսակ տղամարդկանց հետ, հյուրանոցներում ձեռքից բաց չէր թողնում և ժողովրդական դեպուտատներին, որտեղ նրանց հետ հարցազրույցներ էր ունենում (Սաշան լրացուցիչ վաստակում էր լրագրությամբ):

Մի զվարճալի մարդուկ՝ Սիբիրի փայտասղոցման ինչոր հսկա, առավոտյան նրան տվեց անգամ իր ցպահանջ հասցեն, քանի որ կինը խանդոտ էր, այսինքն՝ լուրջ վերաբերվեց: Սաշան կամացուկ ծիծաղելով պատմում էր իր ընկերուհիներին նման դիպվածների մասին՝ որպես նյութ հավաքելու, կյանքն իր բոլոր դրսևորումների մեջ ուսումնասիրելու մասին,- նա ինքը վաղուց և կայուն ամուսնական կապի մեջ էր: Նա ամուսնացած էր ոչ թե Մոսկվայում, այլ Մերձմոսկովյան մի քաղաքում, և մեկնում էր այնտեղ կիրակի օրերը, իսկ աշխատանքը Մոսկվայում էր, ահա և ամբողջ գաղտնիքը:

Առաջին անգամ հենց այդ ժամանակ նա հնչեցրեց այդ բանաձևը՝ ես ուսումնասիրում եմ կյանքը:

Ահա այդպես էլ նա ապրում էր. մի անգամ, սակայն, ամուսնուն ասաց, որ հեռանում է սիրած մարդու մոտ (ի հայտ էր եկել և այդպիսինը), ինչին այդ դժբախտ ամուսինը պատասխանեց, որ հեռանալ պետք չէ, (բառացիորեն) «սիրիր մեզ երկուսիս»: Սաշան ամուսնու հետ էր մնում

կիրակի օրերը: Ամուսինը նրան մշտապես զարմացնում էր իր բարիությամբ ու ազնվությամբ, նա հրեա էր՝ գործարանում սևագործ արտադրամասի վարպետ, սկզբունքորեն չէր ուզում իր խելքին ու տաղանդին համապատասխանող ավելի բարձր պաշտոն զբաղեցնել, համարում էր, որ սև աշխատանքը ամենից կարևորն է: Աշխատասեր աշխատակիցները գնահատում էին նրան, բարձր էին գնահատում և պետերը, նրան առաջարկում էին այդ գործարանի գլխավոր ինժեների, հապա և տնօրենի պաշտոնը, սակայն Նաումը ղեկավարության հետ խաղի չէր բռնվում և մնում էր այնտեղ, որտեղ նստած էր: Սաշան լռելյայն աջակցում էր նրա ազնվությանն ու համբերատարությանը, քանի դեռ Մոսկվայում մշտական աշխատանք չէր ստացել՝ ինչ-որ արհմիութենական խմբում ստուդիայի գեղարվեստական ղեկավարի պաշտոն: Նա, այնուամենայնիվ, իր համար ձեռք բերեց փոքրիկ պաշտոն՝ ամեն շաբաթ այցելելով գեղարվեստական ինքնագործունեության վարչություն, որտեղ նստում էր ընկերուհին, որն էլ հենց ղեկավարում էր արհմիութենական թատերական խմբերը: Ընդ որում, Սաշան միտումնավոր չէր ընկերացել այդ պիտանի ընկերուհու հետ, այլ՝ պատահաբար, ինքնագործ թատրոնների փառատոնի ժամանակ: Ընկերացան, քանի որ ճաշարանում նստած էին նույն սեղանի շուրջ, միասին նստում էին քննարկումների ժամանակ և այլն: Ընկերուհին բարդ ընտանեկան իրավիճակի մեջ էր՝ սիրահարվել էր ամուսնացած ռեժիսորին, որը նաև սիրուհի ուներ՝ նրա մշտական դերասանուհին, իսկ այդ ընկերուհու սեփական ամուսինը աղմուկ-աղաղակ էր բարձրացնում ամեն չլվացված ափսեի և այլնի համար:

Այդժամ հարց ծագեց, թե ի՞նչ անել. նոր աշխատատեղում փորձերը արվում էին երեկոյան ժամերին ու կիրակի օրերը, էլ չեմ խոսում աշխատանքային օրերի մասին, այսինքն՝ դեպի մերձմոսկովյան քաղաք, ամուսնու մոտ ճանապարհը Սաշայի համար փակ էր: Իսկ Նաումը չէր ուզում ապրել առանց նրա: Ու նորից նա զոհաբերեց իրեն, իր համոզմունքները, և ընդունեց Մոսկվայում միջին ղեկավար պաշտոնում աշխատելու առաջարկը, անմիջապես էլ սենյակ տվեցին:

Սենյակ տվեցին փոքրիկ բնակարանում, մեկ հարևանով. կոկիկ, հանգիստ մի կին, որի ամուսինն ու որդին բանտում էին տարբեր պատճառներով և ոչ առաջին անգամ: Ինքը, հարևանուհին, սնագործ էր աշխատում գործարանում, կաթսաներ էմալապատելով լավ աշխատավարձ էր ստանում. նիհար, խաղաղ, մաքրասեր, վտիտ ու ամենավերջին աստիճանի չքավոր, քանզի նրա ամուսինն ու տղան, ըստ երևույթին՝ ակտիվորեն խմիչքի էին տալիս նրա վաստակը, տնից հանում էին անգամ կահույքը: Սակայն այժմ, առանց նրանց, հարևանների աչքի առաջ նա սկսել էր ինչ-որ բաներ գնել, ինչ-որ բաների մասին երազել, բերում էր թավշե փոքրիկ գորգեր ու կախում պատերից, օգտագործված նրբատախտակե պահարանիկներ ապակյա դռնակներով, որոնց հետևում վայրկենապես հայտնվում էին էժանագին բյուրեղապակի, ըմպանակներ ու սկահակներ: Եվ ամեն անգամ նա կանչում էր Սաշային զմայլվելու իր աճող հարմարակեցությամբ, քանի դեռ ամուսինն ու որդին ճամբարներում էին:

Սաշան նրան էլ էր ուսումնասիրում, այլ կերպ հնարավոր չէր, հարևանուհին պարզապես հանգիստ չէր տալիս

նրան, գալիս էր, նստում, աչքերը լցվում էին արցունքներով ու դեմքը շրջելով՝ նա ցույց էր տալիս կալանքի վայրերից հերթական նամակը (հայհոյանքներով), իսկ երկու օր անց նա նորից քարշ տալով բերում էր կամ բարձ, կամ պլաստմասե ծաղիկներ, և ուղիղ Սաշայի սենյակ, որպեսզի նա գնահատեր ու հավանություն տար:

Ահա այսպես, երևում է, Սաշայի համար կյանքն ուսումնասիրելը կարգախոս էր: Կյանքը թատրոն է, բայց այդ թատրոնը պիտանի չէ բեմ տեղափոխելու համար, վարչությունից ընկերուհին ոչ մի դեպքում թույլ չէր տա նման բաներ, հանդիսատեսը կթքեր՝ նախ, ինչիս է պետք դա, այդպիսի թատրոն ես տանն էլ ամեն օր տեսնում եմ: Այնպես որ՝ այդ դիտարկումները բանի պետք չէին, սակայն Սաշան, շնորհիվ դիտելու այդ ունակության, կանոնավոր առաջ էր ընթանում այս կյանքում՝ ոչ մի բանի առանձնապես չարձագանքելով, կարծես լինելով առաջադրված թեմայի շրջանակներում:

Սակայն Սաշան նույնպես թույլ տեղ ուներ՝ երազում էր երեխա ունենալ, այս հանգամանքն արդեն հնարավոր չէր կողքից դիտել, այն տանջում էր: Սաշան վազում էր ամեն մի երեխայի հետևից, բնազդն ակնհայտորեն գերազանցում էր դիտելու մեթոդը, և Սաշան սկսեց հաճախել բժիշկների մոտ, լոգանքներ էր ընդունում, ենթարկվում էր պրոցեդուրաների ու սրսկումների: Այստեղ, որոշ ժամանակ անց, վրա հասավ մեկ ուրիշ իրադարձություն՝ կրծքում մանկիկի համար ցանկալի կաթի փոխարեն առաջացավ ուռուցք: Ի դեպ, այդ բանը Սաշան ընդունեց շատ հանգիստ ձևով ու սկսեց կամաց շարժվել մահվանն ընդառաջ. ոչինչ չէր ձեռնարկում, թողեց պրոցեդուրաները, չգնաց

բժշկի մոտ: Դաշտանը նույնպես կտրվեց, երբեմն սիրտը խառնում էր, արդեն փքվել էր և մյուս կուրծքը: Սաշան ոչ մի կերպ չէր արձագանքում և ոչ ոքի ոչինչ չէր ասում, միայն աչքերը ավելի ջրիկ էին դարձել ու փայլում էին ամեն մի առիթով, և ավելի վարդագույն էին դարձել հոնքերն ու կոպերը: Այդ ժամանակ Սաշան սառնասիրտ հանգստությամբ էր հետևում ինքն իրեն, իր փչացած սարքի վարքին, և աշխատում էր, ասես շոգեշարժիչ, առանց դադարի: Դա մի տեսակ մրցավազք էր մահվան հետ՝ ով ումից առաջ կանցնի: Սաշան իր արհմիութենական խմբակում երեխաների համար «Փայտե մարդու արկածները» թատերական ներկայացումն էր բեմադրում: Դա պետք է լիներ կենսահաստատ և ուրախ ներկայացում, խաղում էին սիրողական դերասաններ, որ հավաքվել էին փողոցից, ըստ հայտարարության, ճիշտ է արձագանքեցին միայն կանայք ու աղջիկներ: Եվ աղվես Ալիսան (ըստ մտահղացման) պոռնիկ էր, իսկ Բազիլիո կատուն պատերազմից վերադարձած վետերան էր գիմնաստյորկայով, որի տակ տրոփում էին դերասանի կրծքերը:

Գլխավոր փորձերին Սաշան արդեն դժվարությամբ էր գնում, ըստ երևույթին՝ սկսվել էր ջրգողությունը, ոտքերն ու փորը ուռել էին, սակայն ներկայացման նախապատրաստություններն ընթանում էին ամբողջ թափով: Եվ այդ ժամ կարճատես, աշխատանքի մեջ խրված Նաումը նկատեց, թե ինչ է կատարվում Սաշայի հետ՝ ոտքերը տռզած, դեմքը ալրագույն, իսկ աչքերը դուրս պրծած: Նաումը արձակուրդ վերցրեց, վերցրեց վարչական վարորդին ու տարավ Սաշային իրենց նախարարական պոլիկլինիկան, և այնտեղ վիրաբույժը խեղճ Սաշային անմիջապես ուղար-

կեց գինեկոլոգի մոտ, և Սաշան, քառորդ ժամ հետո այնտեղից դուրս եկավ դեմքի տարօրինակ արտահայտությամբ: Նրա այտերը թաց էին, աչքերը փակում էր ձեռքերով: Նաումը խոժոռ դեմքով կանգնեց նրա դիմաց և Սաշան ասաց. ինձ մոտ հղիություն է, արդեն վեց ամսական:

Այստեղ արդեն Սաշայի համար ավարտվեցին կյանքի բոլոր դիտարկումները և սկսվեց ինքը կյանքը՝ վերջին փորձերը, ներկայացման հանձնումը ծննդաբերության նախօրյակին, հաղթանակ ինքնագործ ստուդիաների մոսկովյան ստուգատեսում, այնուհետև թատրոնը հրավիրեցին արտասահման՝ Գերմանիա և այնտեղ էլ հաղթանակ տարան: Երեխայի հետ մի շաբաթ մնաց Նաումի մայրը, որ եկել էր Բելոռուսիայից: Ընկերուհիները զմայլանքի մեջ էին, թատրոնը, վերադառնալով, ցնծում էր: Արհմիութենականները բոլորին դրամական խրախուսում դուրս գրեցին, Սաշան ավելացրեց իր կողմից, և դերասանները իրենց ու ընկերների համար մի լավ սեղան բացեցին փորձադահլիճում:

Իսկ հետո Սաշային տեղ ու ապագա առաջարկեցին մասնագիտական թատրոնում, որտեղ էլ նա զոհվեց տաս տարի անց, ինչպես ասում են՝ չկարողանալով տանել այս կյանքը: Բայց նա, այնուամենայնիվ, ոչ ոքի ոչինչ չէր ասում, անգամ իր Նաումին՝ չէր ուզում քրքրել նրա ազնիվ սիրտը: Նա իրեն մեղավոր էր զգում աղջկա առաջ, սակայն, երևում է, անցյալ տարիների բոլոր նվաստացումները չէ, որ հնարավոր եղավ դասել կյանքի այն երևույթների շարքը, որոնք կարելի է պարզապես դիտարկել և ընդամենը կուտակել արվեստի համար: Սովորական թատրոնում Սաշան ստեղծագործունեություն չկարողացավ ծավալել,

նրա դրած ներկայացումը փակեցին, ոչ ոք չպաշտպանեց: Ուրիշ ներկայացում դնելու հնարավորություն չտվեցին, Սաշան դարձավ ռեժիսորի կրտսեր օգնական, երբեմն բեմ էր դուրս գալիս, որպես հոծ խմբի դերասան: Տանն էլ ամեն ինչ չէր լավ. Նաումի մայրը այդպես էլ մնաց ապրելու նրանց հետ, Նաումին բնակարան տվեցին, դստերը պետք էր մանկապարտեզ տանել, իսկ հետո դպրոց, Սաշան մթերք էր գնում, ճաշ պատրաստում, լվացք անում և լսում սկեսուրի հանդիմանությունները, իբր ուտելիքից Նաումին բան չի մնում, ամեն ինչ խժռում են կողմնակի մարդիկ, ըստ երևույթին, նկատի ունենալով Սաշային՝ իր խղճուկ աշխատավարձով, ու աղջկան: Նաումը գոռում էր մոր վրա, ուժ չունենալով դիմանալ նրա ծերունական զառամախտին, հետո գոռում էր Սաշայի ու աղջկա վրա և թաքնվում էր աշխատավայրում, ասես ամրոցում, ինչպես երևում էր, այլևս չէր սիրում նրանց: Եվ չնայած Սաշան շարունակ լռում էր, սակայն նա պետք է պատասխաներ, անպատասխան ապրել չհաջողվեց:

Ո՞ւմ էր նա ուզում հակաճառել, թատրոնի՞ն, ինչպես պնդում էր Նաումը, թե՞ հենց իրեն՝ Նաումին, հիմա ոչ ոք չի ասի, վերջ, եկավ «շտապը», բժիշկն անցավ լոգասենյակ, որի դուռն արդեն կոտրել-բացել էր հարևանը, սկեսուրն անգամ ներս չնայեց:

Բայց չէ՞ որ ելքը կար՝ ամեն ինչին վերաբերվել, ինչպես անցողիկ ինչ-որ բանի, ինչպես թատրոնին (ինչպես Շեքսպիրը), սակայն երևում է՝ ինչ-որ բան չթողեց Սաշային այդչափ թեթևորեն վերաբերվել իր կյանքին, ինչ-որ բան չթողեց չտառապել, չլացել: Ինչ-որ բան դրդեց պատասխանել և մեկընդմիշտ վերջ դնել այդ ամենին:

# Fnhtú

«Բոհեմ» օպերայից հետևում է, որ ոմն մեկը սիրում էր ինչ-որ մեկին, ապրում էր ինչ-որ բանով, հետո թողել է կամ նրան են թողել, իսկ Կլավայի դեպքում ամեն ինչ ավելի պարզ էր, չնայած, որ բոլոր հիմքերը կային հենց նրան բոհեմ անվանելու, քանզի նա ոչ փող ուներ, ոչ ապաստան, ութերորդ տարին էր սովորում գրադարանային ինստիտուտում, կարծես՝ հեռակա, ուտում էր շաբաթվա երեք օրերին, և միայն տնից-տուն էր թափառում իր նման խաբեբաների հետ, որոնցից ոչ մեկի հետ նա սիրային հարաբերություններ չուներ: Սակայն հենց նա էր միակ կինը բոհեմի փոքրիկ խմբում, իրենց քաղաքի ամենաբարձրակարգ բոհեմի խմբում, քանզի նրանք իսկապես ոչինչ չունեին՝ ոչ տանիք, ոչ ցրտից պատսպարվելու տեղ, թափառում էին՝ ով առանց անձրևանոցի, ով առանց գլխարկի: Ամռանը Կլավդիայի կրունկները բարեկիրթ մարդկանց շփոթմունքի մեջ էին գցում, բայց այդպիսին էին փողոցներով երկար քայլող երիտասարդ կնոջ մերկ կրունկները, և այդպիսին էլ պիտի լինեին և՛ ոտքերը, և՛ դեմքը, և՛ մազերը, և այդպիսին՝ առանց հավակնությունների ու լռակյաց պետք է լիներ բոհեմը, որը ոչ մի տեղ կանգ չի առնում, այլ անընդհատ գնում է ու չգիտես որտեղ է հաց ուտում և գիշերում: Նա գրում է ոչ այն է բանաստեղծություններ, ոչ այն է՝ վեպեր, անգամ կարդացել էր դրանք, և իր շրջապատում նա պակաս չէր ցանկացած շրջապատի ցանկացած բանաստեղծուհուց, ինչ ժամանակաշրջան և ինչ շրջապատ որ դիտարկենք: Իսկ ամռանը նրանք հանկարծ հախուռն կերպով պոկվում էին տեղից ու օթևան գտնում հյուսիսային կողմի խրճիթներում, և ոչ այն է երգեր էին հավաքում, ոչ այն է իրենք էին երգում հարսանիքներում,

ամեն դեպքում Կլավդիան ամռանը շատ էր երթևեկել համընթաց բեռնատարներով, Աստված գիտի, թե ինչ ճանապարհներով, այդ թվում և այնպիսի ճանապարհներով, որոնց վրա պատահում էր՝ մեկ վեր էր ցատկում մինչև թափքի կտուրը, մեկ այն նույն կրունկներով խփվում թափքի հատակին: Եվ ահա այստեղ էլ բոհեմական Կլավդիային սպասում էր բոլորովին անհասկանալի մի բան՝ նրա փորը սկսեց շատ ուժեղ ցավել: Սակայն, եթե ճանապարհ էին ընկել, ուրեմն հարկ էր շարունակել ճամփան, այդպիսին էր կարգը: Եվ Կլավդիան երկու ուղեկիցների հետ ստիպված էր շարժվել առաջ ու միայն առաջ, նստել ճահճաշատ անտառների փտած կողնակներին, վեր ընկնել խոտի մարագներում, բնական կարիքները հոգալ թփերի ու պատերի հետևում, ընդ որում՝ ուտելիքի կարիք Կլավդիան արդեն չուներ: Նա հյուծվում էր աչքի առաջ, եթե ինչ-որ մեկի աչքերը հետևեին նրան, սակայն նրան ոչ ոք չէր հետևում, քանի որ նրա երկու ուղեկիցները որոշել էին հեռանալ ու հեռացան, իսկ Կլավդիան ինքն իրեն չէր տեսնում ու չգիտեր, թե ինչ է պատահել իրեն: Սակայն, ամեն դեպքում, նա հասավ մինչև նավամատույց և նստեց շոգեքարշի չորրորդ դասը, ջրի տակի խոր փոսի մեջ, որտեղ բանեցրած գազի հոտ էր գալիս և որտեղ նրան նույնիսկ մեկ անգամ անհանգստացրին վերահսկիչները, սակայն տեղի տվեցին՝ տարվելով կողքից ինչ-որ բանով, տոմսերի մասին գոռացող ոչ ռուս ինչ-որ մարդկանցով: Երբ շոգեքարշը ժամանեց, Կլավդիան կիսաքուն վիճակում դուրս եկավ դեպի Աստծո լույսը, մի կերպ հասավ էլեկտրագնացքին, իսկ փորը շարունակում էր ցավել, և գնաց, մինչև որ հայտնվեց հարազատ վայրերում՝

հերթական երկաթուղակայարանում: Այստեղ՝ տան մոտակայքում նրան գետնի վրա պառկած գտավ մայրը, այստեղ Կլավդիան երկար դեգերումներից հետո տեղափոխվեց մաքուր տեղաշորի մեջ, և այստեղ վաղ առավոտյան բնական կարիքը հոգալու համար անցնելով մասուրի թփի հետևը, նա անսպասելիորեն իր միջից արյան շիթ բաց թողեց, և ամեն ինչ անմիջապես պարզ դարձավ, քանի որ դա վիժում էր, և՝ բավական խոշոր: Կլավդիային դեպի թուփը ուղեկցած մայրն ասաց, որ դա տղա էր, և Կլավդիան հետո երկար ժամանակ բոլորին պատմում էր, թե ինքը պիտի տղա երեխա ունենար, այսքան ամիս անց: Հետո, որոշ ամիսներ անց, նա հաշվում էր իր ժամկետը, կարծես իսկական մայր, չնայած ավելացնում էր, որ այդ ամենը պատահական էր ստացվել, և որ ինքը ոչ մի բան չէր կասկածում: Սակայն բոլորը նրա հաշվարկներն ու պատմությունները լսում էին մի տարօրինակ զգացումով, և բոլորն ի պատասխան համերաշխորեն լռում էին, կարծես չիմանալով, թե ինչ անել այդ փաստի հետ: Ուստի և Կլավդիան ժամանակի ընթացքում լռեց, և միայն նրա մայրը, ահագին փող ծախսելով, չգիտես ինչու պետքարանը տեղափոխեց նոր տեղ, իսկ հին, հողով լցված տեղում տնկեց արոսենի ու թղթենի:

# Օ՞ էրգամկություն

Երկու վտիտ կին իրենք իրենց մեջ մտածում էին, որ արդեն պառավներ են (քսաներկու տարեկան), մեկը ասես Բրիջիդ Բարդոն լիներ, ռուսական թուխ տարբերակը, ամեն ինչ իր տեղում էր, և տղաներն էլ խոսուն հայացքներով էին նայում, իսկ մյուսը՝ հետևից քարշ ընկած, նվիրված ու հավատարիմ իժ, որն իր Մարուսյային այն աստիճան էր պաշտում, որ միաժամանակ սիրահարվեց նրա սիրած տղա Բոբին: Երբեմն նրանք երեքով հյուր էին գնում ինչ-որ տեղ՝ Բոբի ծանոթ նկարիչների ու բանաստեղծների մոտ. սևուկ Մարուսյան, եղեգնացողունի պես բարձրահասակ, աչքերն ասես լուսարձակներ, երբ նայում է, ասես լույս է ճառագում, իսկ կողքին նրա թունավոր-քաղաքավարի Բոբն է՝ նույնպես նիհար ու բարձրահասակ, աղջիկների մեծ մասի երազանքը, ձեռքերն ասես ճիպոտներ լինեն, աչքերը փոս ընկած, երբ քմծիծաղ էր տալիս, երևում էին գայլի ատամները՝ մեծ, սպիտակ ու սուր: Եվ այստեղ էլ, անպայման կիպ կպած՝ ինքն է՝ քիչ նկատելի, ինչպես ինքն է մտածում իր մասին, չնայած այնքան էլ վատը չէր լինի ցանկացած ուրիշ տեղ, բայց ոչ նրանց կողքին: Այստեղ ամեն ինչ իզուր է, նայում է իր Մարուսյային ու մտածում, որ բոլորի հայացքները նրան են ուղղված, և դա ճիշտ է:

Եվ ի՞նչ կհրամայես, ինչպե՞ս վարվել նման իրավիճակում, երբ երազանքներն, ահա, իրականացել են՝ նրան իրենց հետ հյուր են տարել մի այնպիսի տուն, ուր ժողովուրդը Մայիսմեկն էր տոնում. ծնգծնգում էր կիթառը (շուտով այն պատով կտան), բանաստեղծները ասմունքում են մութ սենյակում, մոմի լույսի տակ, դես ու դեն են գնում սվիտերներով, մորուքավոր Հեմինգուեյները, նկարիչ-

ներն ու գրողները, սակայն ոչ ոք պետք չէ, ընդհանրապես ոչինչ պետք չէ այդ թշվառին: Նա չոր գինով բաժակը ձեռքին կանգնել էր գրադարակների մոտ և ջղային ապրումների մեջ էր, իսկ Մարուսյան ու Բոբը անցել էին պատշգամբ ծխելու, այնտեղից երևում էին գիշերային Մոսկվայի հեռավոր տեսարանները: Վաղ վաթսունական թվականներն էին, շուտով շատերին բանտ կնստեցնեն, շատերին նրանցից, ովքեր այստեղ խրախճանք են անում: Կսկսեն ճամբարները, աքսորները, խուզարկությունները, էմիգրացիան, ընդհատակը՝ հնոցատների, հիվանդանոցային կարգավարակետերի և հեռախոսով ու թախտով պահակային սենյակների տեսքով, կարճ ասած՝ ամեն ինչ կցրվի:

Հնարավոր է՝ դա նրանց երիտասարդ կյանքի բարձրակետն էր, ուրախության գագաթնակետը: Հնարավոր է՝ հետո յուրաքանչյուրը, նստած Փարիզում ինչ-որ տեղ կամ աշխատելով բրեզենտե թաթպանների կարի կամ կարտոֆիլի ցանց գործելու ճամբարային արհեստանոցներում, նրանք բոլորը հիշելու են Լիտվինովների բնակարանում նշված այդ տարօրինակ մայիսմեկյան տոնը, փշրված կիթառը (այդպես էլ ոչ ոք չերգեց), ինչպես նաև փշրված խուլա-խուպ օղակը, այդ արտասահմանյան զարմանք բանը ոչնչացվեց, երբ մի հարբած արծիվ ութի տեսքով ծռեց այն:

Կատարյալ մենակություն մարդկանցով լցված այդ բնակարանում, կարելի է ծխել, կարելի է վերցնել «Kobieta I zycie» (Լեհաստան), բայց անհաղթահարելի է թախիծը Մարուսյայի ու Բոբի հանդեպ, որոնք մոռացել են իրեն ու ցածրաձայն ծիծաղում են պատշգամբում, ուրիշ ծխողնե-

րի խմբում, մայիսյան գիշերվա հովիկի զով շնչով տարված: Դիտմամբ չգնաց, մնաց այստեղ՝ ազատվելու այդ գայթակղությունից, գուցե ինչ-որ մեկը քծնի և կարելի լիներ ուշադրությունը շեղել, զրուցել, բայց ոչ ոք չի մոտենում, բոլորը թրև են գալիս ապուշի տեսքով, նստած են անգամ հատակի վրա, խոհանոցում խցկվելու տեղ չկա, ննջասենյակում նույնպես ասեղ գցելու տեղ չկա, այնտեղ են բանաստեղծներ Սապգիրը, Խոլինը և Սևա Նեկրասովը, այնտեղ է կրտսեր Կրապիվնիցկին: Եվ մեր աղջիկը՝ սպիտակ, մեծ աչքերով, մահվան պես գունատ (պարզ է՝ թե ինչու), քսաներկու տարեկան պառավը անշարժ հայացքով նայում է պատշգամբի միջով, նրան մոտենալն անգամ իզուր է՝ ամեն ինչ գրված է նրա դեմքին, սեր, խանդ, վիրավորանք: Հեռանալ, հեռու գնալ՝ ինքն իրեն մտածում էր այդ գունատը, պետք է մեկընդմիշտ հեռանալ, բայց նա չէր գնում:

Սիրելի ընկերուհին վերադառնում է պատշգամբից, հանգիստ ծիծաղում է մեր խեղճ ընկերուհու վրա, ասելով. «Ինչ ճանճրալի է այստեղ», ասում է՝ «դու այսօր հիանալի տեսք ունես, բոլորը քեզ են նայում, ուշադրություն դարձրու», և տառապյալը փափկում է, խելահեղ է այդ երկուսի հանդեպ իր սերը (իսկ Բոբը կանգնեց մորուքով ինչ-որ վայրենու մոտ ու ծխախոտ է տալիս նրան. դա նկարիչ Զվերևն է, ինչքա՞ն է նրան մնացել ապրելու, սակայն դեռ բնակվում է իր պառավ Ասենայի մոտ). անսահման սեր Բոբի հանդեպ և այնպիսի զգացում, որ առանց Մարուսյայի անհնար է ապրելը: Մարուսյան գեղեցկուհի է և անգլերենի բառարանից մտապահում է ամբողջ այունակներ, անգամ ինքն է սարսափում ու բառարանը շպրտում մահ-

ճակալի տակ: Բայց դա կարևոր չէ, Մարուսյան համընդհանուր մայր է, ջերմացնում է, ներողամիտ է բոլորի հանդեպ, Մարուսյան ինքն իր համար կարում ու գործում է, նրա մայրն էլ պարզապես երազանք է՝ նույնպես բոլորին խղճում է, որքա՜ն է մեր շիկահերը սիրում Մարուսյայի մայրիկին, որքա՜ն է սիրում:

Մարուսյան կանգնած է գրադարակների մոտ ու մտքովն էլ չի անցնում, որ մայրը երկու տարի հետո կմահանա և մոր հուղարկավորությունից հետո էլ ինքը վաղածին տղա կունենա, բայց ոչ Բոբից: Բոբն արդեն չի լինի նրա հորիզոնում, վաղուց արդեն նա հեռանում է Մարուսյայից, հենց որ վերջինս հղիանանում է, չնայած հոգ է տանում, ինքն է հայթայթում սրվակը ու սրսկում նրան: Սարսափելի երեկո էր, սեղանի լամպի լույսի տակ գործը գլուխ բերին առանց հիվանդանոցի, առանց վիժումի, ոչ ոք ոչինչ չիմացավ ոչ տանը, ոչ բանասիրական ֆակուլտետում, բայց այդ ամենը հեռուն գնացող հետևանքներ կունենան Մարուսյայի համար՝ ուռուցք, վիրահատություն, դժվար ծննդաբերություն և այլն:

Երբ Բոբը եկավ հերթական անգամ և իր հայտնի ժպիտը դեմքին ասաց Մարուսյային, որ ցավում է, բայց իրենց միջև ոչինչ այլևս լինել չի կարող, Մարուսյան փորձեց իր կյանքին հրաժեշտ տալ, գնաց ուղեկցեց Բոբին մինչև նրանց մուտքը և հետդարձի ճանապարհին աչքերը փակելով իրեն գցեց մեքենայի տակ, բայց Բոբը, ինչպես պարզվեց, գալիս էր նրա հետևից ու փրկեց նրան, գրկեց, բերեց նրա տուն, տիրացավ նրան, բայց մի ժամ անց, այնուամենայնիվ, հեռացավ իր գայլային քմծիծաղով: Նրա կյանքն, ըստ երևույթին, արդեն ընթանում էր այլ մակար-

դակներում, նա գնում էր իր մահվանն ընդառաջ, ինչպես պարզվեց հետո:

Ինչպես հետո պարզվեց, դրանից որոշ ժամանակ առաջ նա միջազգային պոլիգրաֆիկական ցուցահանդեսից ճարպկորեն գողացել էր Բոսխի մենագրությունը, այդպիսի սպորտաձև է, արդյունքում՝ դուրս վռնդվեց իր ճարտարապետական ինստիտուտից, և դա հենց սեղանի լամպի լույսի տակ սրսկումի ու հրաժեշտի ժամանակաշրջանն էր, իսկ հետո Բոբը, պարզից էլ պարզ է, ոչ ոքի ոչինչ չասելով ու ոչ ոքի հոգս չպատճառելով, անգամ դիտմամբ խզելով կապերը ընկերների հետ, երրորդ կուրսից զորակոչվեց բանակ, և այնտեղ՝ հեռավոր սեմիպալատինսկյան տափաստաններում, ճառագայթահարվեց հրաձգարանում և տուն վերադարձավ արդեն որպես ոչ պիտանի հաշմանդամ, ճիշտ է՝ առանց «սպիտակարյունություն» ախտորոշման, նման ախտորոշումները չէին բարձրաձայնվում: Այնպես որ, երբ նա երկու տարի անց եկավ տուն՝ մոր ու խորթ հոր մոտ սպիտակարյունությունից մահանալու, չնչին թոշակով, Մարուսյան արդեն ամուսնացած էր, վազում էր ուռուցքաբանականը՝ մոր մոտ, իրեն ձիգ էր պահում ու պատրաստվում էր ծննդաբերության:

Բոբն ու Մարուսյան զանգում էին իրար:

Մեր երկրորդ հերոսուհին՝ գունատը, նույնպես երեխա ունեցավ այդ տարի, Մարուսյայից երեք ամիս առաջ, իր համար անսպասելի երջանիկ էր ու սիրում էր իր ամուսնուն ու որդուն՝ աշխարհում ուրիշ ամեն ինչ մոռացած: Նա Մարուսյայի միջոցով գիտեր ամբողջ անցուդարձի մասին, բայց Բոբին զանգել չհամարձակվեց, երևի շատերը չէին համարձակվում զանգել նրան այդ ընթացքում,

այդպիսին է մարդկային հոգեբանությունը, մի տեսակ անհարմար է զանգել դատապարտվածին. ինչպե՞ս ես, ի՞նչ կա, և հարց է ծագում՝ իսկ նա ի՞նչ պիտի պատասխանի:

Գործը կվերջանա նրանով, որ նրանք՝ երկուսով իրար գրկած լաց կլինեն Բոբի հուղարկավորությանը, երբ նրա աներևակայելիորեն հյուծված մարմնով դագաղը ցած կգնա Դոնի դիակիզարանի սգո ֆիսհարմոնիայի ներքո:

Իսկ հիմա Մարուսյան կանգնած է լիտվինովյան բնակարանում ու չգիտի, որ վերջ ի վերջո նրա բոլոր վերքերը կսպիանան, ամեն ինչ կմնա կյանքի տաք ծածկոցի տակ, երեխաները ոտքի կկանգնեն, իսկ նա այդպես էլ կպահպանի իր գեղեցկությունը, որը ոչ ոքի պետք չէ, մանավանդ ամուսնուն, վտանգավոր, զգայական գեղեցկությունը՝ խայծ ավտոբուսային ծանոթությունների, ծառայողական ծննդյան օրերի, գործուղումների ու հանգստյան տների արկածների համար: Իսկ նա, ով այնքան տառապում ու սիրում էր իր հիասքանչ ընկերներին՝ Մարուսյային ու Բոբին, մինչև կյանքի վերջը կհիշի այդ տաք մայիսմեկյան գիշերը, երբ նրանք գնում էին երեքով, շտապում մետրոյի փակումից առաջ տեղ հասնելու. Բոբը Մարուսյայի հետ ու կողքից նա, և ինչ թեթևությամբ էր նա ծիծաղում, հեռանալով ճանճրալի տնից, իսկ մայիսյան գիշերը, իր բոլոր աստղերով հանդերձ, լողում էր Մոսկվա գետի վրայով, վերևում ու ներքևում նույնպես առկայծում էին տաք լույսերը, և շատ մեծ էր արտասվելու ցանկությունը՝ երջանիկ լինելուց, հավանաբար երջանիկ լինելուց:

# Հանգստապուրակի դիցուհին

Կան մարդիկ, որոնց չեն ուզում: Ոչ ոք չի ուզում: Այ դա խնդիր է՝ այդպիսիք ինչպե՞ս գոյատևեն:

Ճիշտն ասած, այնպես չէ, որ բոլորն ու ամենուրեք չեն ուզում, պարզապես պետք է գտնել այն կետը, որտեղ կա մարդ, որը չես ասի, թե ուզում է գործ ունենալ քեզ հետ, այլ նա ընդհանրապես դեռ ոչ մի բանի մասին չի էլ կասկածում: Ասենք՝ նոր մարդ: Եվ ինչ-որ կերպ պարզվում է, որ նրա կողքին կարելի է բնավորվել, ինչ-որ բան շինել, որևէ կերպ լինել: Եվ եթե գտնվել է նման համակերպվող մարդ, ապա վերջ, գործը գլուխ է բերված, հանուն նրա և կապրի չսիրվածը ու գետինը տակնուվրա կանի, որպեսզի ոչ ոք դուրս չվռնդի:

Ահա և բնավորվեց այդպիսի մի չսիրված. կոչում են նրան Ա. Ա., մեր պատմության մեջ նա հայտնվում է էժանագին կոմուֆլյաժային համազգեստով և առանձնապես ոչ երիտասարդ տարիքում: Ինչ-որ տեղից է եկել, որտեղից որ նրան քշել է ճակատագիրը, դասատու(չսիրված դասատու)՝ մոտակա ծայրագավառից:

Ու՞ր է եկել նա:

Սա հենց ծանոթության պատմությունն է:

Նա եկել էր քաղաքից դուրս հանգստանալու (ապրում էր մոտակայքում) և հայտնվել էր մի գյուղում, որտեղ մի անգամ քամին բերեց նաև մի հմայիչ մոսկովյան տիկնոջ:

Այսինքն հենց նա՝ Ա. Ա.-ն, վարձել էր այդ տիկնոջ ազգականուհու տնակի ծածկապատշգամբը, այսպես ասած, ամառանոցատունը: Այստեղ և արհեստական լճակ կար, և տնից առիշեղ անտառ, երեկոները հանգիստ է ու հաճելի, մոծակներ էլ կան, բայց նա լույսը չէր վառում: Հանգիստ, իր համար ապրում է մարդը. լուսաբացին ամբողջ

օրով դուրս է գալիս թիկնապայուսակով, ինքը՝ կոմուֆլյաժով, ոտքերին՝ հին կեղեր: Թիկնապայուսակում չգիտես ինչ կա: Գնում է մի ամբողջ օրով, թափառում է ինչ-որ տեղ, ուտում է ինչ-որ բան (իսկ ծածկապատշգամբում նա անգամ էլեկտրասալիկ չունի, և ընդհանրապես լույս չի ծախսում, լամպը պտտեցնելով հանել է ու տվել տանտիրուհուն: Թրաշվում է ձեռքով):

Տնտեսու՞մ է:

Ոչ մի բանի մասին չի խնդրում և քաղաքավարի հրաժարվում է, անգամ երբ տանտիրուհին անհարթ ափսեի մեջ առաջարկում է երեկվանից մնացած կարկանդակը (այսօր նորից են թխում). ոչ, շնորհակալություն:

- Բայց, ախր, Դուք ի՞նչ եք ուտում,- սրտնեղած կատակով հարցնում է տանտիրուհին, որը մտքին դրել էր կերակրել դասատուին ու դրա դիմաց վճար վերցնել նրանից, եթե չստացվի, ապա՝ գոնե էլեկտրասալիկի համար: Բայց նա անգամ հատուկ զգուշացրել էր, որ էլեկտրականություն չի օգտագործելու, օրերը երկար են:

Տեսա՞ք ինչ, օրերն են երկար նրա համար: Ժլատությունից հատուկ է հորինել:

Մի խոսքով՝ չսիրեց նրան տանտիրուհին:

Հարցերին նա անմիջապես չի պատասխանում, և պատասխանում է այնպես, որ այլևս հարցնելու ցանկություն չի մնում. «Իսկ ի՞նչ տարբերություն»,- հարցով պատասխանում է հարցին:

Անգամ անքաղաքավարի է:

Սակայն ամեն մի կողպեք իր բանալին ունի և եկավ Մոսկվայից այդ մորաքույրը՝ խնդուն, խիստ գործնական, կարծեմ՝ տանտիրուհու ամուսնու ազգականի բաժանված

կինը: Բայց այդ տիկինը վաղուց արդեն սովորություն ուներ ամառային երկու շաբաթով, կես արձակուրդով ժամանել այստեղ, իբր սիրում է միջին ռուսական սարահարթը. մուրաբաներ էր եփում, աղ ու թթու էր դնում ձեռքի տակն ընկածը, քիչ էր մնում հաղարջն էլ աղ դներ: Մեկնում էր բանկաներով ու պարկերով լիքը բեռնատարով:

Եվ եռում-զեռում էր աշխատանքը այգում, ցախատան մոտ, ստվերում ու ծածկարանի տակ: Նա հենց այնտեղ էլ ապրում էր՝ ցախատանը, դեռ երեք տարի առաջ էր. մի տեղ տախտակ էր խփել ու ճեղքերը փակել, մի տեղ միջնորմ էր դրել, և մի անգամ նույնիսկ ուրախացած եկավ ախոռի նախկին դուռ բերելով, որի վրա կրաշաղախով գրված էր «այծ»: Ըստ երևույթին՝ օտար հարևանուհին, որ մարդիկ էր վարձել բակի հին իրերը քանդելու և դուրս տանելու համար, հատուկ նրան էր տվել դուռը, որպեսզի մոսկվացին անկյուն չգրավեր թշնամական տնակում և այնտեղ եկամուտ չբերեր: Ընդսմին, դռան վրա կար այն ամենը, ինչ պետք էր՝ երկու ծխնի, սողնակ, անգամ կողպեք կար, նույնպես հին: Եվ մոսկվացին ցախատանն իր համար սենյակ սարքեց, որպեսզի ապրեր անվճար: Ճիշտ է՝ նա լույս ուներ և հեռուստացույցն էր աշխատում, և ոչ մեծ սառնարան ուներ: Իսկ էլեկտրաէներգիայի համար վճարում էր ըստ իր հաշվիչի, որը մնացած իրերի հետ խնամքով դարսում էր ու թողնում տանտիրուհու մոտ: Այնպես որ, հենց տանտիրուհուն էլ բարեկամուհուց ոչինչ չէր մնում, միայն չարչարանք:

Ճիշտ է՝ տանտիրուհու թոռները՝ Մաշան ու Յուրան, այնուամենայնիվ, մեկնել էին Մոսկվա, ձմեռային արձակուրդները մորաքույր Ալևտինայի մոտ անցկացնելու, բա

ինչպե՞ս, տեսել էին Կրեմլը:

Իսկ իր ցախանոցային սենյակը մորաքույր Ալյան կոկիկ տեսքի բերեց, պաստառներով պատեց, տանիքի ծածկը կարկատեց, պատուհանի տեղ ծառայող ապակիով անցքի վրա վարագույր կախեց: Անգամ քնելու տեղ սարքեցին, վրան՝ չոր խոտով լցված պարկը. կեցցես, գյուղական կյանք:

Կալվածքի տիրուհու լեզուն բուն չէր մտնում. ճիշտ է՝ բազում դժգոհություններ ուներ առողջական վիճակից, աղքատությունից: Սակայն այդ ամենն հասցեական չէր, Ալևտինան մտադիր չէր նման տրտմալի զրույցի բռնվել: Երեկոյան նա եղևնու կոներով եռացնում է ինքնաեռը և տանտիրուհին, ծիծաղը երեսին, զգուշորեն (մոսկովյան կարամելը բերանում) բամբասում է Ալևտինային.

- Իմ տնվորը ամուրի է: Ժլատից էլ ժլատ:

- Օ՛:

- Այո, չամուսնացած, ամուրի ուսուցիչ: Երեսունհինգ տարեկան:

- Ու՜ (Ծիծաղ):

- Չի ուզում անգամ կոպեկ ծախսել, առավոտյան ուսապարկն առած դուրս է գնում ու երեկոյան գալիս, լվացվում է դույլից ու պառկում քնելու:

- Դե՛:

- Ի՞նչ է ուտում, ծածկապատշգամբում հացի պատառ էլ չկա:

- Ճաշարա՞ն է գնում:

- Ոչ, չգիտեմ, ամեն անգամ ճաշարան չես գնա, ավտոբուսում մշտապես ասեղ գցելու տեղ չի լինում … իսկ մեզ մոտ հաճախ չի էլ կանգնեցնում, անցնում է կողքով:

- Այո, պատահում է:

- Այնպես, որ չգիտես, թե ուր է թափառում:

Մոսկվացին հարցական ծիծաղում է: Այո, նա դեռ ցերեկով է եկել, դեռ նոր է իրերն իրենց տեղը դրել ու ապրելու տեղը կարգի բերել: Բոլոր հարցերը լուծելու ենք վաղը:

- Հաղարջ առնելու՞ ես:

- Քա՞ղցր է:

- Այս տարի շատ քաղցր է,- երգում է տանտիրուհին,- անձրևները քիչ էին, ինքս եմ ջրել:

- Իսկ խոշո՞ր է:

- Պարծանքով կվաճառես,- բարկանում է տանտիրուհին,- և վատաբանելով կգնես:

- Դե ես ե՞րբ վատաբանեցի,- ծիծաղում է մորաքույր Ալևտինան:

Տանտիրուհին կարծում է, որ նա այնտեղ՝ Մոսկվայում, մեծ հարստություններ ունի (երեխաներն էին ասել), և տեղն ու տեղը սկսում է իրեն գովել, ընդ որում՝ գովաբանությունն անմիջապես սահուն կերպով վերափոխվում է դառը դժգոհությունների. թե ինչպես է երկու երեքսենյականոց բնակարանները զիջել աղջիկներին, երբ նրա սեփական տունը քաղաքում ավերում էին, իսկ ինքը ձմեռն անց է կացնում մեկսենյականոցում, և որ ավագ դստեր ամուսինը ոստիկանության կապիտան է, իսկ մյուսինը ավելին՝ գործարանում հրշեջ է, մի օր ու գիշեր քնում է աշխատավայրում, երկուսը՝ տանը:

- Եվ տանիքը ներկելու խնդրանքիդ չի արձագանքի, սերիալներ է նայում, չես կտրի: Մարդ պիտի վարձեմ: Իսկ երեխաներին՝ ամռանը ինձ մոտ: Օրը երեք անգամ տատիկը ուտելիք պիտի հասցնի: Ամեն ինչ ես, ամեն ինչ իմ

վրա (և այդպես շարունակ):

Տանտիրուհիների, չգրված կատակերգությունների ու աշխատանքի հերոսուհիների սովորական զրույցներ: Ինքնագովաբանություն արդարացի զայրույթի ձևով:

Այդ ընթացքում տնվորը՝ կուզը մեջքին, փոշոտ կոմուֆլյաժով ստվերը, անձայն բացեց դռնակը (Տիշկան հաչեց), արահետով մոտեցավ տանը և արագորեն ներս սողոսկեց իր ծածկապատշգամբը ու սկսեց այնտեղ զեռալ: Դուրս եկավ դույլերով, հեռվից քթի տակ ինչ-որ բան փնթփնթաց ու գնաց ջուր բերելու: Վերադարձավ, լվացարանում լվացվեց մինչև գոտկատեղ: Ահա այսպիսի խաղաղ պատկեր:

Երկու Պենելոպա թեյ են խմում ու նայում ճանապարհորդությունից վերադարձած մարդուն, որն ինքն իր մեջքին ջուր է լցնում:

- Ալեքսեիչ,- վեհորեն, բայց ոչ առանց վախի բացականչում է տանտիրուհին,- տե՛ս ինչքան խնձոր է թափվել գետնին, ոսկորներս ցավում են, չեմ կարող կռանալ, հավաքի՛ր քեզ համար:

- Ներեցե՞ք,- փռնչալով, ինչպես ձին վարսակի արտերում, պատասխանում է տնվորը:

Տանտիրուհին ձեռքը թափ է տալիս ու գրեթե բարձրաձայն հայտնում մորաքույր Ալևտինային.

- Նա մի տեսակ չսիրած է, Վալենտինա (նա չի կարողանում, ըստ երևույթին, արտաբերել «անմարդամոտ» բառը: Եվ «Ալևտինան» նրա մոտ չի ստացվում):

Նոր Ռդիսևը անցնում է իր անկյունը: Իսկ մորաքույր Ալևտինան գոհ ծիծաղում է: Ընդ որում՝ բոլորովին անտեղի: Նրա ծիծաղը ցածր է, կոկորդային, ու հասնում է մինչև

պատշգամբ: Բայց այնտեղ մութ է ու հանգիստ, ոչ մի ձայն չի լսվում:

- Հրաշալի է Դնեպրը խաղաղ եղանակին,- անպատեհ ձևով նկատում է մորաքույր Ալևտինան և նորից արձակում իր որովայնային ծիծաղը: Իբր ակնարկում է ուսուցչի մասնագիտությանը: Իսկ տանտիրուհին շարունակում է փնթփնթալ իրենը.

- Երեսունհինգ տարեկան է և ոչ մեկը:

- Այսի՞նքն:

- Ինչո՞ւ է նա անմիտ թափառում: Կորչում է բարիքը: Ամուրի ապրելով:

- Ի՞նչ բարիք…,- ծիծաղում է մոսկովյան մորաքույրը, ինքն էլ արդեն վաղուց լարված մտածելով այդ թեմայի շուրջ:

Մորաքույր Ալևտինան գերբնակեցված Մոսկվայում թախծող բազում աղջիկներ ու կանայք ունի աչքի տակ պահած: Մոսկվան նրանց համար չէ գերբնակեցված, նրանց համար Մոսկվան գայլերով վխտացող անմարդաբնակ անապատ է: Առավոտյան աշխատանքի, երեկոյան՝ վախով աշխատանքից, հանգստյան օրերին պետք է ինչ-որ տեղ հյուր գնալ կամ ընկերուհու հետ խանութներով շրջել. ճանճրույթ: Իսկ այստեղ, ահա նա ողջ-առողջ: Ոչ կուզ է, ոչ կաղ, չի կակազում, հոգեկան հիվանդ չէ, երևի:

Ինչպես էլ ճարպկորեն առարկեց՝ «ներեցեք», որպեսզի ոչինչ չպատասխանի: Եվ կանխեց անպետք խոսակցությունը:

Իսկ թափված խնձորներով լիքն են շրջակա գյուղերը, ինչքան, նույնպես ամուրի կանգնած, ազնվամորու, մանր

հաղարջենու, սալորի, վայրի տանձենու անխնամ այգիներ կան:

- Նա հո Կամարովկա չի՞ վազում,- հարցնում է մտածկոտ Ալևտինան:

- Աստված գիտի,- հորանջում է տանտիրուհին:

- Դե, գնա, ես բաժակները կլվանամ:

- Այո, գնամ, Վալյա: Երեխաներն ուշ կգան: Ես արևից ալերգիա ունեմ և տեղիցս ելնում եմ ժամը չորսին, ես այնպես եմ տանջվում,- կարևորությամբ հայտարարում է տառապյալ կինը և սողոսկում իր դույլի վրա: Կիսաբաց պատուհանից լսվում է շիթի հեռավոր ձայնը, ինչպես կովկիթի մեջ:

Այսպես ասած՝ թեյ խմեցին: Մնացած օրերին տանտիրուհին կիսաշրջազգեստը վեր է քաշում ծառերի տակ՝ դա այգու համար օգտակար համարելով, սակայն այսօր երեկոյան բակում տնվորներ շատ կան:

Երկնքում աստղերը շատանում են, դուրս են գալիս ասես ճակատագրի նշաններ, ուրվագծում են ապագայի պատկերը:

Մորաքույր Ալևտինան ախ է քաշում՝ նայելով մայր մտնող արևի կողմը:

Նինան՝ ահա թե ով է նրան հարմար. նույնպես ոչ մարդամոտ, դեղատանը դեղագործ է, մայրը վերջերս է մահացել: Նինան երեսունյոթ տարեկան է: Մեկ սենյականոց բնակարան ունի ինչ-որ հեռավոր Դեգունինոյում, Մոսկվայի ծայրին: Ինչպե՞ս էին նրանք այնտեղ միասին ապրում: Մայրն անմիջապես դուրս էր վռնդում հազվագյուտ փեսացուներին: Իսկ ու՞ր խցկեին նրանց: Սուս ու փուս Նինան՝ մեծ ու ջրագույն աչքերով, լռում է (աշխատավայ-

ռում պատրաստում է միքստուրաներ և քսուկներ, և երևի նմանապես լռում է):

Նրա մայրն էլ Ալևտինայի նախկին ամուսնու հեռավոր բարեկամուհին էր: Այնտեղ բարեկամներն ավազի քանակով էին: Ասք Ֆորսայթների մասին՝ երդվում եմ: Բոլորը գալիս էին Մոսկվա, մարդու գնում, կնության տալիս աղջիկներին: Հարսնացուներ, հարսեր, ամուսնություններ, վիրավորանքներ:

Հրաշալի է՝ մտածում էր մորաքույր Ալևտինան, ինչպես կմտածեր Հանգստապուրակի հին աստվածուհին՝ հյուսելով մարդկային ճակատագրերի թելերը, այս ու այն կողմ դրանք խաչաձևելով ու իրար կապելով ապագա երեխաներով:

Ճակատագրի այն բարակ թելը, որին կապված էր խոշոր աչքերով այս Նինա կովը, հանկարծ թպրտաց, զնգզնգաց ու ձգվեց, որպես ոսկե շող, ասես խավարի մեջ պտտվող ոչ մեծ լուսարձակից առկայծող:

Իսկ ճակատագրի մյուս թելը դեռ անբան պարանի պես կախված էր մնում նավակի ու կառամատույցի միջև:

Սակայն շողը լուսարձակեց՝ ցրելով ու խոցելով խավարը, ջուրը դողդողաց, նավակը ծանրորեն տեղից շարժվեց, ճողփեց այս ու այն կողմ, հեռացավ տախտակամածից, և այ քեզ բան՝ պարանը նույնպես ձգվեց ու սկսեց երգել: Եվ այդժամ լուսարձակի շողը սրածեց նրան, անդիմադրելի ոսկեգույնով վառեց այդ խոնավ անհրապույր թոկը: Այն բոցավառվեց, փմփուշացավ, ի ցույց դրեց յուրաքանչյուր թելիկը, ինչպես մի որևէ լաքապատ ամսագրի լավորակ գեղարվեստական լուսանկարի վրա:

Մորաքույր Ալևտինան ծպտվեց ու սկսեց սպասել:

Ապագա երեխան նույնպես հապաղեց այնտեղ՝ հասունացող հեռուներում:

Հանգիստ էր և՛ բակում, և՛ աշխարհում, իրար վրա էին կուտակվում հատապտուղներով ծանրաբեռնված թփերը, պարսպի պես կանգուն էին հին խնձորենիները: Քաղցր բուրում էին երեկոյան բոցենին ու ծխախոտը:

Եվ ահա Ա. Ա.-ի ստվերը խավարի միջով վայրկենապես անցավ արտաքնոց: Ընդ որում՝ լսելի չէր ոչ մի թխկոց, ոչ մի ճռռոց: Միայն ինչ-որ բանի դիպչելով՝ խշխշաց անդրավարտիքը: Ինչպե՞ս կարող էր նա այդպես սողոսկել:

Դա դուր եկավ պառավ Ալևտինային:

Նա շարունակում էր սպասել և գյուղական արտաքնոցի դժոխքից աղոտ ստվերի վերադարձին արձագանքեց հետևյալ բացականչությամբ.

- Բարի՛ գիշեր:

(Ի միջի այլոց, ինչպես «ձեռքերդ վե՛ր»):

- Բարի,- պատասխանեց ստվերը և շփոթահար մի պահ քարացավ:

- Եվ մի՞թե Դուք ճիշտ եք վարվում,- ուղղակիորեն հարցրեց Ալևտինան:

- Ներեցե՛ք:

- Դե՛, ես այդպես էլ գիտեի: Դուք միայն մտածեք: Եվ ի՞նչ անենք հիմա,- հարցրեց մորաքույր Ալևտինան: - Եվ ներողություն չխնդրեք, չեմ ներում. ոչ մի «ներեցեք»:

Իսկ նա ուզում էր նորից բարբաջել իր փրկություն-բառը, իր «ներեցեքը», որով կասեցնում էր կանացի բոլոր հարցերը:

Եվ Ա. Ա.-ն քարացավ կես քայլի վրա, ինչպես անշար-

ժանում է աքլորը. ներս քաշելով գլխիկն ու վեր բարձրացնելով ոտքը՝ բայց դեռ գետնին չդնելով այն:

- Եվ ինչքա՞ն եք Դուք պարտք,- խստորեն, անգամ անբարյացակամ շարունակեց Ալետինան:

Ստվերապատկերից երևում էր, որ աքլորը կարկամել էր,- ըստ երևույթին Ա. Ա.-ն մտածեց, որ մորաքույրը իրեն շփոթել է ուրիշի հետ:

- Ո՞վ,- բերանից թռցրեց այդ սեռահասուն որձը ու թակարդի մեջ ընկավ, որովհետև իրականում նա պետք է ճոողոպրեր դեպի ծածկապատշգամբ, կողպեր դուռը, վայրկենապես հայտնվեր թախտին ու գլուխը թաքցներ ծածկոցի տակ:

Իսկ նա հիմարի պես կանգ առավ ու հարցրեց իր այդ «ով» բառը:

Գուցե նրա խիղճը հանգիստ չէր, գուցե ինչ-որ բան էր արել հարազատ վայրերում ու հիմա վախենում էր հետապնդումից:

Վախեցավ տղամարդը, վախեցավ:

Ալետինան կամացուկ ասաց.

- Ես ամբողջ գյուղով մեկ չեմ հայտարարի:

Աքլորը մտածեց, առաջ քաշեց բծավոր շալվարի միջի թաթը ու դմփոցով գետնին զարկեց: Այսինքն կատարեց ճակատագրին ընդառաջ առաջին քայլը: Այնուհետև բարձրացրեց երկրորդ ջլուտ ոտքը, մեկնեց այն գետնի վրայով՝ նպատակ ունենալով կատարել հաջորդ քայլը: Աքլորի սիրտն ուժգին տրոփում էր:

Բայց նա համառորեն առաջ էր շարժվում՝ թնդացնելով զենքն ու զրահը, զրնգացնելով ականջողերն ու թափահարելով կարմիր մորուքի լաթը: Նրա աչքերը դեղնակարմ-

բավուն չոր շրջանակների միջից դուրս էին ցցվել կոճակների պես: Կատարը կարմրել էր ու ծանրացել: Պատկերը պատրաստ էր:

«Ապուրի մեջ, գցում են ապուրի մեջ»,- աքլորագլխի մեջ զարկում էր չձևավորված գիտակցությունը, սակայն վարժանքներից ջղուտ թաթերը պտտում էին մկանները, ասես շոգեքարշի լծակներ լինեին, և Ա. Ա.-ն մոտենում էր ինքնաեռով սեղանիկին, որի մոտ նստած էր ծանրամարմին, ծեր Ալևտինան՝ ամառային աշխատանքների պատճառով կարճ կտրած սանրվածքով:

Իրիկնալույսի տակ մի կերպ երևում էին նրա կանացի գծերը. առջևից երկու պարկ, կուրծքն ու փորը միաձուլվում էին ամուր ուսերով մեկ հսկայական ամբողջության մեջ: Ալևտինան ճակատին թափվող հերափնջով հռոմեական կայսեր տեսք ուներ: Խիստ, բարակ բերանն ու ցցուն քիթը հստակ երևում էին աղջամուղջի միջից:

Մորաքույր Ալևտինան իրեն ղեկավարի պես պահեց:

- Դե՛, ի՞նչ կարող եք ասել, որպես արդարացում:

Աքլորն անգամ կռնչաց և անսպասելիորեն բուռն ալեկոծվեց. ոչինչ պարտք չէ, էլեկտրականություն ընդհանրապես չի օգտագործում, դույլերն իրենն են, իսկ ահա ջուրը ջրհորից է, այդ խնդիրը պետք է լուծել: Չնայած տանտիրուհին չգիտես ինչու ասում է, որ այն փորել են փայաբաժիններով, և նա անձամբ վճարել է այն ժամանակվա 350 ռուբլին, բայց միայն, այսպես ասած՝ իր տեղը, ոչ տնվորների տեղ, ինչի համար էլ իբր նրան սպառնում են, իբր հարցնում են, թե ամռան օրերին ինչու՞ է ջրհորն ամբողջությամբ դատարկված: Բայց չէ՞ որ ես ջրելու համար չեմ ջուր վերցնում, այլ միայն օրական 20 լիտր,

այն դեպքում, երբ ուրիշները վերցնում են 200-ական լիտր ջուր:

- Այդ հարցը մենք կլուծենք,- պատասխանեց մորաքույր Ալևտինան:- Դա լուծելի հարց է: Չեն համարձակվի: Ինչպե՞ս կոչել Ձեզ:

- Այսի՞նքն,- Ա. Ա.-ն օգտվեց նախապես պատրաստած շտեմարանից: Նա այդպիսի մի քանի արտահայտություններ ուներ պահած: Նա աշակերտների վրա վարժված էր անմիջապես չպատասխանելու. ընդհանրապես հարցերին չպատասխանելու:

- Ի՞նչ, Անդրե՞յ:

- Ենթադրենք:

- Անդրեյ Ալեքսեյիչ, առանց թուրմի և շաքարի թեյ կխմե՞ս: Միևնույն է՝ եռացրած ջուրը թափելու եմ:

- Ոչ, շնորհակալություն,- զայրացկոտ պատասխանեց աքլորը:- Ես Ալեքսանդրիչ եմ:

Այսպես էլ սկսվեց այդ անիմաստ ու անհեթեթ զրույցը, որին կցվեց Ա. Ա.-ն ու խրվեց դրա մեջ. շրջահայաց, զգուշավոր, կոփված, մարտական ու չար, միշտ անկասելիորեն ապուրի բաժին դառնող աքլորը:

Այս ամենը տեղի էր ունենում ոսկե ժամանակաընթացքում, ամռան ամենաթեժ օրերին. հուլիսի կեսն էր, օգոստոսի սկիզբը, երբ պտուղներն արդեն պետք է հասնեն ու թափվեն:

Օգոստոսին Ալևտինան մեկնեց Մոսկվա, վարձեց փոքրիկ ավտոբուս, տեղավորվեց ապակյա տարաների, պարկերի ու փաթեթների արանքում: Այդ ամենը մեքենայի մեջ բարձեց Ա. Ա.-ն, իսկ տեղացի վարորդը առաջ չանցնելով մեքենայի առջևի անիվներից, խոժոռ դեմքով նայում էր,

բայց չէր օգնում, քանի որ բեռնման աշխատանքների մասին չէր պայմանավորվել (այդ և շրջակա գյուղերի տղամարդիկ վարպետորեն խմում էին և հովեկներից ոչ մեկի մոտ վարձով չէին աշխատում, ոչինչ չէին անում, վախենալով ավելի էժան գին վերցնել, քան Մոսկվայում, որի մասին խելացնոր ասեկոսեներ էին պտտվում: Տղամարդիկ նստած էին այդ ասեկոսեների վրա, ինչպես ժլատ ասպետները՝ ոսկով լիքը պարկերի վրա, իմանալով իրենց հնարավորությունները և հանդիսավոր կերպով մատը մատին չխփելով:)

Տանտիրուհին պատուհանից հետևում էր հավաքույթին և նույնպես տեղից չշարժվեց: Թող իրենք քարշ տան:

Սակայն հանկարծակի նա ալեկոծվեց. ուսուցիչը ծածկապատշգամբից վերցրեց երկու ուսապարկ, երկու բավականին մեծ բրեզենտե պայուսակ, քարշ տվեց դրանք մեքենայի մեջ, ասաց «Շնորհակալություն, ցտեսություն». (տանտիրուհին ի պատասխան միայն աչքերը թարթեց) ու ծածկապատշգամբի դուռը հետևից չփակելով ինչպես հարկն է, նստեց ավտոբուսի մեջ՝ պարկերի մոտ:

Տանտիրուհին իր աղջկա համար հենց այդպիսի փեսայի մասին էր երազում, և ոչ թե այն հրշեջի:

Ալևտինան նստած լինելով առջևի նստատեղում, դեմքով դեպի Ա. Ա.-ն, փոքրիկ ավտոբուսի նեղ տարածության մեջ և դիտելով, թե ինչքան հանգիստ է նա, հոգածությամբ նայելով իր պարկերին, մտածում էր նույնի մասին. եթե աղջիկ ունենար, այսպիսի ամուսին կցանկանար իր աղջկա համար, իսկ դրա փոխարեն ուներ հարբեցող տղա ու կռապաշտ հարս: Իսկ ահա թոռը Ալևտինայի իսկական սիրելի որդին էր, սակայն տվյալ ժամանակաշրջանում

նա տարիքային ծանր ճգնաժամ էր ապրում (14 տարեկան). ոչ մի բանի համաձայն չէր, խզխզում էր, ծխում էր, աչքերը հաճախ կուլ գնացած էին, կատաղած, ակհայտորեն խայտառակված էր պզուկներով, և տատի հետ անգամ հեռախոսով չէր խոսում, միայն ֆշֆշում էր: Անգամ «բարև» դուրս չես քաշի նրանից: Միայն՝ «ալե»: Հենց նրա համար էր Ալևտինան մուրաբաներ և այլ բաներ պաշարում: Թոռը սիրում էր ուտել տատի պատրաստածը: Դրա համար ստիպված էր կերակրել և հարսին, քանի որ սեփական տղան, ընդհակառակը, ոչինչ չէր ուտում. պճռոկում էր գաթայի մի ծերից ու շտապում կոնծել ամբողջ մրգողին: Փոխարենը ուտում էր հարսն ու գովաբանում, ամբողջն աղում էր իր աղացաքարերով. նրան սպանելն էլ քիչ էր: Փականագործի չափ ծխում ու խմում էր, դեռ վրայից էլ գողանում դեսից-դենից: Ասել է թե՝ միևնույն է, մերն է լինելու, էլ ինչու ձեր մահվան սպասել: Արծաթե գդալը նա է տարել, ուրիշը չէր անի: Երևում է, որ քրքրել էր փաստաթղթերը: Ակնարկում էր. «Մենք պիտի ձեզ հետ խոսենք ապագայի մասին»: Հետո կխոսենք:

Այսպես Ա. Ա.-ն ապակյա բանկաների, պարկերի ու փաթեթների ընկերակցությամբ, քչամարդ կիրակի օրվա մայրամուտին, ժամանեց խաղաղ օգոստոսյան մայրաքաղաք:

Մեքենան սլանում էր Պոդուշկինոյի արվարձանների լայն, գեղեցիկ փողոցներով, այնուհետև թեքվեց դեպի զբոսայգու պես գեղեցիկ բակը, և Ալևտինայի բոլոր հարստությունները վերելակի միջոցով հասցվեցին նրա բարեկարգ երկսենյականոց բնակարան, որտեղ ամբողջ պատով մեկ պահարան կար, հատակին փռած գորգ ու վրան

բազմոց, բյուրեղապակյա ջահ և սրտիդ ուզած այլ բաներ:

Ավելի ուշ՝ գիշերով, Ա.Ա.-ն արդեն նստած էր հակառակ ուղղությամբ գնացող գնացքում և անրջում էր:

Նա երազում էր սեփական ընդարձակ բնակարանի մասին, ինչպես Ալևտինայինն է, կինոդերասանուհու նման մի լավ կնոջ, որդու՝ հանգիստ խելոք երեխայի մասին, որի հիշողության մեջ կարելի է ներդնել հայրական բոլոր մտքերը: Երազում էր այն մասին, որ այլևս պետք չի լինի աշխատանքի գնալ այդ դպրոցը, որտեղ երեխաները խմբովին արևածաղիկ են չրթում անգամ դասերին, անգամ համարձակվում են դասերին նստել ականջակալներով:

(Ամեն ինչ այդպես էլ եղավ, միայն շատ տարիներ անց):

Նինայի հետ նա ծանոթացավ Ալևտինայի ծննդյան օրը:

Ըստ երևույթին՝ այդ պահի դրությամբ Ալևտինան վերջնականապես խռովել էր հարսից, քանի որ ծննդյան տոնին ընտանիքի անդամներից ոչ ոք չկար:

Ա. Ա.-ն Ալևտինայի ուղարկած փողով գնալ-գալու տոմս գնեց, ու շահեց երեք օր. փոխվեց ում հետ կարող էր: Ասաց, որ մորաքույրն է հիվանդացել:

Նինան Ա. Ա.-ին ոչնչով չհիացրեց:

Անբարետես, ոչ երիտասարդ աղջիկ, ջրագույն մեծ աչքերով, ինքը թմբլիկ, լուռ ու ամաչկոտ: Աչքերը կկոցում է, երբեմն էլ՝ չռում:

Ճիշտ է՝ Ա. Ա.-ին էլ էր մայրը հաճախ ասում. «Ի՞նչ ես աչքերդ չռել»:

Դրա համար էլ նա արդեն վաղուց աչքերը կկոցելու սո-

վորություն էր ձեռք բերել և հիմա հասկանում էր Նինային, ինչպես ոչ ոք: Տեսնում էր ամբողջ ներքինը: Անգամ քմծիծաղ էր տալիս:

Կարճ ասած՝ Նինան նրան բոլորովին դուր չեկավ, սակայն ելնելով նրանից, թե ինչպես էր Ալեքսինան վերաբերվում Նինային, ինչ հարգանքով, կարելի էր կարծիք կազմել Նինայի մասին, որպես մարդու և որպես մասնագետի: (Ալեքսինան տոնի ամենասկզբում հանեց ինչ-որ հին բաղադրատոմսեր ու տվեց Նինային, Նինան դրանք վերցրեց անտարբերությամբ, ասես մեծ մասնագետ:)

Դա սաստիկ զարմացրեց Ա. Ա.-ին:

Հաջորդ անգամ նրանք հանդիպեցին հիվանդանոցում, որտեղ և մեկ ամիս անց մահացավ Ալեքսինան: Այդ ամբողջ ընթացքում Նինան հոգ էր տանում նրան, բերում էր նրա համար հյութեր ու արգանակներ, տարբեր տեսակ կոտլետներ: Դա պարզվեց հետո, երբ Ա. Ա.-ն ամուսնացավ Նինայի հետ:

Ա. Ա.-ն եկավ իր հաշվին, կիրակի օրով. դա հերոսություն էր նրա նման աղքատի համար: Նա տեսակցեց իր թանկագին Ալեքսինային, վերջինս հանդիսավոր կերպով խոսեց նրա հետ, չնայած մեծ դժվարությամբ, ու փող տվեց նրան, բավականին շատ, ասելով. «Գնիր քեզ համար ինչ գրքեր ուզում ես»: Ընդ որում՝ նա խիզախորեն ոչինչ չավելացրեց, ասենք. «Ինձ կհիշես»: Ա. Ա.-ն լաց չէր լինում, բայց այդ պահին, ըստ երևույթին, նստած էր աչքերը չռած, որովհետև Նինան նայեց նրան աներևակայելի բարությամբ ու կարեկցությամբ: Ա. Ա.-ն անմիջապես կկոցեց աչքերը:

Նինան նրան ուղարկեց վերջին հեռագիրը, եւ նա եկավ

ուղիղ դիարան, անմիջապես գնացքից, գնացքն էլ դեռ ուշացավ, անիծվածը, և Ա. Ա.-ն սլանում էր մետրոյով փոքորկի արագությամբ: Ճանապարհը գիտեր, չէ՞ որ արդեն մի անգամ եղել էր հիվանդանոցում: Փառք Աստծո, հիանալի տեղագրական հիշողություն ունի: Սակայն ճիշտ կողմից դուրս չեկավ: Ոչինչ չէր ճանաչում: Փողոցում հևիհև հարցուփորձ արեց մոսկվացիներին, որոնք ցույց տվեցին նրան ճանապարհը:

Ամայի մի տեղ (այնուամենայնիվ մոլորվեց), շան հետ ինչ-որ մի կին սրտացավորեն, մանրամասնորեն ցույց տվեց դիարանի ճանապարհը: Երևում է՝ ինքն էլ լավ գիտեր, տառապել էր այդ ճանապարհին:

Սարսափելի խուլ տեղեր էին:

Գտավ հիվանդանոցը, գտավ դիարանը, խումբ-խումբ կանգնած էին անհայտ մարդիկ, նա հարցրեց՝ որտեղ են թաղում այսինչին, նրան պատասխանեցին վայրենի հետաքրքրասիրությամբ: Գտավ Նինային, միացավ նրան, գլխով արեց: Նա ի պատասխան շարժեց գլուխը: Բոլորն անթաքույց նայում էին նրան՝ աչքները պլշած:

Այդ ամբողջ ընթացքում նա կանգնեց Նինայի կողքին: Հետո նրան խնդրեցին օգնել դագաղը տանելու: Ավտոբուսով գնացին դիակիզարան, նորից չորս տղամարդկանց թվում տանում էր դագաղը: Դարձավ ասես յուրային:

Ամեն ինչ մինչև վերջ համբերատար տարավ Նինայի հետ: Նինան լաց չէր լինում, միայն դողդողում էր:

Ալևտինա Նիկոլաևնայի դեմքը մի տեսակ շատ երիտասարդացած էր ու խաղաղ, խիստ նիհարել էր: Նրան ծածկեցին կափարիչով և մեխերը ներս խփեցին:

Դիակիզարանից նորից նույն ավտոբուսով գնացին

քաղաք: Ինչ-որ տեղ բոլորին ցած իջեցրին: Մայթին գոյացավ ամենամոտ հարազատների ոչ մեծ ամբոխ: Հարբած ինչ-որ մեկն ասաց. «Խնդրում ենք հիշել բոլոր հարազատներին ու մերձավորներին» (սակայն դիտմամբ չնայեց Ա. Ա.-ի կողմը: Նրանք ընդհանրապես խուսափում էին նրանից: Ինչպես միշտ ու բոլորը:)

- Իսկ սա ո՞վ է,- հանկարծ արտասանեց մի կին, նույնպես հարբած:

- Նրանք խմել են ուզում, դրա համար են միացել,-պատասխանեց մի տարեց կին:

Ալևտինայի գեր որդի Վիկտորը թողեց իր նիհար կին Մարինային ու մոտեցավ Նինային:

- Դե, ինչպե՞ս ես: Այսինքն, ինչպիսի՞ն է կյանքդ: Չե՞ս ամուսնացել:- (Որոշակի դադար եղավ):- Շարունակ մենակ ու մենա՞կ:- (Հռհռաց):- Գնանք մեզ մոտ, մենք քեզ կկերակրենք: Կխմես մեզ հետ: Բոլոր տոներին արի: Թե չէ շան պես մենակ կմնաս: Քույրերիդ հետ կապ չէ՞ս պահում:

Նինան պատասխանեց.

- Շնորհակալություն բարի խոսքերի համար:

- Իսկ սա ո՞վ է: (Նա այնպես անփութորեն գլուխը շարժեց Ա. Ա. -ի կողմը, կարծես նա հեռու էր ու չէր լսում):

- Նա մեր ընկերն է,- կարճատև լռությունից հետո ասաց Նինան:

- Ամեն ինչ պարզ է,- նման հանգամանքների համար անտեղի ուրախ պատասխանեց Վիկտորը և անսպասելի, կարծես իմիջիայլոց, ավելացրեց.- Բնակարանն ինձ վրա կգրես: Թե չէ դու մենակ ես, և տարիքդ էլ արդեն… Գիտես՝ տարբեր են լինում այլ տեղերից եկած մարդիկ: Կս-

պանեն:

- Ճի՞շտ,- զարմացավ Նինան:- Չէ՞ որ ես քույրեր ունեմ:

- Դե ուրեմն ամուսինն է լինելու ժառանգորդը, կսպանի ու կժառանգի:

Այդ պահին Վիկտորը նայեց իր նիհար Մարինային, որը նայում էր նրան հարբած հայացքով ու այնպես արտահայտիչ, ինչպես կնայեն ապուշին:

Հանկարծ Ա. Ա.-ն ձայն արձակեց (ուսուցչական հնչերանգով).

- Նինա՛, մենք ուշանում ենք:

Նինան, չգիտես ինչու, նայեց շուրջը, գլուխը կախ գցեց, պատկերավոր ասած՝ ձեռնունայն հեռացավ:

«Իսկ հիշելը» բառերը մնացին Վիկտորի բերանին:

Ա. Ա.-ն, ստիպված վազեց Նինայի հետևից: Պետք էր նրանից հարցնել, թե ինչպես գնար մինչև մետրո: Դե, ինքն էլ հաստատ կգնա մինչև մետրո:

Նա գիշերային գնացքի տոմս ուներ:

Այդուհանդերձ, պետք է ասել, որ Ա. Ա.-ն բացառիկ երկչոտ ու ամաչկոտ տղամարդ էր: Դրա համար նրա դասերին կատարյալ խառնաշփոթ էր տիրում, նախազորակոչիկները կրակում էին միմյանց վրա ծամած թղթերով, աղմուկ էր տիրում, ինչպես ավտոկայանում:

Այսպիսով, Ա. Ա.-ն գնաց Նինայի հետևից. ինչ-որ կերպ նա կհասցնի նրան որևէ տեղ: Նա երկնչեց ինչ-որ բան հարցնել:

Նրա ապագա կնոջ լիքը կազմվածքը շարժվում էր մեքենայաբար: Գլուխը կախ վիճակում նրան կարելի էր վշտի ու վիրավորանքի կենդանի արձանի տեղ դնել, եթե

քանդակը լիներ շարժիչով ու հողակապով:

Անգամ մի տեսակ գերմարդկային վեհություն կար այդ ոչ երիտասարդ աղջկա մեջ:

Վիրավորանքը երբեմն մարդուն ուժ է տալիս, ինչպես դա լինում էր Ա. Ա.-ի մոտ, տնօրենի աշխատասենյակում զրույցներից հետո:

Եվ այստեղ պատահեց հետևյալը. դիմացի մայթի վրա մի բեռնատար կանգնեց ու փակեց Ա. Ա.-ի տեսադաշտը: Տեղն ու տեղը ինչ-որ մարդիկ սկսեցին բեռնաթափել այն հետնամասից:

Ա. Ա.-ն շտապեց շրջանցել, սակայն դիմացից եկողները նույնպես շտապում էին, մոսկվացիներ են, չէ՞, բոլորը մեկի պես վազում են առաջ, և չթողեցին արագ առաջ անցնել:

Երբ նա հասավ խոչընդոտներից այն կողմ, Նինան արդեն չկար:

Ոչ հասցեն ուներ, ոչ ազգանունը գիտեր: Վերջ, Ալևտինան իջավ, գնաց ցած:

Ինչքան էր պատմել Նինայի մասին, նրա կյանքի մասին, որ Նինան սուրբ է: Երբեք մոր խոսքը չէր կոտրել: Մյուս երկու աղջիկները թողեցին պառավին, կռվեցին հետը, իսկ Նինան այդպես էլ մինչև վերջ մնաց նրա հետ: Եվ ոչ մի կյանք էլ չտեսավ: Ոչ կինո էր գնում, ոչ ծանոթների մոտ: Ինքնազոհաբերություն:

Ա. Ա.-ն իմաստնորեն ներքուստ ժպտում էր այդպիսի պատմվածքներին ի պատասխան: Մայորի հարսնախոսություն:

Եվ հասկանում էր, թե ինչու է Ալևտինան նրան կանչում Մոսկվա, հիվանդանոց: Դրա համար էլ կանչում էր:

Նա հարցրեց, թե ուր է մետրոն ու մեքենայաբար գնում էր: Սիրտը մղկտում էր: Ողջ մարմնի մեջ կատարյալ դատարկություն էր զգում: Կարծես ինչ-որ բան էին պոկել միջից: Նախկինում նա դիմակայում էր Նինային, իսկ հիմա ոչ ոք չմնաց: Թողեցին անիմաստ ապրելու:

Մինչև գնացքը տաս ժամ կա:

Քաղցած, սառած, արցունքոտած աչքերով, սառը քամու առաջ:

Այդպես էլ մնաց մենակ:

Մետրոյի առաջ նա կանգ առավ, նայեց շուրջը:

Հետ դարձավ, վազվզեց մոտակայքում:

Հասավ այն կրպակին, որտեղ դեռևս ապրանքներ էին բեռնաթափում բեռնատարից:

Անցավ մի քանի րոպե, և կյանքն անցավ:

Պետք էր գնալ մետրո:

Եվ այդ պահին նա տեսավ Նինային: Նա արագ շարժվում էր նրան ընդառաջ ու լաց լինում: Նայում էր նրան իր խոշոր աչքերը լայն բացած: Նա էլ էր փնտրում Ա. Ա.-ին:

Ինչպե՞ս նետվեցին միմյանց ընդառաջ:

Նա քիչ մնաց համբուրեր Նինային, ասես երկար բաժանումից հետո, սակայն անմիջապես պինդ թևանցուկ արեց նրան, ասելով՝ ու՞ր էիր գնացել, մի՞թե կարելի է այդպես, հանգստացիր, և նա վերցրեց նրա անզգամ ձեռքից պայուսակը, ինչպես անում են բոլոր ամուսինները:

# Գոհր ինձ, երազ

Բավականին ծիծաղելի ու ողբերգական պատմություն տեղի ունեցավ հրատարակչության պանսիոնատում, որտեղ երեք հոգու նստեցրին մի սեղանի շուրջ, ինչը մերձեցնում է: Բայց երեքն էլ տարբեր սեռի էին, ինչը տագնապահարույց է, քանզի հնարավոր է եռանկյունի:

Եվ այն առաջացավ, գոյացավ: Երիտասարդ կինը առանձին, և այն երկուսը՝ տարիքով բավականին մեծ տղամարդը տնտեսագետ է, կինը՝ պատմաբան, երկուսն էլ՝ աշխատանքային մեծ փորձով: Երկուսը գիրք են գրում, երրորդը՝ երիտասարդը, ստուգող, սրբագրող է: Էլի եռանկյունի, քանի որ երիտասարդ կինը մյուս երկուսից՝ պրոֆեսորներից շատ ավելի հասարակ դուրս եկավ: Աշխատանքային ամբողջ հերթափոխի ընթացքում նա քրթմնջում է զուգընկերուհու հետ, բնագրով ստուգում է տեքստը և սրբագրում:

Բայց քանի որ այդ երիտասարդը հիանալի հիշողություն ունի, ապա գլխում նստած են կտորներից մասեր, շիլա, մեջբերում մեջբերման վրա, հեղինակներ, անվանումներ: Հարց է ծագում, թե ի՞նչ անել նման հիշողության հետ, խեղճ սրբագրիչը հիշում է ամեն ինչ:

Իսկ այն երկուսը՝ պրոֆեսոր և պրոֆեսոր, հանկարծ ուժգին հետաքրքրվում են այդպիսի ֆենոմենով, որ երիտասարդ սրբագրիչը անգիր գիտի, օրինակ, հազարավոր բանաստեղծություններ (ինչի է պետք), լսածը հիշելու արտակարգ կարողություն: Հիշում է մեկ անգամ լսելով, և այդ էակի անունն է Սոֆա:

Զվարճանքի համար նրան ստիպեցին (երկար չէր համաձայնում) արտասանել «Աստվածային կատակերգության» առաջին ոտանավորները: Հիացած հայացքներ

էին փոխանակում:

Պրոֆեսոր Միխայիլը գրգռվեց, աչքերը վառվեցին՝ ինչպիսի հազվագյուտ շնորհ: Պրոֆեսոր Գյուզելը, սակայն, արագորեն փոխեց թեման ու սկսեց խոսել այն գրքի մասին, որ նրան էին տվել կարդալ դեռ Մոսկվայում: Միխայիլն, այո, փոխարկվեց, Գյուզելի հետ գնաց նայելու նրա գիրքը, սակայն ընթրիքին ներկայացավ զգեստը փոխած, փողկապով, տոնական տեսքով և հրավիրեց Գյուզելին ու սրբագրող Սոֆային սրճարան՝ խմելու սուրճ և ինչ կուզենան:

Սրբագրողը՝ անհայտ անցյալով, փոքրամարմին, թմբլիկ մեկը, գնաց, կարծես թե դիմադրելով, չնայած գնաց՝ տեղի տալով հորդորներին (նա, իբր, պիտի զանգեր տուն, իսկ փոստը աշխատում է մինչև ժամը ութը), բայց ոչինչ, ավտոմատներն աշխատում են ամբողջ գիշեր և ես կուղեկցեմ ձեզ ու կսովորեցնեմ, թե ինչպես խոսել երկար ու անվճար (դա Միխայիլն է): Ես էլ պիտի զանգեմ, ինձ էլ է պետք (դա Գյուզելն է): Եռանկյունի:

Գնացին սրճարան, նվագում էր անցյալի երաժշտությունը. Միխայիլը հոյակապ տրամադրության մեջ էր, Գյուզելը շառագունել էր: Ավագներն անընդհատ խոսում էին գրքի մասին, Գյուզելը պատմում էր (սլավոնների ինչոր սովորույթներ, որ ծիսակարգորեն ուտում էին ծերերին, երեխաներին և այլն): Գյուզելն անդադար խոսում էր, ասես ցնորված լիներ, սրբագրողը օտարացած հայացքով էր նայում: Միխայիլը վճարեց սուրճի, թխվածքի ու գինու համար, և բոլոր երեքը թռչնիկների նման վեր բարձրացան, դուրս թռան և ուղղվեցին դեպի փոստատուն, կենտրոնում պահելով սրբագրողուհուն: Սրբագրողուհին հա-

մարը հավաքեց ինչպես սովորեցրել էր Միխայիլը (Միխայիլը թիկունքում կանգնած թելադրում էր ինչ անել) և իսկապես զգուշացրեց մեկին, որ զանգելու է և խոսելու՝ չսպասելով պատասխանի, անվճար: Իսկ հետո նորից է զանգելու, որպեսզի իմանա, թե տե՞ղ է հասել, արդյոք, հաղորդածը և ստանա պատասխանը: Ընդ որում՝ տարեց երկուսն էլ լսում էին (ակնհայտորեն), թե գլուխն ուսերի մեջ առած ինչ է խոսում սրբագրողուհին: Նա դատարկ բաների մասին էր հայտնում և շատ հակիրճ. ինչպես տեղ հասավ, ուր տեղավորվեցին, եղանակը, ծովը: Նրա ձայնը հնչում էր մեքենայաբար, առանց արտահայտչականության, կարծես թե՝ ըստ սովորության ստուգում էր տեքստը, զուգընկերոջից ոչ մի պատասխան չակնկալելով: Սակայն հետո նա դրամը գցեց ու ասաց. «Այդ ես եմ, խոսի՛ր» - և երկար լսում էր մեկին, նրանք չհասկացան, թե ում:

Տուն էին գնում բավականին երկար, տաք անձրև էր մաղում, փոշու և կաղամախու տերևների հոտ էր գալիս, արձակուրդի համար անպատեհ ժամանակ էր, մայիսի սկիզբ, ամենաձանձրալի շրջանը:

Պարզվեց, որ Գյուզելն աշխատում է գրքի վրա, Միխայիլը՝ նույնպես, իսկ սրբագրողուհին թեժ ուղեգիր էր գնել երեսուն տոկոսով, ոչ ոք արձակուրդ չէր գնում այդպիսի հիմար ժամանակ, հողը դեռ սառն է՝ չգիտես ինչու ավելացրեց նա:

Նրանք ոչինչ չիմացան Սոֆոչկայի մասին, նա խուսափում էր պատասխաններից, կատակի էր վեր ածում, և դա նրա ֆենոմենային հիշողության պարագայում, ուստի այն երկուսը սկսեցին ուղղակի աղմկել, մեկը մյուսի խոսքը կտրելով խոսում ու խոսում էին:

Բացահայտ եռանկյունի էր ձևավորվել, սակայն հայտնի չէր, թե ինչ բնույթի: Ամեն դեպքում Սոֆան կենտրոնում էր.

- Դուք մտապահու՞մ եք այն ամենն, ինչ մենք խոսում ենք,- հանկարծ հարցրեց Գյուզելը:

- Ոչ, ի՞նչ եք ասում,- պատասխանեց սրբագրողուհին: - Ես չեմ մտապահում:

- Իսկ ինչո՞ւ չեք մտապահում,- հետաքրքրվեց Գյուզելը: - Հետաքրքիր չէ՞:

- Չգիտեմ,- ամենայն անկեղծությամբ պատասխանեց սրբագրողուհին:

- Այո,- արձագանքեց Միխայիլը,- իսկ ես կհիշեմ այս երեկոն: Ամբողջ կյանքում:

- Ո՛չ, ես ոչ,- կրկնեց Սոֆան:

- Ինքնին անմիջականություն,- հանկարծ բացականչեց Միխայիլը:

- Այո (դա Գյուզելն էր):

Նրանք նորից սկսեցին շատախոսել, հիշելով ինչ-որ ազգանուններ, հին անեկդոտներ գիտության ու մահվան թեմաներով, սիրավեպեր, ձերբակալություններ, դավաճանություններ ու սխալներ:

- Հիշու՞մ եք՝ նա «դանտիստ» բառը թարգմանեց որպես «Դանթեի մասնագետ»,- բղավում էր Գյուզելը:

- Նա ասաց, որ այստեղ՝ սիմպոզիումում, բոլորը քայլում են քթները վեր ցցած, որովհետև տանը վազվզում են չորս թաթերի վրա,- նրան արձագանքեց Միխայիլը:

- Նա ասաց, որ այդ զույգը մարմնավորում է, ցավոք, խորհրդային գիտությունը, կինը կաղում է աջ ոտքից, իսկ ամուսինը՝ ձախ:

Երկուսն էլ արտակարգ տրամադրություն ունեին: Միխայիլը հանկարծ հայտնեց, որ հաշվարկել է թե գողերը որտեղ են թաքցրել հայտնի իտալական նախարարին, և որ այդ կապակցությամբ նա արդեն զանգել է Մոսկվա:

Գյուզելը հարցրեց՝ կգտնե՞ն նրան:

-Հազիվ թե,- գլուխը տարուբերեց Միխայիլը,- ես փոխանցել եմ հասցեն, սակայն ում եմ փոխանցել: Նրանք դա իրենցից դուրս չեն թողնի, բանը դրանում է:

Սոֆան ինքն իր համար ընդգծեց այդ փաստը, մտածելով՝ նա ի՞նչ է, ոգեմիջնո՞րդ է:

- Այ քեզ հանելուկ, հեռախոսը,- չգիտես ում անսպասելի ասաց Միխայիլը:- Որտեղի՞ց գտնել իտալական ոստիկանության հեռախոսը: Եվ ինչպե՞ս նրանց իտալերենով հայտնել հասցեն:

Ու նա տարօրինակ, խեթ-խեթ նայեց Սոֆային:

- Այսինքն՝ ինչպե՞ս,- ձեռք չէր քաշում Գյուզելը,- ինչպե՞ս թե՝ դուք գիտեք հասցեն:

- Այո, հասցեն գիտեմ, բայց հիմա նրան արդեն սպանել են, տանում են ավտոմեքենայի բեռնատեղ և մեքենան կշպրտեն փողոցում:

- Դե, ենթադրենք,- Գյուզելն անգամ ծիծաղեց,- ենթադրենք դուք հայտնեցիք նրանց հասցեն:

- Այո,- մի տեսակ դժվարությամբ պատասխանեց Միխայիլը:

- Ե՞վ:

- Եվ ի՞նչ: Ես արդեն հայտնել եմ: Նրանք նույնիսկ չեն էլ փոխանցի ասածս Իտալիա: Իսկ ես հեռախոսահամարներ չգիտեմ, պետք էր գոնե «Կորյերեի» հեռախոսը իմանալ:

- Կորյերե դելլա սերա,- մեքենայաբար արձագանքեց սրբագրողուհին, առաջին անգամ միջամտելով խոսակցությանը:

- Հենց այդպես: Այնտեղ պիտի հետաղարձ կապի հեռախոսներ լինեն: Դուք խոսո՞ւմ եք իտալերեն, սրբագրող:

Սոֆան պատասխանեց,

- Դեռ ոչ:

Դա նշանակալիորեն հնչեց:

- Հը՜մ,- Գյուզելը հուզմունքից մի կերպ թուքը կուլ տվավ:- Իսկ ինչո՞ւ:

- Քերականություն չգիտեմ:

- Պառլա իտալյանո՞,- հանդիսավոր տոնով հարցրեց Միխայիլը:

Սոֆան պատասխանեց բավականին ցածր.

- Պոկո-պոկո:

- Չեմ հասկանում,- սրտանց ու հիացմունքով ծիծաղեց Միխայիլը:- Ալեգրո մո նոն տրոպպո ի անդանտե կանտաբիլե. ահա ամենը: Երաժշտությունից է:

- Սոֆա՛, իսկ դուք ի՞նչ ասացիք,- հետաքրքրվեց Գյուզելը:

- Դե՛, առանձնապես ոչինչ,- երկար դադարից հետո պատասխանեց Սոֆան:

- Միշա՛, իսկ դուք էլի ինչ-որ բան կանխատեսե՞լ եք:

- Որոշ բաներ:

- Հատկապես ի՞նչ,- պնդեց Գյուզելը:

- Դե, ձեզ ի՞նչն է հետաքրքրում, ո՞ր բնագավառը:

- Դե… ասենք, ի՞նչ կասեք իմ գրքի հետ կապված: Նրա ճակատագիրը կարելի՞ է իմանալ:

- Ձեր գրքի հետ ամեն ինչ կարգին կլինի, բայց մի քիչ

ուշ:

- Որքա՞ն ուշ, դա կարևոր է:

- Մի քանի տարի անց:

- Տարի՞,- զարմացավ Գյուզելը:- Տարի՞: Այն նրանց մոտ այս տարվա պլանի մեջ է, հասկանո՞ւմ եք: Պլանի մեջ է: Նրանք պլանավորել են, որովհետև, ասացին, դա ցնցող է:

- Դե, ուրեմն ամեն ինչ լավ է,- հանգիստ պատասխանեց Միխայիլը:

Եվ նրանք նորից սկսեցին շաղակրատել հրատարակչական գործի խճճվածության մասին: Ինչ-որ հիվանդագին շատախոսություններ:

Այնուամենայնիվ, տան շեմքին հասնելով ու մոտենալով վերելակին, նրանք երկուսն էլ մի տեսակ սևեռուն հայացքով սկսեցին նայել սրբագրողուհուն: Գյուզելը նայում էր գործնականորեն՝ կարծես մտքում ծանր ու թեթև անելով նրա ֆենոմենալ հիշողությունը օգտագործելու տարբերակները, իսկ Միխայիլը (արդեն) մշուշոտ ու հուզված:

«Չէ մի, դա էր պակաս»,- մտածեց սրբագրողուհին:

Այդուհանդերձ, նա հանգիստ դուրս եկավ իր հարկում, ասելով՝ «Դե, առայժմ»:

Նախաճաշին եռյակը նորից հավաքվեց միասին: Գյուզելն անդադար դողդում էր կարդացած գրքի մասին: Միխայիլը խնդրեց գիրքը մեկ օրով, բայց Գյուզելը նպատակ ուներ անդրադառնալ առանձնապես կարևոր տեղերին, որոնք վրիպել էին ուշադրությունից կլանված ընթերցանության ժամանակ, չկասկածելով դրանց կարևորության մասին: Միխայիլն ամբողջությամբ դողում էր իբր գրքի նկատմամբ հետաքրքրությունից: Գյուզելը տաքա-

նում էր տղամարդու ուշադրության շողերից, զրկված լինելով (ակնհայտ) նման ուշադրությունից, այստեղից էր բխում նրա աշխուժությունը, նյարդայնությունը, շուրթերը կծոտելն ու լպստելը, շատախոսելը, աթոռի վրա շուռումուռ գալը: Նա անընդհատ ձեռքերով էր խոսում, դիպչում էր Միխայիլին, հպվում նրա ուսին ու ակնապիշ նայում էր նրա աչքերին իր սևուկ աչքերով: Միխայիլը նույնպես այրվում էր մարմանդ կրակի վրա ու ժամանակ առ ժամանակ նայում էր սրբագրողուհուն, ասես շոյելով նրան տևական հայացքներով: «Աստված մի արասցե»,- մտածում էր սրբագրողուհին:

Նախաճաշից հետո նրանք երեքով նորից հայտնվեցին վերելակի մոտ:

- Զբոսնենք միասին աշխատանքից առաջ,- առաջարկեց Գյուզելը:

- Ի՞նչ կասեք, - սրբագրողուհուն դիմեց Միխայիլը:

- Չեմ կարող,- արագ պատասխանեց նա:

- Ինչո՞ւ, ի՞նչ կա:

Սակայն սրբագրողուհին չէր արձագանքում, նա լռում էր՝ անիծելով իր բախտը:

- Դե, ուրեմն, ես սպասում եմ ձեզ, Միշա, կզբոսնենք ծովափին,- ասաց Գյուզելը: - Հովանոց կվերցնեք, անձրև է գալու:

- Սոֆա, դե ի՞նչ կասեք,- նվնվաց Միխայիլը:

Սրբագրողուհին բացասականորեն տարուբերեց գլուխը:

- Կես ժամը ձեզ օգտակար է,- շարունակում էր աղաչել Միխայիլը:

Վերելակը տեղ հասավ ու Սոֆան բարեհաջող դուրս

եկավ իր հարկում:

Ճաշին նա չերևաց: Նրա հեռախոսը մի ժամից սկսեց ուժեղ զանգահարել ու զանգում էր առանց դադարի: Սոֆան սկզբից ուզում էր փոխարկել ձայնի բարձրության կարգավորիչը, հետո գրասեղանի հետևում գտավ վարդակը ու թեքեց լարերից մեկը: Սարքը ձայնը կտրեց:

Երեկոյան դեմ դուռը թակեցին:

- Սոֆա,- խլացած ձայնով կանչեց Գյուզելը բարավորի հետևից:- Սոֆա, ձեզ ի՞նչ է պատահել: Ձեր բանալին կողպեքի մեջ է,- փնթփնթաց նա որոշ դադարից հետո (ըստ երևույթին ստուգել էր բանալու անցքը):- Սոֆա, դուք ո՞ղջ եք:

- Ես հիվանդացել եմ,- վերջապես բացականչեց Սոֆան:

Միջանցքում բանակցություններ սկսվեցին: Երևում է՝ նրանք երկուսն էլ գտնվում էին դռան մոտ:

- Բայց չէ՞ որ չի կարելի չուտել,- խուլ ճղճղաց Գյուզելը:- Բժիշկ է պետք, բժի՛շկ:

- Կարելի է,- բղավեց Սոֆան:

- Ձեզ համար ընթրիք կբերեմ,- հարցական ծղրտացին միջանցքում:

Սոֆան ատելությամբ նայում էր դռանը:

- Իսկ հեռախո՞սը, դուք լսափողը չեք վերցնում: Միշան ինչ-որ կարևոր բան էր ուզում ձեզ ասել:

- Ո՛չ,- բղավեց Սոֆան:- Հեռախոսը փչացած է:

Նրանք քչփչացին:

- Վարպետ է պետք, վաղը վարպետ կկանչենք,- հեռվից շառաչեց Միխայիլը:- Հեռախոսի վարպետ:

- Ներեցեք,- հանկարծ արտասանեց Գյուզելը ուղիղ

դռան ճեղքից:- Ես ձեզ շատ խոսեցրի երևի, հիմա ես լռում եմ: Լուռ եմ: Դուք եկել եք հանգստանալո՞ւ: Ա՜: Ծանր աշխատանք է,- ասաց նա արդեն մի կողմից:

Հետո նրանք ևս մի անգամ թակեցին դուռն ու հեռացան: Առավոտյան, նախաճաշից հետո կրկին սկսեցին բախել դուռը:

- Բժիշկն է, բացե՛ք:

Սոֆան պատասխանեց,

- Պետք չէ, շնորհակալություն:

- Նրան պետք չէ,- ինչ-որ մեկին բացատրելով ասաց ձայնը:

Այնուհետև Գյուզելը գոռաց.

- Սոֆա, դա պարզապես բժիշկն է: Չ ե՞ք հասկանում: Ուղղակի, բժիշկ:

- Շնորհակալ եմ, ինձ մոտ ամեն ինչ կարգին է:

Նորից բանակցություններ:

- Ձեզ համար նախաճաշ ենք բերել: Բլիթներ են թթվասերի հետ: Դրել ենք դռան մոտ:

Լռություն: Վերջապես հեռացան:

Այնուամենայնիվ, պետք էր ինչ-որ կերպ գործել: Սոֆան հավաքեց իրեն ու կանգնեց պատուհանի մոտ: Եթե ամեն ինչ սովարականի պես լինի, հորիզոնը կմաքրվի:

Այդպես էլ եղավ: Ստվեր գցելով՝ առաջինը դուրս սողոսկեց Միխայիլը: Նրա հետևից դուրս թռավ Գյուզելը: Նրանք դեմքով շրջվեցին դեպի շենքի ճակատը ու սկսեցին հաշվել հարկերը, աչքերով հասնելով մինչև նրա հարկը:

Սոֆան արագ դուրս եկավ: Կողպեց համարն ու արագորեն աստիճաններով թռավ դեպի ճաշարան, կերավ ինչ

որ մնացել էր սեղանին. ձու, սառը ապուր և պանրով հաց: Մատուցողները հավաքում էին ափսեները: Ֆուհ, բախտս բերեց:

Այնուհետև Սոֆան ստուգեց՝ մաքու՞ր է, արդյոք, հորիզոնը, դուրս թռավ քաղաք, նստեց էլեկտրագնացքն ու անցավ մեկ կանգառ և այնտեղ նստեց գետափին, տակը գցելով անկողնուց վերցրած պետական ծածկոցը: Գետինն իսկականից դեռ չէր տաքացել, չնայած տաք, արևոտ օր էր:

Գետը տիղմի հոտ էր արձակում, հեռվում անտառներ էին երևում, երկնքում հազվադեպ ամպեր կային: Տարածվում էին ճայերի ձայները: Լռություն էր, հանգստություն:

Սոֆոչկայի գլխով անցնում էին գրողը տարած Գյուզելի մենախոսությունները: «Տասներկու թվականներին կանոնիբալիզմի, խանդակներում սահնակներով սառցատակի ապրիլյան թաղումների, այսինքն՝ պալեոծիսակատարությունների համանման եզակի դեպքեր, սատը բըլըթ, կուայաս, վնուրուկ, ուրբելեխ»,- մտածում էր Սոֆան:

- Այո (միջամտում էր Միխայիլը),- համանմանություններ-զուգանմանություններ: Ես հաշվարկել եմ հասցեն Հռոմի քարտեզով, բայց հնարավոր չէ փոխանցել: Շուտով կհայտնաբերեն, այդ ժամանակ:

- Ըուս, չըգըչ միլք շամսան,- դա անիծված Գյուզելն է:

- Նրանց ներկայությունը չի հայտնաբերվել, չնայած աշխատում են բոլոր շրջանների կարաբիներները:

- Սահնակների մասին Դալի բառարանի ասացվածը, լսե՛ք (ծղրտում է Գյուզելը): Ճիշտ չկանգնեցիր ու ոչ ճիշտ լծեցիր, նստեցիր ոչ այնպես ու քշեցիր սխալ: Մտար ձորակը, դուրս գալ չի լինի: (Քահ-քահ ծիծաղեց): Թաղումը,

թաղումը:

Սոֆան շորերը հանեց, հանեց կրծքակալը ու իր ձմեռային մարմինը դեմ արեց տաք արևին, չնայած երբեմն քամի էր փչում: Հետո կիսաձմեռային տաք բաճկոն հագած մի մարդ մոտեցավ, նստեց կողքին, խոսեցին, նա նավակ գտավ, մեկնեցին ոչ հեռու մի կղզի, մտան թփերի մեջ, տղամարդը բաճկոնը գետնին փռեց, պառկեցին, զուգավորվեցին, ինչից հետո նա Սոֆային նավակով վերադարձրեց նույն տեղը: Նորից զրուցեցին, Սոֆան ձկնորսին տվեց հանգստյան տան սխալ հասցե, ուրիշ սենյակի համար և ուրիշ անուն (Մարֆա): Իսկ հետո (արդեն կեսօրն անց էր) նրանք մտան կայարանի մոտի սրճարանը, մեկական գավաթ գինի խմեցին, նա գնեց ու Սոֆայի առջև դրեց զզվելի համով ազնվամորու դոնդողակ: Սոֆան քաղաքավարությունից դրդված կերավ: Երևում էր, որ ձկնորսը չէր ուզում թողնել Սոֆային, անընդհատ պայմանավորվում էր նույն օրը երեկոյան հանդիպելու մասին: Նա նպատակ ուներ ընկերոջից վերցնել նավակատան բանալին: Ամբողջ գիշերով չեմ կարող, կինս խանդոտ է: Իր հասցեն նա չթողեց: Հետո նրանք փողոցում բաժանվեցին, տղամարդը ոչ մի կերպ չէր կարողանում պոկ գալ: Սոֆան հեռացավ, սակայն անմիջապես սկսեց կպնել մեկ ուրիշը՝ պիջակով, ուզում էր ուղեկցել, հրավիրեց նույն պանդոկը: Նորից նստեցին, կերան, խմեցին, այդ ամենը երկար ձգվում էր, հետո մայրամուտին, երեկոյան ժամին գնացին ավազաբլուրները, հիմա արդեն ծածկոցի վրա:

Թեթևակի քրքրված, ծովափի պայուսակի մեջ կեղտոտ ծածկոցով, Սոֆան էլեկտրական գնացքով մեկնեց տուն, ճիգ գործադրելով, որ չգրավի ոչ ոքի ուշադրությունը, սա-

կայն նրա հետևից մեկը դուրս եկավ գնացքից և սկսեց ասել «աղջիկ, այ աղջիկ»: Սոֆան արագացրեց քայլերը, նա՝ նույնպես: Լավ է, որ դեռ մութ չէր և հետապնդողը չհամարձակվեց դիմել կոպիտ բռնության, դարպասների մոտից հայհոյելով՝ հեռու քաշվեց:

Մուտքի առաջ, անցնելով մի անկյուն, Սոֆան վրայից հանեց պիջակը, սանրվեց, շպարվեց, զննեց պիջակը, մաքրեց այն, զննեց նաև կիսաշրջազգեստը՝ շրջելով այն, հետո խոտերին քսելով մաքրեց կոշիկները, ուղղվեց դեպի մասնաշենք և, այ քեզ բան: Սրահում հերթապահում էր Միխայիլը՝ ցնորված հայացքով: Նա քրքջաց և կտրեց Սոֆայի ճանապարհը:

- Ինչպե՞ս, ու՞ր էիք, որտե՞ղ էիք, դուք հաց չեք կերել ամբողջ օրը: Եկեք, ես կայարան եմ գնացել և հատուկ ձեզ համար ազնվամորու դոնդող եմ գնել: Այստեղ շատ համեղ են պատրաստում: Ես ձեզ սպասում եմ, եկե՛ք:

-Ես քաղաքում եմ եղել,- արտաբերեց Սոֆան, թեթևակի անշարժացած բերանով:- Ես այնտեղ ճաշել եմ:

Գյուզելն էր միայն այնտեղ պակասում:

- Եկե՛ք, գնացինք ինձ մոտ,- տենդագին փնթփնթում էր Միխայիլը,- դոնդող, սուրճ, կոնյակ: Դուք մրսել եք, կծածկենք ձեզ: Երազ: Ես ձեզ այդպես կկոչեմ: Տեսնում եմ, թե ինչքան հոգնած, սփրթնած եք, իմ երազ: Ֆրանսիական կոնյակ, ինձ իսկականն են ուղարկում, ճնշման դեմ:

Նա քարշ տվեց Սոֆային վերելակի մոտ, նրանք սպասեցին այնքան, մինչև որ վերելակը վերջապես եկավ: Դռները բացվեցին և նրա միջից, ինչպես կկուն ժամացույցի միջից, դուրս ցցվեց Գյուզելը: (Անկասկած, պատուհանից նայում էր):

Գյուզելը, ինչ էլ որ լիներ, փրկեց իրավիճակը, և մինչև ուշ գիշեր նրանք նստած էին Միխայիլի համարում, խմում էին նրա կոնյակը (կոնծեցին շիշը մինչև վերջ) և զրուցում (Սոֆան լուռ էր): Հետո նրանք ուղեկցեցին նրան պահակախմբով դեպի իր համարը, աչալուրջ հետևելով միմյանց և թույլ տվեցին, որ նա սպրդի: Սակայն արդեն հինգ րոպե հետո Միխայիլը ճանկռոտում էր Սոֆայի դուռը, ինչ-որ անպարկեշտ խոսքեր մրթմրթալով. անուշիկ, երազ, երազ, քաղցրիկ, ձկնիկ:

Սոֆան անմիջապես, հենց առաջին բառերից հետո, բարձրացրեց հեռուստացույցի ձայնը:

Բանը տխուր ավարտվեց, քանի որ մեկ շաբաթ այդպես շարունակվելուց հետո Միխայիլը ցնորվեց, սպառվեց, Սոֆային պատմում էր տարբեր տեսակ սեքսուալ պատմություններ, այդ թվում նաև, որ ցանկացած հանգստյան տանը նա քաղցած չի մնում, ամբողջ ադմինիստրացիան, նույնիսկ խոհարարները, նրանք պարբերաբար ստուգվում են վեներական հիվանդությունների պահով, նրանք ամեն տեսակետից սպասարկում են նրան, ընթրիք են տանում անձեռոցիկի տակ և այլն:

Հետո նա հիվանդացավ, ճնշումը բարձրացավ:

Սոֆան, որ տեղյակ էր տեղի ունեցող ամեն ինչից, համոզեց մի պոետուհու՝ Տամարկային, որ հմուտ մեքենավարուհի և հարբեցող էր, ուղարկեց նրան խեղճ Միխայիլի մոտ՝ խոստանալով նրան մի շիշ կոնյակ (պարզվեց, որ նա մեկն էլ ուներ դեն դրած): Տամարկան՝ քիթը ցցելով, բոլորովին հանգիստ կերպով մոտեցավ նրան լողափին, ծանոթացավ երևելի տնտեսագետի հետ և խնդրվեց, որ հյուր կանչեն իրեն: Նրա համբավը հայտնի էր և բավա-

կանին պարզ բառերի կարիք կար ընդամենը, ասենք թե՝ «կոնյակ հյուրասիրեք, տղամարդ»: Պայմանավորվեցին ընթրիքից հետո ժամի վրա: Այդ երեկո Միխայիլն իրեն արծվի պես էր պահում, հովանավորող հայացքով նայեց Սոֆային և բերանից հանկարծ թռցրեց. «Չպաչպչված եմ մնում»: Գյուզելը անսպասելիությունից ծիծաղեց:

Ուշ երեկոյան, որքան էլ որ տարօրինակ էր, Սոֆան դուրս եկավ զբոսայգի և սկսեց թափառել տան շուրջը: Մերթընդմերթ նայում էր Միխայիլի պատուհանին, կհանգչի՞ լույսը, թե՝ ոչ: Նրա մոտ վառվում էր սեղանի լամպը և այն էլ վարագույրի հետևից: Խավարը ինտիմի մայրն է:

Հետո Սոֆան, չգիտես ինչու թախծոտ, վերադարձավ իր սենյակ և միացրեց հեռուստացույցը:

Հաջորդ օրը Միխայիլը նախաճաշին դուրս չեկավ: Տամարկան, որպես հարցի պատասխան, հայտարարեց.

- Ի՞նչ ես ասում, ես նրա մոտ միայն կոնյակ եմ խմել, մի շիշ օղի: Ի՞նչ ես ասում, ինձ նրա հետ քնելու համար չեն վարձել: Իսկ նա. «Դուք այնքան մեծ, գեղեցիկ բերան ունեք, բերան»: Նվնվում էր: Ես քնում եմ միայն նրանց հետ,- նշանակալից ասաց Տամարկան՝ ակնարկելով ինչ-որ բան,- ում հետ ինքս եմ ուզում:

Պոետուհին՝ առանց առջևի ատամի, որը հենց այստեղ՝ հանգստյան տանը մի խմբագիր էր պատահաբար արմունկով ջարդել, երբ նա կամացուկ մոտեցել էր՝ փորձելով համբուրել անմեղին, որ մեջքով էր նստած դեպի իրեն, իսկ օբյեկտը հանկարծակի շրջվել էր:

Միխայիլը ճաշին նույնպես չկար: Անհանգստացած Գյուզելը նրա համարի դուռն էր ծեծում, հետո դիմեց վար-

չություն, և նրան ասացին, որ Միխայիլին տարել են օդանավակայան, դեպի տուն՝ Մոսկվա, նա վատացել էր:

Այս զրույցները վերջացան սեղանի շուրջ. Սոֆան հանգիստ գնում էր, ուր որ ուզում էր, ժողովուրդը արևի տակ պառկած էր, նրա անկողնում եղան բոլոր ցանկացողները, երեկոները նրա մոտ հավաքվում էին խմելու այն պոետները, որոնց բանաստեղծությունները նա մտապահել էր հակառակ իր ցանկության և հայտնի զվարճանքը կայանում էր նրանում, որ նա նրանց համար կարդում էր իրենց իսկ զառանցանքները, և բավականին հայտնի էր այդ տաղանդով: Այդպես էլ թռավ-անցավ այդ արձակուրդը:

Մեկ տարի անց նա հանդիպեց Միխայիլին հրատարակչության աստիճաններին: Սոֆան բուֆետ էր իջնում հենց Տամարկայի հետ (քիթը ցցած, փքված այտերը շողշողում են, մազերը՝ յուղոտված, հմայուհի անսահման ազատության):

Միխայիլը ներքևից էր գալիս՝ երկարարահասակ, գզգզված, նա տեսավ Սոֆային և գլուխը ակամայից վեր բարձրացավ: Նա կանգ առավ:

Ողջո՜ւյն,- երգեցիկ ձայնով բացականչեց Տամարկան:- Ողջույն, գրողը տանի:

Որպես պոետուհի, նրան հասնում էր խմել, մոլեգնել և հայհոյել: Դա նույնպես արարողություն էր: Հետո թողեցին՝ ինչ անել:

Սոֆան շփոթվեց:

-Դե ինչ, կթողնե՞ս անցնել, նրան արդեն ներս չէին թողնում ռեստորան, որտեղ հավաքվում էին յուրայինները,- անշտապ, հուզիչ ձայնով արտաբերեց Տամարկան:

Այստեղ նա ուշքը գլուխը հավաքեց: Հավաքվեց և շարժվեց վերև՝ դեպի նա, ինչպես հրակնատ, կտրեց նրա ճամփան, սեղմեց պատին և այլն: Այսինքն՝ իրեն դրսևորեց լիովին կարող զվարճասերի պես:

Սոֆան շարունակում էր իր ընթացքը ներքև՝ դեպի բուֆետ:

Հետևում հայհոյանքներով փորձում էր դուրս պրծնել Տամարկան, Միխայիլը խառնաշփոթ խոսում էր և հանկարծ բացականչեց մի քիչ ավելի բարձր՝ «Գտե՛ք ինձ, երազ իմ»:

Ամեն ինչ հասկնալի է:

Որոշ ժամանակ անց թերթում մահախոսական հայտնվեց Միխայիլի նկարով. հանկարծակի մահ: Հրատարակչությունում ասում էին, որ ոչ ոք դրան չէր սպասում, կրիզ էր: Շատ էր սիրում իր նոր՝ թարգմանչուհի կնոջը և փոքրիկ աղջկան, նոր էին տեղափոխվել, և հիմա նրանք մենակ են մնացել: Եվ էլի երկու մեծ տղա մյուս կնոջից:

Սոֆան չէր լացում, բայց նրա անիծյալ հիշողության միջով լրիվ անցան Միխայիլի բոլոր մենախոսությունները, հիացած բացականչությունները, նրա կյանքը, մանկության մասին հիշողությունները և այլն, բոլոր այն քնքշություններն ու բառերը, որոնք նրան երբեք էլ ոչ ոք չի ասել, նրա ապագա նամակները, որոնք նա իր ներկայությամբ էր բարձրաձայն հորինում, նրա խելագար սերը՝ անպարկեշտ, թշվառ, ինչը և հատուկ է սիրուն: Ճիշտ չկանգնեցիր ու ոչ ճիշտ լծեցիր, նստեցիր ոչ այնպես ու քշեցիր սխալ: Մտար ձորակը, դուրս գալ չի լինի…

# Շոպեն և Մենդելսոն

Մի կին անընդհատ բողոքում էր՝ ամեն երեկո պատից այն կողմ նույն երաժշտությունն է, այսինքն՝ ընթրիքից հետո հարևան պառավները՝ կին և ամուսին, ասես ըստ կարգացուցակի՝ ինչպես գնացքը, ժամանում են դաշնամուրի մոտ, և կինը նվագում է ամեն անգամ նույնը՝ սկզբից տխուր, հետո՝ վալս: Ամեն երեկո շուռում-բուռում, տատատի-տատատա: Այդ կինը՝ պառավների հարևանուհին, բոլոր ծանոթներին և աշխատակիցներին ծիծաղելով պատմում էր այդ մասին, սակայն իրականում այդ ամենը նրա համար ծիծաղելի չէր: Չէ՞ որ իրավիճակները տարբեր են լինում, և գլուխդ է ցավում, և պարզապես ուզում ես հանգստանալ, վերջապես անհնար է ամեն երեկո ականջները խլացնել հեռուստացույցով, իսկ պառավների մոտ միշտ նույն տաղտկությունն է՝ շուռում-բուռում, տատատի-տատատա:

Նրանք՝ պառավները, տնից դուրս էին գալիս միշտ միասին՝ պատշաճորեն և վայելուչ գնում էին խանութ, նույնպես ըստ կարգացուցակի, վաղ առավոտյան, երբ մեծերը, ուժեղներն ու հարբածները աշխատանքի են կամ քնած, ոչ ոք չի նեղացնի:

Կարճ ասած՝ ժամանակի ընթացքում այս հարևանուհին անգամ նրանց երաժշտացանկի մասին իմացավ, հարցրեց բավականին կոպիտ կերպով՝ իր կատակային ոճի մեջ, դեմ առ դեմ հանդիպելով նրանց (նրանք խանութ էին գնում, բաց գույնի և լավ արդուկած շորերով, ասես պարահանդեսի, կինը արդեն մաշած լայնեզր գլխարկով, տղամարդը սպիտակ հովհարով գլխարկը գլխին, աչուկները՝ ուրախ, ձեռքները՝ կնճռոտ),- Էդ ի՞նչ եք անընդհատ նվագում, բարև ձեզ, գլուխ չեմ հանում,- այսինքն նա ու-

զում էր ասել՝ «ինչո՞ւ եք անընդհատ նվագում, խանգարում եք», իսկ նրանք հասկացան ճիշտ հակառակը՝ իրար անցան, ժպտացին իրենց հավասարաչափ պլաստմասե ատամներով և ասացին, նա ասաց՝ պառավ կինը. «Առանց բառերի երգն է՝ Մենդելսոնի երգաշարից և վալսը՝ Շոպենի ինչ-որ երևակայություն» (թուի, մտածեց հարևանուհին):

Բայց աշխարհում ամեն ինչ վերջանում է, և երաժշտությունն էլ հանկարծ վերջացավ: Հարևանուհին ազատ շունչ քաշեց, ուրախությունից երգում էր, նա ինքը միայնակ լքվածուհի էր, այսինքն՝ լքված կին, ավելի ճիշտ՝ նույնիսկ կին չէր, այլ այնպես, տեղափոխվելով ստացել է մեկսենյականոց բնակարան, և նրա մոտ բնակվեց մեկը. ապրում էր, խոհանոցի պատից դարակներ էր կախում, անգամ սանհանգույցի համար ինչ-որ բաներ գնեց, ինչպես իսկական տանտեր, եկավ՝ փաթեթի մեջ բերելով զուգարանակոնք և այն նախատեսված տեղը ամրացրեց՝ ասելով, որ սա ի՞նչ նստելու տեղ էր, անհնար էր նստելը: Իսկ հետո հանկարծ վերադարձավ իր մոտ՝ մոր մոտ: Եվ այդ պահից սկսվեց այդ երաժշտությունը, ամեն երեկո, ինչպես պարզվեց, բավականին բարակ պատի հետևում, Շոպենի վալսը, միշտ միևնույն տեղում սխալով, սայթաքումով, ինչպես հին պատեֆոնը. ինքնասպան կարելի էր լինել: Հեռուստացույցը մյուս պատի մոտ էր դրված, իսկ այստեղ բազմոցն էր, հենց պատեֆոնն էլ ամեն երեկո հայտնվում էր ականջի տակ: Այսինքն՝ այդ հարևանուհու լսողությունը սրվել էր ինչպես չղջիկների, կույրերի մոտ, հեռուստացույցի ողջ դռդռոցի միջից նա տարբերում էր անիծված Մենդելսոնին ու Շոպենին:

Կարճ ասած՝ հանկարծակիորեն ամեն ինչ վերջացավ, երկու օր երաժշտությունը լռում էր և հանգիստ կարելի էր հեռուստացույց նայել, երգել կամ պարել, ճիշտ է՝ ինչ-որ մեկը կարծես լաց էր լինում հեռվում, ինչպես երեխան էր նվնվում մի քանի հարկ բարձրից, բայց դա էլ վերջացավ: «Այ թե լսողություն ունեմ»,- հետո աշխատավայրում ասաց պառավների այդ հարևանուհին, երբ ամեն ինչ պարզվեց, այսինքն, որ այն տզտզոցը պառավ դաշնակահարուհու ամուսնու տզտզոցն էր: Նրան գտան ոչ թե ինչ-որ տեղ, այլ ամուսնու տակ՝ հատակի վրա. պարզվում է, որ ամուսինը վաղուց արդեն կաթվածահար պառկած էր անկողնում («իսկ ես կարծում էի, որ ոչ, չէ՞ որ ես նրանց հանդիպում էի, բայց դա ուրեմն վաղու՞ց էր»- ինքն իր հետ խոսելով շարունակում էր այդ պատմությունը երիտասարդ հարևանուհին), նա կաթվածահար պառկած էր, իսկ կինը ամեն երեկո նրա համար նվագում էր իր երաժշտացանկը հարևանուհու ականջի տակ, որպեսզի, ըստ երևույթին, բարձրացնի նրա տրամադրությունը, իսկ հետո մի անգամ կինը ընկավ ու մահացավ նրա անկողնու մոտ, և տղամարդը սկսեց ցած սողալ, հավանաբար հեռախոսին հասնելու համար, և վերջիվերջո տապալվեց կնոջ վրա, և այդ դիրքից, այնուամենայնիվ, ինչ-որ կերպ զանգահարեց, դուռը բացեցին, նրանք երկուսն էլ արդեն կենդանի չէին, շուտ մահացան:

«Այ թե լսողություն ունեմ»,- բոլորին հեռախոսով դժգոհում էր նրանց երիտասարդ հարևանուհին, հիշելով այն հեռավոր տզզոցը կամ լացը և հաշվարկելով այն ժամանակը, որը պահանջվեց (երեկոն և ամբողջ գիշերը, և ամբողջ հաջորդ օրը), որպեսզի ծերունին հասնի հեռախո-

սին, այդ նա էր տզզում՝ ծերուկը, ըստ երևույթին:

«Այ թե լսողություն ունեմ,- տագնապով մտածում էր հարևանուհին իր ապագա հարևանների մասին և ինքն իրեն սիրով ու խղճահարությամբ հիշում Շոպենին և Մենդելսոնին,- այ դրանք մարդիկ էին՝ կիրթ, հանգիստ, օրվա մեջ տասնհիգ րոպե աղմկում էին և վերջ, ովքե՞ր կգան նրանց փոխարեն: Եվ մահացան մեկ օրվա տարբերությամբ, ինչպես հեքիաթում, ապրեցին երկար և մահացան մեկ օրվա տարբերությամբ»,- մոտավորապես այսպես էր հարևանուհին մտածում՝ լռությունից խլացած, Շոպեն,

Շոպեն և Մենդելսոն:

# Ամեն աչքեր

Ահա երտասարդը՝ նուրբ, քնքուշ տղա-աղջիկը, կարմրաթուշ, այտերին՝ աղվամազ, այնուհետև բաց գույնի, գրեթե թափանցիկ մեծ աչքեր, այսինքն՝ վարդեր և բյուրեղներ, և հանկարծ այդ երտասարդը՝ ոչ բարձրահասակ, բարի ու հավատարիմ, ասում է. «Իսկ իմ երեխաները՝ Տիշան ու Տոշան, միշտ միասին են, մեկը դեռևս չորեքթաթ է տալիս, իսկ մյուսն արդեն քայլում է»: Ինչքա՞ն են: «Ութ ամսական և մեկ տարեկան ու տաս ամսական»,- ասում է նրանց հայրը: Հետո, որոշ ժամանակ անց նա պատմում է, որ փոքրն արդեն քայլում է, բայց չի խոսում, իսկ Տիշան մեկնաբանում է՝ «Տոսյան կոփետ է ուզում» (Տոշան կոնֆետ է ուզում): Եվ նրանք օտարի հայացքի առաջ կանգնում են ինչպես արթմնի, փոքրահասակ հոր երկու տղաներ, երկուսն էլ՝ սողագուլպաներով, ոտքերը՝ մանրիկ, ինչպես արքայազների մոտ, դեմքները՝ կարմրաթուշ և աչքները թափանցիկ, ասես արցունքի կաթիլներ: Ավագը՝ «Տիսյան», հասկանում է այն ամենը, ինչ ուզում է ասել կրտսեր «Տոսյան»:

Նրանց տարիքն արդեն երկու և երեքից ավել է, բայց Տոշան՝ խելոք փոքրիկը, դեռ չի խոսում, իսկ Տիշան չի վերացնում իր մեկնաբանություններն ու միջնորդությունները և նայելով արցունք-աչքերով՝ թափանցիկ ու փայլուն, նա բացատրում է. «Տոսյան աքայազն է»: Տոշան հենց գլխին հագել էր մանկական վերմակասավանի մի ծայրը և այդպես էլ ճեմում է, իսկ թիկունքից վերմակասավանի շարունակությունն է, ինչպես՝ պատմուճան:

- Տոսյան աքայազն է (Տոշան արքայազն է),- հյուրերին բացատրում է ավագ զավակը:

Այսինքն՝ Տոշայի գլխին թագ է, իսկ ուսերին՝ պատմու-

ճան: Ոտեղի՞ց, ասացե՛ք, այս հրեշտակը գիտի, թե ինչպես են հագնվում արքայազները: Այնուամենայնիվ, երբ ուշ երեկոյան մանկական սենյակից հյուրերին ներկայանում է այս զույգը՝ սկզբից մթության միջից առաջ են գալիս բոբիկ ոտքերը, սպիտակ մայկան (համապատասխան տեղում կիսավարտիքները), իսկ գլխին՝ վերմակասավանի ծայրը, այսինքն, երբ փոքրիկ Տոշան հայտնվում է լամպի լույսի ներքո, հետևից գալիս է հոգատար Տիշան ու բացատրում.

- Տոսյան աքայազն է:

Ըստ երևույթին հենց նա էլ հագցրել է փոքրիկին: Զոռով վրան է քաշել այդ վերմակասավանը, մի կերպ քարշ տալով այն անկողնուց, տարել փակ դռան մոտ և՝ պատրաստ է: Նրանք դուրս եկան հյուրերի մոտ: Որոնք շրջվեցին սեղանից, քնքշորեն նայելով ու ժպտալով, և կոնֆետ են առաջարկում:

- Տոսյան աքայազն է,- կրկնում է «Տիսյան»:

Նա այդպես միանգամից ամեն ինչ է բացատրում՝ և ինչու են Տոշային հանդիսավոր հագցրել, և ինչի համար. որպեսզի հյուրերին ցույց տան նրա գեղեցկությունը:

Հյուրերը գիտեն, որ խեղճ Տիշկան երիտասարդ հոր տղան չէ, նրանք հարազատներ չեն, այստեղից էլ որբ Տիշայի մոտ փոքրիկ, ամենասիրված զավակին մոտ լինելու տենչը, նրան զարդարելու, նրա դեռևս չձևավորված խոսքը պաշտպանելու, նրա փոխարեն ամեն ինչ բացատրելու պապակը. Տոսյան կոտետ է ուսում: Մի անգամ նրանց մոտ ստացվեց, երկուսին էլ կոնֆետ տվեցին, ու վերջ, նրանք ներկայացումներ են տալիս: Ինքը Տիշան նույնպես դառնում է Տոշա, մի քիչ հավասարվելով իր

ավագ երեխայի կարգավիճակից (մնացածի մասին նա չգիտի):

Տիշան քիչ բան է հասկանում, սակայն նրա ջերմ սերը, արքայազն Տոշայի շուրջ վազվզուքը, գովաբանությունների տենչը (որպեսզի բոլորը Տոշային սիրեն). այդ ամենը խոսում է նրա նուրբ, զգայուն հոգու մասին: Նա անգամ նմանվում է Տոշային, նրա մեծ բյուրեղյա աչուկները սպիտակ գանգուրների դեզի տակից օտարներին թվում են Տոլյայի (Տոշայի հայրը) աչքերի բացարձակ կրկնօրինակը:

Բոլոր հյուրերն ու հարազատները նկատում են դա. « Տեսեք՝ ինչքան է ավագը նման Տոլիչկային»: Նրանք այդ մասին բազմիցս են հայտարարում, կարծես ցանկանալով հավասարեցնել, չեզոքացնել ավագի՝ անհայր Տոշայի համար վիրավորական տարբերությունը: Ինչ-որ մեկն արդեն բացատրում է, որ, այո, կինը բնազդաբար ամբողջ կյանքում ընտրում է միևնույն տղամարդուն:

Այսինքն, բոլորն անմիջապես նայում են աննկատ մորը՝ գորշ բադիկին, նա փոքր-ինչ մեծ է հրեշտակ-ամուսնուց, սակայն սրբության չափ շնորհակալ է նրան: Այս երկուսը սիրում են իրար, կպան իրար, տղամարդը ուշադրություն չդարձրեց, որ կինը ուրիշից (ինչ-որ մեկից) երեխա ունի, վերցրեց ու ամուսնացավ: Անմիջապես ծնվեց այս հրաշքը՝ Անտոշան, Տոշան, «Տոսյա-աքայազնը»: Այդ բունը համակվեց համընդհանուր սիրով, գալիս են ընկերները, գորշ բադիկը ուտելիք է բերում, հանգիստ ու գեղեցիկ Տոլյան վազվզում է իր գործերով, կերակրում է ընտանիքը, ինչ-որ կերպ աշխատում է, ինչ-որ հեռուստատեսային խմբերի կառավարիչ է աշխատում, ոչ ցերեկ գիտի, ոչ գիշեր, իսկ ընկերները մեկը մյուսին են փոխանցում այն

արտահայտությունները, որ ավագը՝ «Տիսյան», թարգմանում է փոքրի համր լեզվից և ծեծված ճարպկությունները. կարճ տոտիկներով այդ կրտսեր փոքրիկը այնքան խելոք դուրս եկավ, որ ամենուր իր հետևից քարշ է տալիս փոքրիկ մանկական աթոռը. Տիշան կանգնած, ինչ-որ տեղ է նայում, իսկ կարճլիկ Տոշան՝ հոպ և կանգնում է նրա կողքին՝ աթոռի վրա ու նայում նույն ուղղությամբ՝ բոյով հավասարվելով ավագ եղբորը:

Այդպես տուրուդմփոցը սենյակից սենյակ է անցնում, աթոռը քարշ է գալիս Տոշայի հետևից: Ինչ խելոքն է Տոշան:

Այնուհետև առաջին տնքոցն է վրա հասնում այն անկյունից, այն տաքուկ ընտանեկան անկյունից, որտեղ բոլորը ամուր կապված են իրար և որտեղից երկու զույգ աչքեր՝ բաց գույնի, թափանցիկ ինչպես արտասուքը, ուսումնասիրում են աշխարհը, իսկ ներսում պահմտված են ևս երկու գրեթե սև շրջանակներ. դրանք Տոլյայի կին՝ Եկատերինայի աչքերն են: Տնքոցը հետևյալ բնույթի էր. ինձ էլ վերցրու քեզ հետ:

Նա՝ Տոլյան, բնականաբար, կնոջն իր հետ չի տանում, իրեն էլ մի կերպ են վերցրել (այն հեռուստախումբը), և այնտեղ շատ գործ կա, չնայած, որ ծով է և ամառ: Բայց ընդամենը հինգ օրով: Ոչ. ինձ էլ հետդ վերցրու, դու ամեն տեղ ես, իսկ ես ոչ մի տեղ, աշխարհ չեմ տեսնում, չեմ հանգստանում երբեք:

Նման խոսակցությունները հանկարծ լսվում են երկու իդեալական օրորոցներից, աղավնյակների բնից, և խնդրանքը ուղղված է երիտասարդ հոր բաց գույնի աչքերին, անմիտ խնդրանքը, կյանքից դժգոհությունը:

Բոլորը շվարած են: Տոլյան մեկնում է ծով, ինչպես և նախատեսվում էր, այնտեղ ինչ-որ նկարահանումներ պիտի լինեն, գործ, սակայն՝ ծովափ, ծով, արև, երջանկություն, եթե կողքից նայենք:

Չէ՞ որ նա նույնպես հոգնել է: Նա ընկերների մոտ բացում է գաղտնիքը. Կատերինան պահանջում է:

Անմիջապես ընտանիքի ընկերների շրջապատում տարածվում է և այդ փոքրիկ վեճը և այն, որ Կատերինան հարցը դրել է. կամ ինձ էլ հետդ վերցնում ես կամ ես հեռանում եմ երեխաների հետ:

Ընկերները թեթևակի շփոթված են, քանի որ Կատերինան նրանց ընկերական նեղ շրջանակում միշտ հանդես է եկել որպես շնորհակալ ինքնանվիրվածության օրինակ. կեսգիշերին արի, ո՞վ կարող է, կկերակրի ու քնելու տեղ կպատրաստի, կին չէ, այլ՝ հրաշք: Սակայն փորձը ցույց է տալիս, որ ինչ-որ մեկի չափազանց բարիության ու գերնվիրվածության մասին նման հանկարծակի տարածված լուրերը հերքվում են նույն հասցեով մեծ վեճով, և տվյալ ընտանիքն այստեղ բացառություն չէ:

Կատերինան, ամառը ևս համբերելով (Տոլյան խմբի հետ մեկնել էր Բեռլին), հավաքեց իրերն ու լքեց ընտանեկան բույնը՝ Մոսկվայի կենտրոնում ամուսնու բնակարանը, և անհետացավ ծայրամասում, որտեղ նախկինում ապրում էր և որտեղ ուներ մեկ սենյականոց փոքրիկ բնակարան և հիմա արդեն երկու փոքրիկները, երկու հրեշտակները հայտնվում են միատեսակ կիսառորբ վիճակում, սակայն դեռևս մինչև մեկնելը, դեռ Տոլյայի բնակարանում, նրանք սկսել էին անկարգություններ անել, գոռալ միմյանց վրա, կռվել: Երկու տղա, երկու մարտիկ:

Վերջացավ «Տոսյան աքայազն է»-ն, արցունքոտվեցին պարզ աչքերի բյուրեղները, այլևս մթության միջից դուրս չեն գալիս փոքրիկ բոբիկ ոտքերը, կոնֆետի միամիտ որսորդները: Սկսվում են գոռգոռոցներն ու կռիվները, լացը, երկու ակտիվ նորմալ տղաներ՝ երեք և չորս ու քանի տարեկան, միայնակ մոր երեխաներ, տխուր, թախծող մոր երեխաներ: Հիմա, ասում են, նա ինքն է հյուր գնում, երեխաները կամ ընկերուհու մոտ են կամ մենակ գժվում են, իսկ ինքը հյուր է գնում, չի հրաժարվում, պարում ու զրուցում է անկյուններում, այդպիսի լուրեր են տեղ հասնում: Բայց ո՞վ կարող էր նրան դատել:

Այո, պետք է համբերեր, խաղաղ նստեր օրորոցների կողքը, քանի որ սիրել էր ու պաշտպանում էր ամուսնուն ամեն ինչից, և օրորոցները պիտի կամաց օրորվեին «Տոսյա աքայազնի» մասին հավերժական հեքիաթի տակ և բյուրեղով փայլեին մթության միջից, քանի դեռ շուրջը ընթանում էր հախուռն կյանքը, ճամփորդությունները, փառատոները, նկարահանումները:

Բայց՝ վերջ: Այս երեքը կամաց հեռացան ծայրամաս, ասես մուրալու, հպարտորեն անցան ջրի տակ, ոչ ոքի ոչինչ պարտք չլինելով, չես ուզում՝ պետք չէ, անցան ավազի մեջ, այնտեղ՝ ծայրամասի մեկ սենյականոց բնակարանը, ընդարձակ սենյակներից տեղափոխվեցին նեղվածքի, աղքատության ու մենակության մեջ:

Օրորոցների շուրջ ամեն ինչ պարզ է, աղքատիկ ու աղմկոտ: Նստած է ոչ այրի և ոչ էլ ամուսնացած, գրոշների դիմաց դետեկտիվների տնային խմբագիր, արտագրում է վերևից ներքև այդ տխմար տեքստերը, իսկ կողքից հարցական նայում են թափանցիկ աչքերը. որտե՞ղ է այն

կյանքը, որտեղ տղա արքայազնն էր ու նրա հավատարիմ ռեժիսոր-բեմադրողը, կոնֆետի մասին միակ անընդհատ հնչող համր երգի թարգմանիչը, որտե՞ղ է դա: Ընդհանրապես, որտե՞ղ է երջանկությունը:

Տոլյա հայրը՝ քնքուշ երտասարդը, մեկնում է ծայրամաս, զբոսնում է փոքրիկ ավազակ երեխաների հետ, զբոսնում է ու վերադառնում իր տուն՝ նոր կնոջ մոտ, իսկ երեխաներն էլ իրենց տուն, եւ մայրը կերակրում է նրանց, լողացնում, պառկեցնում քնելու, հեքիաթ պատմում, եւ մթության միջից նրան լույս են տալիս թափանցիկ անմեղ աչքերը՝ կատարելապես անմեղ աչքերը:

# Կյանքի իմաստը

Մի բժիշկ սկսեց բուժել ինքն իրեն և հասավ նրան, որ ոտքի մեկ ճկույթի փոխարեն զգայունությունը կորցրեց ամբողջ ոտնաթաթը, իսկ հետո ամեն ինչ ինքն իրեն ընթացավ եւ տաս տարի անց նա հայտնվեց բարձրության վրա՝ երկու սարքերով առանձին հիվանդասենյակում, որոնցից մեկը մշտապես ռիթմիկորեն թխթխկացնում էր՝ պառկածին արհեստական շնչառություն տալով: Հիմա արդեն ամեն ինչ տեղի է ունենում առանց պառկածի մասնակցության, որովհետև նրա մոտ լրիվ անշարժունակություն էր, անգամ խոսել չէր կարող, քանի որ թոքերը թթվածին էին ստանում փողրակների միջոցով ՝ շրջանցելով բերանը:

Պատկերացրեք այդ վիճակը և այդ ամենի պարզ գիտակցումը խեղճ բժշկի կողմից, որին մնացել էր մենակ պառկել ամբողջ տարիներ և ոչինչ չզգալ: Մի ամբողջ անմահություն, երեսունութ տարեկան տղամարդու նրա ծաղկուն հասակում, որն արտաքինից սպիտակ չռած աչքերով, կարմրադեմ եֆրեյտորի էր նման, չնայած նրան ոչ ոք հայելի ցույց չէր տալիս, անգամ երբ թրաշում էին: Ի միջի այլոց նրա դիմախաղը չէր պահպանվել, նրա կարծես խաշված դեմքը սառել էր խեղդուկի մեջ, այն կանգ առավ մեկընդմիշտ, սարսափի մեջ բացելով աչքերը և թրաշելն ամբողջությամբ դարձավ նրա՝ գիշեր-ցերեկ մեկուսացածի մոտ հերթապահող քույրերի գործը: Նրանք անգամ չէին նայում նրան, ընթանում էր ամեն վայրկյան թխկթխկացնող՝ արհեստական երկաթե թոքերի օգնությամբ կյանքը պահպանելու մեծ փորձարկումը, իսկ հիվանդի ականջները աշխատում էին ողջ հզորությամբ. նա ամեն ինչ լսում էր և մտածում Աստված գիտե թե ինչ: Ծայրահեղ

դեպքում կարելի էր անգամ նրա համար միացնել իր սեփական ձայնը՝ փողիկը հատուկ ձևով խցանելու միջոցով, սակայն երբ խցանում էին այդ փողիկը, նա սոսկալի հայհոյում էր, իսկ փողիկը խցանելն ավելի հեշտ էր մատով, և մատն ինքն իրեն հետ էր շպրտվում փողոցային այն հայհոյանքների տարափի տակ, որ դուրս էր հորդում անկենդան բերանից՝ ուղեկցվելով շնչառության բխկոցով ու շվվոցով:

Երբեմն, տարին մեկ անգամ, նրան Լենինգրադից այցելության էին գալիս կինն ու աղջիկը, և կինը ամենից հաճախ լսում էր նրա մեռած հայհոյանքները ու լաց լինում: Կինն ուտելու բան էր բերում, եւ նա ուտում էր դրանք, կինը թրաշում էր ամուսնուն, պատմում էր հարազատների և այն իրադարձությունների մասին, որ տեղի էին ունեցել տարվա ընթացքում և, հնարավոր է՝ նա պահանջում էր իր վերջը տալ, շատ հնարավոր է: Կինը լաց էր լինում և սովորականի պես բժիշկներին հարցուփորձ անում ամուսնու ներկայությամբ. նա ե՞րբ կլավանա: Իսկ բժիշկները մի ամբողջ խումբ էին. օրինակ, կորեուհի Խվանը, որն արդեն թեկնածուական ատենախոսության նախապաշտպանություն էր ունեցել հարևան հիվանդասենյակի նյութի հիման վրա, որտեղ պառկած էին էնցեֆալիտով նրա չորս հիվանդները, վատ ապագայով չորս կին, այնուհետև խմբում կար ծերունի պրոֆեսոր, որը պատանեկության մեջ էր ընկել և զննելով յուրաքանչյուր պառկած կնոջ, անպայման ձեռքը դնում էր կնոջ ցայլքին, իսկ նա զննում էր նաև հարևան հիվանդասենյակը, որտեղ գտնվում էր ուրիշ քառյակ, այժմ արդեն երիտասարդ աղջիկների՝ հիվանդ պոլիոմիելիտով: Նա նրանց այդ կերպ կարծես ոգևորում

էր, բայց չէ՞ որ այդ խեղճերը ոչինչ չէին զգում, նրանք միայն երբեմն լաց էին լինում, մեկը մյուսի հետևից: Հանկարծ հեծկլտոցով լաց կլինեն և դայակը, արդեն դժվարությամբ, բարձրանալով աթոռակից, գնում է գիշերանոթի, խոզանակի և սափորի հետևից՝ լվանալու, մաքրելու և նորից փռելու: Մաքրություն էր տիրում այդ հիվանդանոցում, ներալոգիայի ինստիտուտի այդ հենակետում, մաքրություն և կարգ ու կանոն, իսկ էնցեֆալիտով հիվանդները թափառում էին ստվերների պես ու մոտենալով կենդանի դիակի շեմին, սարսափում ու հետ էին քաշվում մի կետի վրա չռած աչքերից, նույն այդ էնցեֆալիտով հիվանդները նստում էին անշարժ աղջիկների հիվանդասենյակում, որտեղ անեկդոտներ էին պատմվում քնքուշ ձայներով, եւ բարձերի վրա դրված էին գլուխներ հրեշտակների նման մազերի լուսապսակով. պատահում էր, որ էնցեֆալիտով հիվանդները գնում էին և երեխաների մոտ՝ ամենաուրախ հիվանդասենյակ, որտեղ դեսուդեն էին վազում ձեռքի անկանոն շարժումներով երեխաները, և նրանց հետևից ցատկոտում էին հաշմանդամ փոքրիկները՝ քարշ տալով ոտքերը: Ինքնասպանության մասին իրենց երազողի մոտից այստեղ էր տեղափոխվում և բժիշկների մեծ խումբը, այստեղ կատակներ էին թնածում, այստեղ թագավորում էր լավագույն ապագայի մասին հույսը, իսկ նախկին բժիշկը մնում էր մենակ իր բարձր բժշկական դիրքում, իր մահճի վրա և ժամանակի ընթացքում նրանից դադարեցին անգամ ինքնազգացողության մասին հարցնել, խուսափում էին խցանել փողիկը, որպեսզի չլսեն շվվացնող հայհոյանքները: Գուցե, եթե մեկը մի քիչ ավելի երկար սպասեր, ապա և՛ աղերսանք կլսեր և՛ լաց, իսկ հետո նաև

մտքեր զուտ հոգևոր աշխարհում գտնվողից, որը չէր զգում իր մարմինը, ցավերը, ոչ մի ծանրություն, զգում էր միայն տիեզերական թախիծ, անհայտանալու ազատություն չունեցող մարդու, այսպես ասած՝ անմահ հոգու չարչարանքը: Բայց ոչ ոք դա չէր անում, եւ նրա մտքին էլ միշտ միևնույն բանն էր. թույլ տվեք մեռնել, ստորաքարշներ, սրիկաներ, և այդպես շարունակ մինչև շվշվացնող ճիչը՝ ինչ-որ մեկդ անջատեք սարքը, սրիկաներ, և այդպես շարունակ: Բնականաբար, այդ ամենը եղել էր մինչև էլեկտրացանցերում առաջին խոշոր վթարը, բայց բժիշկները նման դեպքերի համար ունեին և ինքնավար էլեկտրասնուցում: Չէ՞ որ նման հիվանդի գոյության հենց միայն փաստը մարդու մահվան նկատմամբ բժշկության հաղթանակ էր նշանակում, և միայն նա չէր, որ միացված էր արհեստական շնչառության, կողքին կային և այլ հիվանդներ, այդ թվում նաև մահամերձ երեխաներ: Լսելի էին դայակների ձայները. որ Եֆստիֆեևին երես են տվել. կարող էր պառկել ընդհանուր տուրուդմփոցի մեջ, որտեղ սարքը ոսկու գին ունի, այնտեղ, թերևս, կպայքարեր կյանքի համար, մի կում օդի համար, ինչպես մենք՝ մեղավորներս: Ահա ձեզ և խնդիր կյանքի իմաստի մասին, ինչպես ասում են:

# Ինչպես Պենելոպան

Լինում է չի լինում, մի աղջիկ է լինում, սովորական, ոչնչով չառանձնացող, ոչ ոքի առանձնապես պետք չեկող, բացի մորից: Ոչ ոք այդ աղջկան ուշադրություն չէր դարձնում, ծաղիկներ չէր նվիրում (չհաշված ծննդյան օրերին մոր նվիրածը):

Աղջիկը դրան սովոր էր: Նա մի տեսակ անճոռնի էր, չափազանց բարձրահասակ, բայց ոչ մոդելի նման, ինչ-որ բան նրան չէր հերիքում:

Գուցե ազդում էր նրա զսպվածությունը, անգամ՝ մի տեսակ խստությունը: Նա սովորում էր քիչ հայտնի համալսարանում, ինչպես ինքն էր ասում՝ «եղևնիների ու փայտերի» ֆակուլտետում: Այնտեղ անվճար ընդունվելն ավելի հեշտ էր, և ապագայում մեր աննկատ աղջնակը պետք է կորչեր անտառներում, աշխատեր այդ եղևնիների ու փայտերի հաշվառման ուղղությամբ և նստեր ինչ-որ մի գրասենյակում ու թղթեր ձևակերպեր:

Նա մոր հետ առայժմ ապրում էր իրենց փոքրիկ բնակարանում՝ մեծաղյուսներով շենքի չորրորդ հարկում: Ամեն ինչ այնպես էր, ինչպես բոլորի մոտ. սովորական գոյատևում, միայն թե վերև բարձրանալիս մի բնակարան նման էր սարսափելի քարանձավի. այնտեղ ապրում էր իսկական ավազակների մի ընտանիք, նրանք սարսափի մեջ էին պահում բոլոր հարևաններին: Այնտեղ մշտական կռիվներ էին տեղի ունենում, նույնիսկ պատերն ու հատակն էին ցնցվում թխկոցներից ու դղրդյունից: Աղջիկը ներքևի բնակարանի խիստ ճմռված երկաթե դռան կողքով միշտ անցնում էր սրտի տրոփյունով: Այնտեղի մայրը, իր եռացող ընտանիքի հետ միշտ տոնում էր կյանքի ամենօրյա տոները, և երբեմն այդ կատաղի խառնաշփոթը

դուրս էր հորդում ինչպես մսաղացից դեպի աստիճաններ՝ երգերով, կռիվներով, եւ «սպանում են» աղաղակներով:

Աղջիկը վախենում էր նրանցից և փողոցում էլ բոլորից վախենում էր, հագնում էր մուգ գույնի շորեր, գլխարկը խոթում էր մինչև հոնքերը և մեջքը կռացնում: Ստիպված էր ուշ վերադառնալ լեզվական դասընթացներից, նրանց մոտ՝ եղևնային համալսարանում, մտցրել են նման բավականին էժան դասընթաց, նպատակ ունենալով աշխարհում տարածել հայրենի անտառային պաշարների հեղինակությունը և նպաստել դրանց վաճառքին սահմանից այն կողմ: Աղջիկը ճակատագրի այդ նվերն ընդունեց ամենայն լրջությամբ և յուրաքանչյուր ազատ րոպե անգլերեն էր սերտում: Մայրը նրան օգնեց՝ պատմելով Լենին պապիկի ուսուցման մեթոդի մասին. սկզբից այդ քիչ հայտնի Լենինը կես էջ թարգմանում էր ռուսերեն և անմիջապես այդ կտորը նորից շուռ տալիս օտար լեզվով: Տվյալ մեթոդը պետք եկավ մեր աղջկան, որին անվանում են Օքսանա: Նա ուներ հանդիսավոր և գեղեցիկ անուն, սակայն ինքը՝ աղջիկը համարում էր, որ անունն իրեն չի համապատասխանում, նրան ավելի շատ կսազեր պարզ Լենան կամ Տանյան կամ ծայրահեղ դեպքում՝ եկեղեցական Քսենիան:

Օքսանան տքնում էր՝ թարգմանելով անտառատեխնիկական տեքստերը այստեղից այնտեղ, յուրացնում էր ծառերի տեսակների անգլերեն անվանումները, բոլոր այդ «կաղնիները» (oaks), «կեչիները» (birches) և «ուռենիները» (willows), ինչպես նաև փնտրում էր անգլիացիների համար այնպիսի հազվագյուտ բառեզրեր, ինչպիսիք են՝ համաձուլվածք, ուղեմերձում և անտառահատում: Երևում

է՝ սովորողներին ոչ ավել, ոչ պակաս պատրաստում էին Անգլիայի անտառներում տաժանակիր աշխատանքների, որպեսզի հետո գերանները քշեն Թեմզայով, իսկ այնտեղ առանց մեզ էլ գործազրկություն է. տրտնջում էին դասընթացների այն հաճախորդները, որոնք ուզում էին յուրացնել ամենից առաջ խոսակցական լեզուն:

Նրա մայրն առայժմ աշխատանք չուներ, և այլևս չէր հավակնում խմբագրի աշխատանքին, այլ փորձում էր տեղավորվել գոնե որպես սրբագրիչ: Նա զանգում էր ըստ հայտարարությունների եւ նրան առաջարկում էին փորձաշրջանով բնագրեր խմբագրել, նախատեսվում էր ամեն ինչ անել արագ, երկու շաբաթվա ընթացքում. առաջին դեպքում երկհատորանոց վեպի թարգմանություն էր, այնուհետև մեր հեղինակի ֆանտաստիկ մարտական երկը մանր տառատեսակով՝ հինգ հարյուր էջ և վերջապես դեղագործական ձեռնարկի թարգմանություն, մաս առաջին ու երկրորդ: Օքսանայի մայրը սկզբում ծիծաղում էր այդ բնագրերի վրա եւ ամենահաջողված մասերը մեջբերում էր Օքսանայի համար (հատկապես առանձնանում էր ֆանտաստիկ մարտավեպը «փողոցով գնում էր անցորդը» և «նա նստեց աթոռի վրա սեղանի շուրջ» բառերով): Հետո մայրը չարչարվում էր, գիշերները չէր քնում, ուղղում էր մինչև վերջին ստորակետը, բա ոնց: Իսկ հետո ամեն անգամ նա ստիպված էր զանգահարել պատվիրատուներին և ամեն անգամ նրանց քարտուղարուհիներից լսել միևնույն պատասխանը. «Շնորհակալություն, դուք փորձաշրջանը չեք անցել»: Օքսանան վատ կարծիքի էր այդ հրատարակչությունների մասին, արդարացիորեն մտածելով, որ այդ կերպ նրանք օգտվում են անվճար ու բարձ-

որակ մասնագիտական խմբագրումից: Իսկ մայրն, ընդհակառակը, վշտանում էր, որ կորցրել է մասնագիտական որակավորումը:

Որպեսզի մի կերպ ծերը ծերին հասցնեին, Օքսանայի մայրը՝ Նինա Սերգեևնան, աշխատանքի տեղավորվեց որպես պահակ-հավաքարար, երեխաների համար ինչ-որ ուսումնական կենտրոնում և ժամանակն անց էր կացնում այնտեղ դռների մոտ նրբատախտակե մի փոքրիկ սենյակում, մի հսկա, չափից ավելի կերակրած շան հետ, որը գրեթե միշտ պառկած էր բամբակե վերմակի վրա ու նյարդայնորեն հաչում էր ուսուցման ընթացքում ուսուցիչների ամեն մի բարձր ձայնի վրա: «Իսկ հիմա, երեխաներ, բոլորդ նայում եք ինձ, ես ասում եմ, ի՛նձ» - «Ռռ-հաֆ»:

Իսկ հետո և այդ աղքատիկ ու ամենևին ոչ ուրախ կյանքն էլ կտրուկ փոխվեց դեպի վատը. մի գեղեցիկ երեկո հնչեց հեռախոսի միջքաղաքային կապի ուժեղ զանգահարությունը և բառեր. «Խոսելու եք Պոլտավայի հետ»: Պարզվեց, որ դա Նինա Սերգեևնայի առաջին ամուսնու, որ մահացել էր դեռ երիտասարդ ժամանակ, մայրն էր: Այսինքն՝ նախկին սկեսուրը Ուկրաինայից: Նրա հետ շատ տխուր ապրումներ են ունեցել, և նա երբեմն գալիս էր այցելելու իր նախկին հարսին, անգամ՝ երբ նա արդեն նորից ամուսնացել էր ու ծնվել էր Օքսանոչկան: Այդ կապակցությամբ այդ Կլավդիա Իվանովնան ժամանեց Մոսկվա եւ որպես նվեր բերեց մի ամբողջ ուսապարկ տղա երեխայի մեծոտ շորեր և ամենաթանկը՝ իր տաս տարեկան թոռ Միշայի ծածկոցը: Կլավդիա Իվանովնան այնուհետև կորցրել էր վարորդ երկրորդ որդուն, որի տղա Միշան այդպես էլ մնաց նրա մոտ, քանի որ իր հերթին նրա այսպես

կոչված մայրը շուտով ամուսնացավ եւ ամուսնու հետ մեկնեց ոչ թե ինչ-որ տեղ, այլ նրա պատմական հայրենիք՝ Իսրայել: Միշան արդեն տասնչորս տարեկան էր, և կտրականապես հրաժարվեց մոր հետ մեկնելուց, այստեղ էին նրա ընկերները, դպրոցը ու նա մնաց Կլավա տատիկի մոտ: Փոքրիկ Օքսանան երկար տարիներ ստիպված էր հագնել թարս երեսի վրա կարած տղայական վերնաշապիկները և անգամ Միշայի տոնական զմրուխտյա պիջակը բամբակե ուսադիրներով, ինչի պատճառով նա միշտ լաց էր լինում: Այսպիսի բարդ ընտանեկան պատմություն կար այդ կեսգիշերային զանգի հետևում: Օքսանան տանել չէր կարող այդ հեռակա Միշային, որին միշտ հագցնում էին շագանակագույն ու չգիտես ինչու՝ կանաչավուն ծակծկող բրդյա վարտիքներ:

Նախկին սկեսուրը Նինա Սերգեևնային հայտնեց, որ Միշային սպառնում են սպանել պարտքերի համար, նրանից առգրավել են ամեն ինչ, իրենց վրա են գրանցել նրա ֆիրման, և Կլավան ստիպված էր հանուն նրա վաճառել իր բնակարանն ու տեղափոխվել ամառանոցատուն, սակայն այդ տունը նրբատախտակից է և, բացի դրանից, անջատել էին ջուրն ու էլեկտրականությունը, փողոցի ջրհորի մեջ աղբ էին լցրել, վառելափայտը վերջացել էր, ճանապարհներից ճյուղեր էր հավաքել, բայց դրանք թաց էին, չէին վառվում: Դաժան ցրտեր էին դեկտեմբերին, ձյուն էր եկել, փայտե ձայնով միապաղաղ խոսում էր պառավ կինը, եկել էր քաղաք ու ստացել թոշակը, վախեցել էր երևալ իր նախկին տանը, թե չէ, Միշան զգուշացրել էր, որ պատանդ կվերցնեն քեզ, հանգիստ տեղդ նստիր: Սրճարանում կաղամբապուր և, որպես խավարտ, մակարոն էր

կերել, ինչի համար մեծ գումար էին պահանջել: Հետո տատիկը նույն փայտե ձայնով բոլորին, Նինոչկային ու Օքսանոչկային մաղթեց երջանկություն գալիք տարում ու լռեց: Այդ պահին Նինա մայրիկը հազալով կոկորդը մաքրեց եւ Կլավոչկային կանչեց գալ իր մոտ, թելադրեց հասցեն (հեռախոսակապի կետում իրարանցում սկսվեց, տատիկին գրիչ ու թուղթ պետք եկան), և Նինա Սերգեենան այնուհետև գործիմացորեն խնդրեց հետ զանգել ու հայտնել գնացքի համարն ու տեղ հասնելու ժամանակը: Ինչից հետո նա խոսափողը դրեց եւ առանց այդ էլ մեծ աչքերը չռեց դեպի անորոշություն: Նրա երկար, անհամաչափ աղջիկն անշարժ նստած էր:

- Սկսվում է,- ասաց նա երկար դադարից հետո:

Ամեն պատահածի հանդեպ մոր ցուցաբերած անվերջանալի ու անմիտ օգնությանը սովոր Օքսանան անգամ չզարմացավ: Նման բնույթի վերջին իրադարձությունը տեղի էր ունեցել հենց երեկ, Բելոռուսական կայարանի մոտ, երբ ձյուն էր տեղում: Մայրը, լքելով շանն ու պահակախուցը, տուն էր վերադառնում՝ հոգնած ու դառնագին մտորումներով այն մասին, թե ինչպես խմբագրի իր կենսական ուղին արդյունքում իրեն հասցրեց հավաքարարի կարգավիճակի: Այնուհետև, իր իսկ խոսքերով, նա առջևում կամրջի վրա տեսավ ուղիղ քայլող, միջին տարիքի մի կնոջ, որը գնում էր բարձր պահած բաց գլխով, և այդ գլխին, հավաքած մազերի կույտի վրա, նստած էր ձյան բավական խիտ շերտ: Ինչպես արձանների վրա է լինում՝ մտածեց Նինա Սերգեենան: Հասնելով այդ անսովոր մարդ էակին, նա չկարողացավ զսպել իրեն ու ակնապիշ հայցքով սկսեց նայել նրա անշարժ քարե կողապատկե-

րին (այդպես արտահայտվեց Նինա Սերգեևնան): Տեսավ հասարակ մի կնոջ ու շտապեց դեպի տաք մետրո, քանի որ սառել էր: Սակայն շուտով այն կինը հասավ նրան ու հարցրեց. «Դուք մեկնու՞մ եք Մինսկ», եւ բացասական պատասխան ստանալով, ասաց, որ ինքը պետք է Մինսկ գնա, սակայն փող չունի: Իրեն խաբել են, ասաց ձյունը գլխին այդ քարե արձանը, պետք է գային կայարան ու փող բերեին, բայց չեկան, իսկ հեռախոսը չի պատասխանում: Ինքը Բելոռուսիայից է, իրացման համար բերել էր բելոռուսական քսուկներ ու շամպուններ: Բայց նրա փողերը չբերեցին: Արձանն անգամ բելոռուսական անձնագիրը ցույց տվեց: Հետ դառնալու համար փող չկա, ասաց այդ անշարժ արձանը, որովհետև փողը պետք է բերեին կայարան, բայց չեն բերել: Անձնագրում գրված էր «Գաննա» անունը, չգիտես ինչու Նինա Սերգեևնան դա հիշեց: Օքսանայի մայրը նախ խնդրեց այդ Գաննային հասնել մինչև մետրո, որովհետև ցուրտ է: Մետրոյին մոտենալիս արձանը դանդաղեցրեց քայլերն ու դառնորեն հարցրեց. «Դուք ուզում եք ինձ հանձնել միլիցիոներների՞ն»: Նինա Սերգեևնան պատասխանեց «ոչ» ու հանկարծ նկատեց, որ մետրոյի մոտ իսկապես երկու-երեք հոգանոց խմբերով կանգնած են միլիցիոներները: Նա մտածեց, որ այդ Գաննան մոսկովյան գրանցում չունի և նրան իսկապես կարող են ձերբակալել: Մի տեսակ մեղքի զգացումով նա ծածկեց Գաննային միլիցիոներներից: Մետրոյում նա հարցրեց, թե ինչքան փող է հարկավոր: Գաննան վախվորած սկսեց փնթփնթալ «երեք հարյուր հազար», հետո ասաց «հինգ հարյուր հազար», լրիվ իրար խառնվեց, մտքում ինչ-որ հաշվումներ կատարեց ու վերջապես արտաբերեց՝ «երեք

հարյուր ռուբլի»: Նինա Սերգեևնան դրամապանակից հանեց խեղճ Գաննային անհրաժեշտ գումարը, սա հանկարծ ուզեց իմանալ հասցեն, որպեսզի վերադարձնի պարտքը, իսկ հետո հարցրեց, թե որտեղ է զուգարանը և ինչքան պետք է վճարել: Նա, ինչպես ասում են, լրիվ կորցրել էր իրեն: «Անունս Աննա է»,- հանկարծ ասաց նա: Նինա Սերգեևնան արդեն տրամադրված նպաստին ավելացրեց ևս տաս ռուբլի՝ զուգարանի համար եւ ձեռքի փաթեթից հացը, որ գնել էր ընթրիքի համար:

Երեք հարյուր ռուբլի, դա երրորդ մասն էր նրանից, ինչ մնում էր Նինա Սերգեևնայի մեկ ամսվա թոշակից, բնակարանի վարձը մուծելուց հետո: Լավ է, որ արձանը հինգ հարյուրը չխնդրեց, Օքսանայի մայրը դա էլ կտար:

Այնպես որ, Օքսանայի մայրը հայտնի կերպար էր. էլ ինչ ասես, լայն բացված աչքերով ու լրիվ հավատալով այն ամենին, ինչից որ դժգոհում էին, նա նետվում էր օգնելու անգամ առանց խնդրանքի:

Կարճ ասած, մեկ օր անց, նրանք Կիևյան կայարանում դիմավորեցին Կլավդիա Իվանովնային՝ չոր, վշտոտ, այրող սև աչքերով խիստ պառավին: Նա անտուն մարդուց էլ վատ էր հագնված, ինչ-որ կեղտոտ, աղբանոցից վերցրած վերարկու ուներ հագին: Թոռան մասին, ինչպես պարզվեց, ոչ մի լուր չուներ: Նստած դիրքում Կլավդիան նման էր փայտե սրբի պատկերի (Օքսանան երեխա ժամանակ հիանալի գիրք ուներ Պերմի եկեղեցական քանդակի մասին): Քնելու համար Նինա Սերգեևնան տեղ հատկացրեց իր կողքին՝ բացովի լայն բազմոցի վրա: Կլավայի իրերից էր արդեն ծանոթ հնամաշ ուսապարկը, մեջը՝ ամառանոցատնից հագուստ (վարելու ու քաղհանե-

լու գործիքներ, տղայի վարտիքներ եւ տղամարդու ինչ-որ պատահական բամբակաբաճկոն), երկու ստվարաթղթե սրբապատկեր ու մի պարկ խնձոր: Թոռ Միշան խորհուրդ չէր տվել երբեւէ վերադառնալ բնակարան իրերի հետևից ու ստացվեց, որ Կլավոչկան ձմեռային հագուստից ոչինչ չուներ: Նա, ինչպես իրեն էր թվում, աննկատ աղոթում էր՝ սրբապատկերները տեղավորելով գրադարակի ապակու հետևում: Մերթընդմերթ Կլավոչկան հայացք էր նետում դրանց վրա, նա դրանց էր ուղղում իր վառվող հայացքները ամեն կողմից, անգամ խոհանոցից՝ պատի միջով: Խնձորները մանր էին ու թթու, ոչ ոք չէր ուտում, և Կլավոչկան դրանք թողեց փտելու խոհանոցում, սեղանի տակ, պարկից չհանելով: Կլավոչկան համոզված էր, որ այդ խնձորները ձմեռվա էին ու դեռ կհասնեն մինչև Նոր տարի: Դա նրա միակ օժիտն էր, որ բերել էր ամառանոցատնից:

Այդ ընթացքում Նինա Սերգեևնան վազվզուքի մեջ էր, վերականգնեց հեռախոսակապը հանգստյան տնից համարյա մոռացված մի ընկերուհու հետ, որը թոշակի անցնելով՝ զբաղվում էր բարեգործությամբ: Նինա Ս. նրան պատմեց անտուն գաղթականի մասին, նա տոգորվեց ու պատվիրեց գալ այսինչ ժամանակ այսինչ տեղը Տագանկայում. պարզվեց, որ դա սեկնդ-հենդ էր, հետո Նինա Ս. տարան չունևորների համար ինչ-որ բարեգործական պահեստ, եւ նա այնտեղից ոչ միայն կարգին վերարկու ու երկու տաք խալաթ բերեց Կլավոչկայի համար, այլև մի բավականին մեծ վարագույր՝ նարնջագույն, ոսկեփայլ երանգով, տեսքից՝ թեթև մետաքս:

- Դա ինչի՞դ է պետք, փալասներ ես քարշ տալիս, քիչ ունե՞նք դրանցից,- հարցրեց խոժոռ Օքսանան:

- Դե, առաջարկեցին, ես էլ վերցրի:

- Սինթետիկա է,- խստիվ ասաց Օքսանան, կասկածելով մորը վատ մտադրության մեջ: Հարևան սենյակում դրված էր սարքին վիճակում գտնվող «Զինգեր» մեքենան, նախահեղափոխական ժամանակներից, սաղափե պիսակներով կարմիրփայտյա պատյանի տակ:

- Մետաքս է, մետաքս,- անվրդով արձագանքեց Նինա Սերգեենան:

Հետագայում Կլավոչկան դժկամությամբ պատմեց, որ թոռը հրատարակչական գործով էր զբաղվում, օրացույցներ էր տպագրում, հետո հույսը դրեց մոսկովյան մի նկարչի մենագրության վրա, որոշելով գումար վաստակել մայրաքաղաքում. այդ նկարիչը նրան համոզել էր, որ ինքը պահանջված է, սակայն տպաքանակը չվաճառվեց և այլն: Թուղթը պարտքով էր վերցրել, տպագրության համար նույնպես պարտք էր, նրան հատուկ հաշվիչի տակ վերցրին, դնքստողներ ուղարկեցին: «Ու՞մ»,- նորից հարցրեց Նինա Սերգեենան:

- Նրանք ստիպողաբար պարտքերն են թափ տալիս, դնքստում են,- պարզաբանեց Կլավոչկան:

Օքսանան այդ ընթացքում թողեց իր փայտե համալսարանի ցերեկային բաժինը, աշխատանքի տեղավորվեց լանդշաֆտային դիզայնով զբաղվող ձեռնարկությունում (եղևնիներին ու փայտերին մոտ ուղղություն): Քիչ էին վարձատրում, բայց Օքսանան աշխատում էր խղճով, մինչև ուշ երեկո աշխատում էր թղթերի հետ, անվերապահորեն կատարում էր ոչ միայն պետի, այլ նաև հաշվապահի բոլոր հանձնարարությունները, չնայած տանը փորձում էր դժգոհել: Նինա Սերգեենան անընդհատ դիտելով,

թե հեռուստասերիալներում ինչպես են հագնվում բիզնեսով զբաղվող կանայք, անմիջապես «Բուրդայի» ձևվածքներով գործնական կոստյում կարեց բրդյա կտորից, որը, հաղթահարելով ամոթի զգացումը, սեփական կարիքների համար հայթայթել էր նույն բարեգործական աղբյուրներից: Կոստյումին համապատասխան նա կարեց երկու անպաճույճ սպիտակ բլուզ՝ կտորների խանութից գնված սավանի կտորից: Միայն համապատասխան կոշիկներ չկային Օքսանայի համար, չինացիները նրա՝ տղամարդու քառասունմեկերորդ համարի կրունկներով կոշիկներ չէին արտադրում:

Մինչև դիպլոմ ստանալը մնում էր երկու տարի:

Կլավոչկան վատ էր քնում եւ ամոթից անշարժ պառկում էր պատի տակ, չնայած, այնուամենայնիվ, ստիպված էր դուրս սողոսկել պետքի համար, իսկ հոգնած մայր ու աղջիկ քնած էին մեռելների պես, թանկ գնահատելով քնի ամեն մի րոպեն: Աշխատանքից ազատ օրերին Նինա Սերգեենան վազվզում էր, փորձելով  քաղաքացիություն դասավորել պառավի համար, գոնե ժամանակավոր հաշվառման դնել, որպեսզի բժիշկ կանչելու հնարավորություն ունենային: Դա շատ դժվար գործ էր: Մոսկվան պաշարված էր նոր աշխարհազորայինների, հիմնարկային անձնակազմերի ուժերի կողմից: Ամբողջ շարքերով, մինչև ատամները զինված, թաքցնելով կնիքներն ու ոչ մի տեղեկանք չտալով, նրանք զբաղեցրել էին մարտական դիրքերը, բացակայում էին միայն «նո պասարան» կարգախոսները: Նինա Սերգեենային, որպես թշնամական ուժերի գործակալի, ամեն հարցում մերժում էին:

Օքսանան իսկապես կարոտում էր անգլերենի իր դա-

սընթացները: Ճանապարհին նա պայուսակից միշտ նույն գիրքն էր հանում՝ «Բասկերվիլների շունը» բնօրինակով, սակայն անմիջապես քնով էր անցնում:

Հերթերում հոգնած բախտակից ընկերներից նվազագույն տեղեկություններ հավաքելով՝ Նինա Սերգեևնան ուղևորվեց Պոլտավա: Անհրաժեշտ էին արխիվային տվյալներ այն մասին, որ Կլավոչկան ծնվել է Ստավրոպոլի մարզում, այսինքն՝ ծնունդով Ռուսաստանի քաղաքացի էր: Ինչպես պարզվեց, Մոսկվայի նոր պաշտպանները չեն վստահում անձնագրին:

Այդ երեք օրվա ընթացքում Կլավոչկան վախից տեղը չէր գտնում: Նա վախենում էր, որ դնքստողները կիմանան իր նոր հասցեն: Նա վախենում էր, որ Միշան, հենց որ իմանա, որ տատին պատանդ են վերցրել, անմիջապես ջրի երես դուրս կգա ու նրան կսպանեն: Եթե նրան արդեն չեն սպանել:

Երբ հոգնատանջ Նինա Սերգեևնան վերադարձավ, բերելով թղթերն ու հաղթանակը, Կլավոչկան գունատ ժպիտով հարցրեց.

- Դու եղե՞լ ես մեր տանը:

- Աստված չանի,- թեթևությամբ պատասխանում էր Ն. Ս.-ն:- Միայն արխիվում եմ եղել: Հիմա քեզ պիտի քաղաքացիություն տան: Ու թոշակ:

Երբ Կլավոչկան քիչ հեռվում հեռուստացույց էր նայում, Նինա մայրիկը բացատրեց աղջկան.

- Ես ուղղակի որոշ ժամանակ նստեցի նրանց բակի նստարանին: Իբր ուզում եմ բնակարան վարձել: Իբր ես մոսկվաբնակ եմ, կհանձնեմ Մոսկվայի իմ բնակարանը ու բնակարան կվարձեմ Պոլտավայում: Իբր կլիման ինձ

հարմար է: Հընթացս հորինեցի, որ իբր ասթմա ունեմ: Վարձով տուն չկա՞: Բայց ինձ ոչինչ չասացին: Իսկ ինչքանո՞վ կարող եմ բնակարան գնել: Իսկ կա՞ն դատարկ բնակարաններ: Ոչ, ասացին, վաճառվող բնակարան չկա: Իսկ ես տեղյակ եմ, ասում եմ, որ վերջերս վաճառվել է տասերորդ բնակարանը: Լռեցին: Ես վեր կացա ու հրաժեշտ տվեցի: Հետևիցս ինձ մի կին հասավ: Մենք զրուցեցինք: Ոմն Վալենտինա էր: Ես հեռախոսահամարս նրան տվի, թող զանգի, եթե պետք լինեմ,- միամտորեն ավելացրեց նա:

- Ինչի՞դ էր պետք դա անել:

- Ինձ թվաց, որ նա ինչ-որ բան գիտի, բայց չի ասում: Նա էլ իր հեռախոսը տվեց ինձ: Դու հո գիտես, որ ես մարդկանց ճանաչելու ունակություն ունեմ:

- Օ-օ՜, մենք դա գիտենք: Ընդսմին, Բելոռուսականի արձանի մասին էր:

- Բոլոր այդ կանայք պետք է որ հիշեն և Կլավոչկային, և նրա այն հարսին: Դե, Միշայի մորը: Առանձնապես այդ Վալենտինան:

- Իսկ դու ի՞նչ ես ասել նրան:

- Բնականաբար, ոչինչ:

- Մամ, դու ե՞րբ ես սկսելու մտածել քո արարքների վրա:

- Վալենտինան, ասես իմիջիայլոց, հիշեց տասերորդ բնակարանի Կլավոչկայի մասին: Իբրև թե՝ որտե՞ղ է նա, ինչպե՞ս է: Որ գիտեր նրան, քանի որ բուժքույր էր աշխատում մանկական պոլիկլինիկայում: Որ Միշայի մեջքին բանկաներ էր դնում: Նրան տեղավորել էր հանգստյան տանը, երբ մահացել էր նրա հայր Անատոլին, Կլավոչկա-

յի որդին: Այնպես որ, ես իզուր չեմ խոսել այդ Վալենտինայի հետ:

- Այ-այ, դե հիմա սպասիր հյուրերի:

Օքսանան անգամ չէր էլ կասկածում, թե որքան ճիշտ էր:

Դեկտեմբերի քսանութին, ուշ երեկոյան, բնակարանում հնչեց միջազգային հեռախոսազանգը:

- Այո, այո,- շտապ խոսափողը վերցնելով՝ ասաց Նինա Սերգեենան:- Մոսկվան է, այո, խոսելու է: Երուսաղեմից են զանգում (նա պարզաբանեց աղջկան, որ գլուխը դուրս էր հանել լոգասենյակից):- Կլավոչկա, Կլավոչկա,- հանկարծ ճղճղաց նա:- Հեռախոսի մոտ: Օքսանա, օգնիր բարձրանա:

Օքսանան լոգասենյակից իրեն գցեց ննջարան, որտեղ մթության մեջ հաստ վերմակի տակից նշմարվում էր Կլավայի մարմինը:

- Գնանք, գնանք,- փնթփնթում էր Օքսանան,- ձեզ հեռախոսի մոտ են կանչում:

- Ո՞վ է, ո՞վ է,- շշնջում էր Կլավոչկան:- Չեմ գա, Աստված քեզ հետ: Դնքստողնե՞րն են:

Այդ ընթացքում նրա մայրը ինչ-որ բան էր գոռում հեռախոսով, կարծես ինչ-որ բան էր թելադրում, կարմրած այտերով լսում էր մեկին:

Երբ Կլավան խոսափողը մոտեցրեց ականջին ու իր թիթեղյա ձայնով ասաց «Լսում եմ Ձեզ», կապը հանկարծակի կտրվեց:

- Ո՞վ է, ո՞վ է խոսում,- հուսախաբ հարցնում էր Կլավոչկան լռող եթերից ու կրկնում.- ես հեռախոսի մոտ եմ:

- Չգիտեմ, չգիտեմ,- ուսերը թոթվում էր Նինա Սեր-

գեենան: - Երուսաղեմն էր:

- Լենա՞ն,- դադարից հետո վստահորեն ասաց Կլավոչկան:

- Նա չներկայացավ:

- Ուրեմն կենդանի է, չի մեռել,- գլուխը տարուբերեց պառավը ու գնաց զուգարան:

Վերադառնալով՝ նա ասաց.

- Տես՝ ինչքան ժամանակ է անցել, վերջապես հիշել է որդուն: Խիղճն արթնացել է: Իսկ ինձ հետ չուզեց խոսել:

Հաջորդ երեկոյան, տնեցիներին որոշ չափով ուրախացնելու համար, Օքսանան պահեստից ոչ մեծ դրախտանոճի բերեց ծաղկամանի մեջ, որը պետք է տոնածառի դեր տաներ ու վերադառնար իր տեղը:

Կլավոչկան նայեց կենսածառին ու ասաց.

- Օ՜, հավերժական հանգիստ:

Այդպիսին էր նրա տրամադրությունը: Նա ջանասիրաբար նայում էր բոլոր քրեական հաղորդումները հանցագործների ու նրանց ձերբակալության մասին, դրա մեջ ժամանակավոր հանգստություն գտնելով, այսինքն՝ ամեն անգամ, հենց տվյալ երեկո, ուղիղ նրա աչքերի առաջ հաղթանակում էր արդարությունը: Սակայն այդ ամենից նա լավատես չէր դառնում:

- Այո, այն եղևնու տեղ է,- բացատրեց հոգնած Օքսանան:- Արտասահմանյան է:

- Մեզ մոտ՝ Պոլտավայում էլ կա տնկած դրանից: Որտեղ հայրս ու մայրս են ու Վիտյուշկան Տոլեչկայի հետ:

Կլավան իբր ուրախացրեց խեղճ Օքսանային:

Այդ ընթացքում հոգսաշատ Նինա մայրիկը մեծ սենյակի սեղանի մոտ նորից կախարդագործում էր «Բուրդայի»

ձևվածքների վրա, հետո նստեց մեքենայով կարելու:

- Ես դրանից ոչինչ չեմ հագնելու,- նախապես գոռաց Օքսանան փոքրիկ սենյակի կողմը:

- Ոչինչ: Պայմանավորվեցինք,- անհոգ կերպով, ի պատասխան բարձրաձայնեց Նինա մայրիկը:- Կտեսնեմ՝ ինչով ես դիմավորելու Նոր տարին:

- Ես ոչ մի տեղ չեմ գնա,- մռնչաց Օքսանան:- Ու՞ր պիտի գնամ: Ու՞մ եմ ես պետք:

Նինա մայրիկը ինչ-որ բան էր կարում այն երևակայական նարնջագույն իբր մետաքսից, որ հայթայթել էր բարեգործական սեկնդ-հենդից:

Այդպես էլ կար: Նոր տարվա օրը, խղճուկ ժպիտը երեսին Նինա Սերգեևնան դուրս եկավ ննջասենյակից՝ ձեռքին դեղնա-կարմրավուն կտորի մի թեղ:

Կլավոչկան աշխատում էր խոհանոցում, նա կաղամբով թխվածք էր դրել ջեռոցում: Ամառանոցատան խնձորներով թխվածքը սպասում էր ջեռոցի իր հերթին:

- Մեր նվերը,- երկչոտությամբ հայտարարեց Նինա մայրիկը:- Զգեստը Ձեզ համար է:

- Ձե՛մ հագնի, մի՛ երևակայիր,- խստությամբ ասաց Օքսանան:

- Մի մտածիր՝ ինչքան կուրախանա Կլավան: Չէ՞ որ նա երեկ առավոտից դրանով էր զբաղված: Քանի դեռ մենք աշխատանքի էինք: Տես՝ ինչ խնամքով է կարել-հավաքել բոլոր դուրս ցցված թելերը: Նա՝ Կլավդիան, անհատական կար ու ձևի վարպետ էր: Վերնազգեստ էր կարում: Հիշու՞մ ես Միշենկայի զմրուխտե պիջակը: Ուսատակդիրները բամբակե խծուծի վրա էին: Հիմա այդպես չեն կարողանում կարել:

- Լռի՛ր: Պիջա՛կը,- ֆշշացրեց Օքսանան:- Քի՞չ էր ինձ այդքանը, հա՞: Քննաշրջանս երկու շաբաթից է: Ես ոչինչ չեմ հասցնում: Իսկ Օլգան ինձ բաց չի թողնում: Նա իբր պլաններ ունի փետրվարին: Ասում է՝ եթե քննաշրջանին չգաս մեզ մոտ, կարող ես հետո էլ չգալ: Ինձ մոտ, գոռում էր, բարեգործական հիմնարկ չէ: Ես վաստակում եմ իմ կարիքների համար ու հոգ տանում նաև ամուսնուս ու աջկաս: Գոռում էր: Հիմա ասա, մայրիկ, իմ ինչի՞ն են պետք սեկնդ-հենդից քո հագ ու կապը:

Այդ պահին սենյակ մտավ Կլավան, տեսավ Նինա մայրիկի ձեռքի մետաքսը ու կտրուկ ասաց.

- Դե նրան դուր չի գա, նայիր: Ձեռքերս կեռչաններ են դառել: Աչքերս էլ այն չեն: Ծուռ եմ կարել: Այո, ես, այսպես ասած, ձևող վարպետ եմ, բայց միջակ կարող: Օքսանոչկա, ներիր ինձ, Աստծո սիրուն:

Չոր աչքերով, փայտի պես տափակ, նա անցավ ննջարան, որտեղից աղոթագրքի շրշյուն լսվեց:

Մոսկովյան «այսպես ասածը», որ սովորել էր Օքսանայից, վերջերս Կլավոչկայի համար ուժեղ զգացումների արտահայտչամիջոց էր դառել:

Նինա Սերգեևնան մետաքսի կույտը դրեց բազմոցին եւ գլուխը թափ տալով գնաց խոհանոց: Բոպե անց այնտեղ զրնգում էին թավաները, ամանեղենը, հետո լսվեց դանակի թխկոցը: Տարածվեց թարմ վարունգի բուրմունքը: Պատրաստվում էր ավանդական օլիվյե աղցանը:

Օքսանան ձեռքը թափ տվեց ու մտավ լոգասենյակ: Մինչև Նոր տարի մնացել էր մոտ մեկ ու կես ժամ: Պետք էր գլուխը լվանար ու հասցներ չորացնել մազերը: Մազեր չորացնելու ու հարդարելու հարմարանք վաղուց արդեն

տանը չկար, փչացել էր:

Երբ նա խոնավ մազերով նստեց իր հին համակարգչի առաջ, մայրը խոնարհվեց նրա կողմը.

- Կլավոչկան շատ է տխրում, որ դու անգամ փորձել չես ուզում: Սենյակից դուրս չի գալիս: Դե՛, ուրախացրու ծեր կնոջը, նա ախր ութսուն տարեկան է:

- Մամմ,- ծվվաց Օքսանան:

Բայց հնազանդվեց: Ննջարանի դուռը փակ էր, այն-տեղից հստակ լսվում էին շշուկներ:

Օքսանան գնաց լոգասենյակ, որտեղ լվացարանա-կոնքից վերև հայելի կար, ու հագավ նեղվածք հագուստը: Դա գունաթափված ոսկեգույն մետաքսից զգեստ էր, շատ թեթև, երկու ուսակապերով: Ստիպված էր հանել կրծկալն ու վրա քաշել այդ շորն անգամ առանց մայկայի: Փոխա-րենն այդ շորը տակի կիսաշրջազգեստով էր, կար նաև փետուրի պես թեթև, ծայրերին նարնջագույն ժանյակով լայն շարֆ: Ըհը, մայրը իր սիրելի «ռիշելյե» տեխնիկան է կիրառել: Ինչի՞ էին պետք նման չարչարանքները: Հա-նուն ինչի՞ է մայրը նստել ու բարակ մկրատով կտրել այդ զարդանախշը: Ո՞վ է այն տեսնելու:

Հանկարծ նրա աչքերի առաջ հառնեց նրա ապագա անհետաքրքիր ու անմխիթար կյանքը: Համակարգիչ, հե-ռակապ, տպիչ, թղթերով լիքը փոքրիկ սենյակ, հաշվա-պահ Դինան, Կրիվոյ Ռոգից սպիտակահեր տարեց գե-ղեցկուհին, որի ուսանողուհի աղջիկը հրաժարվում է մոր հետ խոսել անգամ հեռախոսով: Եվ պետ Օլգան՝ աչքերի շուրջ սև շրջանակներով հյուծված կինը, աշխատասեր, առավոտից իրիկուն պատվիրատուների հետևից դեսու-սեն ընկած: Նրա հին «մերսեդեսը» մշտապես վերանո-

րոգման մեջ է:

Պատվիրատուները նոր ռուսների կանայք էին, արվարձանային իրենց տների առջևի խուզած սիզամարգերի վրա գաճաճների վերաբերյալ ծրագրերով: Այդ կանանց կողմից հասարակ ծառերի նկատմամբ սիրո բացակայությունը: Հիանալի լացող ուռենիների, կուենիների նկատմամբ: Ավելի բարձրահասակ (քան հարևանուհիներինն է) դրախտանոճի գնելու ձգտումը:

Օքսանան հանկարծ ձեռքը մեկնեց տուփին ու հանեց թարթիչների ներկը: Մի լավ քսեց: Ճմրթեց ու զզզզեց դեռևս թաց մազերը, որոնք խոպոպների տեսք ստացան: Բաղնիքից հետո գունատ, փոս ընկած այտերը դեռ շառագունած էին: Ընդգծեց դրանք՝ այտոսկրերին քսելով մոր շրթներկը:

Նա ինքն էլ չէր հասկանում, թե ինչու է անում այդ ամենը: Ինչ-որ բանի համար: Նոր տարի է: Նոր զգեստ: Սև մազերը ալիք-ալիք թափվում են գրեթե մինչև գոտկատեղ: Փայլող մեծ աչքեր: Մեծ բերան: Դա էլ ներկեց՝ անխնա, թավ, ինչպես մանկության տարիներին:

Դե, թո՛ղ այսպես լինի:

Նա դուրս եկավ նախասենյակ:

Ներքևում հարբած ընտանիքն էր գոռում: Կանայք աղաղակում էին սովորական «սպանում են»: Տղամարդիկ իրար հրմշտում էին: Դմփդմփոցներ, հարվածներ, երկաթե դռան շրխկոցը:

Մտավ սենյակ:

Մայրն աչքերը բարձրացրեց: Դրանք քառակուսիներ դարձան:

- Կլավոչկա՛,- նա խցկվեց ննջասենյակ:- Արքայա-

դուստրը հագել է  քո զգեստը: Արի՛ տես:

Կլավոչկան դուրս եկավ, բորբոքված սև աչքերով նայեց Օքսանային ու շրթունքները թեթևակի շրջանի մեջ առավ: Դա պառավի ուրախության ժպիտն էր, ոչ այլ ինչ: Ունեցած ապրումներից հետո նրա մոտ  աղքատիկ դիմախաղ էր պահպանվել:

- Ոնց որ Պենելոպան է, ասել է թե՝ Կրուզը,- հանկարծ ասաց Կլավոչկան:- Ճիշտ և ճիշտ:

Հրճվող Նինա մայրիկը բացականչեց.

- Այո, այ մեր ամառանոցատանը, երբ Օքսանան դեռ փոքրիկ էր, գնացել էինք սունկ հավաքելու: Մտնում ենք հարևանուհու մոտ, Վերա Իգնատենա էին կոչում: Նա անմիջապես շրջվում է հայելու կողմն ու բերանը ներկում շրթներկով: Իսկ նա մոտավորապես յոթանասունութ տարեկան էր: Ճամփու է ընկնում զամբյուղը ձեռքին: Մայրս ասում է նրան. «Վերա մորաքույր, չէ՞ որ մենք անտառ ենք գնում, ի՞նչ ես ներկվել»: Իսկ նա պատասխանեց, այ երբեք չեմ մոռանա. «Իսկ գուցե՞ դա հենց այնտեղ էլ կպատահի»:

Նինա մայրիկը միշտ ձգտում էր ինչ-որ կերպ ուրախացնել իր հանդիսատեսին, սակայն հանդիսատեսների մի մասը տվյալ դեպքում չհասկացավ նրան ու այսպես արձագանքեց.

- Մամ, ասածդ անտեղի էր:

Կլավան, ճիշտ է, նորից շրթունքներին սրտիկի տեսք տվեց:

Այդ պահին դռան զանգը ուժեղ հնչեց:

- Ախ, Աստված իմ,- ճչաց Նինա մայրիկն ու դժկամորեն գնաց նախասենյակ:

Նա դուռը բացեց, ինչքան թույլ էր տալիս շղթայիկը, վախենալով ներքևիներից: Ճեղքից վերարկուով ինչ-որ երիտասարդ տղամարդ էր երևում:

- Այնտեղ մեկին սպանում են, բարև ձեզ,- ասաց տղամարդը:- Պետք է շտապ միլիցիա զանգել: Շնորհավոր գալիք Նոր տարի:

- Ինչ վերաբերում է միլիցիային, ապա մի անհանգստացեք,- Նինա մայրիկը պատասխանեց հատուկ քմծիծաղ տալով,- միլիցիան նրանց մոտ, այսպես ասած, արդեն չի գալիս: Երբ սպանեն, ասում են, այդ ժամանակ էլ կկանչեք:

- Այսպես, մի րոպե,- չհասկացավ տղամարդը:

Սակայն Նինա մայրիկն արդեն փակել էր դուռն ու սլացել խոհանոց, որովհետև խանձահոտ էր գալիս, հա՞վն էր խանձվել, ինչ է:

Դռան զանգը նորից հնչեց:

- Օյ, ուշադրություն մի դրեք,- կանչեց Նինա մայրիկը:- Էլի հարևաններն են կռվել: Նրանց հեռախոսն է պետք:

Զանգը դռդռում էր:

Օքսանան դժկամորեն վեր կացավ համակարգչի մոտից, վերցրեց հեռախոսն ու ծուլորեն գնաց դուռը բացելու:

Նա մեքենայաբար քաշեց շղթայիկն ու լայն բացեց դուռը: Թող զանգեն: Մարդիկ են, չէ՞:

- Ներեցեք,- թնդածայն ասաց երեսուներկու տարեկանին մոտ ոչ երիտասարդ տղամարդը: Նրա ձեռքին պայուսակ կար, ոտքերի մոտ դրված էր մի լավ ճամպրուկ:- Ձեզ կարելի՞ է:

- Այո՛,- պատասխանեց Օքսանան, անհամբեր գլխով անելով:

Հանկարծ սենյակից  աղեկտուր ձայն հանեց Կլավոչ-կան:

- Ա՜այ, ա՜այ, օ՜օյ, օ՜օյ, Միշա, Միշա:

Ինչ-որ բան շրխկոցով ընկավ, ըստ երևույթին՝ աթոռն էր:

Նինա մայրիկը խոհանոցից սլացավ այնտեղ:

Օքսանան կանգնած էր, չիմանալով, թե ինչ անել: Կլավան ակնհայտորեն խելագարվել էր: Անհարմար էր անծանոթի երեսին դուռը փակելը: Նրա հայացքը կանգ էր առել Օքսանայի վրա: Նա մի տեսակ արտասահմանցու տեսք ուներ: Նա վայրենի բնակարանից եկածի նման չէր:

Այնտեղից, իմիջիայլոց, գոռացին.

- Մարդ, ա՜այ մարդ, սպանում են:

Աստիճաններից մի կին ճղճղաց.

- «Շտապ», «շտապ օգնություն» կանչեք, մեր հեռախոսն անջատել են:

Դռան մոտի տղամարդը թարթեց, բայց աչքերը չկտրեց օբյեկտից: Իսկ ներքևից ինչ-որ մեկն արդեն երերուն քայլերով բարձրանում էր՝ բացատրվելու հստակ մտադրությամբ: «Ընկեր, եղբայր, բանը դրանում չէ, հիմա, հիմա»,- մռթմռթում էր եկողը:

- Ես Ձեզ մոտ եմ եկել, կարելի՞ է,- արագորեն ճշտեց տղամարդը:

- Դե, մտե՛ք,- հոգոց հանելով ասաց Օքսանան ու հետ գնաց:

Տղամարդը ուղեբեռը բնակարան մտցրեց եւ ճարպկորեն հասցրեց փակել դուռը, նախքան դեպի դուռը մեկնված ինչ-որ մեկի կեղտոտ ձեռքն ու հողաթափով ոտքը հասցրին ներս ընկնել:

Անտես Կլավան, սակայն, չէր լռում, նա կանչեց սենյա-

կից.

- Միշա, դու՞ ես:

Տղամարդը Օքսանայից  չկտրելով հիացական հայացքը, լուռ գլխով արեց:

- Մի-շա՞,- նորից գոչեց Կլավոչկան նույն պոռթկումով ու անմարդկային ուժով:

- Տատիկ, մի՛ գոռա,- պատասխանեց Միշան, դիմելով դեպի սենյակ:- Ես հիմա կհանվեմ: - Նա դիմեց Օքսանային.- Բարև Ձեզ ևս մի անգամ: Ի՞նչ է ձեր անունը:

Օքսանան, անդրդվելի Օքսանան, հանկարծ բացեց իր կախարդական բերանը, կկոցեց գեղեցիկ աչքերն ու պատասխանեց.

- Քսենիա:

Ու օդի մեջ թեթևակի թափահարեց հեռախոսը, մի տեսակ պչրանքով:

- Ինչ գեղեցիկ անուն,- ասաց Միշան:- Ահա, ինձ կյանքում էլ ոչինչ պետք չէ: Քսենիա:

Այստեղ վերջապես բեմ հանեցին Կլավոչկային, եւ սկսվեցին արցունքները, ախն ու վիշը, համբույրները, շնորհակալական ու առնական խոսքեր, որ Կլավոչկան կունենա իր բնակարանը, և այստեղ սկզբի համար մանրմունր նվերներ կան բոլորին:

…

Իսկ Նինա մայրիկը նայում էր իր աղջկան ու գուշակում, թե որտեղի՞ց նրա շարժումներում այդ ծուլությունը, այդ հանգստությունը, ծիծաղող սև աչքերում այդ կայծերը: Ուսերին թափված խոպոպները: Որտեղի՞ց մինչև գետին հասնող այդ ոսկեգույն զգեստը:

Ախր, հա, չէ՞ որ ինքն է կարել:

Որքան
շատ բան
գիտեն
կանայք

Ահա ձեզ պատմություն իդեալական աղջկա մասին, դաստիարակված իդեալական մոր ու նրբաճաշակ, իդեալական դաշնակահարուհի-տատի կողմից: Մտավորականներ, ընդ որում՝ հրեա մտավորականներ:

Բոլոր երեքը՝ գեղեցկուհիներ: Ընդ որում՝ լինում են այդպիսի դեմքեր՝ առանց ազգային պատկանելության բնորոշ գծերի, նրանց դեմքերը հենց այդպիսին էին ու տարիների հետ նրանց գեղեցկությունը չէր մարում:

Տատիկն այն զմայլեցուցիչ պառավներից էր, որոնց տեսնելիս ժպիտով էին պարուրվում անգամ ամենակատաղի անցորդները, քաղաքային տրանսպորտի երթևեկողներն ու վաճառողուհիները: Նա նման էր հաջողակ, բարի ու գեղեցիկ, դեռ ավելին՝ սրտաշարժ երեխայի: Խելքը հաջողությամբ թաքցնում էր: Ձեռքերի մասին հոգ էր տանում, անգամ ամռանը հագնում էր ծայրերը կտրած բրդյա ձեռնոցներ: Նախկին հայտնի կոնսերվատորիական գեղեցկուհի:

Մայրն ավելի հասարակ էր, տարիների հետ գիրացավ, բժիշկ էր աշխատում հիվանդանոցում, լուրջ, դաժան հիվանդանոցում, աննահանջ ողբերգությունների շրջապատում, խելագարների աշխարհում:

Հիվանդները սիրում էին նրան: Նրա կողքին առողջանում էին, չէին հիշում ոչ հետապնդողներին, ոչ թշնամիներին, ոչ ականջներում հնչող հստակ հրամանները, ոչ առաստաղից եկող ճառագայթումները, որից գոյություն ուներ միակ պաշտպանությունը՝ գլխի գագաթին կապել ռետինե ջերմակ:

Դժվար է ասել, թե նա էլ էր սիրում հիվանդներին: Նա օգնում էր նրանց ապրել հիվանդանոցային պայմաններ-

ռում, բաժանմունքում պահում էր իր նման բժիշկների եւ, անկասկած, հերոսական, տարեց ու նվիրված կրտսեր բուժանձնակազմ: Անգամ հարբեցող սանիտարուհիները պաշտում էին նրան:

Նրա գաղտնի խնամառուների մեջ էին և նշանավոր երաժիշտներ, և անասելի հայտնի պոետներ ու գրողներ, Աստծո տված ամեն ինչի նկարիչներ, մարդկային ցեղի տականքներ, չարքերի պես կաղեր, ծուռլիկներ, ընկնավորներ, անքնությամբ տառապողներ՝ թմրանյութերի ու մոլի խաղերի նկատմամբ թուլությամբ և, որպես արդյունք՝ ինքնասպանության հակում ունեցողներ: Պաթոլոգիկ խանդոտ այլասերվածներ, սովորական հաշմանդամների նման տառապող մարդասպաններ, իրենց կանանց, երեխաների ու տարասեռ սիրեցյալների համար անտանելի խռովարար ճղճղաններ:

Նա երբեք նրանց անունները չէր տալիս, բայց վերևի դարակներում շարված էին հանցանշանները, ստորագրված գրքերն ու սկավառակները:

Նա ինքը միայն մի թուլություն ուներ, ինչպես և մեծ կանանցից շատերը (իսկ նա մեծ բժիշկ էր): Մարիյա Իոսիֆովնան սիրում էր իր աղջկան, լռելյայն ու անձանձիր: Նա հասուն աղջկա հետևից մաքրում էր բաղնիքի հատակը, առավոտները դեռ անկողնում նրա համար թեյ էր բերում, երբեք նկատողություն չէր անում, երբեք:

Աղջիկն առանց այդ էլ դպրոցում բազում խնդիրներ ուներ: Ուսուցիչները չէին ուզում ընդունել նրա ի ծնե գերազանցությունն իրենց նկատմամբ, որ արտահայտվում էր կատարյալ հնազանդության ու չափազանց քաղաքավարության մեջ:

Ուսուցիչները դա ընկալում էին որպես ծաղրանք, եւ նրանք իսկությունից հեռու չէին: Կորցնում էին հավասարակշռությունը, դա դրսևորվում էր բղավոցներով:

Երեխաները, սրանք երկրպագում էին նրան, աղջիկները մշտապես պտտվում էին Կատյայի շուրջ, տղաները դասարանի տարբեր ծայրերից նայում էին սևեռուն ու համառ հայացքներով:

Խնդիրներ կային, ինչպես հաճախ պատահում էր՝ ֆիզկուլտուրայի հետ կապված:

Եկավ նոր խիստ ուսուցիչ, բոլորին վախեցրեց, որ երկուսներ է դնելու:

Կատյան բազմոցային երեխա էր, ծույլ ու նրբաշարժ, նրան չէր հասնում շրջաններով վազել՝ լեզուն կախ գցած, կամ ոտքերը չռած թռչել «այծի» վրայով: Բնությունն այն չէր: Նամանավանդ կապիկի պես մագլցել պարանով կամ տղամարդու պես սկավառակներ շպրտել ուր որ պատահի. իսկ այդ մարզաձևերը մտնում էին պարտադիր այն վարժությունների ցանկի մեջ, որոնց համար գնահատականներ էին դրվում:

Երևակայելն անգամ անհնար էր. Կատյան վազում է խելառի պես:

Ճիշտ է՝ նա փորձել էր կատարել դրանք, եւ հետո ընկերուհիները քմծիծաղում էին՝ նմանակելով այդ շորոր քայլվածքն ու հոգնատանջ տեսքը:

Կատյան հակառակվեց, դադարեց դպրոց հաճախել, ոչինչ չբացատրելով մորը:

Բանն, իհարկե, տղաների մեջ էր, որոնք բոթում էին միմյանց արմունկներով ու ծածուկ, ուրիշի թիկունքում թաքնվելով, հռհռում էին՝ կզակներով ցույց տալով Կատ-

յայիին:

Մայրը, որպես բժիշկ, հեշտությամբ նրա համար ազատվելու թուղթ դասավորեց, ինչ-որ բարդ ու անընթեռնելի ախտորոշում էր, սակայն խոսքը հիվանդ ոտքերի մասին էր:

Ինչը մարգարեություն դուրս եկավ:

Այժմ ֆիզկուլտուրայի բոլոր դասերին Կատյան նստում էր մարզադահլիճի ցածրիկ նստարանին ու կարդում, և բոլոր տղաները պարծենալով ի ցույց էին դնում իրենց ճիգ կեցվածքն ու վարժվածությունը: Տեղի էին ունենում իսկական մրցություններ, ի նկատի ունենալով նման փոքրիկ գեղեցիկ կնոջ ներկայությունը: Հո՛պ բացականչություններով, հարայհրոցներով: Որպեսզի նա կտրվեր գրքից ու նայեր իրենց իր հիասքանչ կապույտ աչքերով՝ ճակատի ցորենագույն մազափնջի տակից:

Դեռ մանկությունից նա նման էր վարդագույն ռենուարյան աղջկա:

Կատյան հեշտությամբ, բայց մեծ կասկածներով ընդունվեց ինստիտուտ, չգիտես ինչու տարվեց մաթեմատիկայով: Հետո տեղափոխվեց ուրիշ հաստատություն՝ լեզուներ ուսումնասիրելու (նա առանց այդ էլ երկու լեզու գիտեր):

Այսինքն՝ գնաց նվազագույն դիմադրության ճանապարհով: Դա արդեն նրա հանրահայտ ինքնությունն էր:

Ուրիշները անգիր էին անում, ջանք գործադրում, լինգաֆոն սենյակում սեղաններ էին զբաղեցնում, իսկ նա ապրում էր մտածկոտ, անշտապ, առանձնապես չդրսևորվելով: Թաքուն էր պահում իրեն: Ծպտվում էր:

Տղամարդ-երիտասարդներից շատերն, ընդհակառա-

կը, հետաքրքրվում էին նրանով, ընդ որում՝ հիմնականում ամենաեռանդունները, սպորտայինները, մի խոսքով՝ հիմարները:

Նրա զույգը չէր գտնվում, մանավանդ նրա ինստիտուտում, որտեղ տղաները հիմնականում բանակում ծառայությունից հետո էին: Հասակ առած, կոպտավուն, նպատակասլաց գերաններ: Ցածր ռասսա:

Կատյան ավարտեց ինստիտուտը, աշխատելու գնաց գրադարան՝ արտասահմանյան պարբերական մամուլի բաժնում. շատ հաճախորդներ ունեցող դահլիճ, ընտիր մտավորականություն, այդ թվում և՝ բոհեմ:

Այստեղ Կատյան կեղտի մեջ ընկավ, սիրահարվեց թղթախաղի մոլի խաղացողի ու ձիարշավների մշտական հաճախորդի վրա:

Կատյան նրան տուն բերեց, ամբողջ յոթ տարով իրենից մեծ, անամնեզում գլխուղեղի երկու ցնցումով, ցնցումներ ու գանգեր վնասվածքաբանների ժարգոնով (նա հիվանդանոցում սանիտար էր աշխատում):

Տղամարդն իր հետ ճամպրուկ ուներ:

Մարիյա Իոսիֆովնան ախտորոշեց (լուռ) խելառություն, ընկնավորություն և շատ ուրիշ բաներ: Իզուր կլիներ խնդրել նրան ստուգվել Վասերմանի պահով և այլն: Փեսացուին նման պահանջներ չեն ներկայացնում:

Ամպրոպը ճայթեց, երբ Կատյան հիվանդացավ ու ախտանշանները թաքցնում էր մորից, քանի դեռ ստիպված չէր գնալ վիժումի (ակնհայտորեն հետաքննվողի հրահրմամբ): Վիժումը, բնականաբար, կատարվեց ըստ նրա պայմանների, այսինքն՝ ոչ թե հիվանդանոցում, այլ՝ Անտոնի ծանոթների միջոցով. երևում է՝ նա արդեն հարթված

արահետ ուներ: Առաջին անգամ չէր աղջիկներ տանում այդ ճանապարհով:

Մայրը կռահում էր ամեն ինչ (ինչ արժեր Կատյայի առավոտյան սրտխառնոցը), փողերը տալիս էր անտրտունջ: Ստիպված էր մի քանի հիվանդների ընդունել տանը, որոշակի վճարի դիմաց, ինչը նախկինում երբեք իրեն թույլ չէր տալիս (գրքեր ու սկավառակներ, ու վերջ):

Սակայն ցրված Կատյան, ամեն ինչ դես ու դեն շպրտելու իր սովորությամբ, սրվակը շպրտեց աղբարկղից դուրս:

Մայրը ավլում էր, լվանում ու հավաքում էր, իր սպիտակած գլուխը խոթեց և այն պահարանը, որտեղ այդ աղբարկղն էր, նա միշտ ամեն ինչ մաքրում-լվանում էր՝ ինչպես հասարակ հավաքարար (տատն այդ ժամանակ արդեն գրեթե չէր քայլում, իր ձեռնոցները հագած նստում էր հեռուստացույցի առաջ եւ հեզորեն արտահայտում երաժշտական հաղորդումների մակարդակից  իր մշտական դժգոհությունը):

Մայրը սրվակը մոտեցրեց իր կարճատես աչքերին:

Նա խոսեց միայն Անտոնի հետ, կանչեց նրան բակ: Անտոնը ժպտալով իր հրապուրիչ ժպիտով, ամեն ինչում մեղադրեց Կատյային: Ինչպես որ լինում է նման դեպքերում: Իբր, նա հիվանդացել էր դեռևս իրենից առաջ, մինչամուսնական կապեր և որ ընհանրապես՝ ի՞նչ է կատարվում գրադարաններում:

Հոգեբան, հիանալի ախտաբան, ինչպես նաև տիրապետելով հարկ եղած տեխնիկաներին, Մարիյա Իոսիֆովնան արեց անհնարինը՝ Անտոնը կորավ ու՝ ընդմիշտ:

Գուցե և կյանքից, ո՞վ գիտի, Մարիյա Իոսիֆովնայի

համոզելու շնորհը հանճարեղ էր:

Ապրելու սեփական տեղ նա չուներ, իբր ամեն ինչ թողել էր կնոջն ու երեխային, չվում էր մի կնոջից մեկ ուրիշի մոտ, փաստաթղթերում առկա էր, որ անգամ երեք տարի նստել էր բանտում, ինչպես անկեղծության պահին ինքը խոստացավ Մարիյա Իոսիֆովնային:

- Ձեզ շտապ գործուղման են կանչել,- խորհուրդ տվեց Մարիյա Իոսիֆովնան:

Նույն օրը Կատյան քարշ եկավ անալիզների համար, իսկ երբ վերադարձավ, սեղանին գտավ հեռացածի երկտողը: Մարիյա Իոսիֆովնան սկզբունքորեն չէր կարդացել այն, նստած էր խոհանոցում, քանի դեռ Անտոնը հավաքվում էր ու խաղամոլի ժպիտը երեսին արտասանում իր վերջին «ներիր»-ը, նախասրահ դուրս եկավ միայն բանալիները վերցնելու: Անտոնը աստիճաններով ցած գլորվեց՝ անգամ չսպասելով վերելակին: Նա իջավ նրա հետևից, կիսամեռ վիճակում: Ուզում էր հավաստիանալ, որ նա հեռացել է:

Կատյան կարդաց, պառկեց: Ցմեռավ, բայց քարացավ:

Մայրը նրա համար հիվանդության տեղեկանքներ էր դուրս գրում իր հիվանդանոցում, իսկ ի՞նչ աներ, միայն այդպես կարելի էր ամիսներով գործի չգնալ: Հարյուր քսան օր անց պետք էր կամ ազատվել աշխատանքից, կամ մոլագարության պատճառով հաշմանդամություն վերցնել:

Կատյան մնում էր պառկած: Մայրը գնաց ու տարավ աշխատանքից ազատելու մասին իր իսկ ձեռքով գրված դիմումը:

Կատյան շարունակում էր պառկած մնալ, անգամ չէր կարդում: Պառկած էր հեռախոսը գրկած: Լսելով ոչ այն ձայնը, պարզապես դնում էր խոսափողը: Չէր ուտում:

Մայրը սկսեց նրան կաթոցիկ դնել՝ գլյուկոզայով ու վիտամիններով: Երևում է՝ նա սպառել էր իր բոլոր ուժերը, սատարելով աղջկան: Նա մի տեսակ սևացել էր, չնայած պահպանում էր հանգիստ, բարեհամբյուր վերաբերմունքը շրջապատի նկատմամբ, մանավանդ իրենց հիվանդանոցում:

Իրավիճակն ավելի ու ավելի էր վատանում:

Նման պայմաններում մոխիրներից հառնեց տատիկը՝ Աննա Իոնովնան: Նա որպես հիվանդապահ նստեց Կատյայի կողքին: Նեցուկ էր լինում նրան, երբ պետք էր դուրս գնալ: Երկուսն էլ միատեսակ հյուծված էին:

Կատյան հիմար չէր եւ վերջիվերջո կարողացավ գտնել ծայրերը, կամ էլ Անտոնը նրան լուր ուղարկեց անէությունից: Ոչ, ավելի շուտ նա ինքը կռահեց, թե ինչու էր Անտոնը ստիպված անհետանալ: Անսպասելիորեն Կատյան դադարեց խոսել մոր հետ:

Որոշ ժամանակ անց տատը գնաց փոստարկղից թերթ բերելու և նրան հանձնեց առանց հետադարձ հասցեի մի ծրար:

Դա դատարկ սոսնձված ծրար էր:

Սակայն ձեռագիրը Անտոնինն էր:

Կատյան հանկարծ կենդանացավ, անգամ սկսեց վեր կենալ ու դուրս գալ սենյակից: Համարյա մի ամբողջ արշավ կազմակերպվեց դեպի «մաքուր օդ»: Կատյան ծածուկ ինչ-որ բանի էր նախապատրաստվում:

Կատյան չգիտեր, որ Անտոնի ձեռագիրը Մարիյա Իո-

սիֆովնան պատճենել էր հին դատարկ ծրարից, շահախարդախը շտապելով այն թողել էր հատակին՝ գրասեղանի տակ: Մ. Ի.-ն ինքնակոչի հեռանալուց հետո լպստելով աղջկա սենյակը, գտել էր այդ ծրարն ու թաքցրել: Նամակը գրված էր բանտից, հասցեն կար, այսինքն՝ հիվանդը չէր ստել: Սակայն ամսաթիվը նոր էր. հազիվ կես տարի էր անցել ազատվելուց հետո, և երիտասարդը արդեն գտել էր Կատյային՝ բնակարան ունեցող աղջկան:

Նամակը հասցեագրված էր նույնպես աղջկա, ըստ երևույթին, սակայն առանց հասցեի. Կենտրոնական հեռագրատուն, ցպահանջ, Ե. Գ. Խուդայբերդիևային:

Երևում էր, որ նամակը տեղ էր հասել ու հանդիպման ժամանակ վերադարձվել հեղինակին: Իսկ նամակներ վերադարձնելը սովորաբար վկայում է հարաբերությունների ցասումնալից ու դիտավորյալ ցուցադրական խզման մասին: Նրանք, ովքեր սիրում են, սովորաբար, պահում են նամակները, դա ակնհայտ է: Իսկ անտարբերները դրանք պարզապես դեն են շպրտում:

Դաղել էր Անտոշան, դաղել էր այդ Ե. Գ.-ին: Բայց վերջինս նրան նույնպես սիրում էր: Հատուկ եկել էր նամակը երեսին շպրտելու:

Հիմա. Կատյան պատրաստվում էր տնից դուրս գալ:

Ընդ որում՝ Աննա Իոնովնա տատիկը տեսնում էր, որ Կատյան փորփրում է տեղեկագիրքը, պարզ էր, որ հեռախոսահամար էր փնտրում, ինչն ինքնին ահագին առաջընթաց էր նախընթաց ապատիայի համեմատ: Նա գտավ ինչ իրեն պետք էր, հետո խնդրեց Մոսկվայի ատլասը: Որոշակի փողոց էր փնտրում, իր ծեր հոգնատանջ աղջկան հայտնեց Աննա Իոնովնան:

Մարիյա Իոսիֆովնան հասկացավ, որ աղջիկը փնտրում է կապի այն բաժանմունքը, որտեղի փոստարկղն էր ցած թողնվել կեղծված նամակը:

Սակայն Կատյան ուժ չուներ վեր կենալու ու գնալու:

Մոր ու աղջկա միջև վերսկսեցին զրույցները: Կարճատև, միայն գործնական: Մ. Ի.-ն առաջարկեց Կատյային կաթոցիկներ միացնել ուժերը վերականգնելու և դեմքի թարմ գույնը վերադարձնելու համար: Լաբորանտուհի կանչեցին ու հետազոտման համար արյուն վերցրին:

Կատյան արդեն առողջ էր, այսպես ասած՝ «վեներական» գծով, սակայն դեռևս թույլ էր, ինչպես աղբանոց շպրտված մեկ շաբաթական կատվի ձագը:

Մ. Ի.-ն, բնականաբար, կաթոցիկի մեջ սկսեց ավելացնել անհրաժեշտ դեղամիջոցները: Մեծ զգուշությամբ:

Ժամանակի ընթացքում Կատյան կազդուրվեց, ոտքի կանգնեց, անհայտանում էր տնից, հետո բանը հասավ նրան, որ նա, շատ մեծ ջանք գործադրելով, վերադարձավ նախկին աշխատատեղ (հենց այնտեղ էլ նա առաջին անգամ հանդիպել էր իր Անտոնին):

Նրան աշխատանքի վերցրին նույն սրահը, բայց հիմա կես դրույքով, ֆիզարձակուրդում գտնվող մի աշխատակցուհու փոխարեն:

Երևում էր՝ Կատյայի համար կարևոր էր լինել այն տեղերում, որտեղով որ ենթադրաբար կարող էր նորից անցնել Անտոնը:

Անտոնի փոխարեն (հզոր ուժ ունի կանացի գեղեցկությունը) հայտնվեց Գլեբը, նրան պետք էին մասնագիտական հանդեսներ տանը աշխատելու համար: Կատյան դուրս հանեց նրա համար այդ ամսագրերը: Նա շնորհա-

կալաբար վերադարձրեց դրանք: Հետո երկար չարչարվում էր՝ հող նախապատրաստելով, որպեսզի Կատյային պատրելով սրճարան հրավիրի (բոլոր բանակցությունները տարվում էին հեռախոսով, տնեցիները լսում էին):

Հետո ավելին՝ համարձակվեց ու հրավիրեց Կատյային իր ընկերների հետ ամառանոցատուն, հենց Նոր տարվա նախօրյակին:

Մ. Ի.-ն ուժերը վերականգնելու համար վիտամիններով սնելու պատրվակի տակ Կատյային կաթոցիկ միացրեց մի շատ կարևոր պատրաստուկի մասնաբաժնով, ու Կատյան տուն վերադարձավ առավոտյան դեմ, ակնհայտորեն սիրո գիշերվանից հետո, իր կապույտ աչքերի տակերը կապտած եւ ուռած շրթունքներով: Այնպես որ, սպասվածը կատարվել էր:

Գլեբը՝ ոչ մեծ, համառ, տգեղ, բայց իսկը մեծագլուխ սպերմատազոիդ, հաղթահարեց Կատյայի դիմադրությունը, եւ հիմա նա Գլեբի հետ գնում էր ուր որ նա ուզեր, լրիվ գլուխը կորցրած. տարփանք-կերպարի մարմնացում՝ աչքերը քնկոտ, շուրթերը ուռած, ինչպես ցրտից հետո: Նրանք առանց ամաչելու ինչ-որ նոր սողնակով փակվում էին Կատյայի սենյակում, ինչից հետո հետևում էին ճռռոցներ, բուռն ցնցումներ եւ վերջում ռիթմիկ արագ թխկոցներ:

Վերջ: Հարսանիք է:

Տոնախմբության ժամանակ Կատյան, կարծես թե ուշքի գալով, հեռացավ դեպի աստիճանները լաց լինելու: Կատյայի մայրն ու տատը արդեն գնացել էին տուն, հենց որ թույլ էին տվել քաղաքավարության կանոնները:

Գլեբի ծնողները՝ լայն կրծքով ինչ-որ Իվան Պետրո-

վիչ ու մայրը՝ նույնատիպ Էմմա Յակովլևնան, հասարակ մարդիկ էին, անգամ մի տեսակ պարզունակ: Նրանք նույն պահին, սեղանի շուրջ, հենց որ նոր խնամին մոր հետ հեռացավ, բառացիորեն հինգ րոպեի ընթացքում այլանդակորեն վիճաբանեցին տղայի հետ ու փաստորեն նրան տնից դուրս վռնդեցին (իսկ մինչ այդ Գլեբը հոգ էր տարել այն մասին, որ կնոջը բերի իր սենյակ, հղկատաշել ու լաքով պատել էր հատակը և այլն, ծնողներն էլ չէին հակառակվում, սակայն վիճել են որդու հետ, ի՞նչ անեն):

Գլեբը հագնվեց, հետո հավաքեց կնոջ հագ ու կապը, վերցրեց աստիճաններին լացող Կատյային, հագցրեց նրան, մեքենա վերցրեց ու երիտասարդ կնոջը հետ տարավ նրա տուն:

Այնտեղ նա ամեն ինչ պատմեց Մարիյա Իոսիֆովնային ու պառավ Աննային (Մարիյա Իոսիֆովնային բոլորը պատմում էին բացարձակապես ամբողջ իսկությունը, ընդ որում՝ նա կարող էր և չուզենալ այդ ամենը), եւ մնաց ապրելու, ինչ արած, ուրիշի տանը:

Լավ է դեռ, որ տխրահռչակ Անտոնը չէր ամուսնացել Կատյայի հետ յուր ժամանակ. Կատյան դա բացատրում էր նրանով, որ սիրածը չի ուզում իր երեխային ցավ պատճառել ամուսնալուծվելով:

Կատյան լաց եղավ մինչև լուսաբաց:

Մայրը ոչ մի անգամ չմտավ նրա մոտ:

Ութ ամիս անց Կատյան աղջիկ ունեցավ, որին Գլեբը ամբողջ գիշերներով ձեռքերի վրա էր պահում, որպեսզի գոնե նա լաց չլիներ: Երեխան ճողվածք ուներ:

Երկրորդ երեխան՝ տղան, ծնվեց երկու տարի հետո, և որ զարմանալի էր, շատ նման էր Անտոնին: Ինչի մասին

անմիջապես իր որդի Գլեբին ասաց նրա բազմափորձ մայր Էմմա Յակովլևնան. «Տղան քեզնից չէ, մերը չէ»:

Այդուհանդերձ, այդ երեխային էլ Գլեբը գիշերները պահում էր ձեռքերի վրա:

Իսկ Կատյան մարում էր, հանգչում, մահանում, նրա հետ մահանում էր և տատիկը, ու՝ մեռավ:

Մ. Ի.-ն իրեն պահում էր, ինչպես միշտ, բարեհամբյուր, հանգիստ, համեստ, ինչպես անգլիական թագուհի:

Փեսա Գլեբը նրան ատելով ատում էր, ժամանակի ընթացքում նա սկսեց շատ ցավոտ տանել զոքանչի ընտանիքի ապարդյուն տեղը քողարկվող գերազանցությունը սեփական մոր ու հոր պարզունակ ընտանիքի նկատմամբ:

Իր մորը՝ գործնական, շատախոս Էմմա Յակովլևնային նա շատ ավելի բարձր էր գնահատում:

Յուր ժամանակ երիտասարդ Էմման այնպես է պախուրցել, թլզորել Իվանի՝ այդ որոտացող գնդի, այդ հանճարեղ ռազմական ինժեների գլուխը, մորդովական գյուղից այդ բնածին տաղանդին, որ փախցրեց կնոջից ու որդուց, և այլևս նրանց հետքն անգամ չկար, քանի դեռ այդ կինը չէր մահացել ու անչափահաս որդուն թողել մենակ: Երկրորդ ազդակը եկավ, երբ այդ Իվանովիչին ջահելության սխալների համար նստեցրին ու բանտից հորը լուր ուղարկեց, որ նրան, մի տեսե՛ք, ծանրոցներ ուղարկեն:

Էմման այդ ամենը տեղնուտեղը կասեցրեց:

Այն տղան ևս մի անգամ հայտնվեց ու անմիջապես դուրս վռնդվեց, և ըստ լուրերի՝ մահացավ:

Էմման նախկինում աշխարհագրության նման ինչ-որ բան էր դասավանդում: Փոքրամարմին, շարժուն, գլխում

առաջացող բոլոր մտքերը լեզվի վրա, կոպիտ, ինչպես ինքը՝ կյանքը: Ամուսինը հմայված էր նրանով:

Նա իր գործը գիտեր ու տաշում, սղոցում էր որդու կյանքի հիմքերը, հետզհետե սպառում էր նրա բարությունը, հոգու մեծությունը, առատությունը, մշտապես հիվանդ կնոջ նկատմամբ նրա խղճահարությունը, նրա սերը երեխաների հանդեպ, որոնք տառապում էին պորտային ճողվածքով ու չպիտի լացեին, պրկելով առանց այն էլ թույլ փորիկները: Այդ մայրը տանել չէր կարող ամբողջ այդ հիվանդատունը, խանդում էր Գլեբին սրտացավության համար, կլպում էր նրան, չարահեգնելով բացում նրա աչքերը, քանի որ այդ սրտացավությունը ուղղված էր օտարներին: Ոչ թե ընտանիքին, այլ՝ ընտանիքից դուրս: Ոչ թե մորը, այլ՝ ուրիշներին:

Նա այդ մենախոսություններն արտասանում էր ուղղակի Մարիյա Իոսիֆովնայի տանը:

Նա ենթադրում էր, որ Կատյայի մոտ վերջին աստիճանի գոնոռեա է, համոզում էր անալիզ հանձնել:

Երևում է՝ Կատյան, առանձնակի վստահության պահին, պատմել էր Գլեբին իր նախկին պատմությունը, իսկ նա, աչքը չթարթելով, նույնպես նման պահի ազդեցության տակ գաղտնիքը պատմել էր մորը:

Մայրը նաև պնդում էր, որ երեխաները, երկուսն էլ, իրենը չեն, որ նրան օգտագործում են որպես հիմարի: Անբարոյական մեկին է կնության առել:

Վերջ ի վերջո Գլեբը կանգ առավ մոր ու կնոջ միջև, ասես անօդ, դատարկ ու մոխրացած անսերության դաշտում: Նա արհամարհում, բայց հավատում էր մորը, նա սիրում, բայց կասկածում էր Կատյային:

Սկսեց խմել:

Մոր հետ գժտվեց: Մայրը զանգում էր Մ. Ի.-ին ու ապակյա զրնգացող ձայնով անասելի լուտանքներ թափում նրա թեթևաբարո աղջկա հասցեին, աղջկա՝ բանտում նստած կենակցի մասին (պարզվում է, որ նրան ամեն ինչ հայտնի է):

Գլեբը տուն գալով՝ հայհոյում էր կնոջը: Նրանից գարշահոտ էր գալիս: Հաճախ տապալվում էր միջանցքում ու այդպես էլ գետնին կպած քնով անցնում: Նրա թեկնածուականը այդպես էլ մնաց կիսատ:

Անսպասելի մահացավ Մարիյա Իոսիֆովնան:

Տարօրինակ մահ էր, հերթապահության ժամանակ, հիվանդանոցում:

Մահվան պատճառը սրտի անբավարարությունն էր, ինչպես սովորաբար գրում են: Հայտնի չէր, թե ինչ էր պատահել: Կարծես ոչինչ չէր եղել: Պարզապես սիրտը կանգ էր առել, երբ նա նստած էր իր աշխատասենյակում, գրասեղանի մոտ:

Նրա բժիշկները հուղարկավորության ժամանակ կանգնած էին ուղղակի սևացած, ատելությամբ լցված: Նրանք վատ կասկածներ ունեին: Ինչու՞, հասկանալի չէր: Մ. Ի.-ն ոչ մեկին, ոչ մի կենդանի էակի չէր պատմում, թե ինչ է կատարվում իր տանը:

Բայց մարդկանցից ոչինչ չես թաքցնի:

Գլեբի ծնողները նույնպես ներկա էին հուղարկավորությանը, ցուցադրելով վիշտ ու չարտահայտված վտանգավոր բառերը:

Այնուամենայնիվ, Կատյայի ընտանիքը պահպանվեց:

Գլեբը թաղումից հետո միանգամից դադարեց խմել:

Անգամ հոգեհացին չխմեց: Ծնողներին խնդրեց չգալ հոգեհացին, մորն ուղղակի ներս չթողեց, երբ նա հանդգնաբար սեղմեց դռան զանգը (հայրը թաքնվել էր աստիճանների վրա):

- Մենք ինչ է՝ բարեկամներ չե՞նք,- բղավեց մայրը:

Կատյան աշխատում է գրադարանում, արդեն սրահի վարիչ է:

Կարծես թե մոր հոգին մտել է նրա մեջ:

Խաղաղ, բարեհոգի, նա համարյա չէր կարողանում քայլել ու միշտ շրջապատված էր հոգատար աշխատակցուհիներով:

Ամուսինը մեքենայով գալիս էր նրա հետևից ու ձեռքերի վրա իջեցնում նրան աստիճաններով, նստեցնում մեքենան, իսկ հետո բարձրացնում մինչև վերելակ:

Ամեն ինչ հարթվեց, խաղաղվեց, հունի մեջ ընկավ, երեխաները մեծանում են, գալիս են դասերն անելու, մնում են մոր մոտ գրադարանում, իսկ Էմման նստում է տանը ու գուշակություններ անում, ջրի երես հանում, զանգում է որդուն ու հանդիմանում նրան, որ լքել է իրեն և ընդսմին՝ կանխագուշակում, որ Կատյայի երեխաների մեջ չար, վատ արյուն է հոսում, քանի որ նրանց տատը ինքնասպան է եղել:

Որտեղի՞ց է նա վերցրել դա, գուցե թաղման ժամանակ թևածում էր օդում, ինչ-որ մեկը բերանից թռցրել էր, եւ նա անմիջապես որսացել է բժիշկների այդ դաժան ենթադրությունը:

Ամեն դեպքում Էմման պնդում է, որ Մարիյան հանուն աղջկան կանգնեցրել է իր սիրտը, առանց հաբերի, միայն իր ուժի շնորհիվ: Զգացել է, որ իր պատճառով, իր սեփա-

կան հիմար հպարտության պատճառով փեսան կթողնի ընտանիքը:

- Բայց դու նրանց չես թողնի, դու այդ խելառի նման չես, դու ինձ ես նման,- զրնգալի բացականչում է նա հեռախոսով:

Որդին համբերում էր ու խոսափողը չէր դնում, չնայած անտանելի էր լսել այդ խոսակցությունները:

Ինչքան շատ բան գիտեն կանայք, ինչքան շատ բան:

# Էլեգիա

Աշխարհում ոչ ոք չէր ասի, թե այդ ամենը վատ վերջ կունենա: Ավելի շուտ կասեն, թե նա իր սիրով այնպես է պարուրել նրան, որ նրան ոչ մի ելք չեր մնացել. ուր էլ որ նա գնար, կինը վազում էր այնտեղ՝ ամեն ինչ տեղում ստուգելու, ամեն ինչ այնպես սարքելու, ինչպես նախորդ տեղում էր: Լինում էին անգամ ծիծաղելի դեպքեր. կինը դստրերի հետ վազում էր ամուսնու աշխատավայր, աղջիկներից մեկը գրկին, մյուսի ձեռքից բռնած, նրանք հյուր են եկել Պավելի մոտ, տեսնելու հայրիկի աշխատատեղը: Աղջիկները նստում էին գրամեքենաների դիմաց, իսկ կինը զվարթ զրուցում էր Պավելի դիմաց նստող աշխատակցուհու հետ, պատմում էր նրան վարձով բնակարանում ապրելու իրենց այժմեական դժվարությունների մասին: Ամեն ինչ չափազանց բնական ու արժանավայել էր թվում, եթե միայն հաշվի չառնենք մի ամբողջ ընտանիքի, որպես գնչուների թափառախմբի, պատկառելի հիմնարկ ներկայանալու ինքնին փաստը:

Հյուրընկալվելուց հետո Պավելի ընտանիքը ելնում էր տեղից ու գնում իր դարդին: Աղջիկներին շատ դուր էր գալիս հայրիկի աշխատավայրը, ու ամեն անգամ, երբ նրանք զբոսնում էին մոտակայքում, իսկ դա պատահում էր շատ հաճախ, աղջիկները խնդրում էին մորը իրենց հայրիկի մոտ տանել, եւ նրանք նորից հայտնվում էին, ասես այդպես էլ պիտի լիներ, և միաժամանակ, Պավելը նրանց տանում էր ճաշարան ու աղջիկները ուտում էին պետական կերակուրը, իսկ նրանց մայրը հոգսերից հանգստանալով, նստում էր ամուսնու կողքին, եւ նորից բոլորը միասին թափառախմբի տպավորություն էին թողնում. այնպես սերտ իրար կապված, բոլոր պայմանակա-

նություններն այնպես արհամարհող, իրենց բարձունքից թքած ունենալով  օրվա կարգացուցակի վրա:

Այդ տեսակետից առանձնահատուկ էր կինը. եթե աղջիկները չէին կարող հասկանալ ու չէին հասկանում հիմնարկի միջանքով վազվզելու կատարյալ անտեղիությունը, ապա նրանց մայրը կարող էր գլխի ընկնել զգացմունքների այն ամբողջ բարդ հանգույցի մասին, որ պիտի որ ունենար մեղմ ու թեթև բնավորությամբ Պավելը, երբ իր ամբողջ բույնը հանվում էր տեղից ու հայտնվում իր աշխատավայրում:

Ի պատիվ նրա պետք է ասել, որ նա երբեք անհանգստություն կամ նյարդայնացություն չէր ցուցաբերում՝ տեսնելով իր նիհարած կնոջն ու երկու սպիտակամաշկ, գունատ աղջիկներին, որոնք իբր անակնկալ մատուցելու նպատակով երկար թաքնվում էին դռան հետևը ու երջանիկ ծիծաղով լցվում, երբ հայրը նրանց գտնում էր: Պավելը բավականին թեթև էր տանում դա, կարծես չէր մտահոգվում, թե ինչ հետևանքներ կարող էին ունենալ հիմնարկի ճաշարանում ճաշելը, ընթացող հերթի ներկայությամբ պլաստմասե սեղանների շուրջ ամուսինների այդ խաղաղ զրույցը:

Սկզբում դա բացատրում էին նրանով, որ Պավելի ընտանիքը փաստորեն ապրելու տեղ ու տնտեսություն չունի, որովհետև նրանք նոր էին եկել, վերադարձել այն քաղաքից, որտեղ ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի էին ուղարկել Պավելին: Այնտեղ նրանք ապրուստ ձեռք չբերեցին, բացի երեխաներից, վերադարձան նախկին վիճակով, ճամպրուկներով ու առանց կահույքի: Այդ ընթացքում Պավելի մայրը հիսուն տարեկանում նորից

ամուսնացավ, այնպես որ Պավելը ընտանիքով պետք է տուն վարձեր ու վճարեր դրա դիմաց այն ոչ մեծ գումարից, որ նա վաստակում էր նոր աշխատավայրում: Հենց դրանով էր բացատրվում այն, որ Պավելի կինը ամբողջ ձագակազմն առած գալիս էր ամուսնու աշխատավայր, նրա էժան ճաշարանը՝ թեթևաքաշ սեղաններով, որտեղ մեծերին անգամ կարելի էր հաճախել միայն անհրաժեշտության ու շտապ դեպքերում, այլ ոչ թե ամեն օր հանդիսավոր կերպով բերել այստեղ երեխաներին, ինչպես տոնական օրերին ինչ-որ ռեստորան գնաս, միայն թե ստիպված չլինես գնումներ կատարել ու եփել-թափել, բայց ինչպես հարկն է նշես տոնը:

Բայց չէ՞ որ Պավելի կինը օտար քաղաքում կյանքի այս տարիների ընթացքում կարող էր սովորել թեկուզ և ամենահեշտ կերակուրներ պատրաստելը, փոքրիշատե կատարել տնային տնտեսուհու և մոր իր պարտականությունները: Նա կարող էր մշտապես այսպես սև չհագնել, կարծես իր ամբողջ տեսքով ցուցադրելով մի տեսակ կենդանի ազնիվ աղքատություն, չնայած որ՝ աղքատությունն իսկապես առկա էր, որովհետև Պավելը իր ոչ մեծ աշխատավարձից նաև ալիմենտ էր վճարում առաջին ամուսնությունից երեխային: Պավելը անցել էր առաջին սխալ ամուսնության միջով, և ինչի միջով ասես չի անցել այդ Պավելը, որն այժմ գրեթե հասել էր գնչուական հանգստության եւ օրը ցերեկով իր ճաշարանում երեխաներին կերակրում էր կրկնակի չափաբաժիններով, որտեղ բոլոր բաշխորդուհիները գիտեին նրա ընտանիքի հուզիչ պատմությունը եւ լրացուցիչ կերակրում էին նրանց, ինչով կարող էին:

Պավելի ու նրա կնոջ անվրդով լինելը, նրանց աղջիկների, որոնց դեռ ոչ ոք չարաճճիության համար դիտողություն չէր արել, աչուկների խաղաղությունն ու հանգիստը, երևում է կախարդող տպավորություն էին թողնում ղեկավարության վրա, որը հինգ մատի պես գիտեր Պավելի ընտանիքի ֆինանսական ու բնակարանային բնույթի դժվարությունների մասին, այնպես որ ոչ ոքի ձեռքը չէր բարձրանում այդ տարօրինակ ընտանեկան սովորությանը վերջ դնելու համար, նամանավանդ, որ Պավելը խոստումնալից, անգամ տաղանդավոր աշխատակից էր, որն իրեն ամբողջությամբ նվիրում էր գործին:

Ճիշտ է, լինում էին զրույցներ, որ այդ ամենը նշանակում է երեխաների շահարկում, որ ոմանք նույնպես կարող էին իրենց երեխաներին ի ցույց դնել, սակայն անխղճություն է երեխաներին նման բանի համար քաշքշելն ու այդպես կերակրելը, ինչպես կերակրում է Պավելի կինը:

Ընդսմին, ոչինչ չէր խանգարում մոր ու աղջիկների հերթական այցելություններին: Աղջիկները չէին հիվանդանում ու նույն տեսքն ունեին, եւ նրանց համար ոչինչ հոգ չէր, ոչ մի ճաշ, որ վնասակար էր շատ մեծահասակների համար, սակայն ոչ Պավելի ընտանիքի համար, որը միշտ առողջ ախորժակ ուներ, ինչը բնորոշ էր բոլոր աղքատներին ու թափառաշրջիկներին ընդհանրապես: Ինչ-որ կերպ նրանք՝ այդ աղջիկները, մաքուր ու կոկիկ տեսք էին ունենում, ինչ-որ կերպ մայրը լվանում էր նրանց շորերը, չնայած, երբ էլ որ նայեիր հիմնարկի պարտեզի կողմը, միշտ խաղում էին այնտեղ, սկզբում ձմռանը, հետո և գարնանը, երկու փոքրիկ աղջիկներ, և միշտ նույն պայուսակը ձեռքին քայլում էր Պավելի կինը՝ սև վերարկուով ու սև

կոշիկներով, քանզի, ըստ երևույթին, սև գույնը ամենաէ-ժան, աչքի չընկնող ու տնտեսելի գույնն է:

Ժամանակը գնում էր, մոտենում էր ամառը և Պավելի ընտանիքին հիմնարկը հատկացրեց այն սենյակը, որտեղ նախկինում ապրում էր հնոցապանը: Հիմա կարելի էր ակնկալել ընտանեկան այցելությունների ավարտը, հիմա ամուսինն ինքը կարող էր ճաշի ժամին վազել տուն՝ ընտանիքի գիրկը, որտեղ կինը, ճիշտ է՝ հին էլեկտրական սալօջախի վրա, բայց, այնուամենայնիվ, կարող էր կերակուր եփել: Սակայն նման ոչ մի բան տեղի չունեցավ, նույն անշեղությամբ երեխաները գալիս ու սեղան էին զբաղեցնում, քանի դեռ հայրն ու մայրը հերթում էին, և այդպես արշավային տարբերակով էլ նրանք շարունակում էին ճաշել: Ընդհանրապես ոչինչ չէր փոխվում նրանց կյանքում, ոչինչ դեպի լավը չէր գնում, չնայած վարձով բնակարանի վճարից նրանք այժմ ազատված էին ու նախորդ շրջանի համեմատությամբ փողերը պիտի որ ավելանային: Սակայն երևում էր՝ ցանկացած գումար կարող էր աննշան գտնվել այն աղքատության դիմաց, որ տիրում էր հնոցապանի նախկին խցիկում:

Պավելը, ղեկավարության թույլտվությամբ, սենյակը կահավորեց պետական կահույքով. մի քանի աթոռ, գրասեղան ու գրապահարան բազմաթիվ դարակներով: Պավելի կինը անգամ բնակարանամուտ կազմակերպեց ու առանց աչքը թարթելու հրավիրեց և աշխատակիցներին, և ղեկավարներին, և բոլորը եկան զվարթ խմբով ու ժամանակ անցկացրին, ինչպես ուսանողական ամենալավ տարիներին հանրակացարանում, երբ ամեն ինչ պետական է, բաժակներն էլ ճաշարանից են վերցված, իսկ օրաթեր-

թի վրա դրված են հացի մեծ-մեծ կտորները: Բոլորն ուրախ ժամանակ անցկացրին, Պավելը կիթառ էր նվագում, վառվում էր մոմը, ու բոլորի համար հարմարավետ էր ու հաճելի: Բնակարանամուտի առթիվ երիտասարդներին նվիրեցին առաջին անհրաժեշտության ապրանքներ, որոնք աշխատակիցները գնել էին ըստ ցուցակի, աշխույժ վիճաբանելով, թե առաջին հերթին ինչ գնել Պավելի համար: Ղեկավարության կողմից նվիրվեց սկավառակներով նվագարկիչ, այն նպատակով, որ երեխաները երաժշտություն լսեին, բայց երեխաները երաժշտություն չէին լսում, և նախկինի պես օրն անց էին կացնում բակում, իսկ Պավելի կինը, երևում է, արհամարհում էր նվիրված բոլոր կաթսաներն ու ափսեները ու առաջվա նման աղջիկներին ճաշելու էր բերում ճաշարան:

Այդ ուսանողական վարքագիծը ում ասես հունից կշեղեր, կարծիք կներշնչեր, որ ամեն ինչ դեռ առջևում է, ամեն ինչ դեռ բաց է, բոլոր ճամփաներն այդ թվում, և ամեն ինչ ինքն իրեն կգա և կլինի այնպես, ինչպես բոլորի մոտ, և երեխաները կմեծանան ու կիմանան, թե ինչ են ընտանեկան օջախն ու հանգիստը, այլ ոչ թե միայն արշավային ծալովի մահճակալը և ճաշասենյակի պլաստմասե սեղանը: Իսկ առայժմ թող նրանք ապրեն՝ ինչպես ազատ թռչուններ, թող ապրեն, վայելեն իրերի ու հոգսերի բացակայությունը, և անգամ այնպիսի հոգսերի, ինչպիսիք են երեխաների դաստիարակությունը, որը նրանց մոտ տեղի է ունենում ինքնըստինքյան, ինչպես դաշտում խոտի բուսնելը: Շատերը նախանձում էին Պավելի կնոջ ունակությանը՝ ամեն ինչ այնպես դասավորել, որ ոչինչ նրան չէր նեղում, ամեն ինչ կատարվում էր ինքնըստինքյան, բոլոր

այդ լվացքներն ու արդուկումները, և հաճախ Պավելի կնոջ մոտ երկու խոսք փոխանակելու էին վազում նրա բաժնի կանայք, որովհետև ուրիշի երջանկության, լիակատար հարմարավետության ու ազատության տեսարանը հոգին ավելի լավ են մաքրում, նամանավանդ երջանկության տեսարանը, որ տիրում էր Պավելի ընտանիքում, երբ հանգիստ, չափավոր չարաճճի ու աննկատ, ինչպես բոլոր դաստիարակված երեխաները, Պավելի աղջիկները նկարում էին պետական սեղանի շուրջ նստած, նկարում էին շնորհալի, և Պավելի կինը, և նա ինքը երեխաների վրա ավելի շատ ուշադրություն չէին դարձնում, քան դրսում բուսնող խոտի վրա: Պավելը կարող էր շատ հանգիստ, շվվացնելով հեռուստացույց հավաքել ինչ-որ անջատ մասերից, իսկ կինը լուռ լվացք էր անում ու բարեհամբույր հրավիրում նստել հին պետական աթոռի վրա. դա պարզության ու ազատության անջնջելի տպավորություն էր թողնում, որին կարոտ էին Պավելի կնոջն այցելող բոլոր կանայք՝ ծանրաբեռնված կամ իրենց չդասավորված, կամ լրիվ դասավորված ու խիստ սահմանների մեջ առնված ճակատագրով:

Երբեմն նման հանդիպումներ տեղի էին ունենում և երեկոյան, աշխատավայրում, երբ Պավելը, օրինակ, աշխատակիցների հետ շտապ աշխատանք էր կատարում, իսկ Պավելի կինը, երեխաներին պառկեցնելով, գալիս էր բոլորի հետ նստելու ու սոսնձում էր կամ ինչ-որ բան տպում տպագրական մեքենայի վրա:

Պավելի բաժնի կանայք կռահում էին, որ Պավելը երեկոյան չպիտի տնից դուրս լինի, որ նրա բարեխղճությունն այստեղ չէր տեղավորվում աշխատանքային բարեխղճու-

թյան շրջանակներում և որ ավելի շուտ խոսքը կարող էր գնալ ընտանեկան օջախից, տան կարգացուցակից խուսափելու մասին, ինչքան էլ որ այդ կարգացուցակն ազատ լիներ: Պավելը նաև սովորություն դարձրեց երեկոները տեխնիկական թարգմանությունների վրա աշխատելը կամ գնում էր գրադարան, և այստեղ կինը չէր կարող ուղեկցել նրան, քանի որ պիտի քնելու պառկեցներ երկվորյակներին ու փոքրին, ավելի թույլին ոտքի մերսում կատարեր:

Դրա համար կանայք ամբողջ հոգով Պավելի կնոջ կողմն էին ու դատապարտում էին Պավելին թեթևամտության համար և ընդհանրապես այն թեթևության համար, որով նա ոտնահարում էր ընտանիքի շահերը՝ թեթև սրտով մեկնելով գործուղման, օրինակ, ինչը Պավելի կինը պարզապես անզոր էր տանել, չնայած դրանից փող էր դուրս գալիս. Պավելի կինը այդ օրերին աղջիկների հետ անգամ ճաշարանում չէր երևում, միայն Պավելի բաժին էր գալիս միջազգայինով զանգելու իր չված ամուսնուն:

Մյուս կողմից՝ ոմանք սկսեցին նկատել, որ Պավելը, իրոք, շատ է աշխատում եւ ոչ իզուր տեղը՝ իր սեփական ընտանիքի համար, ուրիշ էլ ինչի՞ համար: Իսկ Պավելի կինն իրեն այնպես էր պահում, որ աստիճանաբար բոլորին պարզ դարձավ Պավելի վիճակը. նա չէր կարող անգամ մի քայլ անել, ասես բոլոր կողմերից շրջապատված, բառացիորեն քայլ անել բակից չէր կարող, մշտապես նրա հետևից դուրս էր գալիս կինը աղջիկների հետ, ճիշտ է՝ երբեմն աղջիկները մնում էին բակում, իսկ կինը մենակ վազելով հասնում էր Պավելին ու քայլում նրա կողքով, անգամ, եթե նա գնում էր վարչություն, իսկ ամենից հաճախ

հենց այդպես էլ լինում էր:

Ինչ էլ որ լիներ, նա ամենուր հետևում էր Պավելին, եւ Պավելը մշտապես պիտի իրեն շրջապատված զգար, ինչն, անկասկած, իր պտուղները տվեց. երբ Պավելի կնոջը հեռագրով տեղեկացրին մոր հիվանդ լինելու մասին, և վերջապես նա թռավ աղջիկների հետ միասին, Պավելը գրեթե խելքը թռցրեց. ամբողջ երեկոները խելագարի պես դես ու դեն էր գնում իր սենյակում, լավ է, որ այդ երեկոները ընդամենը չորսն էին, հինգերորդ օրը կինն ու երեխաները ժամանակից շուտ վերադարձան, և անհայտ էր, թե կնոջ մայրն այդքան շուտ ապաքինվե՞ց, թե՞ Պավելի կինը չդիմացավ երկար բաժանմանը ու վերադարձավ ամուսնու մոտ, մորը թողնելով հիվանդ, և դեռ երեք օր Պավելը նամակներ էր ստանում արդեն վերադարձած կնոջից:

Այնպես որ, այստեղ խոսքը կարող էր գնալ այն մասին, որ Պավելի կինը թլզորել էր Պավելի գլուխը, զրկել էր նրան ինքնապաշտպանությունից, ինքնապահպանության բնազդից, որովհետև նա չէր կարող ապրել, գոյատևել առանց նրան ու մահացավ առաջին իսկ իրավիճակում, որ վտանգ էր ներկայացնում նրա համար. մի երեկո Պավելը ընկավ սառցակալած տանիքից, որտեղ մագլցել էր իր ինքնաշեն հեռուստացույցի ալեհավաքը տեղադրելու համար, հեռուստացույց, որ կարող էր առաջին նշանը լինել վերահաս հարմարավետության, ապագա կյանքի, հիմա արդեն ոչ թափառական, այլ ուրիշ՝ ավելի համաչափ ու նման բոլոր ուրիշ կյանքերին: Տվյալ դեպքում հեռուստացույցը հանդես եկավ խորհրդանիշի դերում, չնայած ցանկացած մեկի մահից հետո էլ նախորդող ամեն ինչը հանդես է գալիս խորհրդանիշի դերում:

Պավելի դեպքում խորհրդանշական էր նաև այն, որ նա տանիքին սայթաքելով, չկարողացավ իրեն պահել ու ցած ընկավ: Ամեն դեպքում, հետագայում այդ դեպքը այդպես էր բացատրվում, սակայն իսկության այդ վերականգնումն ոչինչ չփոխեց եւ Պավելի կինը երկու աղջիկների հետ անհետացավ քաղաքից, չարձագանքելով մնալու և ապրելու ոչ ոքի հրավերին: Այդ ընտանիքի պատմությունն այդպես էլ մնաց անավարտ, անհայտ մնաց, թե իրականում ինչ էր իրենից ներկայացնում այդ ընտանիքը և իրականում ինչով կարող էր ամեն ինչ վերջանալ, որովհետև բոլորն իրենց հերթին մտածում էին, որ նրանց ինչ-որ բան է պատահելու, որ ամուսինը կհեռանա նրանից, չդիմանալով այդ հզոր սիրուն, եւ նա հեռացավ, բայց ոչ այնպես:

# Վաթեոլոյի կամուրջը

Տրանսպորտում ու փողոցում նրան արդեն բոլորը կոչում էին կամ «տատիկ», կամ «մայրիկ»:

Ճիշտն ասած՝ նա իր թոռների համար էլ հենց Օլյա տատիկ էր, իսկ աղջիկը՝ դպրոցում աշխարհագրության ուսուցչուհի, տարիքով, լիքը, դեռ ապրում էր մոր հետ. իսկ աղջկա ամուսինը՝ արհեստանոցի չնչին լուսանկարիչը (առողջարանային ծագման անհավասար ամուսնություն). ամուսինն այդ մերթ չէր գալիս, մերթ հայտնվում էր:

Օլյա տատը վաղուց արդեն ապրում էր առանց ամուսնու, նա մշտապես մեկնում էր գործուղումների, իսկ հետո վերադարձավ, սակայն ոչ ընտանիքի գիրկը, թքեց ամեն ինչի վրա, թողեց ամեն ինչ՝ ունեցվածքը, կոստյումները, կոշիկներն ու կինոյի մասին գրքերը. ամեն ինչ թողեց Օլյա տատին, չգիտես ինչի համար:

Նա ու աղջիկը երկուսով այդպես էլ մնացին հուսաբեկ ու ոչինչ չարեցին հեռացածի իրերը վերադարձնելու համար, ցավալի էր ինչ-որ տեղ զանգելը, որևէ մեկին փնտրելը ու մանավանդ մեկի հետ հանդիպելը:

Ըստ երևույթին հայրը ինքն էլ չէր ուզում, երևի անհարմար էր զգում՝ երջանիկ նորապսակ լինելով, փոքրիկ որդի ունենալով՝ իրերի հետևից ներկայանալ մի բնակարան, որտեղ բնակալել էին նրա թոռներն ու կին-տատիկը:

Գուցե, համարում էր Օլյա տատը, նրա Այն կինը ասել էր՝ թքի՛ր ամեն ինչի վրա, ինչ-որ պետք է՝ առավոտյան կգնենք:

Գուցե նա հարուստ էր, ի տարբերություն Օլյա տատի, որը սովոր էր վինեգրետին ու պասուց յուղին, կոշիկները գնում էր աղքատ հաշմանդամների համար օրթոպեդիկ արհեստանոցից, փոքր չափսերի, քուղերով ու սովորակա-

նից լայն՝ ելունդների պատճառով:

Մազերը թափված կին էր Օլյա տատիկը, ակնոցների տակից չռած, վախվորած հայացքով, գլխին՝ մի փունջ մազափետուր, լիքը մարմին, լայն ոտքեր:

Օլյա տատիկը, սակայն, զարմանալիորեն բարի անձնավորություն էր, մշտապես ինչ-որ մեկի մասին հոգ էր տանում, լիքը պայուսակներով քարշ էր գալիս յոթ պորտի ազգականների հետևից, հիվանդանոցներից տուն չէր գալիս, անգամ գնում էր գերեզմանաքարերը խնամելու, ընդորում՝ մենակ:

Նրա աշխարհագրագետ դուստրը աջակից չէր նրան այդ գործում, չնայած ինքն էլ պատրաստ էր միջից կես դառնալ իր, այսպես կոչված ընկերուհիների համար, նրանց կերակրում էր, նրանց ասածները լսում էր, սակայն ոչ Օլյա տատին, ամենևին:

Կարճ ասած՝ Օլյա տատիկը արագ ծլկում էր տնից, նախօրոք պատրաստելով վինեգրետներ ու էժան ձկներ տապակելով, իսկ աշխարհագրագետ աղջիկը, քչաշարժ, ինչպես շատ ընտանեկան մարդիկ, իր մոտ էր կանչում ընկերուհիներին. կյանքի ընդլայնված քննարկում էր ընթանում անձնական պրակտիկայից օրինակներով:

Աշխարհագրագետի ամուսինը սովորաբար բացակայում էր, լուսանկարչական արհեստանոցից այդ ամուսինը սովորաբար կողմնակի կենսագործունեություն էր վարում լուսանկարչական լաբորատորիայի կարմիր լույսի տակ, իսկ այնտեղ քիչ բան չէր պատահում. ինքը՝ աշխարհագրագետ-դուստրը մի ժամանակ անցել էր այդ կարմիր լույսի տակով, հանգստյան տնից վերադառնալով շլացուցիչ տեսքով՝ ուռած աչքերով ու կարծես թե սառած բերանով

երիտասարդի հետ (ակնոցավոր լողլող), իսկ հետո նա տուն բերեց լուսանկարչին (ալիմենտ վճարող ու անտուն) կարգին մոր ու այն ժամանակ դեռ կարգին հոր փոքրիկ երեքսենյականոց պրոֆեսորական բնակարանը. հիմար:

Անցած բան է, շատ ջուր է հոսել, իսկ Օլյա տատիկը ինքն էլ, պրոֆեսորի գնալուց հետո, չունենալով ոչինչ, ոչ աշխատանքային ստաժ, ոչ թոշակի հեռանկար, ոչ դեն դրած կոպեկ, ինչպես նաև մնալով միջանցիկ սենյակում (լուսանկարիչն ու աշխարհագրագետը հոր հեռանալուց հետո արագորեն զբաղեցրին մեկուսացված, այսպես կոչված՝ աշխատասենյակը, նախկինում նրանք երեխաների հետ ապրում էին միջանցիկում, հիմա ապրելու տարածքը ընդլայնվել է, ինչը նպաստում է ընտանեկան կյանքին, իսկ Օլյա տատիկը ինչպես քնում էր հյուրասենյակում բազմոցի վրա, այդպես էլ մնաց այդտեղ). նա հիմա իր նոր մասնագիտության բերումով շատ էր քայլում, լինելով ապահովագրական գործակալ, բախում էր օտար դռներ, խնդրում էր ներս թողնել իրեն՝ խոհանոցներում լրացնելով ապահովագրական գոտիները, մշտապես ուռած պայուսակով, բարի, քիթը քրտնած, ինչպես թծուծով սագ-մարի:

Ոչ գեղեցիկ, շատախոս, հավատարիմ, օտար մարդկանց վստահությունն ու բարեկամությունը վայելող (բայց ոչ իր աղջկա, որը բանի տեղ չէր դնում մորը ու լրիվ արդարացնում էր հեռացած հորը). այդպիսին էր Օլյա տատիկը ու բոլորովին չէր ապրում իր համար, գլուխը լցնելով ուրիշի գործերով ու ծանոթությանը զուգահեռ պատմելով կոնսերվատորիայի փայլուն երգչուհու իր պատմությունը, որն ամուսնացել է ու ամուսնու հետ մեկնել, ըստ նրա տեղաբաշխման, յոթ սարից այն կողմի արգելավայրը, նա

այնտեղ դիսերտացիայի վրա էր աշխատում, իսկ ինքը երեխա ունեցավ և այլն. որպես ապացույց՝ Օլյա տատիկը անգամ մի հատված էր կատարում «Իմ ձայնը քեզ համար և քնքուշ է, և թախծոտ» ռոմանսից, ծիծաղելով զարմացած ունկնդիրների հետ, որոնք այդպիսի հետևանք չէին սպասում, քանի որ սկսում էին զրնգալ բաժակները, իսկ պատուհանագոգերից վեր էին թռչում աղավնիները:

Բնականաբար, աղջիկն ու թոռները տանել չէին կարող Օլյա տատի երգեցողությունը, քանի որ Օլյա տատիկից կոնսերվատորիայում պատրաստում էին օպերային, ոչ թե սենյակային երգչուհի, ընդ որում՝ հազվագյուտ երանգի դրամատիկ սոպրանո:

Սակայն ծերությանն էլ հատուկ է սխալվելը, և տվյալ դեպքում Օլյա տատիկը չդիմացավ օտար դռները իզուր թակելու քաշքշուկին ու ծանրությանը եւ հանկարծ վճռեց գնալ կինո՝ անձամբ իր համար. այնտեղ տաք է, բուֆետ կա, կինոնկարը արտասահմանյան է և որ հետաքրքիր է, բազմաթիվ հասակակիցներ կան մուտքի մոտ, պայուսակներով իր նման կանայք:

Փոքրիկ կինոթատրոնի դռների մոտ ինչ-որ բանթող էր կատարվում և Օլյա տատիկը կեղծավորություն անելով ու ինքն իրեն համոզելով, որ պետք է մի քիչ հանգստանալ, տարօրինակ զգացմունքներով առաջնորդվելով, անկասելիորեն քայլեց դեպի դրամարկղ, տոմս գնեց ու ներս մտավ օտար տաք ճեմասրահ:

Բուֆետի մոտ շատ մարդ կար, կային և երիտասարդներ՝ զույգերով, Օլյա տատիկը նույնպես իր համար ինչ-որ կասկածելի ջուր, բուտերբրոդ ու իբր թխվածք վերցրեց ահավոր թանկ գնով. քեֆ ենք անում, ուրեմն՝ քեֆ ենք

անում, հետո ձեռքերն ու բերանը սրբելով ամուսնու վանդակավոր թաշկինակով, անհասկանալի հուզմունքով բոլորի հետ մտավ դահլիճ, նստեց, հագից հանեց մորթյա գլխարկը, վզնոցը, բացեց ձմեռային հնամաշ, մի ժամանակ շքեղ՝ կապույտ գաբարդին ու սևագորշենի վերարկուի կոճակները, ավելի լավ է հայելու մեջ չնայել. և ահա լույսը հանգչեց ու հայտնվեց դրախտը:

Էկրանի վրա Օլյա տատիկը տեսավ իր բոլոր երազանքները, իրեն երիտասարդ ժամանակ, արգելոցի եղեգի պես բարակ, մաքուր դեմքով, տեսավ նաև իր ամուսնուն՝ ինչպիսին նա պիտի լիներ, և այն կյանքը, որն ինքը ինչ-որ պատճառով չէր ապրել:

Կյանքը լի էր սիրով, հերոսուհին մահանում էր, ինչպես կմեռնենք մենք բոլորս, աղքատության ու ցավերի մեջ, բայց ճանապարհին մոմերով վալսն էր:

Վերջում Օլյա տատիկը լաց էր լինում, և շուրջբոլորը քթերն էին վեր քաշում, իսկ հետո մի կերպ ոտքերը քաշ տալով Օլյա տատիկը աշխատավոր մեղուի պես նորից գնաց հարկ հավաքելու, նորից համբուրեց երկու փակ դուռ եւ կոտրվելով մասնագիտական ասպարեզում՝ քարշ եկավ դեպի տուն:

Արտասվող ապակիներով ավտոբուսը, շոգ մետրոն, ոտքով մի կանգառ, երրորդ հարկ, տնային թանձր հոտ, խոհանոցում մանկական ձայներ՝ հարազատ, սիրված, ծանոթ:

Հանկարծ Օլյա տատիկը, կարծես իրականում, իր առջև տեսավ Ռոբերտ Թեյլորի քնքշանքով ու հագածությամբ լի դեմքը:

Հաջորդ առավոտ նա նորից վազում էր այն թաղամաս,

հաճախորդներին գտավ տանը, հավաքեց նրանցից գումարը, նույն հանրակացարանների խոհանոցներում ևս մի քանի ծանոթություններ ձեռք բերեց, հրավիրելով մարդկանց ձեռնտու ապահովագրել կյանքը և դեռ ճանապարհին, որպես մրցանակ՝ ստանալ փոխհատուցում բոլոր վնասվածքների, կոտրվածքների ու վիրահատությունների համար, և ամենահրապուրիչն այն էր, որ մարդիկ հաճույքով ականջ էին դնում, մտահոգվում իրենց ճակատագրով, գործն առաջ էր գնում, այնուհետև Օլյա տատիկը հապճեպ նետվում էր ծանոթ կինոթատրոն, առավոտյան ցուցահերթի:

Սակայն այնտեղ արդեն ուրիշ կինոնկար էր ցուցադրվում, մանկական:

Այնուամենայնիվ, դրամարկղի մոտ Օլյա տատիկը հանդիպեց կիսով չափ ծանոթ մեկին, երեկվա տատիկին՝ բուխարու գլխարկով, դեռ բավականին երիտասարդ, տատիկը նույնպես առավոտ կանուխ թռել էր այս կինոթատրոնը, ու հիմա ձեռնունայն հարցնում էր, թե որտեղ է կախված կինոազդը, ակնհայտորեն, որպեսզի տեղափոխվի այն կինոթատրոնը, որտեղ ցուցադրվում է սիրված կինոնկարը:

Օլյա տատը ականջները սրեց, նորից հարցրեց, հասկացավ հարցի էությունն ու հաջորդ օրը, միայն հաջորդ օրը միայնակ, դանդաղորեն շարժվեց սիրածի հետ հանդիպման ու նորից վերադարձավ իր մյուս կյանքի այն կախարդական աշխարհը:

Ընդ որում՝ նա արդեն քիչ էր քաշվում ուրիշ տատիկներից ու ինքն իրենից, ու ելքի մոտ տեսնում էր երջանիկ լացակումած դեմքեր, ինքն էլ երեսը սրբում էր տղամարդու

մեծ թաշկինակով, որ հիշատակ էր մնացել նրան, ինչպես տղամարդու բրդյա ներքնազգեստը, այսպես կոչված՝ եգերական ներքնազգեստը, եւ շատ ցուրտ եղանակներին նա հագնում էր այդ ներքնազգեստը, ինչպես նաև գիշերները հագնում էր վարտիքները, իսկ աղջիկը դպրոցում սարաֆանի տակից հագնում էր հայրական վանդակավոր վերնաշապիկները. ապրել էր պետք:

- Ախ, Աստվա՜ծ իմ, ինձ ինչ է պատահել,- մտածում էր լեռնային բյուրեղի պես ազնիվ ու մաքուր Օլյա տատիկը,- ի՞նչ է կատարվում ինձ հետ, ի՞նչ կախարդություն է: Այդ պառավները վազում են մի ցուցահերթից մյուսը, խայտառակություն է…

Ինքը իրեն պառավ չէր զգում, նա դեռ շատ բան ուներ առջևում. Օլյա տատին աշխատավայրում գնահատում էին, հաճախորդները հարգում էին, նա հիմա ընտանիք էր պահում, անգամ երեխաների համար ակվարիում գնեց ու նրանց հետ մեկնեց շուկա ձկնիկներ գնելու, ձգտելով մոռանալ Այն, կարևորը (Օլյա տատիկը կարողանում էր ղեկավարել իր կրքերը, կարողանում էր ինքնազոհողության գնալ, օրինակ, յոթ սարից այն կողմում):

Սակայն ոչինչ էլ չստացվեց, ինքն իրեն ասում էր Օլյա տատիկը հերթական հաճախորդներին այցելելուց հետո. ինչի մասին էլ որ խոսեին, նա անպայման նորից ու նորից խոսակցությունը տանում էր դեպի սիրած անունը՝ Ռոբերտ, դեպի սիրած կինոնկարի անունը («Վաթեռլոյի կամուրջը») եւ դերասանների կյանքի մանրամասները:

Մարդիկ փորձում էին իրենց հուզող բաների մասին պատմել, իսկ Օլյա տատիկը նորից հիշատակում էր, ասենք՝ երեկ չէ մյուս օրվա ցուցահերթը և թե որ կինո-

թատրոնում հետո կցուցադրվի կինոնկարը:

Նա ինքն էլ արդեն զգում էր, որ գլորվում է ցած, մանավանդ հաճախորդների աչքերում, որ նա արդեն այն ուշիմությամբ չի լսում բոլոր այդ պատմություններն այնպես շահագրգիռ, ինչպես առաջ, չի քննարկում նրանց ընտանեկան բանսարկությունները, դատերը, դավաճանությունները, ծրագրերը, որ նա այդ ամենն արդեն լսում է մի տեսակ մեքենայաբար, գլխով անելով ու մինչև թաշկինակը գտնելը քիթը վեր քաշելով, և որ այդ բոլոր անհեթեթությունների, դատարկաբանությունների, կյանքի փրփուրի միջով ներթափանցում է այն, կարևորը՝ Նրա տանջանքները: Ու զուգահեռաբար՝ Նրա (կնոջ) չարչարանքները:

Վերջապես Օլյա տատիկը վերջնականապես կողմնորոշվեց կյանքում:

Նա թքեց բոլոր պայմանականությունների վրա:

Իր ամենակարևոր խնդիրը Օլյա տատիկը հիմա համարում էր ոչ թե ապահովագրությունն ու անդամավճարներ հավաքելը, այլ երկրային կյանքի մեջ մխրճված իր հաճախորդներին ներշնչելը, հենց միտք ներշնչելը, որ կա այլ կյանք՝ ուրիշ, ոչ երկրային, բարձրյալ, ցուցահերթեր, ասենք՝ տասնյոթին ու քսանմեկին, «Կյանքի էկրան» կինոթատրոն, Սադովո-Կարետնայա:

Ընդսմին՝ նրա աչքերը փայլում էին հաստ ակնոցների միջով:

Թե ինչու և ինչի համար է այդ ամենը անում, Օլյա տատիկը չգիտեր, սակայն նրա համար այժմ անհրաժեշտություն էր մարդկանց երջանկություն բերելը, նոր երջանկություն, անհրաժեշտ էր «Ռոբիկի» ավելի ու ավելի նոր հետևորդներ հավաքագրել, և նա առանձին նորակոչիկնե-

րի (նորակոչիկուհիների) հանդեպ մայրական քնքշություն էր զգում, բայց, միևնույն ժամանակ, և մայրական խստություն, նրանց առաջնորդն էր այն աշխարհում ու սովորությունների ու ավանդույթների պաշտպանը նրանցից: Նա արդեն հաստ տետր ուներ Ռոբերտ Թեյլորի ու Վիվյեն Լիի մասին թերթերից արտագրած հոդվածներով:

Այնտեղ էլ սոսնձված էին նրանց նկարներն ու կադրեր կինոնկարից, դրանում ներդրում ունի անպետք փեսան կարմիր լուսարձակով, իր կասկածելի ֆոտոարհեստանոցով. անպետք մարդուց ինչ վերցնես:

Վատն այն էր, երբ կանանց ու տատիկների հորդանները հավաքվում էին սրբազան ծիսակատարության, դա արդեն ինչ-որ սոդոմ ու գոմոր էր՝ հեծկլտանքներ, գերհուզվածություն, ձեռքից ձեռք անցնող պոեմներ:

Հաստատվեց «Ռոբիկի» ծննդյան օրը, եւ նրանք իրենց այդ ծնունդը նշում էին կինոթատրոնների ճեմասրահներում, խմում էին կագոր ու սպիտակ գինի, աղմկում էին ցուցահերթից առաջ, իսկ Օլյա տատիկը խիստ քրմի նման տոնում էր մենակ, տանը՝ խոհանոցում:

Հանդիպելով, նրանք միմյանց պատմում էին՝ ինչպես էր, սակայն Օլյա տատիկը իրեն մոտ չէր թողնում այդ դատարկաբանությունները, պահում էր իր գաղտնիքը, բայց գիշերների լռության տակ գրում էր բանաստեղծություններ ու հետո անկասելիորեն դրանք հրամցնում իր հաճախորդներին, ընտրելով պահը:

Հո տատիկների համար չի արտասանելու, նրանց որ կարդաս, նրանք անմիջապես ի պատասխան կկարդան տնայնագործ հիմարություններ, ինչպես, օրինակ՝ «Եվ շատ աղջիկների ես այնպես քաղցր շոշափել», քո՜ւհ:

Օլյա տատիկն իր վերամբարձ բանաստեղծություններ-ը փնթփնթում էր հատընտիր հաճախորդների համար: Նա շտապում էր, քիթը վեր էր քաշում, ակնոցները թրջվում էին արտասուքից:

Լսողները նեղվում էին, նայում էին շուրջը, ինչպես այն ժամանակ, երբ նա հուզվելով երգում էր ամբողջ ձայնով, և Օլյա տատիկը հասկանում էր իր վիճակի ամբողջ անհեթեթությունը, բայց ոչ մի կերպ չէր կարողանում իրեն զսպել:

Որտեղ, երբ և ինչպես է մարդուն վրա հասնում կիրքը, նա չի նկատում, ու հետո ի վիճակի չէ իրեն վերահսկել, դատել, խորամուխ լինել հետևանքների մեջ, այլ ուրախությամբ ենթարկվում է՝ վերջապես գտնելով իր ճանապարհը, ինչպիսին էլ այն լիներ:

«Դա ամոթ չէ,- ինքն իրեն պնդում էր Օլյա տատիկը՝ երջանիկ քուն մտնելով,- ես խելոք կին եմ, իսկ դա ոչ ոքի չի վերաբերվում, դա վերջապես միայն իմ գործն է»:

Եվ նա ընկղմվում էր երազների գիրկը, որտեղ մի անգամ նույնիսկ բաց մեքենայով սլացավ Ռոբերտ Թեյլորի հետ, նրանք երկուսով նստած էին հետևի նստելատեղում, Լանդոնում ուրիշ ոչ ոք չկար, անգամ վարորդ, և Նա կիսագրկել էր Օլյա տատի ուսերն ու հավատարմորեն նստել կողքին:

Ու՞մ կպատմես նման բան:

Միայն մի անգամ էր ամոթալի պահ եղել, որովհետև՝ գիշերները թրև մի գա (ինչպես ասել է աշխարհագրագետ-աղջիկը):

Օլյա տատիկը գնում էր անհաստատ քայլվածքով, ցուցահերթից հետո, տնից շատ հեռու, համարյա Իլյիչի

ուղեկալի մոտ - ցանկությունն արգելքից ուժեղ է, եւ նրան հասավ մի երիտասարդ տղամարդ, բարձրահասակ, գիրավուն, իջեցրած ականջակալներով գլխարկով (իսկ Օլյա տատիկը քայլում էր՝ ասես երիտասարդացած՝ կուբանկան թեք գցած եւ գրեթե երգում էր սառնամանիքին, քթի տակ դլեն-դլեն էր անում «Բացել եմ պատուհանս» երգը), եւ այդ երիտասարդը, հասնելով Օլյա տատիկին, հընթացս նկատեց.

- Ինչպիսի փոքրիկ ոտք ունեք:

- Ի՞նչ,- հարցով պատասխանեց Օլյա տատիկը:

Նա կանգ առավ ու հարցրեց.

- Ոտքի չափսը ինչքա՞ն է:

- Երեսունինը,- զարմացած պատասխանեց Օլյա տատիկը:

- Փոքր է,- տխուր արձագանքեց երիտասարդը, և այդ պահին Օլյա տատիկը նրան թողնելով՝ վազեց դեպի տուն, դեպի տրամվայ, շրմփացնելով պայուսակը:

Սակայն հետո, գիշերը, արդեն սթափ մտածելով, մտաբերելով երիտասարդի խղճուկ, հիվանդոտ տեսքը, նրա քստքստացող ներբանները, անթրաշ, անխնամ վիճակն ու մանավանդ թուխ բեղիկները, շփոթության մեջ ընկավ խեղճ Օլյա տատիկը՝ ո՞վ էր նա:

Նա փորձում էր նրա մասին հայտնի պատմություններ հորինել, ինչպես, օրինակ՝ մայրը մահացել է, նյարդային ցնցում, աշխատանքից ազատվել է, քրոջ ընտանիքը հոգ չի տանում ու դուրս է շպրտել և նման այլ բաներ, սակայն ինչ-որ բան այն չէր ստացվում:

Օլյա տատիկը, անտեսելով աղջկա նախազգուշացնող բղավոցները, հաջորդ երեկոյան նորից գնաց նույն ցուցա-

հերթին ու նույն տեղը: Ու նորից նայելով Թեյլորին՝ նա սկսեց հասկանալ, թե ում է հանդիպել մութ փողոցում կինոյից հետո, թե ով էր քայլում հիվանդ ու անտիրական, թախծոտ, անթրաշ, բայց բեղիկներով:

Եվ, իսկապես, եթե մտածես, ուրիշ էլ ո՞վ կարող էր քարշ գալ փնտրելու իր սիրածին, երբ նրա մասին մոռացել է ողջ աշխարհը, ո՞վ կարող էր թափառել այնպիսի տեղով, ինչպիսին Իլյիչի ուղեկալն է 1954 թվականին, ինչ խեղճ ու հիվանդ ուրվական՝ կարճոտ վերարկուով, բոլորից լքված. թափառում էր, որպեսզի Վաթեռլոյի կամրջին հայտնվեր ամենավերջին հոգուն՝ բոլորից մոռացված, լքված, փալասի տեղ օգտագործվող, մանավանդ կյանքի ամենավերջին քայլին, թռչելու վրա…

# Ինչպես ծաղիկը այգաբացին

Անցած սերը ավելի շատ կապում է վայրի հետ, քան մարդու: Վաղուց մոռացված է մարդը՝ առաջին սերը, ապրում է ինչ-որ տեղ (իսկապես ապրում է ինչ-որ տեղ, իսկ մեզ համար մեկ է, եթե հայտնվի, անհարմար կլինի, հատկապես, եթե սիրո խոստովանությամբ է՝ միայն քեզ եմ սիրել, ու հեռախոսով, ակնհայտորեն անսթափ, ինչպես միշտ): Թող կորչի առաջին սերը, բայց վայրը՝ ծովափի երկայնքով երանելի մթին փողոցները, սոճիները, քարե սալիկներից մայթերը, ամառանոցները, աղջամուղջները, լուսատուները ճյուղերի արանքներից, յոդախառն աղի օդը, բոկոտիկների միջի ավազը, քայլում են երկուսով՝ տղան ու աղջիկը, հասուն մարդիկ, տղան քսանմեկ տարեկան է, աղջիկը՝ տասնութ, տղան տեղացի է, աղջիկը՝ հանգստյան տան ուղեգրով: Աղջիկն ուսանողուհի է, տղան՝ հենց այնպես, ուղեղների որսորդ, հարուստ փորձով կուրորտային երիտասարդ: Չի աշխատում: Լսեք, ու՞մ է դա հետաքրքիր: Նա սովորում էր կոնսերվատորիայում, վալտոռնի դասարանում, ռազմական ֆակուլտետում, ահա թե ինչն է կարևոր: Մանկուց երաժշտական դպրոց, մայրը օպերային երգչուհի, երգչախմբի մեներգչուհի: Վալտոռնը ատում է, սակայն երբ հարցը դրվեց բանակ, թե կոնսերվատորիա, մայրն, այնուամենայնիվ, խորհուրդ տվեց ընդունվել այդ ռազմական ֆակուլտետը:

Այդ ամենը ուսանողուհին (առաջին կուրս, չի կարողանում շպարվել, կրում է մոր սարաֆանը, մշտական նշիկաբորբ, այստեղից էլ՝ ծովափի ուղեգիր օգոստոսին), այդ ուսանողուհին լսում է շունչը պահած: Նա ևս երաժշտական կողմնորոշում ունի, վոկալի դասարան, ինչպիսի զուգադիպություն, բայց՝ ուսումնարանում: Նա մեցցո-սոպ-

բանո է ու դրամատիկ սոպրանոյի հեռանկարով (Ա. Ե. էր ասում), այդպիսի ձայները երեսունհինգ տարեկանին մոտ են միայն ուժ հավաքում Վագների համար: Վագներ երգում են քառասուն տարեկանում: Առայժմ մենք տասնութ տարեկան ենք: Այսօր առավոտյան նախաճաշից հետո մենք վարժվում էինք երգեցողության մեջ, հարևանուհին գնացել էր դեպի ծովը, իսկ մենք (բաց պատուհաններից, դրանցից ներս ընկնող փշատերև ճյուղերի, ծովային օդի, ոչ այնքան տաք պայմաններում) մենք վարժվում ենք երգեցողության մեջ. «Սիրելի մայրիկ, սիրելի մայ-րիկ»: Իսկ հետո Դալիլայի արիան, ոչ ոք չկա, ձայնը տարածվում է պատուհաններից ներս, դեպի ծովը:

Հանկարծ ներքևում մարդկանց խոսակցություն.

- Այդ ո՞վ է այդտեղ երգում, հ՞ը: Ո՞վ է այդպես երգում:

Տղամարդու քնքուշ բարիտոն էր:

- Դե, ո՞վ է երգում:

Երկրորդ ձայնը (դրամատիկ տենոր) կատակով ձայնակցում է:

- Այդ ո՞վ է երգում:

Նա թաքնվելով շղարշե վարագույրի հետևում՝ նայում է ցած: Երկու երիտասարդ են: Սիրտը բաբախում է: Նա լուռ է, լռեց: Ներքևում նորից զրույց է գնում.

- Այո, ոչինչ:

- Հարմար է:

Վերևի լռությունը պատահում է ներքևի լռությանը, հանդիպում է, օդի մեջ նրան է փաթաթվում, թանձրանում է, աճում: Խեղդում է կոկորդը: Մի րոպե, երկու: Մտքերը՝ իջնե՞լ: Թե՝ պետք չէ: Իջնել՝ կնշանակի փոխել ճակատագիրը: Ճակատագիրը կփոխվի: Չիջնել. ճակատագիրը

կմնա այնպիսին, ինչպիսին եղել է. մայրիկը, ուսումնարանը, երգչախումբը, ձեր նոտան մի-բիմոլն է, նշիկաբորբ: Ա. Ե.-ն ասում էր. պետք է խնայել կոկորդը, թե չէ ինչ երգչուհի քրոնիկ նշիկաբորբով: Դալիլայի մեներգը. «Հոգիս բացվել է, ասես ծաղիկը այգաբացին …Ավրորայի համբույրի համար»: Քիչ առաջ երգում էր. «Դալիլային կրկնիր, որ դու իմն ես հավետ: Որ մոռացված են բոլոր տանջանքները …»:

Մենության տվայտանքներ (լռությունը երկարում է), տասնութ տարեկան եւ, ինչպես մայրն է հեռախոսով ասում ընկերուհուն, այո, նա ցցված է տանը: Ոչ ոք: Նկատի ունի աղջկան: Աղջիկը տանն է: Այո, այո (նրանք հեռախոսով իրենց երեխաների ոսկորներն էին համրում, մոր ու նրա ընկերուհի՝ ապահովագրական գործակալ Մարյա Ֆիլիպովնայի սիրելի զբաղմունքը): Աղջկա ծննդյան օրը որպես հյուր հենց Մարյա Ֆիլիպովնան էր եկել տորթով թեյ ու գինի խմելու, բայց, ինչպես միշտ, շտապում էր ու հեռացավ: Տասնութերորդ տարեդարձ և տոն մոր ու նրա ընկերուհու հետ, հետո Մ. Ֆ. գնաց ու՝ վերջ: Տասնութերորդ տարեդարձ: Սեղանը հավաքեցին:

- Որ մոռացված են բոլոր տանջանքները:

Կրկնիր այն բառերը:

- Որ սիրել եմ ես այնպե …ե…ես…

Երգում էր ձայնի ամբողջ հզորությամբ, առաջին անգամ ծանր նշիկաբորբից հետո: Նշիկաբորբը ասես մահ լիներ: Դու մահու չափ գունատ ես (մոր բառերն են):

Շարունակում էր երգել (բաղաձայներն այնքան էլ լավ չէին հնչում).

- Ա…խու…ժչկա….տա…նել…բաժա…նու..մը

քո այ…րող քնք…շանքի…նեմ  կա…րոտ:

Երգում էր ամբողջ ձայնով, բաց պատուհաններով սենյակում, սակայն անվտանգության մեջ, երկրորդ հարկում, վարագույրների հետևում: Կարծես ստվերից, թաքստոցից Դալիլայի կերպարով կանչում էր ինչ-որ մեկին: Այ, այդպես պետք է երգել (ասում էր Ա. Ե.-ն), կերպարի մեջ մտնելով, բայց հանգստացիր, դա հաջորդ փուլն է, առայժմ պետք է վարժվել երգեցողական մակաձայնին, երբ պիանոն հնչում է բոլոր ձայներից հստակ: Ձայնը տարածվում է, սակայն մոմի կրակը չի թրթռում, դրամատիկության ժամանակը չէ: Դրամատիկություն կա բոլորի բնության մեջ (Ա. Ե.), ինչ էլ երգեք, ամեն ինչ դրամատիկ է, բայց ահա շնչառությունը կայուն չէ: Ինչպես ծառը արմատների վրա: Շնչիր ամբողջ փորով: Որտե՞ղ է լեզուդ: Որտե՞ղ է քո հայելին:  Ասենք՝ հենց Շալյապինի մոտ էլ ամեն ինչ ազատ էր կոկորդի մեջ, լեզուն այ այսպես (ցույց է տալիս տափակ ափը): Բերանն ասես անձավ լիներ, ոչ մի խոչընդոտ չկա: Ազատի՛ր տարածքը: Հետևի՛ր լեզվիդ:

Լեզուդ հուպ տվեցիր, հայելի չկա: Կա՞ մակաձայնը:

Դալիլայի պես կանչում էր  մեկին: Ահա կանչի վրա էլ եկան երկուսը, կանգ առան պատուհանի տակ: Միայն այս անգամ սերենադ երգում է վերևից աղջիկը (մահվան պես գունատ), նվիրումով է երգում, լեզուն հուպ տված, ձայնը ազատ դուրս է հորդում, շնչառությունն էլի կայուն չէ:  Ափդ դիր ականջիդ հետևում (ասում էր Ա. Ե.-ն) ու լսիր ինքդ քեզ, լսում ե՞ս:

- Կար…կամում եմ երջանկությունից:

Կար…կամում եմ եր…ջան…կությունից…

Ա-Ա….ա.-ա… (շարունակ երգում էր):

Իջնել, նշանակում է փոխել ճակատագիրը: Արդյոք, իսպանուհիներն իջնու՞մ էին նրանց մոտ, ովքեր սերենադ էին երգում:

Քննությանը «Հանգչում են հեռավոր Ալպուխարայի ոսկեզոծ եզերքները, (Զոյա Ջաֆարովնայի նվագը), կիթառի կանչող ձայնին (Զոյա Ջաֆարովնան թմբկահարում է) դուրս արի, իմ սիրելի» սերենադն էր (Ա.Ե.-ն մեկնաբանում է. ընդհանրապես չորսից հանած: Բայց քեզ չորս նշանակեցին, ես դեմ էի):

Արդյոք, իջնու՞մ էին իսպանուհիները:

Նա դեռ անշարժ կանգնած է, վախենում է վարագույրի հետևում ճակատագրի փոփոխությունից: Ներքևում լռություն է, արդեն ոչ ոք չկա: Ճակատագիրը հեռացավ: Այդպես էլ ոչ ոքի հետ չծանոթացա: Գնաց այնտեղ, որտեղ փոքրիկ հրապարակն էր ցանկապատից այն կողմ, պարեր, երաժշտություն, այնտեղ զույգեր էին օրորվում: Բայց լուռ հեռացավ, մահվան պես գունատ: Բոլորը ներս էին մտնում, իսկ նա չմտավ, հեռացավ: Դալիլային կրկնիր, որ դու իմն ես առհավետ:

Վախվորած նապաստակի պես, անձայն իջավ բակ, շրջանցեց մասնաշենքը, դուրս եկավ սալապատ մայթի վրա: Կանգ առ: Նրանք կանգնած են, որսորդները անշարժ են: Աղջիկը կանգնել նայում է, ասում է.

- Ահա և ե՛ս:

Համարձակ արտահայտություն է, ճակատագիր փոխող, ահա և ես: Ասաց ու տակնուվրա արեց իր կյանքն ու այն մեկի՝ ակնոցներով, խելոք, բարեկազմ, գեղեցիկ, ճաղատավուն երիտասարդի կյանքը: Դեն նետեց ամեն ինչ:

- Ահա և ե՛ս:

Դադար, նրանք փոխեցին իրենց դիրքը: Կանգնած էին այնպես, ու իրենց թափ տվեցին: Ասես ազդանշան լսեցին.

- Ահա և ես:

Այնուհետև.

- Այդ դո՞ւք էիք երգում: (Խոսում է երկրորդը, դեմքը կլոր է, ինքը՝ բարձրահասակ, արևահարված):

- Ես:

- Գիտե՞ք,- նորից խոսում է երկրորդը, իսկ առաջինը, գլխավորը, ակնոցներովը, չի լարվում, ծխախոտ է վառում, քանի որ թուխը, երկրորդը, ակնհայտորեն միշտ նրանց մեջ առաջին ջութակի դեր է տանում,- գիտե՞ք՝ մենք ուզում ենք հանգստացողների ուժերով համերգ կազմակերպել: Դուք չէի՞ք համաձայնի:

Այնուհետև նրանք արդեն երեքով քայլում են նրբանցքի սալիկներով, բոկոտիկների մեջ էլի ավազ է հավաքվել, բայց երկրորդը, թուխը քիչ ժամանակ ունի: Երևում էր, որ նա շտապում է և շուտով թողնում է Դալիլային ու Սամսոնին մենակ: Սամսոնը սովորել է կոնսերվատորիայում, Դալիլան սովորում է ուսումնարանում: Սամսոնը ծիծաղելով պատմում է, թե ինչպես էին երաժշտականում «Հիշում եմ այն չքնաղ վայրկյանը» երգում ջազ-տարբերակով, ումպա-ումպայի տակ, թմբկահարելով աթոռների վրա, և երբ աղջիկներից մեկը քննության ժամանակ մոռացավ Գլինկայի ռոմանսը, ինքը (Սամսոնը) կամացուկ ցույց տվեց նրան, թմբկահարելով «ումպա-ումպա», ու նա հիշեց: Ծիծաղում են:

Հետո նրանք ամբողջ երեկո երկուսով ման են գալիս, մտնում են Ալիկի մոտ (այն թուխը), ակումբին կից նրա սենյակը, նա հանգստյան տան կուլտ-մասսայավարն էր,

իսկ Սամսոնը՝ նրա ընկերը, հյուր է եկել ծովափ, այսօր մեկնում է: Դալիլան սարսափով մտածում է. այսօր:

Ալիկի սենյակում պլակատներ են, գնդակներ ու ցանցեր, շախմատ, սպորտային իրեր, ըմբշամարտի մեկ ձեռնոց, հին բազկաթոռներ, երկու բազմոց, կենցաղային որոշ իրեր, թեյնիկ, բաժակներ, պահարանիկ, սեղան աթոռներով: Ոչ ոք փող չուներ (Ալիկի շտապ անհասցե հարցումը, թե «ով փող ունի», մնաց օդում կախված): Բայց նստած էր շրթունքները ուռցրած մի աղջիկ, ըստ երևույթին դա Ալիկի ընկերուհին էր: Նրա դեմքը միշտ այդպես փքված է: Մշտական հատկանիշ է՝ չափից ավելի ուռցրած բերան, մի տեսակ դժգոհ տեսք: Փողոցից ինչ-որ մեկը անցողակի մտնում է, եւ Ալիկը դուրս է թռչում, նորից է գալիս, թոցնում է բանալիները, վերջապես Սամսոնը Դալիլային ազատ է արձակում, յոթին Դալիլայի ընթրիքն է:

Քայլում են իրար կողքով, Սամսոնը պատմում է, որ Փքված Մռութիկը ինչ-որ մեծ պետի աղջիկ է, նա այստեղ ծնողների հետ է հանգստանում, նա տասնյոթ տարեկան է, նրանք Ալիկի հետ արդեն որոշել են ամուսնանալ, բայց ծնողները դեռ չգիտեն, իսկ եթե իմանան, անմիջապես Մռութիկին մայրաքաղաք կտանեն: Այդ Ալոչկայի հանգստյան ժամանակն էլ ավարտվում է, նա համոզում է ծնողներին իրեն այստեղ մենակ թողնել՝ բուժումը շարունակելու, քանի որ նրանք պետք է աշխատանքի գնան, իսկ Ալոչկան դպրոց պիտի գնա միայն օգոստոսի վերջին, երկու ազատ շաբաթ ունի դեռ: Դպրոցականը ամուսնանա՞:

Այսպես զրուցում են Սամսոնն ու Դալիլան ու բաժանվում են ճաշարանի մոտ, և այստեղ ամենակարևորն է՝

ինչպես ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼ: Դալիլան լուռ է, նա տանջալից սարսափի մեջ է, կարոտն է նրան խեղդում: Դեռ չգտած, արդեն կորցնել: Նրանք կանգնած են աստիճանների ներքևի մասում, վերևում բոլորն արդեն ընթրել են, կուշտ դուրս են գալիս՝ շներին ու կատուներին կոտլետներ բերելով: Դալիլան սպասում է շան կամ կատվի պես, լուռ է, չի մլավում: Երեկոն վրա հասավ, ցրտեց: Դալիլան չի կարողանում իրեն զսպել, դողում է: Սամսոնը, ծիծաղելով հանում է պիջակն ու գցում Դալիլայի ուսերին:

Դալիլային կրկնիր, որ դու իմն ես առհավետ:

Որ մոռացված են բոլոր տանջանքները:

Դալիլան դողում է և տաք պիջակի տակ: Լուռ կանգնած սպասում է: Սամսոնը ծխախոտ է վառում ու, վերջապես, չգիտես ինչու ծիծաղելով ասում.

- Դու վաղը մնա քեզ մոտ, վերևում, ես կգամ ճաշից առաջ, առավոտյան գործեր ունեմ:

- Երկրորդ մասնաշենք,- անմիջապես արձագանքում է Դալիլան, նրա ուղեղում անընդհատ պտտվում էր այդ հասցեն:- Երկրորդ մասնաշենք, երկրորդ հարկ, յոթերորդ սենյակ: «Վոլնա» հանգստյան տունը:

Թե չէ նա կարող է հեռանալ ու ճանապարհին մոռանալ, ու՝ վերջ: Չէ՞ որ ծովի ափով մեկ կիլոմետրերով ձգվում են հանգստյան տները:

- Դե՞,- հարցական ասում է նա: - Առա՞յժմ:

Նա հանում է պիջակն ու միաժամանակ հրաժեշտի համար մի տեսակ անվստահ նրան մեկնում իր երկար սպիտակ ձեռքը (դեռ չի արևահարվել):

Տղան վերցնում է աղջկա ափը, պահում իր չոր ու տաք ձեռքի մեջ: Ձեռքսեղմումը նման էր երկրաշարժի:

- «Վոլնա», երկուս-յոթ,- անհոգ կերպով ասում է նա ու բարձրանում աստիճաններով, ամաչելով իր սարաֆանից, բոկոտիկներից, սպիտակ ձեռքերից ու ոտքերից: Ինչպիսի՞ն է տեսարանը մեջքից: Հետ մի նայիր: Հետ նայեց միայն դռների մոտ: Անբացատրելի քնքուշ, քաջալերող ժպիտով ներքևից նայում է նա:

Լուսաբացին Դալիլան զարթնեց երջանկությունից: Կյանքում արդեն ամեն ինչ կատարվել էր, ամենն, ինչ պետք էր: Դատարկ կուրծքը ներսից լցվեց, այնպես որ՝ նեղվածք էր (ինչպես ասում են՝ սրտի համար կրծքի մեջ նեղվածք է, ահա թե ոնց է լինում): Ամեն ինչ վայրկենապես լցվեց, ստացվեց կյանքի իմաստը: «Ինչու՞մն է կյանքի իմաստը» հարցին Դալիլան հիմա՝ արևածագին կպատասխաներ. «Սամսոնի մեջ»:

Նա պառկած էր իմաստով լեցուն, հսկայական հանգստությամբ: Թռչնակները սկսում էին ծլվլալ, ժամանակ առ ժամանակ կռռում էին ագռավները: Նրա կյանքում ամեն ինչ արդեն դասավորված էր, ամեն ինչ ծաղկում էր, ամեն ինչ կարգին էր, գոյացել էր գլխավորը. միշտ Սամսոնի հետ:

Բավականին ժամանակ անց նա եկավ պատուհանի տակ ու շվվացրեց «Ախ, ուժ չկա բաժանմանը դիմանալու», խելացի է: Աղջիկն անմիջապես դուրս նայեց ու ձեռքով արեց նրան իր երկար սպիտակ ձեռքով: Նրանք գործով գնացին Ալիկի ակումբ, այնտեղ նստեցին մինչև ճաշ, Ալիկը մենակ էր, նա բարդություններ ուներ, ծնողները Ալոչկային իրենցից հեռու չէին թողնում, ինչ-որ բան էին զգացել: Ալիկը շարժվում էր՝ ասես քնի մեջ լիներ, նույնպես ծայրեծայր լցված, արդեն քսաներեք տարեկան հասուն տղամարդ, հանգստավայրի կուլտ-մասսայավար,

պարզ է՝ ոչ ցանկալի հեռանկար այդպիսի ծնողների համար: Վերջապես եկավ նա, ում սպասում էին՝ Ալոչկան. դուրս էր պրծել հինգ րոպեով, փախել էր պոլիկլինիկայի պրոցեդուրաներից, և անմիջապես շեմից առաջարկեց Ալիկին մեկնել Դոնեցկ, Ալիկի մոր մոտ: Նա համբուրեց Ալոչկային (Սամսոնի ու Դալիլայի ներկայությամբ), սեղմեց իրեն, իր մարմնին, Ալոչկայի փոքրիկ մարմինը իր հսկա ու հասուն մարմնին, թաքցրեց նրա ուռած դնչիկն ու թաց սև աչքերը ստամոքսի բարձրության վրա. երևում էր միայն նրա սև մազափունջը, ամեն ինչ քողարկվեց Ալիկի ձեռքերի տակ, ոչ պետքական մարդու սգող ձեռքերի ներքո:

- Մտածել է պետք,- արդյունքում դանդաղ ասաց նա:

Աղջիկը նույնպես, ասես ջուրն իջեցրած, դուրս եկավ նրա ձեռքերի միջից ու գնաց, հետո անցողիկ երևաց պատուհանի մեջ՝ փոքրիկ, ուղիղ իրան կրունկների վրա, սև մազերի դեզ ու վերջ:

Ալիկին սիրտ էին դնում, թեյեցին նրա մոտ եղած միակ բանով՝ չորաբլիթներով: Հետո Ալիկին կանչեցին տնօրենի մոտ: Սամսոնն ու Դալիլան իբր կատարելով այն ամենն, ինչ պետք էր, վեր կացան ու գնացին: Գնացին ծովափ, ուրիշ էլ ուր: Նստեցին ավազի վրա: Սամսոնը սովորականի պես հանվեց մինչև լողավարտիքը, իսկ Դալիլան մահու չափ վախեցավ, որ հիմա կտեսնի նրա մարմինը: Տեսավ զզվանքով: Ոտքերին մազեր, ոտքերը ջլոտ, ոչ երիտասարդ (21 տարեկան), մինչև լողավարտիք նա հայացքով չբարձրացավ, այնտեղ շատ բան կար: Դալիլան շորերը չհանեց, նստել էր ձեռքերը խաչած (քրոն. նշիկաբորբ): Տղան գնում էր դեպի ծովը, գնում էր՝ շարժելով նստատեղերը, բոլորովին օտար, նա սրնքամիս ուներ ու մա-

զոտ լայն թիկունք: Հետո դուրս եկավ ծովից, եկավ դեմքով դեպի առաջ, լավ երևում էին մազակալած կուրծքն ու բրդոտ փորը, լիքը լողավարտիքը: Պետք է դրան հարմարվել, որոշեց նա, հայացքը մի կողմ հառելով: Երբ նա նստեց կողքին, տղայի դեմքն այնպիսի արտահայտություն ուներ, ասես նրա համար ծիծաղելի էր: Կարծես նա հետևում էր հետաքրքիր դեպքի:

Հոգոց հանելով՝ աղջիկը հանկարծ ասաց.

- Ես այլևս ոչ ոքի հետ չեմ ծանոթանա:

Տղան գլուխը կախ տվեց:

Երգեցողության մասին այլևս խոսելն ավերորդ է: Երեկոյան մասնաշենքում եգեցողության մեջ վարժվելու մասին նույնպես: Ժամանակ չկար: Օրը օրի հետևից նրանք միասին էին անցկացնում, ապրումներ ունենալով Ալիկի ու Ալոչկայի հետ միասին. Ալոչկան արդեն գրեթե մեկնել էր, ըստ երևույթին ապրում էր վերջին պահերը, և մի անգամ Սամսոնն ու Դալիլան գնացին Ալիկի մոտ, իսկ նրա սենյակը, որ միշտ բաց էր, հանկարծ կողպած տեսան: Թակեցին, հրեցին: Ձեն չկար: Սամսոնը նայեց կողպեքի անցքի մեջ ու հանկարծ ծլկելու ազդանշան տվեց, քաշեց Դալիլայի ձեռքն ու քարշ տվեց հեռու: Արագ հեռացան:

- Ի՞նչ է պատահել:

- Նրանք հրաժեշտ են տալիս, բանալին կողպեքի մեջ է:

- Ինչպե՞ս են հրաժեշտ տալիս:

- Հրաժեշտ են տալիս,- կրկնեց նա:

Հետո Դալիլան իմացավ նրա երկար կյանքի ամբողջ պատմությունը. որ Սամսոնը չէր կարող տանել ռազմական ֆակուլտետում ուսումնառությունը, հեռանկար ունե-

նալով ամբողջ կյանքը նվագել փողային նվագախմբում ու վերջապես դառնալ նրա դիրիժորը: Ավագ փորձառու ուսանողը դաս տվեց Սամսոնին՝ դու պառկիր աստիճանների տակ, իսկ ես քեզ կգտնեմ, իբր ընկել ես ու գիտակցությունդ կորցրել: Հետո ընդհանրապես չուտես, իսկ եթե ուտես, երկու մատդ խոթիր բերանդ ու գործն արված է, կթափես: Մի շաբաթ կպառկես բուժմասում ու քեզ կարգ կտան: Մի շաբաթ. Սամսոնը հոսպիտալում պառկեց երեք ամիս, նեյրովիրահատական բաժանմունքում, և արդեն իսկականից չէր կարողանում ուտել, անգամ խմել, թափում էր ուտելուց անմիջապես հետո, սակայն բանակը չէր ուզում նրանից բաժանվել, կաթոցիկներ էր դնում, համառորեն բուժում էր, ավելի ու ավելի մանրակրկիտ զննումներ էր նշանակում, ողնաշարի պունկցիաներ ու ինչ-որ սարսափելի փչումներ, ինչից վախենում էին բոլոր սիմուլյանտները և ինչից մարդը կուչուձիգ էր անում, ինչպես կախաղանի ժամանակ: Հետո նրան բաց թողեցին: Նա կորցրեց քաշի կեսը, վեց ատամ ու գլխի գրեթե բոլոր մազերը, սակայն կենդանի մնաց, ազատ արձակվեց ու սկսեց ուժգին խմել: Չէր կարող աշխատել, ոչինչ անել չէր կարող: Ու մայրը:

- Մաման, պատկերացնու՞մ ես՝ ոչ մի բառ: Ամեն առավոտ գնում էր փորձի ու ամեն առավոտ ինձ համար փող թողնում ափսեի տակ: Դա այն դեպքում, որ աշխատավարձը քիչ էր: Ես ամեն ինչ հասկանում էի, բայց ամեն օր առավոտից վազում էի շիշ գնելու:

- Այո՞: (Դալիլային կրկնիր, որ իմն է առհավետ, որ մոռացված են բոլոր տանջանքները):

- Եվ ես, հասկանում ես, մի գեղեցիկ օր ասացի ինքս

ինձ. վերջ: Հերիք է: Ու վերջ:

- Այո՞:

- Ու այլևս չեմ խմում: Դե մեկ-երկու բաժակ, ոչ ավելի:

(Հոգիս բացվել է, ասես ծաղիկը այգաբացին …Ավրորայի համբույրի համար… Այնպես թրթռում է կուրծքս):

Մի երեկո տղան համբուրեց աղջկան: Կոպտորեն, երեկոյան, ավազների մեջ: Ճմրթեց նրա ամբողջ բերանը, Դալիլան սկսեց խեղդվել, չէ՞ որ նա չէր կարողանում շնչել նման պայմաններում, երբ բերանը փակ է: Շրթունքները վայրկենապես ուռչեցին, և Դալիլան պարզորեն, հենց նույն վայրկյանին (ասես լուսավորեցին) տեսավ արդեն ստիպողաբար տաքսիով տարված Ալոչկայի ուռած բերանը, ու տագնապի մեջ ամեն ինչ հասկացավ (նրանք հրաժեշտ էին տալիս): Սկսեց փորձել դուրս պրծնել, թփրտաց, որ ազատվի ու շունչ քաշի, սակայն դա քիչ էր: Սամսոնը լրիվ առաջ էր քաշվել, կախվել, իրենով փակեց ամեն ինչ ու սկսեց չարչարել Դալիլայի խեղճ կուրծքը: Ինչ-որ կենդանի էր վրա ընկել, ջանք էր թափում, հմտորեն բացում էր կոճակները, ճմլում, պոկ չգալով բերանից, ֆո՛ւ: Դալիլան ուժգին հրեց այդ կենդանուն ու ոտքի կանգնեց: Շրջվեց ու պլաշչի, կոֆտայի ու սարաֆանի տակից երկար կոճկում էր կրծկալը: Հետ նայեց: Սամսոնը նստած ծխում էր, ինքն էլ էր քրքրված: Աստիճանաբար զրույցի բռնվեցին: Չգիտես ինչու Դալիլան իրեն մեղավոր էր զգում: Շոյեց նրան պիջակի թևքի վրայից: Պարզվեց (ոչ միանգամից), որ նման պահերին տղամարդիկ ուժեղ ցավ են զգում: Նրանք իրենց չեն տիրապետում: Անհագ ցավ է:

- Այո՞:

Արդեն մութ գիշեր էր: Սամսոնը ուշացել էր Էլեկտրագնացքից ու հիմա պատրաստվում էր գնալ արթնացնելու

Ալիկին, նրա մոտ բազմոցի վրա գիշերելու համար: Սամսոնը Դալիլային ուղեկցեց մինչև մասնաշենք, նուրբ ու քնքուշ համբուրեց նրան ու հետո երկար կանգնած էր պատուհանի տակ, շվշվացնելով «Ախ, ուժ չկա բաժանումը տանելու»: Չգիտես ինչու կանգնել էր, չնայած պայմանավորվել էին վաղը առավոտյան հանդիպել: Իսկ առավոտյան, նորություն, պարզվեց, որ Դալիլայի սպիտակ թիկնոցը մեջքի մասում կեղտոտված է:

Նա արդեն հագնված դուրս էր գալիս, բայց հարևանուհին կանգնեցրեց.

-Դու կանաչոտել ես,- գործնականորեն ասաց նա:- Ինչ-որ տեղ պառկել, կանաչոտել ես:

Սպիտակ թիկնոցի մեջքը կանաչ բծերի ու գծերի մեջ էր:

- Դա խոտից է, խոտերի վրա ես պառկել: Պետք է լվանալ աղով ու տաք ջրով:

Հարևանուհու աչքերում կարդացվում էին բոլոր չարտասանված բառերն ու սեփական տխուր փորձը: Էխ, ախ, կանաչոտել ես, ինչպես ուրիշ հազարավոր անանունները:

Այլևս չհագավ թիկնոցը: Թաքցրեց ճամպրուկի մեջ:

Ցերեկները Սամսոնը Դալիլայի կրծքում է, պատռում է կրծքավանդակը, ամեն ինչ  լցված է, բերնեբերան լիքն է նրանով: Իսկ նա քայլում է կողքով, նրա ձեռքը բռնած, ու նա էլ նստած է ներսում, խանգարելով շնչառությանը: Ձեռքը ձեռքի մեջ, նրա ափի միջով Դալիլային ասես հոսանք է անցնում, խտղտում կողերը, անցնում կրունկները, եթե նրան հայացքով հանդիպեր: Ինչ լավ է: Գլուխը պտտվում է, բայց զրույցը հանգիստ ծորում է: Նրանք պարզապես խոսում են դեսից դենից: Ալիկը շփոթահար

էր, ինչպես եղնիկն անտառում ու վազում է հեռախոսակապի կետ: Նրան Մոսկվան է կանչում: Ալոչկան ամեն օր զանգում է նրան ու լալիս հեռախոսափողի մեջ, տնքտնքում է, չի դիմանում բաժանմանը:

Ախ, ուժ չկա բաժանմանը դիմանալու
Քո այրող քնքշանքներին եմ սպասում,
Ու կրքից կարկամում:

Ալոչկան լաց է լինում, մենք էլ հետը:

Մի շաբաթ անց Դալիլան նրան թույլ տվեց ԴԱ, այսինքն՝ համբուրվելը (քանի որ նա ցավեր ուներ, նա կողքին նստած ակնհայտորեն սեղմում էր ատամները): Սովորեց քթով շնչելը, երբ համբուրում էր: Համբերում էր: Առավոտյան բերանն ուռած էր:

Իսկ Ալոչկան հեռախոսով հայտնեց Ալիկին, որ իր մոտ ուշացում է (ինչ է դա, մտածում էր Դալիլան, այսինքն՝ նա էլ չի՞ զանգելու):

- Զանգերի հետ կապված ինչ-որ ուշացում է,- բարձրաձայն եզրակացնում է նա:

Անսանձելի, բայց ցածրաձայն ծիծաղելով, Սամսոնը շարունակում է, որ Ալիկը խելքը թռցրել է:

- Նա չի կարող մեկնել, փող չունի,- խելագարի պես ծիծաղում է Սամսոնը:

- Քեզ ի՞նչ եղավ,- հարցնում է Դալիլան: Նա կասկածում է, որ իր վրա են ծիծաղում: Յուրաքանչյուրն այդպես կմտածի, եթե պարզ չէ, թե ինչի վրա են ծիծաղում:

Սամսոնը աստիճանաբար հանգստանում է ու բացատրում, որ Ալիկը փող չունի Մոսկվա մեկնելու համար, կարելի էր հագստյան օրին (գնացքով գիշերը գնա ու հաջորդ գիշերը վերադառնա), սակայն փող չկա, քանի որ Ալիկը փող է ուղարկում մորը՝ Դոնեցկ, այնտեղ սովորում

է փոքր եղբայրը: Ալիկը խելքը թռցնում է: Ալոչկան մտադիր է ինքը գալ Ալիկի մոտ, ազնվորեն գրություն թողնելով ծնողներին: Ապրելու նրա սենյակում: Նրա հետ բանվորական ճաշարանում սնվելու: Ալիկը նրան հորդորում է չանել դա, այդ դեպքում նրան ընդհանրապես կնստեցնեն մանկահասակի անբարոյականացման համար: Ամբողջ ոստիկանությանը ոտքի կկանգնեցնեն: Նրանք ամեն ինչ կարող են: Իսկ ինքը՝ ոչինչ: Իսկ փող չկա:

Դալիլան ու Սամսոնը նույնպես ոչինչ չունեն: Նրանք տխուր, անվճար պարում են Ալիկի երեկոներին, արդեն աշունն է գալիս, օդում դեղին տերևների բույրն է, անմահ լուսինը փայլում է մթին ցրտաշունչ երկնքից, ավազաբլուրների ավազը սառն է: Սամսոնի մայրը հյուրախաղերի է, նա նիհարել է, Դալիլան նրան կերակրում է իր հացով ու կոտլետներով, ինչպես մարդիկ կերակրում են շներին ու կատուներին: Ժլատորեն նայում է, թե ինչպես է նա ուտում. քաղաքավարի ու մի տեսակ չուզելով: Նա բերանի խոռոչում մետաղական ատամնապսակ ունի, հոսպիտալում ապրած սարսափելի ամիսների հետքը:

Սակայն Սամսոնի համար ամեն ինչ առջևում է, նա հսկայական պլաններ ունի, նա ընդունվում է (ոչ հիմա, այլ հաջորդ տարի) կոնսերվատորիա, երկու բաժանմունք՝ դիրիժորա-երգչախմբային ու կոմպոզիցիայի, պատրաստվելու է: Պետք է սովորել ու աշխատել:

Նրանք նստած են ավազաթմբերին, Ալիկի ծածկոցի վրա, լուսնի տակ, համբուրվում են մինչև գիտակցության կորուստ, սակայն թախիծն արդեն բույն է դրել Դալիլայի սրտում, նա հաճախ է լաց լինում (Ալոչկայի պես):

Հիմար Դալիլան մոլեգին համբուրվում է, սովորել է, Սամսոնը իր ցավերից կրճտացնում է ատամները:

Ու մի երեկո նա մեկնում է տուն՝ Մոսկվա, Սամսոնը էլեկտրագնացքով նրան ուղեկցում է քաղաք, նրանք գրկախառնված կանգնած են վերջին վագոնի փակ հարթակում ու նայում են հետևի պատուհանով, թե ինչպես են վազող երկաթգծերը միահյուսվում ու հյուսվածքը հետ տալիս՝ ասես հրե օձեր սև հողի վրա, հեռանալով դեպի տխուր դեղին մայրամուտը, և ինչպես են թախծալի վառվում լուսակիրների դեղին ու կարմիր լույսերը, կարելի է-չի կարելի, կարելի է-չի կարելի:

Քաղաքային կառամատույցում Սամսոնը հրաժեշտ տալով՝ հանում է իր միակ կարմիր սվիտերը ու տալիս Դալիլային, որովհետև նա մրսում էր առանց թիկնոցի, որը խցկված է հանգստյան տան աղբարկղի մեջ: Եվ ամբողջ գիշեր Դալիլան լաց է լինում, ծածկված սվիտերով, լսում է Սամսոնի հոտը, նրա մաշկը, օծանելիքը, լաց է լինում ու լացելու է ևս կես տարի, նամակներ է գրելու ամեն օր, հետո օրումեջ, հետո ավելի ուշ-ուշ: Գարնանամուտին այդ հոսքը կցամաքի և հակառակ հոսքը՝ Սամսոնից, կվերջանա անպատասխան երկու նամակով, ու դրանցից մեկում հեռավոր նորություն, որ Ալիկն ամուսնացել է, նրանք Ալոչկայի հետ երեխայի են սպասում, և Ալիկը ընդունվում է թատերական ինստիտուտի ռեժիսուրայի հեռակա բաժինը եւ արդեն գործարանի կուլտուրայի տան գեղարվեստական ղեկավարի աշխատանք է գտել: Ալիկ - ո՞վ է նա:

Հոգիս բացվել է, ասես ծաղիկը այգաբացին:

Շատ տարիներ անց Սամսոնը կզանգի ու մեղմ, անսթափ ձայնով կասի. դե, ի՞նչ ասեմ, միայն քեզ եմ սիրել ամբողջ կյանքում: Ու կդնի խոսափողը:

# Սուտ ճակատագիր

Ահա թե ով էր նա՝ երեսունն անց չամուսնացած կին, և նա աղաչելով համոզեց մորը մի գեշերով հեռանալ տնից ուր էլ որ լինի, և մայրը, ինչքան էլ տարօրինակ է, հնազանդվեց ու մի տեղ կորավ, եւ կինը, ինչպես ասում են՝ տղամարդ բերեց տուն: Նա արդեն ծեր էր, ճաղատ, գեր, խճճված հարաբերություններ ուներ մոր ու կնոջ հետ, ապրում կամ չէր ապրում այստեղ ու այնտեղ, փնթփնթում էր ու դժգոհ էր աշխատավայրում իր վիճակից, չնայած երբեմն ինքնավստահորեն բացականչում էր, թե ինչ ես կարծում՝ լինելու՞ է լաբվարիչ: Ի՞նչ ես կարծում՝ ես կլինե՞մ լաբվարիչ: Այդպես էր բացականչում նա՝ քառասուներկու տարեկան միամիտ, անհուսալի մարդը, ծանրաբեռնված ընտանիքով, մեծացող դստերով, որը չգիտես երբ մեծացավ ու տասնչորս տարեկան հասուն աղջիկ դարձավ ու ինքն իրենից գոհ է, այն աստիճան, որ բակի աղջիկները պատրաստվում էին ծեծել նրան մի տղայի համար և այդպես շարունակ: Տղամարդը մի տեսակ շատ գործնականորեն էր գնում արկածախնդրությանը. ճանապարհին նրանք կանգ առան ու տորթ գնեցին, աշխատավայրում նա հայտնի էր որպես թխվածքեղենի, գինու, ուտելիքի, լավ ծխախոտի սիրահար, բոլոր ճաշկերույթներին նա անընդհատ ուտում էր և ուտում, իսկ այդ ամենի մեղավորը նրա շաքարախտն էր և քաղցի ու ծարավի անանց զգացումը, այն ամենը, ինչ խանգարում էր ու խանգարեց նրան աշխատանքում առաջ գնալու: Տհաճ արտաքին տեսք ու՝ վերջ: Արձակ բաճկոն, չկոճկված օձիք, գունատ, անմազ կուրծք: Ուսերին՝ թեփ, ճաղատ գլուխ: Հաստ ապակիներով ակնոցներ: Ահա թե ինչ գանձ էր տանում իր մեկսենյականոց բնակարանն այդ կինը, որ որոշել էր մե-

կընդմիշտ վերջ տալ մենակությանն ու ամբողջ այդ գործին, բայց ոչ գործնականորեն, այլ սև հուսաբեկությունը հոգում, որ արտաքնապես դրսևորվում էր որպես մարդկային մեծ սեր, այսինքն՝ հանդիմանություններով, պահանջներով ու հորդորներով ասել, որ սիրում է, ինչին ի պատասխան նա ասում էր. «Այո, այո, ես համաձայն եմ»: Ընդհանուր առմամբ ոչ մի լավ բան չկար այն բանի մեջ, թե ինչպես էին գալիս, ինչպես եկան, ինչպես էր նա դողում բանալին կողպեքի մեջ շրջելով, դողում էր մոր պատճառով, բայց ամեն ինչ ստացվեց: Թեյնիկը դրեցին կրակին, բացեցին գինու շիշը, կտրեցին տորթը, մի մասը կերան, գինի խմեցին: Նա փլվեց բազկաթոռի մեջ ու աչքի ծայրով նայում էր տորթին, կարելի է մի կտոր էլ ուտել, բայց փորը չէր թողնում: Երկար նայելուց հետո նա վերջապես մատներով վերցրեց մեջտեղի կանաչ վարդը, բարեհաջող տարավ մինչև բերան, կերավ, շան պես լեզվով լպստեց պտղունցը:

Հետո նայեց ժամացույցին, հանեց ժամացույցը, դրեց սեղանին, հագից հանեց ամբողջ զգեստը մինչև ներքնաշորերը: Անսպասելիորեն պարզվեց, որ ներքնաշորերը մաքուր սպիտակ են, մաքուր ու խնամված գեր երեխա, նա մայկայով ու վարտիքով նստած էր թախտի ծայրին, հանում էր գուլպաները, գուլպաներով սրբեց ոտնաթաթերը: Վերջապես հանեց ակնոցները: Պառկեց նրա կողքին մաքուր, սպիտակ տեղաշորի վրա, իր գործն արեց, հետո նրանք խոսեցին ու նա սկսեց հրաժեշտ տալ. նորից պնդում էր՝ ի՞նչ ես կարծում, ինքը լաբվարիչ կդառնա՞: Շեմին, արդեն հագնված, սկսեց շատախոսել, վերադարձավ, նստեց տորթի մոտ ու դանակից ևս մի մեծ կտոր կերավ:

Կինն անգամ չգնաց նրան ճանապարհելու, իսկ ինքը դա անգամ չնկատեց, սիրալիր ու բարյացակամորեն համբուրեց ճակատը, վերցրեց պայուսակը, շեմին հաշվեց փողերը, ախ հանեց, խնդրեց մանրել փողերը, պատասխան չստացավ ու գնաց իր հաստ փորով, մանկական ուղեղով ու օտար մարմնի մաքուր, խնամված հոտով, բոլորովին էլ չմտածելով, որ դեպի այստեղ նրա ճանապարհն այլևս փակ է, որ նա տանուլ է տվել, ձեռքից բաց է թողել, այստեղից այլևս ոչինչ չի ստանա: Նա չհասկացավ դա, վերելակով թափվեց ներքև իր մանրի, երեքանոցների ու թաշկինակի հետ միասին:

Բարեբախտաբար, նրանք միասին չէին աշխատում, տարբեր մասնաշենքերում էին. հաջորդ օրը կինը չգնաց նրանց ընդհանուր ճաշարանը, այլ ամբողջ ընդմիջումը անցկացրեց իր սեղանի մոտ: Երեկոյան սպասվում էր մոր հետ հանդիպումը, երեկոյան նորից սկսվելու էր այն իսկական կյանքը, եւ իր համար անսպասելի այդ կինը ազդարարեց իր գործընկերուհուն. «Դե ինչ, դու արդեն գտե՞լ ես քեզ համար սիրեկան»: «Ոչ»,-ամաչկոտ պատասխանեց ծառայակցուհին, քանի որ վերջերս նրանից հեռացել էր ամուսինը եւ նա իր խայտառակությունը մենակ էր կրում, ընկերուհիներից ոչ մեկին չէր թողնում դատարկված բնակարան ու ոչ մեկին ոչինչ չէր ասում: «Ոչ, իսկ դո՞ւ» - հարցրեց ծառայակցուհին: «Ես, այո՛»,- պատասխանեց նա երջանկության արցունքներն աչքերին ու հանկարծ հասկացավ, որ անդառնալիորեն ու մեկընդմիշտ թակարդ է ընկել, որ հիմա նա դողալու և չարչարվելու է, որ նա տարակուսած մնալու է ավտոմատ-հեռախոսի մոտ՝ չիմանալով, թե ուր զանգել՝ կնո՞ջը, մո՞րը, թե՞ աշխատա-

վայր. նրա ընտրյալի աշխատանքային օրը կարգավորված չէ, այնպես որ նա կարող էր ոչ այստեղ լինել, ոչ էլ այնտեղ: Ահա թե ինչ էր նրան սպասում, նրան սպասում էր նաև խայտառակություն, ինչպես այն տիպին, որ ապարդյուն զանգում է նրան ամեն օր և նույն ձայնով, ի լրացում այն ձայների, որոնք արդեն ապարդյուն զանգել էին այն սողոսկող մարդուն, ըստ երևույթին, բազմաթիվ կանանց սիրո առարկային, վախվորած բոլորից փախչող և երևի բոլորին նույն բանն ու նույն իրավիճակում հարցնող՝ ես լաբվարիչ կդառնա՞մ:

Նրա դեպքում ամեն ինչ պարզ էր, ընտրյալը թափանցիկ էր, հիմար, ոչ նրբանկատ, իսկ կնոջը առջևում սպասում էր մութ ճակատագիր, բայց աչքերում երջանկության արցունքներն էին:

# Մայր

# ու

# Հայր

Որտե՞ղ ես դու ապրում, զվարթ, մեղմաբարո Տանյա՝ տարակուսանք ու կասկած չիմացող, անտեղյակ նրանից, թե ինչ են գիշերային վախերն ու սարսափը այն բանի առաջ, ինչը կարող է պատահել: Ու՞ր ես դու հիմա, թեթև վարագույրներով ո՞ր բնակարանում ես հյուսել քո բույնն այնպես, որ երեխաներդ շրջապատում են քեզ, և դու արագաշարժ ու թեթևաշարժ հասցնում ես ամեն ինչ ու դեռ մի բան էլ ավելի:

Ամենից կարևորն այն է, թե ինչ խավար անճարակության մեջ է լույս աշխարհ եկել, մեծացել ու դաստիարակվել այս վաղորդյան ճաճանչը, այս աղջիկը, շարժուն, ինչպիսին լինում են բազմազավակ ընտանիքների ավագ աղջիկները. հենց այդպիսին էր Տանյան, որի մասին է խոսքը:

Նրանից փոքր էին բազմաթիվ աղջիկներն ու ամենավերջինը՝ տղան, որին մայրը կրծքին մոտ էլ պահում իր ամուսնական կյանքի ամբողջ վերջին շրջանում եւ որդուն գրկած վազում էր ծառայության գնացող ամուսնու հետևից, վազում էր, որ թույլ չտա նրան գնալու այդ անիծված ծառայությանը, որտեղ նա միայն անառակությամբ էր զբաղված: Մայրը նրա հետևից վազում էր գրեթե ամեն առավոտ, գրեթե ամեն առավոտ նա հուսահատության մեջ էր ընկնում, որ նորից հնարավորություն է տալիս ամուսնուն ձեռքից դուրս պրծնել, գնալ ու իր աշխատավայրում ատելի, ազատ ու հեշտ ժամանակ անցկացնել, և նա տղան ձեռքին վազում էր փողոցով, ինչքան ոտքերի մեջ ուժ կար, որպեսզի հասնի ամուսնուն ու ազատ ձեռքով գոնե գլխարկը թոցնի նրա՝ գլխապատառ հեռացողի գլխից. նման տեսարանները նորություն չէին համատարած զինծառայողներով բնակեցված իրենց փողոցի հա-

մար: Տանյայի մայրը հիվանդ էր իր ամուսնու հանդեպ սուր ատելությամբ, պորտաբույծի, մսխողի ու ընտանիքի շահերը դավաճանողի հանդեպ աշխատավորի ու տառապյալի ատելությամբ, չնայած հայրը ամեն երեկո վերադառնում էր այդ ընտանիքի գիրկը ու գրկում հերթական փոքրիկին, սակայն մայրն այդ վարմունքն էլ մեկնաբանում էր որպես խորամանկություն, որպես մեղավոր շնացողի ստոր հնարք. և քիչ էր մնում փոքրիկին միջից կես անեին, հայրը, որ չտա նրան կատաղած մորը, մայրը՝ որպեսզի թույլ չտա հորը ցուցամոլությամբ զբաղվել ու առանց որևէ հիմքի ընտանիքի հոր անհավասար խաղ խաղալ: Կարող էր թվալ անգամ, որ մայրը իր երեխաների մեջ տեսնում է կյանքում իր ջանքերի, իր անմարդկային չարչարանքների ու իր անվիճելի, բայց շնացող ամուսնու աչքի առաջ ամենժամյա վիճարկվող արժեքորության մի շարք նյութական ապացույցներ միայն, ամուսնու, որ դոնդողի պես դողում ու ցնցվում է ամեն անգամ, երբ կինը բարձրացնում է ձայնը, վախենալով, որ հարևաններն ամեն ինչ կիմանան, սակայն նրանք առանց այդ էլ ամեն ինչ գիտեին, նա ինքը բոլորին ու ամեն տեղ ամեն ինչ պատմում էր, եւ կանայք նրան սիրտ էին տալիս, կոչում էին Պետրովնա ու խորհուրդ էին տալիս գնալ քաղմասի տեղակալի մոտ, եթե ամեն ինչ այդ աստիճանի այլանդակության է հասել:

Հայրը, չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, շարունակում էր ինչ-որ կերպ մնալ ընտանիքի հետ և դժվար է ասել, թե ինչի հիման վրա է այդ մարդը ամեն երեկո փորձում տուն վերադառնալ խաղաղ տրամադրությամբ, շփոթահար կամ արհեստականորեն անտարբեր կամ ստիպ-

ված էլի ինչ-որ դեմքով, ամեն անգամ՝ ոչ սեփական, այլ մի տեսակ ձեռքբերովի, հատուկ նախապատրաստված և ոչ թե այն բնական մռայլ ու ատող դեմքով, որը կարելի էր սպասել նրանից այդ իրավիճակում, բայց նրա ուժերից վեր չէր չարացած տուն գալը, նա անընդհատ մտածում էր, թե տվյալ օրվա ժամը տասնմեկին ինչ դեմքով վերադառնա տուն: Նա չէր ուզում շուտ վերադառնալ, կյանքում երբեք չէր ուզեցել, ու դա հիմքերի հիմքն էր, և ամեն անգամ արհեստական այս կամ այն դեմքով նա ժամը տասնմեկին հայտնվում էր տանը ու ամեն անգամ դեմ առնում նույն պատկերին՝ երեխաներից ոչ մեկը քնած չէր, իսկ կինը փոքրի հետ արցունքն աչքերին նստած էր անկողնում: Իսկ եթե հայրը փորձում էր սեփական նախաձեռնությամբ, իրեն բնորոշ մեղմ շարժուձևով պառկեցնել աղջիկներին քնելու, ապա մայրը սկսում էր նրա ձեռքից խլել աղջիկներին ու բղավել, թե եթե այդպես է, թող ոչ ոք չքնի ու բոլորը թող նայեն ճմրթված հորը, որը թարմացած, կարմրած թշերով դուրս է սողոսկել ինչ-որ մեկի անկողնուց, որը հենց նոր իր կեղտոտ երախով, այդ խառնարանով համբուրել էր աստված գիտի ում, հիմա էլ թաց շրթունքներով խցկվում է իր մաքուր աղջիկների մոտ, որոնց հետ էլ արդեն կարող է քնել, և այդպես շարունակ:

Այդ ամենի հետ միասին ընտանիքն աննկարագրելի աղքատ էր, քանի որ մայրը չէր աշխատում և ամեն ինչ անում էր մատների արանքով, սպասելով ժամը տասնմեկին, հետո էլ տասներկուսին և ավելի ուշ ժամի, այնպես որ՝ երեխաները հաճախ քնով էին անցում՝ սպասելով գլխավոր պահին, օրվա իրադարձությունների գագաթնակետին և առավոտյան նրանց արթնացնել չէր լինում: Մայ-

ը ավելի ու ավելի հեռուն էր գնում իր արդարացի ցասման մեջ, նա կարող էր հանկարծակի դիմավորել ամուսնուն սպայական ճաշարանի դռների մոտ ու սկսել ոտքերով հարվածել նրան, փոքրին պահելով ձեռքերի մեջ. մայրը կարծես թե բողոքում էր ընդունված այն կարծիքի դեմ, որ այդ ճանապարհով տղամարդուց ոչնինչ չես ստանա, այլ ավելի կվախեցնես ու ընդմիշտ կհեռացնես,- մայրն ասես ամեն անգամ մարտահրավեր էր նետում ճակատագրին ու շրջապատին, երբ երեխաներին թողնում էր քաղցած ու տղայի հետ հեռանում ավանի մոտակայքի տափաստանը կամ ահավոր բառեր բղավում այն մասին, որ Տանյան վիժել է հորից, իբր տաշտի մեջ գտել է արյունոտված լաթեր:

Հայտնի չէր, թե ինչի էր ձգտում Տանյայի մայրը, հնարավոր է՝ դա պահանջ էր ոչնչացնելու այն խաբկանքը, այն կեղծ պատկերը, որ ամենից առաջ երեխաներին ի ցույց փորձում էր ստեղծել հայրը իր մեղմ տեսքով ու դեմքի կեղծ արտահայտությամբ, նրա համար կարևոր էր հատկապես երեխաների առաջ ներկայացնել ընտանեկան իբր խաղաղ կյանքի պատկեր: Մայրն իրեն զգում էր թակարդի մեջ՝ շրջապատված համընդհանուր նողկանքով ու անհարգալից վերաբերմունքով, և միաժամանակ զգում էր, որ իր ամուսնուն բոլորը խղճում են ու փորձում պաշտպանել. այսպես, օրինակ, երբ մի անգամ մարտի ութի նախօրյակին նա մոտեցավ այն խանութին, որտեղից ամուսինը սովորաբար փոքրիկ նվերներ էր գնում իրեն ու աղջիկներին, ինչ-որ մեկը նրանից առաջ ներս սողոսկեց խանութ և ամուսնուն ծառայողական դռնից դուրս բերեցին, նախքան կինը կհասցներ ամբոխի միջով մոտե-

նալ վաճառասեղանին:

Սակայն այդ ամբողջ այլանդակության մեջ, այնուամենայնիվ, գրեթե ամեն տարի ծնվում էր մի աղջիկ ու վերջում էլ տղա՝ ծնվեց ընտանիքից հոր հեռանալուց վեց ամիս առաջ: Ինչպես էր դա տեղի ունենում, ինչի հետևանք էին այդ ամուսնական մերձեցումները, ինչպես էին նախապատրաստվում և ինչ հողի վրա էին հնարավոր դառնում նրանց փոխադարձ գրկախառնումները՝ ոչ ոք չգիտեր, դրանք երբեք չէր տեսել և Տանյան՝ ընտանիքի միակ լուսավոր գլուխը, որ ուշի ուշով հետևում էր և մորը, և հորը:

Իսկ մայրն ամեն քայլի հետ ավելի ու ավելի էր խրվում խայտառակության մեջ, փորձելով խայտառակ անել ամուսնուն, և այդ ամենը վերջ ու վերջակետ չուներ, քանի որ ամուսինը համառորեն փորձում էր առերևույթ պահպանել ընտանիքը ու առիթ չտալ, որ իրեն ներկայացնեն այնպիսին, ինչպիսին որ ուզում էր ներկայացնել կինը, բայց, վերջիվերջո, այդ երկու համառ մարդիկ գործը հասցրին այն սահմանին, երբ արդեն ոչինչ պետք չէ ու թանկ չէ առնվազն մեկի համար, երբ նա արդեն թքած ունի ամեն ինչի վրա, և հենց այդ պահն է որսում ամենահամառ, ամենապնդողունակ հակառակորդը, ու ի պատասխան անտարբերության դրսևորման, հաղթական ճիչ է արձակում, որը նույն անտարբերության է արժանանում հեռացող զուգընկերոջ կողմից, նա հեռանում է, բայց հաղթանակի ճիչն ուժեղ է ու լսելի շրջակայքում, այնպես որ՝ շրջակայքը կամա թե ակամա պետք է պատասխանի արձագանքով:

Եվ այնպես կատարվեց, որ Տանյայի հայրը հեռացավ

ընտանիքից ու կայազորից, նրան տեղափոխեցին ուրիշ զորամաս, և այդ գործը նրա վրա էժան չնստեց, այնպես որ՝ հայրը հետագայում բոլոր հիմքերն ուներ քիթն անգամ ցույց չտալու իր բազմաչարչար ընտանիքում ու պետք է հանգիստ ապրեր իր ինչ-որ նոր կնոջ հետ, որի մասին ասում են, որ նա շատ ավելի հասարակ է, քան Պետրովնան:

Տանյան, հոր հեռանալուց հետո, նույնպես երկար չմնաց ընտանիքում, ընդամենը մի տարի, մինչև տասնյոթ տարին լրանալը, երբ նրան նկատեց գործուղված Վիկտորը՝ էլեկտրամոնտաժողը: Վիկտորը շատ ավելի մեծ էր Տանյայից ու փորձառու և իսկույն հասկացավ, թե ինչ գանձի է ինքը հանդիպել ավանի ակումբում, ի դեմս այդ հասարակ վարք ու բարքով ու զգոն աղջկա, և անմիջապես գործը վերցրեց իր փորձառու քսանչորսամյա ձեռքերի մեջ: Տանյան նույն երեկո, ակումբից վերադարձի ճանապարհին համաձայնեց մեկնել նրա հետ ու առավոտյան մեկնեց, չնայած մոր խոստավանանքին, որ ինքը մենակ չի հասցնի խնամել երեխաներին ու նրանց համար վատ կլինի: «Հերիք է,- կարծես ասաց Տանյան,- ինձ հերիք է», և պոչ խաղացրեց, եւ հետագա կյանքում երջանիկ էր իր կառչուն ու ըմբռնող Վիկտորի հետ, և ոչնչից նա չէր շվարում. և որ ապրելու տեղ չունեն, իսկ պառավ տանտիրուհին ամեն մարտ ամսում իրեն կախ է տալիս, այնպես որ՝ ամեն մարտի արձակուրդ է գալիս նրա տղան ու ժամանակ առ ժամանակ թաքցնում պարանները, և որ կա ընդամենը մեկ գդալ ու երկու պատառաքաղ, իսկ դանակն էլ գրչահատ է, որովհետև պառավը տնտեսություն չունի ու ամբողջ տարին սնվում է միայն մածնով: Ամեն ինչը, ին-

չին էլ որ հետագայում դեմ էր առնում Տանյան, նա ընդունում էր հեշտությամբ, երջանկությամբ, նա ամեն տեղ հասնում էր իր կոկիկ քայլվածքով և երբեք նրան չէր այցելում հուսահատության ու կասկածի մի նշույլ անգամ, երբեք:

# Էրոս

# ասածն

# ճանապարհով

Փոքրիկ, թմբլիկ ոչ երիտասարդ կին, հոգսերով ծանրաբեռնված, իր մարմնի, ինչպես խեցու ներսը մտած, հենց այն է, որ մտած՝ վճռականորեն ու ինքնուրույն և շատ վաղ, հենց որ աղջիկները սկսեցին մարդու գնալ, և ահա. վաղ գիրացած ոչ երիտասարդ կինը մի երեկո չէր շտապում գնալ աշխատանքից, իսկ երբ հեռացավ, ապա շարժվեց ոչ թե սովորական երթուղով, այլ Էրոս աստծո ճանապարհով, առաջին անգամ իր ծառայակցուհու տան ճանապարհով, ծառայակցուհի, որ նույնպես առանձնապես երիտասարդ չէր, բայց կատաղորեն ընդդիմանում էր տարիքին, կամ էլ նա այդպիսին էր բնույթով, միշտ ջահել, ինչպես ինքն էր ասում՝ «ես հունական վահանագեղձ ունեմ», ու՝ վերջ:

Միշտ ջահել ծառայակցուհին տոնում էր ծննդյան օրը ու չգիտես ինչու հրավիրեց այդ Պուլխերիային (ինչպես նրան անվանում էին աշխատավայրում գոգոլյան կերպարի՝ իր ամուսնուն հավատարիմ, տարեց կնոջ անունով), բայց կարող էին նրան անվանել նաև Բավկիդա՝ հավատարիմ, անխոս, քարի պես ամուր ու նվիրված կին լինելու նրա բնատուր հատկության համար, սակայն Տեր Աստվածը այլ կերպ դատեց և Պուլխերիան շատ վաղ մնաց եզակի թվով ու երկու աղջիկների հետ: Ինքը հավատարիմ էր, սակայն կյանքի համար դա քիչ էր, ինչպես պարզվեց, և հանգստյան տնից հետո ամուսնու մոտ նոր ծանոթուհի հայտնվեց. եղան զանգեր, անգամ սպառնալիքներ, որ ինչ-որ մեկը «գազ կընդունի» և այդպես շարունակ, իսկ հետո Պուլխերիան, ինչպես հայտնի է, մնաց մենակ ու բոպեական, հենց որ կրտսեր աղջիկը ամուսնացավ ու հղիացավ, նա նույնպես ասես հղիացավ սպասու-

մով, մտավ իր մեջ, թաքնվեց իր փոքրիկ թմբլիկ մարմնի մեջ, այտերի մեջ թաքցրեց աչքերը, մի ժամանակ մեծ ու լուսանկարներից դատելով գեղեցիկ (այդպիսի նկարներից մեկը Պուլխերիան մի անգամ գտավ իր շեմին, ծակծկված աչքերով, պարզ էր՝ ում գործն է), բայց ամենից առաջ Պուլխերիան թաքցրեց հոգին, երիտասարդ հանճարի, ինչպիսին որ նրան պատկերում են՝ թևերով, անմարմին, գանգուրներով, քնքշությամբ ու արցունքներով փայլող աչքերով, անմահ հոգին: Այդ ամենը Պուլխերիան արագ թաքցրեց, արագ աճեցրեց մահկանացու մարմինը, գանգուրները կախ ընկան: Բայց բարության այդ հանճարը չանհետացավ, ինչպես կտեսնենք հետագայում, ու երբեմն փայլում էր նրա մեջ ճառագման պես: Աշխատավայրում նա այնքան մեծ պատասխանատվությամբ էր վերաբերվում ճակատագրով իրեն հանձնված փոքրիկ գործին, որ բառիս բուն իմաստով հիվանդանում էր, երբ, օրինակ, նշանակեցին անհիրազեկ պետի՝ չար ու անձեռնհաս, որը դիվային չարախնդությամբ ոչնչացնում էր նախորդած ու կուտակված ամենը, վերածնեց արդեն առաքման պատրաստ ցուցահանդեսը, ստիպեց գրել նոր տեքստեր, և ահա այստեղ էլ Պուլխերիան ու նրա միշտ երիտասարդ հասակակից Օլյան իրար հետ լեզու գտան ու ընկերացան:

Մարդիկ հաճախ են միավորվում ընդհանուր դժգոհության հիման վրա, մոռանալով իրենց փոխադարձ զգացմունքները և դրանից, որպես կանոն, ոչ մի լավ բան չի ծնվում: Այդպես էր և մեր դեպքում: Չոր ու եսասեր Օլյան ատելության մոլուցքով լցվեց ղեկավարուհու հանդեպ, Օյլայի ամբողջ կյանքը գործի մեջ էր, քանի որ տանն ինչ-որ

խառնափնթորություններ կային եւ ապրում էր ծանր հիվանդ ամուսինը, դրա համար պարբերաբար այցելում էր նրան հիվանդանոցում ու տանջվում նրա հետ տանը, եւ հետո՝ նա տղա ուներ, որը վաղ ամուսնացավ և ուզում էր իրենց տուն բերել իրենից տարիքով մի ճարպիկ կնոջ: Օլյան ծառայակցուհիների աչքի առաջ մթագնվել էր, բայց հետո, այնուամենայնիվ, նա այդ զույգը բնակեցրեց նորաթուխ կնոջ նեղվածք սենյակում, դրան գումարած՝ երեխա ծնվեց, իսկ Օլյան ու ամուսինը մի ամբողջ ապարանք ունեին:

Կյանքի ծովի միջով դեպի այդ ապարանքն էլ լողում էր Պուլխերիան, նախօրոք երեկոյան բոլոր գործերը հանձնարարելով աղջկան, բայց, միաժամանակ, ցավելով, թե ինչպես նա կհասցնի այդ ամենը, մնալով փոքրիկի ու իր դաժան, բայց անբան երիտասարդ ամուսնու հետ միասին:

Այդպիսով Պուլխերիան ինքն իրեն հրեց կենցաղային ափից ու սկսեց թիավարել, որպեսզի այլևս չվերադառնա նախկին կյանքին: Ամեն ինչ տեղի ունեցավ վայրկենապես ու ամեն ինչ այնպես փոխվեց, որ արդեն հաջորդ օրը Պուլխերիան չէր հիշում ոչ իրեն, ոչ, ասելն ամոթ է, իր ընտանիքը, նա կարծես թմբիրի մեջ ընկավ, իսկ ոմանք համարում էին, որ նա թեթևակի ցնդել է, օրինակ՝ նույն Օլյան:

Եվ այսպես, տեղ հասնելով, Պուլխերիան անմիջապես իրեն կորցրեց, իր մահկանացու, թմբլիկ մարմինը խոթեց մի անկյուն ու տապ եկավ այնտեղ, հոգնած ու լցված աչքերով հետևելով, թե ինչպես է Օլյան պատրաստություն տեսնում. Օլյան այնպիսի վշտոտ-նշանակալից չէր, ինչ-

պես աշխատավայրում, այլ հասարակ ու տնային՝ ժանյակավոր, հին գոգնոցով: Օլյան շատ սիրալիր էր, նրան օգնում էին սանրվածքներով ինչ-որ ընկերուհի-կանայք, իսկ մեծ սենյակում (Պուլխերիան չնայեց, թե քանի սենյակ կար ընդհանրապես), հեռուստացույցի դիմաց ծխում էին տղամարդիկ. Պուլխերիայի համար գոյություն չուներ ազատ ժամանակ ունեցող մարդկանց այդ բարձր դասը, այդ շքեղ աշխարհը, և Պուլխերիայի մտքով անգամ չանցավ օգնություն առաջարկելը, նա պարզապես հազարից մեկ նստել-հանգստանում էր:

Պուլխերիան շատ լավ ու մի տեսակ էլ անհարմար զգալով՝ միշտ հասկանում էր մարդկանց իսկական դրդապատճառները, այս անգամ էլ նա հասկանում էր, որ Օլյան ուզում է իր շքեղությամբ վերջնականորեն ճզմել իրեն՝ Պուլխերիային, ու հետո նրա՝ ճնշվածի հետ հանդես գալ միասնական ճակատով. երեք մարդ բաժնում հարձակման գնան ղեկավարուհու դեմ, ցած բերեն նրան ու հետո գրավեն նրա տեղը:

Պուլխերիան սրտնեղած մտածում էր իր մշտական թուլամորթության ու զիջողականության մասին, որոնց պատճառով հյուր է եկել այստեղ, որտեղ ամեն ինչ իրեն խորթ է ու անհետաքրքիր, սակայն փոքրիկ Պուլխերիայի սիրտը նույնպես դժգոհությամբ լիքն էր ղեկավարուհուց, որը թքած ուներ ֆոնդերի մշակման ուղղությամբ տարված երկարամյա ու հսկայական աշխատանքի վրա և ուզում էր ամեն ինչ դնել այլ ընթացքի մեջ, անցնել ինքնածախսածածկման, այդ թվում՝ կծու մերկացումների՝ ով ում հետ է ապրել և ինչ նամակներ ու մատնություններ կան:

Ղեկավարուհուն արագ անվանակոչեցին «Շահինյա»

ու հասկացան, որ նա ուզում է ուրիշի հաշվին դոկտորական մոգոնել, հենց դրա համար է նա ամուսնու՝ կից գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի տեղակալի ուսերի վրա ներթափանցել այստեղ, իսկ նա աշխատանքի է վերցրել իրենց տնօրենի երեխաներից մեկին, նույնպես կարգին մի սրիկայի՝ նման քահանայապետի դերով դերասանի: Բոլորին ամեն ինչ հայտնի էր ու բոլորի համար ձանձրալի էր, բայց ինչ արած:

Այսպիսով, Պուլխերիան հյուրընկալության ժամանակ լուռ ու մեկուսի նստած էր, բոլորովին անջատված, հանգստանալով իր անվերջանալի հոգսերից, հագնելով հաստլիկ, լռակյաց տատիկի ու համարյա հինավուրց պառավի իր դիմակը, և դա այն դեպքում, երբ Պուլխերիան Օլյայից մեծ էր ընդամենը երկու ամսով: Սակայն նկատենք՝ ապագայի համար դա կարևոր է. Պուլխերիան իր արտաքինը համարում էր գոյություն չունեցող ու ինքն իրեն գիտեր, որ կգա պահը ու նա բոժոժից նորից կվերածվի թիթեռի: Նա կարծես ինքն իր հետ պառավություն էր խաղում այն տարիքում, երբ ուրիշները դեռ նորից ու նորից վերածնվում էին ու պահպանում իրենց կենսասիրությունը, ինքն էլ չիմանալով, որ այդտեղից իր նմանների համար այլևս ելք չկա: Օլյան ելք ուներ, իսկ նա՝ ոչ:

Այնուամենայնիվ, Պուլխերիան հեգնանքով հետևում էր Օլյայի մշտական ջահելությանը ու նրա բոլոր մարզանքները, սննդակարգերը, թենիսահարթակներն ու դահուկները համարում էր թեթև ցնորածության նշան: Պուլխերիան մակերեսորեն էր վերաբերվում ինքն իրեն, իսկ Օլյան անգամ փոքրիկ կոսմետիկական վիրահատություն էր արել ականջների հետևի մասում ու ավելի ջահելացել,

իսկ բերանում փայլփլում էր կապտավուն ճենապակին, սակայն Պուլխերիան ամաչում էր նայել Օլյային՝ բերանից վերև նրա ձգված դեմքին: Նա, ինչպես ասում են՝ նայում էր Օլյայի «բերանի մեջ», ինչը Օլյան դիտում էր որպես Պուլխերիայի խոնարհության նշան:

Օլյան ամբողջությամբ ասես ափի մեջ լիներ, իսկ Պուլխերիան հոգու մեջ կրում էր փոքրիկ, բայց ուժեղ ու հեգնական հրեշտակ-փրկչին, որն ամենքի մասին ամեն ինչ հասկանում էր և Պուլխերիան ի պատասխան երիտասարդացող Օլյայի հասցեին Կամիլայի բոլոր ծաղրական դիտողությունների՝ միայն հոգոց էր հանում: Կամիլան երրորդ ծառայակցուհին էր, գեղարվեստական միջավայրից բոհեմային տիպի երիտասարդ կին, հագին՝ միշտ սվիտեր, ջինս, մատանիներ ու ապարանջաններ: Իսկ Օլյան որոշել էր լրիվ ապավինել ստորացված Պուլխերիային ու հենց նրան իր ծննդյան օրը հյուր կանչեց տուն, իսկ Կամիլային բնազդորեն անուշադրության մատնեց, քանզի Կամիլան աշխատավայրում մարմանդ եփվում էր, կոպտում էր ղեկավարուհուն ու հենց այնպես էլ կպաշտպաներ իրերի գոյություն ունեցող վիճակի դեմ ուղղված ցանկացած կազմաքանդիչ ձեռնարկում: Կամիլան կարող էր, ի դեպ, և հյուր չգալ պառավ կանանց միջավայր, Օլյան էլ կարող էր զգուշանալ նրա իրական, չձգված երիտասարդությունից: Այնպես որ՝ մնում էր անվտանգ Պուլխերիան, իսկ Կամիլան ուրիշ երազանքներ և ուրիշ գործեր ուներ, ու սրանով հանգիստ թողնենք նրան: Կամիլան էլ հենց այնպես, փողոցից չէր գործի վերցված, նա արտասովոր հարազատներ ուներ:

Պուլխերիան մնացել էր նստած, հետո սեղանին մոտե-

նալու հրավեր ստանալով՝ բոլորի հետ պոկ եկավ տեղից, նստեց ու ճապաղվեց, հալվեց, կարծես այլևս գոյություն չուներ, վարում էր, ինչպես սովորաբար, համեստ ու մի կողմ քաշված կյանք, ինչ-որ բան էր խմում, աղցաններ ուտում, քանի դեռ չհասկացավ, որ կողքից հարցնում են, թե անունն ինչ է: Դա աջ կողմում նստած տղամարդն էր: Պուլխերիան պատասխանեց, զրույցի բռնվեցին, խոսքն այն գիտնականի մասին էր, որի արխիվով երկար տարիներ զբաղվել էր Պուլխերիան: Գիտնականն արդեն դիմակազերծված էր, տապալված, մոռացված և հիշատակվում էր միայն հումորային կամ մերկացման առիթներով, իսկ Պուլխերիան գիտեր նրա ամբողջ կյանքը, աշխարհիս հզորների հետ նրա բոլոր փոխհարաբերությունները, սիրում էր նրան, ինչպես էնտոմագետն է սիրում առանձնահատուկ տեսակը, ասենք՝ մանր բզեզի, որին ինքն է հայտնաբերել, չնայած վնասակարությանը: Դրա համար էլ նա առարկում էր այդ հարևանի, ինչպես իրեն էր թվում, քաղքենիական ոգով հարցերին և հանգիստ ու առանց ավելորդությունների մերժեց ընդունված տեսակետը: Չար ծերուկն ամուր պաշտպան ուներ՝ ի դեմս մեղմաբարո Պուլխերիայի:

Հարևանը սկսեց պսակազերծել ու տաքանալ, իսկ նա չշարունակեց խոսակցությունը, հանդուրժողաբար լռելով: Հարևանը որպես փաստարկ վկայակոչում էր հանրամատչելի ու ծեծված տեսակետներ, իսկ Պուլխերիան գիտեր շատ այլ բաներ, սակայն որպես մասնագետ՝ հարկ չէր համարում անտեղյակի հետ վիճել, այլ միայն հառաչում էր: Մի անգամ նա ուղղեց հարևանին ու սա հիացմունքով նայեց Պուլխերիային, այն աստիճան դիպուկ ու

նրբին էր նրա դիտողությունը: Պուլխերիան նույնպես առաջին անգամ նայեց իր հարևանին և ասես մշուշի միջով տեսավ կարմրավուն նիհար դեմք, սպիտակ գզգզված մազեր, առջևի մեկ ատամի բացակայություն ու բորբոքված, հաճախ թարթող, շատ բաց գույնի աչքեր: Պուլխերիան, սակայն, լրիվությամբ այն չտեսավ, այլ տեսավ մի տղայի, տեսավ վերին աշխարհներ հեռացած մի էակ, որ քողարկվել էր սպիտակ մազերով ու կարմիր գույնի մաշկով:

Հարևանը նայում էր Պուլխերիային ու մեղմորեն ժպտում: Երևում է՝ նա ընդհանրապես միշտ էր ժպտում, կան այդպիսի մարդիկ՝ որոշակի դիմախաղով, նրանք միշտ ժպտում են ու դրանում է նրանց հմայքը, սակայն այդ ժպիտը բացարձակապես ոչինչ չէր նշանակում ու շատերը սխալվում են՝ այն իրենց հաշվին ընդունելով: Սակայն հարևանը ժպտում էր Պուլխերիային որպես նրա խելքով հիացած, կլանված զրուցակից, և Պուլխերիան նույն պահին սիրեց նրան խղճալի, սրտաճմլիկ սիրով. այսպիսի արդյունք ստացվեց:

Այսինքն՝ նա ինքն էլ դեռ չգիտեր այդ մասին, այլ պարզապես կարծես թե ազատվեց, ծաղկեց, իսկ նրա հանճարը բարության փայլատակող շող արձակեց աջ կողմի հարևանի ուղղությամբ և գործն ավարտվեց: Պուլխերիան կամաց ու հառաչելով, բայց հաստատակամ ու հիմնավորված պատմեց իր ուսումնասիրությունների առարկայի մասին, այն, ինչը նա ոչ ոքի չէր պատմի, սակայն կարևոր էր խոսակցության ոչ թե առարկան, այլ՝ էությունը: Իսկ էությունը նրանում էր, որ այս երկուսը իրար գտան խնջույքի սեղանի շուրջ, որտեղ գինին հոսում էր գետի պես և

քուլա-քուլա ծուխ էր բարձրանում, իսկ տանտիրուհին դեմքի նոր մաշկը ալ կարմրած, անսովոր բարետես ու բարեհամբույր, վազում էր խոհանոցից սենյակ, բայց այդ ճանապարհին մի անգամ կանգ առավ ու կռանալով՝ Պուլխերիայի հարևանի ականջին բարձրաձայն ինչ-որ բան ասաց: Բարձրաձայն ու ականջին հիմնականում ասում են վիրավորական, կծու բաներ, նախատեսված ուրիշի ականջի ու հասցեատիրոջը խոցելու համար, սակայն Պուլխերիան ոչինչ չհասկացավ և Օլյան հեռացավ, իսկ զրույցը շարունակվում էր: Այնուհետև հարևանը ուղեկցեց գնալու պատրաստվող Պուլխերիային մինչև դուռը եւ հանկարծ շտապ-շտապ հագավ ձմեռային ճտքակոշիկները (նա չգիտես ինչու տնային հողաթափերով էր), հագնվեց ու գնաց տնից դուրս ուղեկցելու Պուլխերիային: Նրանք սառնամանիքին ոտքով քայլեցին մինչև մետրո, և Պուլխերիան չէր ամաչում ոչ իր թեթև հին վերարկուից՝ տեղ-տեղ դուրս կախված թելերով, ոչ իր մորթե գլխարկից, որ պահում է դեռ երիտասարդության տարիներից: Պուլխերիայի գանգուրներն երիզում էին նրա թմբլիկ քնքուշ դեմքը, աչքերը բացվեցին, գունատ այտերը շառագունեցին, կարճ ասած՝ նրա հանճարը, նրա պահապան-հրեշտակը վեր բարձրացավ արդեն ծերության պատրաստ մարմնի հաստության տակից:

Պուլխերիային ուղեկցեցին մինչև մետրո, հետո մինչև գնացք, հետո ուղեկցողը նրա հետ մտավ գնացք ու հասցրեց Պուլխերիային մինչև նրա տուն, մինչև մուտք, որտեղ հրաժեշտը արարողակարգային ու նրբակիրթ էր, այնպես որ՝ համբուրվեց Պուլխերիայի փոքրիկ թմբլիկ ձեռքը, ի դեպ, շատ գեղեցիկ: Խոսք անգամ չկար հեռախոսահա-

մարի մասին, Պուլխերիան անգամ չիմացավ իր սիրածի անունը և այդպես կորացած ու ամաչկոտ թաքնվեց մուտքի մթության մեջ, ոչ մի բանի մասին չմտածելով:

Սակայն հուսահատության որդը սկսեց կրծել նրան արդեն գիշերը: Պուլխերիան գիտեր իրեն ու գիտեր, որ չի հարցնի ոչ մի Օլյայի, թե ով էր իր աջի հարևանը: Աշխատավայրում Օլյան իրեն սովորականի պես էր պահում, նրա բոլոր ուժերը ծախսվեցին ղեկավարուհու հետ հերթական բախման վրա, որը նստած լինելով նույն սենյակում, որտեղ որ՝ Օլյան, խնդրեց Օլյային պահարանից իրեն տալ պետք եկած թղթապանակը: Օլյան բռնկվեց ու առաջարկեց ղեկավարուհուն ինքնուրույն քայլել մինչև պահարան, եւ սկսվեց ծվծվան զրույց ծառայողական պարտականությունների մասին:

Հարևան միջանցիկ սենյակից, որտեղ Պուլխերիան արխիվային փոշու մեջ նամակների հերթական փաթեթն էր անշտապ մշակում, նա լսում էր մրցակցուհիների զրույցը, բայց զարմանալի է՝ նա այնքան էր զբաղված Անհայտի մասին իր երազանքներով ու մտքերով, որ այդ ամենը թռավ գնաց նրա կողքով: Ճաշի ընդմիջմանն էլ, հերթում կանգնած, նա լսում էր, որ Օլյան, ամբողջովին վառվելով, իբր հումորով ինչ-որ մեկին պատմում էր այդ միջադեպի մասին, բավականին կոպիտ ուղղումներ անելով իր օգտին, սակայն Պուլխերիան դա էլ ականջի հետև գցեց: Օլյան նույնպես կարծես հեռու էր մնում Պուլխերիայից, սովորականի պես չհրավիրեց նրան միասին գնալ ճաշարան, այլ Ֆուրիայի պես սլացավ, չնայելով շուրջը: Կամ նա չէր ողջունում այն ամենն, ինչ տեղի էր ունեցել երեկ, կամ Պուլխերիայի անտարբերությունն իրեն զգացնել

տվեց, չէ՞ որ, երբեմն, Պուլխերիան դա վաղուց էր նկատել. դու մտածում ես, որ սկսել են քեզ վատ վերաբերվել, բայց իրականում այդ դու ես արդեն սկսել վատ մտածել մարդու մասին: Բոլոր մարդիկ ներսում գազաններ են մնացել ու առանց խոսքերի զգում են կատարվող ամեն ինչը, հոգեկան ոչ մի շարժում չի մնում առանց պատասխանի և մանավանդ՝ անտարբերությունը:

Անտարբեր Պուլխերիան, սակայն, իր հերթով հասնելով դրամարկղին, ի զարմանք իրեն, սկուտեղը ձեռքին շարժվեց դեպի այն սեղանը, որի մոտ արդեն բոլորովին մենակ նստած էր գազազած Օլյան: Պուլխերիան հաստատ որոշեց ոչ մի բանի մասին չհարցնել Օլյային ու հարցրեց.

- Դե, ինչպե՞ս էիք երեկ:

- Ի՞նչը երեկ:

- Ես շուտ դուրս եկա …

- Իսկ ու՞մ գործն է ամաններ լվանալը,- խայթողաբար պատասխանեց Օլյան: - Չէ, դուք տեսել եք այդ անտաշին, նա խնդրեց ինձ բացատրագիր գրել: Ո՞վ է նա: Կին, ու՝ վերջ: Չէ՞ որ նա ընդամենը այն հիմարի, մեր հիմարի ընկերոջ կինն է: Իսկ գիտես ո՞րն էր նրա թեկնածուականը: Աչկ-յաչկ և ուշկ-յուշկ վերջածանցների ձևաբանության առանձնահատկությունները: Ականջներ-ականջիկներ: Եվ դրանից հետո առանց ամաչելու աշխատելու է գալիս մեզ մոտ:

Օլյան դեռ երկար խոսում էր, որ ինքն էլ կապեր ունի դեռևս ինստիտուտի ժամանակներից, այնպիսի կապեր, Աստված իմ: Նախագահությունում՝ իր ծվծվան ձայնով ասաց Օլյան, այնպես, որ հարևան սեղանին հաստատ

լսեցին: Եվ արժե միայն զանգել: Որ նրա ամուսնուն նույնպես գնահատում ու հարգում են որպես մաթեմատիկոս ու կարևոր չէ, թե ում ամուսինը որտեղ է աշխատում և որ մեկը հիվանդ է, իսկ մյուսը ցուլի պես առողջ, բայց որպես գիտնական՝ բացարձակ ոչինչ: Կարևոր է, թե ում ինչպես են հարգում: Եվ երբ ամուսինը հիվանդ է, միայն լսեին, թե ովքեր են զանգում ու տեղեկանում, թե նա ինչպես է իրեն զգում:

- Իսկ նրան ի՞նչ է պատահել,- իր համար անսպասելի հարցրեց Պուլխերիան, որպեսզի խոսակցությունը բերի իր թեմային, Օլյայի տանը տեղի ունեցած իրադարձություններին, իր Անհայտին:

- Մի հարցրու,- պատասխանեց Օլյան:- Շիզոֆրենիա: Այ էդպես:

Պուլխերիան պետք է որ սաստիկ խղճար խեղճ Օլյային, ամբողջ հոգով, սրտացավությամբ, բայց նա մնաց բոլորովին հանգիստ:

- Ես չեմ վստահում այդ ախտորոշմանը,- ասաց Պուլխերիան:

- Նա ինձանից մեծ է բարի տասնյակ տարով, ես չգիտեի ու ամուսնացա հետը:

- Իսկ դու մի հավատա:

- Եվ վերջերս պարզվել է, որ դա արդեն վաղուց է: Անընդհատ ստամոքսը, ստամոքսը, նիհարում էր, անընդհատ վիճում էր աշխատավայրում: Իբր նրան թույլ չեն տալիս զբաղվել ուղղակի գործով: Կտրել են դոկտորականը:

- Բայց դրա մեջ աննորմալ ի՞նչ կա, - հանգիստ ասաց Պուլխերիան:- Դա սովորական բան է:

- Հիվանդանոցում նա բռունցքով այնպես էր հարվածում պատին, որ բոլորը մտածում էին՝ ցավից է, հետո սկսեցին ինձ հարցուփորձ անելը, ես ամեն ինչ պատմեցի: Ասում են՝ ինչ լավ է, որ եկել եք, նա անընդհատ կանչում էր ձեզ՝ թող գա Անյան: Անյա, պատկերացնո՞ւմ ես:

- Անյա՞,- հարցրեց հունից հանված Պուլխերիան: Նա դեռ չէր հասկանում, որ իր ամբողջ հետագա կյանքը նկարագրված էր Օլյայի այդ զրույցի մեջ: Պուլխերիան ոչինչ չէր հասկանում, բայց լսում էր ուշադիր, սրտի տրոփյունով: Օլյան ակնհայտորեն ուզում էր ինչ-որ բան հայտնել նրան, ներշնչել:

- Ասացին՝ նա անընդհատ կանչում էր ձեզ, կանչեք Անյային, կանչեք Անյային:

- Անյայի՞ն …

- Իսկ ինքը ինձնից բացի ոչ ոքի պետք չէր: Լավ է մեր բաժնի հեռախոսը նրան չեմ տվել, թե չէ նախկին աշխատավայրում օրը տաս անգամ զանգում էր: Խանդում էր: Խելագար:

- Իսկ դու՝ ի՞նչ,- բոլորովին անտեղի ասաց Պուլխերիան:

- Այ էսպես: Դեռ լավ է, որ նա անկողնում՝ փառք Աստծո, թե չէ ես պիտի կախվեի: Դու հասցրե՞լ ես ուսումնասիրել՝ ինչ տղամարդիկ էին ինձ մոտ հյուր եկել:

Պուլխերիան ոչինչ չպատասխանեց, միայն աչքերը սևեռեց Օլյայի վրա, ոչինչ չհասկանալով:

Օլյան ասաց.

- Ինչպիսի տղամարդիկ, և բոլորն իմ սիրեկաններն են, ես նրանց բոլորին հավաքել եմ կանանց հետ, կանայք նույնպես բոլորն իմ ընկերուհիներն են: Չէ՞ որ ղեկավա-

ռուհու հետ պետք է ինչ-որ բան անել:

Շշմած Պուլխերիան լռեց ու այլևս հարցեր չտվեց, Օլյան շեղվեց՝ նորից խոսելով իրադարձության մասին, իսկ Պուլխերիան քաղցրաջուր էր խմում՝ այտերում իր համար անսպասելի ջերմություն զգալով:

Օլյայի հետ զրույցի մասին մտքերը Պուլխերիային հերիք էին աշխատանքային օրվա ամբողջ երկրորդ կեսի համար. Պուլխերիան պիտի ազնվորեն խոստովաներ, որ կա կյանքի ինչ-որ մի ասպարեզ, բոլորովին անհասկանալի, սակայն հենց այնտեղ՝ շեմին կարող են լինել ծակծկված աչքերով լուսանկարները: Այդ մտորումները Պուլխերիայի մոտ առաջ բերեցին ահավոր թախծի մեկը մյուսին հետևող ալիքներ: Արտաքնապես դա դրսևորվում էր նրանում, որ Պուլխերիան խորացել էր մի հին ու փոշոտ նամակի ընթերցանության մեջ:

Նույն երեկոյան, ծանր պայուսակներով աշխատանքից վերադառնալով, Պուլխերիան մուտքի մոտ մթնշաղի մեջ տեսավ սպիտակ գլխով պատկերը: Կարծես այդպես էլ պիտի լիներ, նրա առջև հայտնվեց այն, ինչին նա կարոտում էր ամբողջ վերջին օրը ու հիմա Պուլխերիայի հոգին հանգստացավ: Նա հյուրին տարավ իր բնակարան, որտեղ խոհանոցում չորանում էին խանձարուրները, մեծ սենյակում՝ երիտասարդների մոտ լռություն էր, կամ նրանք զբոսնում էին երեխայի հետ, կամ բոլոր երեքն էլ քնել էին անքուն գիշերվանից առաջ. երեխան հաճախ լաց էր լինում առավոտյան երեքի ու հինգի միջև: Պուլխերիան հյուրին տարավ իր փոքրիկ սենյակը, որտեղ մաքուր էր ու հասարակ, փոքրիկ բազմոց (Պուլխերիան ամեն ինչին նայում էր նոր աչքերով, ասես՝ կողքից), դեռ

տատիկից մնացած կլոր սեղան, բազկաթոռ՝ հնոտիք, սակայն հնամենի հնոտիք, այդ թվում՝ երկու փոքրիկ գրապահարան ու դրանց մեջ՝ հին գրքեր: Հյուրն անմիջապես սկսեց քրքրել գրքերը, Պուլխերիան խոհանոցից բերեց թեյ ու տապակած կարտոֆիլ, կերան լռության մեջ, որովհետև հյուրն ամբողջությամբ ընկղմվեց գրքի մեջ, հետո նա ասաց, որ իր գնալու ժամանակն է ու գնաց: Պուլխերիան այդ նեղվածք տարածության մեջ նրան ձեռքով անգամ չդիպչելով, նրա գնալուց հետո վերցրեց այն գիրքը, որը նա կարդում էր ու սեղմեց կրծքին՝ փակելով աչքերը: Այսպես նա նստեց ուժասպառ հուսալքման մեջ, մինչև աստիճանների վրա դղրդյուն սկսվելը՝ երիտասարդներն էին մանկասայլակը քարշ տալով, աղմուկով ներխուժել բնակարան. նրանք սկսեցին բարձր խոսել, վազեցին, դեսուդեն ընկան, լոգասենյակից լսվեց հոսող ջրի ձայնը, երեխան բղավեց, իսկ Պուլխերիան նստած էր՝ ուժ չունենալով դուրս գալ իր սենյակից ու մտածեց, որ լավ էր, որ նրանք տանը չէին, և խորհում էր, թե այդ ինչ է կատարվում իր հետ:

Հիմա ամեն երեկո նա շորորալով գնում էր տուն, աշխատավայրում նստում էր՝ ասես երազում լիներ և երազի մեջ էր նաև տանը, կատարում էր նույն բաները, այսինքն՝ լվանում էր, հավաքում, ճաշ էր պատրաստում, վազում էր խանութներ, բայց այդ ամենը՝ լրիվ անջատված վիճակում, որովհետև յուրաքանչյուր երեկո գալիս էր Նա, մեկ մի ժամով, մեկ տասնհինգ րոպեով, նստում էր, ինչ-որ բան էր ասում, ամեն անգամ բերում էր միևնույն «կարտոշկա» թխվածքաբլիթները, նրանք ուտում էին, թեյ խմում, երբեմն նա բարձրաձայն կարդում էր նրա համար, երբեմն

տետրում բանաձևերի տեսքով թվեր էր գրում, հետո անհետանում: Պուլխերիան խիստ նիհարել էր, բոլոր շորերը հագից ընկնում էին, նա գրեթե ոչինչ չէր ուտում, աշխատում էր գործից ծլկել ինչքան հնարավոր է արագ ու աննկատ: Մեծ դեր էր խաղում այն, որ Պուլխերիան ապրում էր աշխատավայրից համեմատաբար ոչ հեռու, նա կարծես հսկայական նշանակություն էր տալիս նրան, որ հատկապես նշանակված ժամին ու  րոպեին նա պիտի հայտնվի, և այդ ժամը բաց թողնել չի կարելի: Ջահելները շատ արագ սովորեցին հյուրին, նրանից չէին ամաչում, չնայած չէին էլ խոսում նրա հետ, միայն բարևում էին ու հրաժեշտ տալիս, եթե նա պատահում էր նրանց իր նպատակասլաց ճանապարհին, իսկ նրա տեսքը հենց նպատակասլաց էր, այնպիսին, ինչպիսին Պուլխերիայինն էր, երբ նա շտապում էր տուն:

Աշխատավայրում Պուլխերիան շատ էր աշխատում, գրեթե չբարձրացնելով գլուխը, և Օլյան արագ սառեց նրա հանդեպ, մանավանդ, որ նա իբր հանկարծակի հավաքեց ուժերը (անդրկուլիսյան բանակցությունների ինչ-որ արդյունքներ), անսպասելի միավորվեց  ղեկավարուհու հետ, եւ նրանք երկուսով սկսեցին աշխատանքից  դուրս քշել երիտասարդ Կամիլային, որն իսկապես և ուշանում էր, և հաճախ բյուլետեն էր վերցնում, և կոպտում էր նրան, չնայած աշխատանքը առաջ էր գնում, նա գրում էր հոդվածը ու բավականին՝ հաջողված: Սակայն ամեն ինչ լուծում ստացավ այն ժամանակ, երբ պարզվեց, որ Կամիլան իրավունք չունի աշխատանքից դուրս գալու՝ նա երեխայի էր սպասում, ամուսինը մեքենայով բերում էր նրան ու ժամանակից շուտ տանում: Արդյունքն այն էր, որ ղեկավա-

ռուհին ու Օլյան սկսել էին դեռ Կամիլայի առկայության ժամանակ ակտիվորեն նրան փոխարինող փնտրել հենց նրա ներկայությամբ, և Կամիլան կոպտում էր նրանց ավելի բուռն կերպով, բայց փքվում էր ու մեծանում աչքի առաջ և արդեն դժվարությամբ էր քարշ տալիս ոտքերը: Նրանց անընդհատ ինչ-որ մեկը պետք էր պայքարի համար ու լավ էր, որ դա Կամիլան էր, սակայն Պուլխերիան զգում էր, որ իր ժամն էլ հեռու չէ: Ինստիտուտով լուր անցավ, որ Պուլխերիայի գլուխն իր տեղում չէ. Պուլխերիան ակնհայտորեն ուշացնում էր տարեկան մամլածավալի հանձնումը, ճաշի չէր գնում, այլ վազում էր խանութներով: Ոչ ոք չգիտեր, որ նրա ամբողջ ժամանակը զբաղեցնում է Նա, ամեն երեկո նրա մոտ էր գալիս նրա Քարե հյուրը ու անձայն նստում քարի պես, և նա հո չէր կարող նրա ներկայությամբ գրել իր աշխատանքը: Նա դա անում էր գիշերները, իսկ առավոտյան քարշ էր գալիս աշխատանքի, ոչինչ չհասցնելով ու այնտեղ մնում էր նստած եւ խզմզում իր քարտերի վրա, իր զբաղմունքի մեջ իմաստ չտեսնելով:

Հարցի լուծումն եղավ այն, որ երկու ամիս տևած այդպիսի կյանքից հետո նրա հյուրը կորավ: Ապրելով երեք ահավոր օրեր, Պուլխերիան նորից գնաց ճաշելու ինստիտուտի ճաշարան ու նստեց այն սեղանի մոտ, որի շուրջ նստած էին ղեկավարուհին ու Օլյան: Սրանք նրան դիմավորեցին սրտաբաց, խորհուրդ տվեցին դիմել լավ բժշկի (Օլյան անգամ առաջարկեց դասավորել կոնսուլտացիան), ղեկավարուհին գովեց Պուլխերիայի հոդվածը, վերջապես հանձնված, Օլյան գնահատեց Պուլխերիայի կազմվածքը («դու ինչ-որ սննդակարգ ունե՞ս, ինչ է»), և

հետո նրանք շարունակեցին զրույցը, որից Պուլխերիան կարկամեց.

- Ուրեմն, վաղն առավոտից ես չեմ գալու,- նշանակալիոեն ասաց Օլյան:

- Ինչպես կասես, ձերդ քնքշություն,- կատակելով ասաց ղեկավարուհին:- Կարող ես վստահ լինել:

- Պառկեցրել եմ անհանգիստ բաժանմունքում,- ասաց Օլյան:- Դա կատաղիների բաժանմունքն է: Այնտեղ նրան հեշտությամբ կարող են սպանել: Հենց նույն սանիտարները: Պետք է նրան երկրորդը տեղափոխել, ինչպես սովորաբար: Այնտեղ նրան ճանաչում են, այնտեղ նրան սիրում են: Թե չէ այդ մոլագարների մոտ նրան լրիվ կծակծկեն, կգա ընդհանրապես կամ շաշված կամ իմպոտենտ դարձած: Ղեկավարուհին այդ ընթացքում շրթունքները դասավորեց ինչպես համբուրելու ժամանակ, ու ցավակցաբար շմփացրեց շրթունքները.

- Կատաղիների մոտ, այո, կանեն:

- Շատ հասարակ,- ասաց Օլյան:- Երբ ես հոգեկաններին տեղափոխող մեքենա կանչեցի, նա սկսեց աղմուկ բարձրացնել, չէր գնում, իսկ դա կապ ունի: Փողոցում բարձրաձայն կանչում էր «օգնեցեք» ու փորձում դուրս պրծնել: Սանիտարները ուղղակի տարան կատաղիների մոտ:

- Էդ ո՞վ է,- հարցրեց Պուլխերիան:

- Իմը,- պատասխանեց Օլյան: Նրա այտերը ալ կարմիր էին:- Եվ ինչ էր գոռում՝ որ ես նրա թշնամին եմ. բան մտածեց: Տիպիկ զառանցանք: Ուզում էր պատուհանից իրեն գցել, գլխով ջարդեց ապակին, կտրելով իրեն վիրավորեց, ամեն ինչ արնաթաթախ եղավ, էն անպետք կա-

տուն էլ եկավ, ես պահում եմ նրան, ինչպես Իվան Ահեղը, իսկ նա լպստում է հատակից… Ավելով դուրս վռնդեցի, մի կուշտ մարդկային արյուն լպստեց, ասես մարդակեր լիներ:

- Իսկ ինչի՞ց է դա սկսել,- կարեկցաբար հարցրեց Պուլխերիան: Նրա սիրտը ուժեղ բաբախում էր:

- Նորից սկսել էր տնից ամբողջ օրով, անգամ երկու օրով բացակայել, վերադառնում էր քրքրված… Սոված, կեղտոտ…

«Ստում է»,- տենդորեն մտածեց Պուլխերիան:

- Էլ ի՞նչ. դե ոնց է լինում դա նրանց մոտ. ոչ ոքի հետ չէր խոսում, չէր քնում, մարդախույս դառավ… Աշխատանքի, փառք Աստծո, նա ընդհանրապես շաբաթը մի անգամ է գնում… Տարվա մեջ մի հոդված է գրում, նրանք էլ ուրախ են… Մեկ հոդված, իսկ նրանք այդ հոդվածից հետո դիսերտացիաներ են պաշտպանում… Իսկ նա մինչև հիմա թեկնածու է… Իհարկե, նա հանճար է: Տնայնագործ: Ուշադրություն դարձրեք վարքագծի տարօրինակություններին. նրանք պատասխանում են՝ տնօրեն, շնորհակալություն, նրան հանգիստ է պետք… Իսկ նա նույն պահին պատուհանից գլխով շպրտվում է ապակիների վրա… Միայն ես, միայն ես գիտեմ… Նրան էլի ինչ-որ տզրուկներ են կպել:

- Բայց դու մտածիր,- վրա բերեց ղեկավարուհին:

- Չի աշխատել, ոչ մի բանաձև, ես նայել եմ, սովորաբար նա տուփերով թղթեր է խզբզում …

Պուլխերիան հիշեց, որ Նա երբեմն ինչ-որ բաներ էր գրում տետրի մեջ: «Նորից ստում է»,- մտածեց նա:

Օլյան այտերից սրբում էր առատ արցունքները՝ ոչ ոքի

վրա ուշադրություն չդարձնելով:

Պուլխերիան հիմա ամեն ինչ գիտեր, մնում էր պարզել, թե որ հիվանդանոցում է նա պառկած:

Ամեն ինչ անմիջապես մի տեսակ իր տեղն ընկավ, մեկը մյուսին կպան: Պուլխերիայի մեջ կրակը վառվում էր ստամոքսից քիչ բարձր, ասես լամպիկ են վառել ու հենց այն տեղում, որտեղ սովորաբար ցավ է առաջանում, երբ մարդ ընկնում է կամ տեսնում ուրիշի վերքը:

- Ոչինչ, կանցնի,- ասաց նա:- Իմ եղբայրը պառկած էր Կաշչենկոյում, ոչինչ բաց թողեցին:

- Մենք Կաշչենկոյում չենք պառկել,- մտազբաղ պատասխանեց Օլյան:- Մենք պառկել ենք մերում, այնտեղ նրան գիտեն առաջին օրվանից, այդ Անյայից սկսած: Քիչ էր մնում պատից աղյուս դուրս պրծներ, այնպես էր նա բռունցքով խփում պատին:

- Ոչինչ, դուրս կգա ու նորից ամեն ինչ իր տեղում կլինի,- ասաց ղեկավարուհին:

- Բայց ինչքան պիտի բաժին ընկնի մի մարդուն,- բացականչեց Օլյան:- Ինչքան կարելի է: Այն աղջիկը որդուս ուղարկում է բնակարանը փոխանակելու: Որդուս լիազորել է դատարան դիմելու: Նրան պարզ լեզվով ասում ենք. կինդ կստանա այն բնակարանը, որը մենք քեզ կտանք, ինքներս կմնանք կոտրած տաշտակի առաջ, հոգեկան հիվանդ հոր հետ, եւ նա քեզ անմիջապես դուրս կվռնդի: Որդուդ տուր բնակարանդ ու չեն լինի ոչ որդիդ, ոչ բնակարանը:

Այնուհետև շարունակվեց նրա՝ իր հսկայական բնակարանում մենակ, բոլորին դես ու դեն շպրտած, անսանձելի, կրքոտ ու անհաղթելի մարդու ասելիքը:

Պուլխերիան քարացած նստել էր այդ սեղանի դատարկ ու կեղտոտ ափսեների հարեւանությամբ:

- Գլխավորը,- շարունակեց Օլյան,- միշտ գտնվում են կանայք, որոնք ընկնում են նրա թակարդը: Մշտապես այցելում են նրան հիվանդանոցում, կաղամբով տնական կարկանդակներ են բերում նրա համար, փոխանցում են արգանակներ, սատանայի ծոցը: Ես դայակին ասում եմ. ոչ մեկի փոխանցումները, իմից բացի, չվերցնեք, ով գիտի՝ ինչ կարող են խառնել արգանակի մեջ: Որպեսզի չանհանգստացնեն նրան, նեղություն չտան: Փառք Աստծո, հիմա հիվանդանոցներում կարանտին է, ընդհանրապես ոչ ոքի ներս չեն թողնում գրիպի պատճառով: Այնպես միայն, փոխանցումներ են ընդունում ու նամակներ: Չէ՞ որ նա այնտեղ է, որտեղ նրան պահում են, նա ոչինչ չի ուտում:

- Ինչպես իմ եղբորը,- մտածկոտ ասաց Պուլխերիան:- Բայց նրան բռնել են որպես այլախոհի, նա հացադուլ հայտարարեց: Կերակրել են զոնդի միջոցով:

- Դե չգիտեմ,- վրդովված ասաց Օլյան,- ինչի միջոցով են նրան այնտեղ կերակրում: Բժիշկն ասել է, որ հոգեկան հիվանդների մոտ դա ինքնաբուժման այդպիսի ձև է, էդ հացադուլը: Ու պետք չէ խառնվել օրգանիզմի գործերին: Սակայն հատկապես կատաղիների մոտի հացադուլը սարսափելի է: Նրանք այնտեղ ձներ չեն թափում, անմիջապես միացնում են էլեկտրաշոկը: Ինչպես անց են կացնում էլեկտրական աթոռով, միայն թե էլեկտրական աթոռը մեկ անգամ են կիրառում, իսկ այստեղ կրկնվում է:

Պուլխերիան կենտրոնացրել էր բոլոր ուժերը, նա հասկանում էր, որ Օլյան փորձում է նրան, որ նա հետևում է

իրեն, ինչպես փորձակենդանու:

Դրանով ճաշը վերջացավ, Պուլխերիան վերադարձավ միջանցիկ սենյակի իր սեղանի շուրջը. հիմա, ինչքան էլ տարօրինակ է, ավարտվեցին վերջին երեք օրվա ընթացքում նրա կրած տառապանքները, օրեր, որ նա անց էր կացրել առանց քնի: Հիմա սկսվեցին միայն նրա իսկական տառապանքները, նրա կյանքը այնտեղ՝ բանտում, նրա մենակությունը կատաղած գազանների ամբոխի մեջ: Լքված կնոջ տառապանքները վերածվեցին հարկադրաբար բաժանված կնոջ տառապանքների, իսկ դրանք տարբեր բաներ են, ինչպես տարբեր են այրու վիշտն ու լքվածի վիշտը, մտածեց Պուլխերիան՝ ինքն իրեն հետևելով: Տենդը, որ նրան ծանոթ զգացմունք էր դեռ ծակծկված լուսանկարների ժամանակներից, թողեց նրան: Պուլխերիան անգամ որոշակի հաղթանակի զգացումով մտածեց լքված Օլյայի՝ հաղթանակողի մասին, որ ոչ ոքի պետք չէր:

- Ու եթե չլինեին իմ սիրեկանները, ես ընդհանրապես կկախվեի,- ասաց Օլյան, վերջինը մտնելով բաժին:

- Հա, էլ մի ասա,- սենյակից արձագանքեց ղեկավարուհի Շահինյան:- Չեղած տեղը ցանկացածն էլ լավ է:

- Ոչ, ես դրանից զզվում եմ, իմ մարդիկ նվիրված են, ընտանեկան, ես ծննդյան օրերին բոլորին հավաքում եմ ու բոլորի վրա նայում:

Այսպես ասաց Օլյան՝ ոտքը կախ գցելով Պուլխերիայի աթոռի մոտ:

Այդպես նա փորձում էր նվազեցնել Պուլխերիայի հաղթանակը, և Պուլխերիան ամեն ինչ հասկացավ ու մնաց հանգիստ:

Նա մտածում էր: Թախիծը դեռ լիովին չէր համակել նրան, գլուխը չէր կորցրել: Պուլխերիան հանգստանում էր մահացու սարսափից հետո, և սիրո ու նվիրվածության ալիքները տարուբերում էին նրան այդ կեղտոտ հատակի, աթոռի, սեղանի վրայով, գլուխը պտտվում էր, Պուլխերիան փոշոտ նամակների վրա կարծես ինչ-որ բան էր շշնջում իր սիրո մասին, ջանում էր ամբողջ ուժերով Նրան աջակցություն հղել:

Երբևէ Նրա տառապանքները պիտի որ վերջ ունենան, պետք է լինելու Նրան օգնել, պետք է լինելու գործել ծայրահեղ զգուշությամբ, լուր ուղարկել. պետք է լինելու ապրել ամեն ինչ հաշվարկելով, մինչև վերջնական հաղթանակ, մինչև ազատագրում, մինչև ազատություն, չնայած Պուլխերիային նրա եղբայր-այլախոհի փորձը հուշում էր, որ ամեն ինչ ամենևին էլ հեշտ չէ ու կատաղի ճիգով մարդուն ազատագրելը դեռևս ամեն ինչ չէ: Եվ բանը ձևականությունների, մարդու իրավունքների կոպիտ խախտումների մեջ չէ, որոնք կարելի է հեշտությամբ վերականգնել: Մարդուն իր տեղից տեղահան անելը, անգամ այդպիսի տեղից, դա մեծ հանդգնություն է, առայժմ հանգիստ, ինչպես շախմատիստը պարտիայի սկզբում, մտածում էր Պուլխերիան: Չի կարելի մարդուն կպնել, չի կարելի, նա ամեն ինչ պետք է ինքը անի: Բոլոր նրանք, ովքեր մինչև հիմա նրան ազատել են, կարկանդակների ու արգանակների բոլոր այդ փոխանցողները, անցան ստվերի տակ, անհետացան, իսկ Պուլխերիան գիտեր, որ պիտի մնա նրա կյանքում, մնա որպես հավատարիմ, նվիրված, հնազանդ, խղճուկ ու թույլ ոչ երիտասարդ կին՝ Բավկիդա:

Պուլխերիան մի վայրկյանում վերածվեց զորավարի,

որը գիտի նահանջի, ստվերում պահվելու, լռության ուժը: Պետք է լինելու սպասել: Նա կվերադառնա, մտածում էր Պուլխերիան: Նա ինքը կկոտրի այդ շղթաները: Նա ուժեղ է: Ու շատ մեծ է անօրինությունը, նրան կօգնեն: Նրան կօգնի որդին: Հաղթանակը կգա, սակայն առանց ինձ: Ախ, սարսափելի է, սարսափելի, մտածեց Պուլխերիան, նրան չտեսնելը, ոչինչ չիմանալը:

- Դու չե՞ս ուզում ինձ հետ հիվանդանոց գնալ,- կողքից մոտեցավ Օլյան:- Հիշու՞մ ես, դու սեղանի շուրջ նստած էիր նրա հետ, դուք այնքան մտերմիկ զրուցում էիք, ուղղակի բոլորի մասին մոռանալով:

- Դա քո ամուսի՞նն էր,- հանգիստ ձայնով հարցրեց Պուլխերիան:

- Ի՞նչ ես ասում: Չէ՞ որ նա քեզ տուն է ուղեկցել, ես եմ նրան խնդրել, հիշու՞մ ես: Թեյից առաջ:

- Նա ուղեկցեց մինչև ավտոբուս,- ասաց Պուլխերիան,- բայց ես որտեղի՞ց իմանայի, որ նա հիվանդ է: Եղբորիցս հետո ես նրանցից վախենում եմ, ես եղբորս էլ Ամերիկա ուշ-ուշ եմ գրում:

- Հետաքրքիր է,- ասաց Օլյան ու ամբողջությամբ մի տեսակ մշուշոտ դարձավ, ձգվեց, նրա հայացքը ուղղվեց հեռուն, դեմ առնելով Պուլխերիայի սեղանի վերևի կեղտոտ պաստառներին:- Հետաքրքիր է, ինչ քաղաքներ են լինում, գայթակղում են հիվանդ մարդուն:

- Ես չեմ գայթակղել,- սառը պատասխանեց Պուլխերիան,- նա ինքը եկավ ինձ ուղեկցելու: Ընդամենը հինգ րոպե քայլեցինք, ավտոբուսն իսկույն եկավ, ես անգամ չէի կասկածում, որ նա հիվանդ է:

- Դե, գնանք ինձ հետ, Լիդոչկան մեզ բաց կթողնի: Մե-

նակ վախենում եմ:

- Ներիր ինձ, բայց թոռնիկս …

- Մենք աշխատանքային ժամին կգնանք:

- Ներիր, ես անհարմար եմ զգում, ո՞վ եմ ես:

- Դե նա օտար մարդու մոտ ինձ վրա քիչ է գոռալու,- ասաց Օլյան:

- Վույ, ես վախենում եմ,- պատասխանեց Պուլխերիան ու դարակից հանեց նամակների հերթական փաթեթը:

- Լսիր,- մի տեսակ դանդաղ ասաց Օլյան:- Դու չե՞ս տեսել, թե նա հետո որ կողմն է գնացել:

- Որտեղի՞ց իմանամ, ես չեմ նայել: Եվ հետո՝ ավտոբուսում ապակիները սառած էին: Ինչու՞ պիտի ստուգեի, ինչիս է պետք:

- Այս ամբողջ ժամանակ նա ինչ-որ մեկի հետ ապրում էր: Անձամբ ինձ հետ նա չէր քնում,- նույն մտածկոտությամբ ասաց Օլյան:

- Դե,- բավականին սառը պատասխանեց Պուլխերիան,- դա ինձնից կախված չէ: Նա ինձ այնպիսի բաներ ասաց պապիկի մասին,- Պուլխերիան մատնացույց արեց ապակու տակ դրված իր ուսումնասիրությունների օբյեկտը, ոչ այն է Վորոշիլովի, ոչ այն է Հիտլերի տեսքով, քթի տակի մազափնջով ու պենսնեով, ինչպես Բերիայինն էր, այդպես էր ընդունված այն դարաշրջանի ղեկավարների մոտ:- Նա ասաց, որ ես ընդհանրապես իզուր եմ աշխատում, մեջքս կորացնում:

- Այդ մեկը նա կարող է՝ վիրավորել, ստորացնել, նվաստացնել,- ասաց Օլյան:- Դա նրա բնավորության հիմնական գիծն է: Նա ինքը հանճար է, իսկ բոլոր մնացածները շան լակոտներ: Այն բնակարանը, որտեղ ապրում է հանճարը, ամեն ինչ իրեն է պատկանում, բայց՝ ոչ: Չէ՞ մի: Այդ

նրանից է դուրս եկել բնակարանը փոխանակելու գաղափարը, իսկ այն տվել են մեզ երկուսիս: Որդիս ինքն է ասել ինձ, որ նա ուզում էր որդուն երկու սենյականոց տալ, իսկ ինձ, որպես անիվի վերջին շառավղի՝ տակը ի՞նչ կմնա: Բայց չեղավ: Նա հոգեկան հիվանդ է ու ընդհանրապես անգործունակ: Իսկ ինչպես էր գոռում-բղավում որդիս: Ժառանգականություն է, նրան պետք է բժշկի տանել: Իբր հայրը ամեն ինչ նրա վրա է գրել, բնակարանի փոխանակման բոլոր փաստաթղթերը: Իսկ ես հորս վրա խնամակալություն եմ ձևակերպում, նա աննորմալ է ու անգործունակ: Ու վերջ, բնակարանը նրանն է: Դե, ոչ թե նրանը, այլ էն մեկինը: (Նա էլի խոսք ավելացրեց):

Անսպասելիորեն Պուլխերիան կարմրեց, բայց նա նստած կարդում էր, եւ նույնչափ կարմրած Օլյան կանգնած էր ու չէր տեսնում նրա դեմքը, ուշադիր չէր նայում, նա ասես թռչում էր, նա անիծում էր, սպառնում, գրողի ծոցն էր ուղարկում, և ամեն ինչ իզուր:

- Իսկ դու հետդ վերցրու Շահինյային,- ասաց Պուլխերիան:

- Դե լավ, լավ, ինձ ոչ ոք պետք չէ, առաջին անգա՞մն է, ինչ է,- շնչակտուր ասաց Օլյան ու հեռացավ իր մոտ:

Օլյայի ստուգումը պատվով անցած Պուլխերիան առանց պատուհանի նեղվածք սենյակում շարունակում էր տքնել իր փոշոտ թղթերի վրա, մոտենում էր մարտը և Պուլխերիան աշխատում էր մեծ թախիծը սրտում: Նա գիտեր, որ հիմա պետք է հույսը դնել միայն ճակատագրի վրա, արիանալ ու համբերատար սպասել, ծպտվելով…

Նախ, Օլյային վախեցնելը մի բան չարժեր: Ճշմարտությունն իմանալով՝ նա ընդունակ էր հրկիզել Պուլխերիայի բնակարանը, սպանել ամուսնուն ինչ-որ հեշտ ճանա-

պարհով - կատաղիների բաժանմունքի սանիտարները նույնպես մարդիկ են, ինչ էլ լինի, այնտեղ կգտնվեն հանցագործներ ու կաշառակերներ:

Երկրորդ. Նա՝ Քարե հյուրը, կարող էր մոռանալ իր Բավկիդային, իր Պուլխերիային, քանի որ սերը խաղ է, ոչինչ ավելի, այն վախենում է փոխադարձությունից, կապվածությունից, նվիրվածությունից, վախենում է պարտքերը տալուց և սիրում է հանելուկն ու սին ճանապարհները:

Հյուրը գնահատում էր թերասածությունը, հանկարծակիությունը, ազատությունը ու հարձակվում էր միայն անկյունից:

Հնարավոր է՝ ստեղծված հանգամանքներում արդեն խաղի հավես չուներ: Հնարավոր է՝ նա մեղադրում էր Պուլխերիային, անիծում այդ անհեթեթ թմբլիկ պառավին:

Եվ Պուլխերիան անցավ հատակ ու միակ բանը, որ նրա հետ կատարվեց, դա այն է, որ նա թպրտաց ու կամաց տեղափոխվեց ուրիշ բաժին և այդ ճանապարհի վրա նիհարեց, երեսը փոս ընկավ, եւ ամեն օր վերադառնալով տուն՝ քիչ էր մնում կորցներ գիտակցությունը:

Միայն հունիսի վերջին Պուլխերիան, գրադարանից ուշ ժամի տուն վերադառնալով, մուտքի մոտ նստարանի վրա տեսավ ծանոթ պատկերը՝ նստած ազատ դիրքով՝ ոտքը ոտքի վրա, մոխրագույն հագած, սպիտակ մազերով պատկերը:

Հյուրը դանդաղ վեր կացավ, նրա առաջ բացեց դուռը, Պուլխերիան անցավ խայտառակաբար սայթաքելով, նա արմունկից բռնելով, ինչպես մեծարգո կնոջ, նեցուկ եղավ նրան ու տարավ դեպի վերելակ:

# Սիրելի կինը

Պատմությունն այդ բավականին լալագին էր, ինչպես պատմության գործող անձանց կազմի տեսանկյունից, այնպես էլ այն տեսանկյունից, թե որքան ծամծմված էր, ու այստեղից էլ կարող է տարօրինակ թվալ, թե ինչու այն, այնուամենայնիվ, կրկնվեց եւ այն էլ ճիշտ ու ճիշտ նույն կերպ՝ սկսած ծիծաղելի թակարդային, ոչ մի կասկած չհարուցող սկզբից ու վերջացրած ավարտով, որտեղ ամեն ինչ կարծես թե նախօրոք կանխատեսված էր՝ և հուսահատ հայացքները, և իբր անմեղ ձեռքսեղմումները, միայն այն առանձնահատկությամբ, որ վերջին հուսաբեկ հայացքն ուղղեց ոչ մեկ ուրիշը, այլ վաքսուն և ավելի տարեկան տղամարդը, և ուղղեց այն տաքսու պատուհանից, լայն ժպտալով ու մնացողների հասցեին ձեռքով անելով, իսկ մնացողների մեջ երիտասարդ կին կար՝ քսանից քիչ անց տարիքի, եւ ներքևի ինչ-որ տեղից, արդեն փակված ու մեկնման պատրաստ մեքենայի նստելատեղից հենց նրան էր ուղղված հուսահատ, լայնաբաց ժպիտը:

Այսպիսով մեր պատմության երկու հերոսներն էլ արդեն արտաքնապես գծագրված են և այդքանը բավական է, քանի որ ոչինչ այս պատմության մեջ այն դերը չի ունեցել, ինչքան տարիքային տարբերությունը, մանավանդ, որ մնացած բոլոր հոդվածներով նրանք մեկը մյուսին համապատասխանում էին լիովին և այլ հանգամանքներում, տարիքային ուրիշ հարաբերակցություններում նրանց մոտ կձևավորվեր դասական սիրավեպ մի շարք գործող անձանց մասնակցությամբ՝ նրա ամուսնու, օրինակ, կամ մեր հերոսի ոչ երիտասարդ կնոջ, և հնարավոր է՝ կստացվեր ողբերգություն կամ էլի ինչ-որ բան:

Սակայն, ինչպես ընդունված է ասել, կինը որոշակի

ժամանակով ուշացած է ծնվել, այսինքն՝ Երկիրն ու աստղերը պտտվել են անուղղելի բյուր անգամներ, մինչև որ նա հարկ է համարել լույս աշխարհ գալ, իսկ տղամարդն արդեն վաղուց այստեղ էր: Ուրիշ ոչ մի, ոչ մի ուրիշ պատճառներով, բացի Երկրի ու աստղերի այդ մի քանի պտույտներից հնարավոր չէ բացատրել, թե ինչու էր նա այդպես հուսաբեկ լայնաբաց ժպտում, նստած լինելով տաքսիում ու պատրաստվելով հեռանալ ընդմիշտ, կրկնելով, թե ինչի է պետք այդպես հրաժեշտ տալ, եթե նա վաղը չէ մյուս օրը նորից կլինի այստեղ, կվերադառնա, նա այստեղ՝ ամառանոցատանը տարբեր գործեր ունի:

Սակայն, հնարավոր է, որ տղամարդն էլ ուներ իր լավատեսական ծրագրերը և ինչ-որ բան էր չափում ու հաշվում, ապագայի համար ժամանակ էր գտնում, որպեսզի շարունակեր այդ անառարկայական զրույցներն իր ընտրյալի հետ, իր սիրելի կնոջ հետ, որն հիմա մնում էր ամառանոցատանը փոքրիկ երեխայի հետ մի շաբաթ ապրելու, եւ մի քանի անգամ գլխով արեց շուտով վերադառնալու մասին նրա խոսքերին ի պատասխան, գլխով արեց անհոգ վստահությամբ, որ հենց այդպես էլ լինելու է:

Հնարավոր է, որ տղամարդն էլ վստահ էր դրանում, երբ մեկնում էր մեքենայի մեջ փակված, ու հնարավոր է, որ նրա այդ վերադարձին խանգարեցին ոչ թե վերամբարձ մտքերն այն մասին, որ Երկիրն ու աստղերը ապարդյուն պտտվում էին այն ժամանակներում, երբ նա ապրում էր առանց նրա, առանց իր սիրելի կնոջ, քանի որ նա անգամ գոյություն չուներ Երկրի վրա, և ոչ թե այն դատողությունները, որ հիմա բոլոր խաղաքարտերը իրար են խառնված Երկրի վրա նրա չափազանց ուշացած, ավելորդ տեղը ուշ

հայտնվելով: Հնարավոր է, որ նա այդ մատերիաների մասին անգամ չգիտեր ու մտածում էր միայն իր խճճված գործերի մասին, որոնք իրեն էին սպասում քաղաքում, որտեղ սկսվում էր դաժան, ամենօրյա կյանքը, տարբեր՝ ամառանոցատան անհոգ օրերից, արևի լույսի տակ այդ բոլոր զրույցներից ու գիշերային մշուշի միջով զբոսանքներից: Ու շատ հնարավոր է, որ քաղաքային գործերը լրիվ կլանել էին նրան, երբ նա ամառանոցատնային քաղցր օդից հետո ընկղմվեց քաղաքային մթնոլորտ, նստած հին տաքսու հետևի նստելատեղին:

Բայց կարող էլ լինել և այնպես, որ վերամբարձ մտքերը թափվեցին նրա վրա, հենց որ նա նստեց, ընկղմվեց տաքսու ցածր նստելատեղը և այնտեղից, ներքևից, ծածկի տակից սկսեց ձեռքով ողջույնի նշաններ անել ու ժպտալ իր սիրելի կնոջը:

Տղամարդու հետ մեկնում էր նաև նրա կինը, եւ սա նույնպես ժպտում էր, ընդ որում՝ հուսաբեկ, լայն բացած բերանով, և նրա ու ամուսնու ժպիտներն ամբողջովին նույնն էին, այն, մասնավորապես, կնոջ դեմքին հայտնվեց անմիջապես, հենց որ ամուսինը նրան ներկայացրեց իր սիրելի կնոջը՝ ամառանոցատան հարևանուհուն ու զբոսանքների ընկերուհուն: Կինը, ճիշտ է, հանկարծակիի եկավ գլխին թափված ձյան պես, չնայած նրան ոչինչ չէր սպառնում, բայց նա եկավ առանց որևէ անհրաժեշտության, աշխատանքից խնդրվեց ու եկավ առանց պատճառի ու առիթի: Նրանք միասին՝ երեքով անցկացրին տաս-տասնհինգ րոպե, ընդ որում, բնականաբար, սկզբից կար որոշակի շփոթվածություն, քանի որ կինը հուսաբեկ ժպիտով նայում էր սիրելի կնոջն ու վերջապես ասաց, որ

մտքում հաշվում է տարիքային տարբերությունը:

«Շատ մեծ չէ»,- կատակեց սիրելի կինը ու զրույցը շարունակեց հոսել. անմիտ զրույց ինչ-որ ապուրների մասին, որ ամուսինը ստիպված էր այստեղ ուտել և սինթետիկ ապուրների մասին ընդհանրապես: Կինն, ըստ երևույթին, շատ հուզված էր այդ ժամանակ ու հանկարծ զրույցի մեջ դադար եղավ, սակայն այդտեղ ներկա տանտիրուհին այդ կնոջ հետ առանձին զրույց տարավ, ու վերջապես մյուսները՝ այն երկուսը, հնարավորություն ստացան ևս մի անգամ զրուցել, այս անգամ այդպիսի վտանգավոր շրջապատում: Եւ նրանք սկսեցին խոսել ինչ-որ դատարկ բաների մասին, հաճախ մեկը մյուսի խոսքը կտրելով ու իսկապես մոռանալով աշխարհում ամեն ինչ:

Հետո եկավ նախօրոք պատվիրված մեքենան եւ ամեն ինչ վերջացավ ու անհետացավ Երկրի վրա կնոջ չափազանց ուշ և տղամարդու չափազանց շուտ հայտնվելու խնդիրը. և ամեն ինչ անհայտացավ, կորավ աստղերի շրջապտույտի մեջ, ասես ոչինչ էլ չէր եղել:

# Ամսաթերթ

Ինչպիսի՞ն է մեր սիրավեպի հերոսների հետագա ճակատագիրը: Պետք է նշել, որ Իվանովի մեկնելուց հետո ամեն ինչ մնաց իր տեղում, ինչպես եղել է, չէ որ մի մարդու հեռացման պատճառով կյանքը չի կարող տեղափոխվել մի տեղից մյուսը, ինչպես չի կարող մի մարդու հեռացման պատճառով բոլորի գլխին, մի ամբողջ հիմնարկի գլխին փլվել տանիքը: Այնպես որ՝ այն, որ Լենայի, պատկերավոր ասած՝ տանիքը գլխին փլվել է և կյանքը տեղահան է եղել, նույն ժամանակ ոչինչ չէր նշանակում մնացած բոլորի համար, այն աշխարհի համար, որն ինչպիսին եղել է Իվանովի օրոք, այդպիսին էլ մնացել է, հաշվի չառնելով, որ Իվանովն անհետացել է, որ նրա տեղը խորը բացված դատարկություն էր:

Այդպիսով Լենան ստիպված էր աշխատանքի գնալ այն տեղը, ուր Իվանովի փոխարեն խորը բացված դատարկությունն էր և որտեղ դեռ մի շաբաթ առաջ, իբր կատակով, Իվանովի սեղանի առաջ ծնկաչոք կանգնած էր ինքը՝ Լենան: Նա աղոթողի պես ծնկի եկավ, աչքերը փակելով ու ձեռքերը խաչելով, մոտավորապես երկու մետր հեռու սեղանի շուրջ նստած Իվանովի առաջ, որն իր հերթին հանգիստ կարգի էր բերում թղթերը, բարեհամբույր ծիծաղելով, ասես չէր նկատում, թե ինչ վիճակի մեջ էր Լենան: Երևում է՝ նա մինչև վերջին պահը, մինչև այն պահը, երբ Իվանովը սկսեց կարգի բերել իր սեղանը, դեռ հույս էր փայփայում, որ ինչ-որ բան տեղի կունենա, ինչ-որ ներում, չէ որ չի կարող հենց այնպես գնալ-վերջանալ այդ ամբողջ գործը. և երբ Իվանովը հեռանալուց առաջ սկսեց կարգի

բերել իր աշխատատեղը, նա կարծես խելագարված ծնկի իջավ: Նա ծնկաչոք մնաց ժամացուցային տասը րոպե և այդ տասը րոպեի ընթացքում բոլորն իրենց պահում էին, չնայած թեթևակի անհարմարության զգացումին, բայց ինչպես սովորաբար՝ բոլորովին չշփոթվելով, չփոխելով դեմքերի արտահայտություններն ու կատարվողն ընդունելով՝ որ այդպես էլ պիտի լինի, կարծես կյանքում նրանք շատ են հանդիպել նման իրավիճակների. բոլորն այդ ամենն ընդունեցին որպես հիստերիկա, որը պետք է չնկատելու տալ, որը պետք չէ մարել, որպեսզի ցույց չտաս, որ հավատում ես այն վշտի ու հուսահատության իսկական գոյությանը, որոնք դրսևորվում են հիստերիայի մեջ ընկնելու ժամանակ:

Ինքը՝ Լենան նույնպես հանգիստ կանգնած էր, ավելորդ աղմուկ չբարձրացնելով իր զգացմունքների մասին, և հետո այն մարդիկ, որոնք այդ ժամանակ ներկա էին աշխատասենյակում՝ երկու թե երեք մարդ, պետք է խոստովանեին, որ միակ բանը, որ մնում է մարդուն նման իրավիճակում, դա ծնկի գալու նրա իրավունքն է և որ քաղցրանուշ է ծնկի գալը:

Վերջապես Իվանովը մեկնեց, իսկ Լենան մնաց, և ոչ մի կասկած չկար, որ Լենան այս կամ այն ճանապարհով կհետևի Իվանովին, չնայած հայրենի քաղաքում նա պարտավորություններ ուներ մոր, որդու և ամուսնու հանդեպ:

Լենան ոչ ոքի չէր ասում ապագային վերաբերող իր ծրագրերի մասին եւ աշխատում էր սովորականի պես,

սակայն ընկերացավ գրադարանավարուհու հետ, ինչը ապագա փախուստի նշան էր: Բանն այն է, որ այդ գրադարանավար Տոնյան՝ շատ սիրալիր ու տխուր շիկահերը, իրականում մշտական թափառական էր, բախտախնդիր ու փախստական տաժանակրուհի: Նա ևս Լենայի պես տուն ուներ, որտեղ ինքն ապրում էր երեխայի՝ աղջկա հետ, սակայն Տոնյան ժամանակ առ ժամանակ խուսափում էր իր մայրական պարտականություններից ու ինչ-որ ձևով պայմանավորվելով աշխատավայրում ու երեխան թողնելով մորը, մեկնում է այն քաղաքը, որտեղ ապրում էր իր ընտրած մարդը, իր առարկան, ընդ որում մեկնում էր որպես անցանկալի, անսպասելի մեկը, քնում էր կայարանում, թաքնվում էր ինչ-որ աստիճանների տակ՝ սպասելով մինչև իր սիրած մարդը դուրս գա, և այդպես շարունակ:

Լենան ընկերացավ Տոնյային ու ճաշի ընդմիջումը նրա հետ էր անցկացնում տարբեր սրճարաններում, և աշխատանքից հետո նրանք միասին գնում էին մինչև կանգառ, որպեսզի հետո բաժանվեն՝ նստելով տարբեր տրամվայներ. Տոնյան գնում էր մանկապարտեզ աղջկա հետևից, իսկ Լենան՝ իր բնակարան, որտեղ նրան սպասում էին մոր, որդու և ամուսնու հանդեպ պարտականությունները:

Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, դրանք պարտադիր կատարում պահանջող պարտականություններ չէին, որովհետև, ի վերջո, Լենան, այնուամենայնիվ, մեկնեց այն քաղաքը, որտեղ աշխատում էր Իվանովը ու վերադարձավ միայն շատ տարիներ անց, այն է՝ յոթ տա-

րի անց, վերադարձավ մթագնած գիտակցությամբ, հետապնդման մոլագարությամբ, վերադարձավ, որովհետև նրան հետ բերեց նրա ամուսին Ալբերտը:

Այստեղ հարկ է պարզաբանել, թե Լենան ինչ պարտավորություններ ուներ մոր, որդու և ամուսնու հանդեպ:

Ամեն ինչ սկսվեց որդու ծնունդով, որին Լենան ծննդաբերեց անհավանական տանջանքներ կրելով, բայց առանց մի բղավոցի: Երեխան նույնպես, երևում է, մեծ տառապանքներ կրեց, որովհետև ծնվեց ուղեղի կաթվածով և երեք ամիս անց բժիշկը Լենային ասաց, որ նրա երեխան խոսել, մանավանդ քայլել չի կարողանա, ըստ երևույթին՝ երբեք:

Լենան մի տարի անցկացրեց երեխայի հետ, հետո եկավ աշխատանքի գնալու ժամանակը ու նա դուրս եկավ աշխատանքի՝ երեխայի համար դայակ գտնելով: Մայրն այդ գործում նրան օգնական չէր, որովհետև երեխայի ծնվելուց երեք ամիս անց խելագարվեց, երևում է՝ անշարժ փոքրիկին տեսնելու վիատությունից, սակայն, ինչպես ասել է հիվանդանոցի բժիշկ-հոգեբույժը, խելագարության պատճառները պետք է փնտրել ոչ թե դրսում, այլ ներսում, և հիվանդության խթան կարող էին հանդիսանալ ցանկացած այլ հանգամանքներ, ամենաանշանները. սակայն, անկասկած, խթան կար:

Այն գարնանը, երբ Իվանովը հեռացավ, Լենան զբաղված էր զուտ նյութական գործերով. ամառանոցատուն էր վարձում, որտեղ պիտի ապրեր իր արդեն մեծացած յոթամյա տղան դայակի հետ, ինչպես նաև ինքը Ալբերտի

հետ: Հետո տեղափոխվեցին ամառանոցատուն եւ երկու ամիս ապրեցին այնտեղ, որից հետո հուլիսին Լենան հանվեց տեղից ու լքեց և ամառանոցատունը, և քաղաքային բնակարանը, և իր ընկերուհի՝ փախստական տաժանակրուհի Տոնյային. Լենան մեկնեց ինստիտուտ ընդունվելու պատրվակով, մեկնեց իբր ոչ երկար ժամանակով, բայց իրականում՝ յոթ տարով:

Նա իսկապես ընդունվեց նոր ինստիտուտ, երկրորդ ինստիտուտն իր կյանքում, որի հանրակացարանից էլ երեք տարի անց նրան «շտապ օգնության» մեքենայով տարան հոգեբուժական հիվանդանոց, ամենամռայլ հոգեվիճակում, սակայն թե ինչ խթան է այստեղ դեր խաղացել, ոչ ոք մեզ այլևս չի ասի:

Հիմա դառնանք Իվանովի անցած ուղուն: Ինչքան էլ տարօրինակ է, չնայած հոյակապ սկզբին, նա նույնպես, չնայած ոչ այնքան շուտ, ինչքան Լենան, հայտնվեց խավարի մեջ ու բարձիթողի վիճակում:

Սակայն նրա պարագայում ամեն ինչ այդքան բարդ չէր, ամեն ինչ ավելի պարզ էր ու կոպիտ, քան Լենայի դեպքում եւ բացատրվում էր բացառապես ոգելից խմիչքների նկատմամբ մոլուցքով: Իվանովն ինքն իր համար երկար տարիների ընթացքում փոս էր փորում և, վերջի-վերջո, հսկայական վեճ և աղմուկի արդյունքում հայտնվեց խղճուկ պաշտոնում, խղճուկ՝ համեմատած նախկին մասշտաբների հետ, երկու հոգուց բաղկացած բաժնի պետի պաշտոնում, մի պաշտոնում, որից սովորաբար սկսում են:

Իրականում ահա այսպես ավարտվեց այդ սիրավեպը, որն, ինչպես բոլորին թվում էր, վերջացել էր Իվանովի հեռանալու հետ միասին, բայց հայտնի չէ և հիմա, վերջացե՞լ է, արդյոք, այն իրականում:

Հիմա իր ամբողջ հսկայական հասակով մեկ հառնում է Լենայի ամուսնու՝ Ալբերտի կերպարը, որն այդ ամբողջ տարիներին տանում էր այն ամենը, ինչը չէր կարող տանել Լենան ու դեռ ավելին. չէ որ հենց նա, Լենայի անհայտանալուց յոթ տարի անց, ամեն ինչի մասին իմանալով, ճանապարհ ընկավ նրա հետևից ու նրան բերեց տուն, գուցե, չգիտես ինչու, նրա կարիքն ունենալով, կամ նրա հանդեպ խղճահարությունից, ով նստած էր օտար քաղաքի հեռավոր շրջանային հիվանդանոցի իր հիվանդանոցային մահճակալի վրա, զրկված բացարձակապես ամեն ինչից, այդ մահճակալից բացի, թաղված իր փոսի մեջ, ինչպես Իվանովը՝ իրենում:

Ճիշտն ասած, Լենայի ու Իվանովի մոտ դա հենց այն անմահ սերն էր, որն անհագուրդ լինելով, իրականում հանդիսանում էր ցեղի շարունակության անամոք, չիրականացած ցանկություն, չիրականացած տարբեր դեպքերում տարբեր պատճառներով, իսկ մեր դեպքում այն պարզ պատճառով, որ Լենան արդեն մի անգամ ծնել է անշարժ երեխա, ու այդ պատճառով հարց առաջացավ՝ կարող է նա ընդհանրապես առողջ երեխաներ ունենալ: Սակայն ինչ էլ որ լիներ, որ իրական պատճառով էլ որ Իվանովը լքած լիներ Լենային, փաստը մնում է փաստ. ցեղը շարունակելու բնազդը մնացել էր անհագ, ու դրանում էր, հնա-

բավոր է, ամբողջ գործը:

Բայց Ալբե՞րտը, ահա թե ով պիտի համընդհանուր զարմանք հարուցեր այս պատմության մեջ, հիմա արդեն մինչև վերջ պարզված, Ալբերտը, որ յոթ տարի անց եկավ կնոջ հետևից, ում հետ վաղուց կորցրել էր ամեն տեսակի կապ: Ինչպիսի՞ զգացմունքներով էր նա առաջնորդվում՝ ահա թե ինչն է հետաքրքիր: Այստեղ ամեն ինչ կարելի է բացատրել այն նույն անմահ սիրով, սակայն այդ ամենն այդպես հեշտ չես բացատրի, և Ալբերտի կերպարը շարունակում է կանգնած մնալ այս պարզ կենցաղային պատմության մեջտեղում իր ողջ հսկայական հասակով մեկ:

# Երրեք

Մի կին՝ դեռ երիտասարդ ու արտաքինից ոչ վատ (չնայած կենցաղային դժվարություններին), ինչպես բոլոր քաղաքաբնակները, այսինքն դեռևս շիկահեր, դեղատնային ջրածնի պերօքսիդի օգնությամբ ու կազմվածքով դեռևս բարետես այդ կինը դեմ առավ գյուղական կյանքին: Այսինքն՝ ամռանը երեխային ուղարկելով քաղաքից դուրս մանկապարտեզ ու ինքը մնալով թեժ բնակարանում՝ խնամելու հիվանդ հորը, նա կարոտեց հինգ տարեկան որդուն ու որոշեց մեկ օրով մեկնել նրան տեսնելու: Քաղաքաբնակ շատ կանանց նման նա խոչընդոտ չէր ճանաչում, պայմանավորվեց հարևանուհու հետ՝ կերակրել ծերունուն մի անգամ շաբաթ օրը և երկու անգամ՝ կիրակի օրը, իսկ կիրակի երեկոյան նա նախատեսում էր վերադառնալ եւ տեղը տեղին կվերադառնար, եթե չլինեին որոշ հանգամանքներ:

Առաջին դժվարությունը քաղաքից դուրս քնելու տեղ գտնելն էր: Ինչու էր պետք գիշերելը. մի կողմից ճանապարհը զբաղեցնում էր երկու ժամ, իսկ երեկոյան Մոսկվա մեկնող վերջին ավտոբուսը հինգին էր: Իսկ ծերուկը ուտում էր ժամը երեքին: Այսինքն՝ ժամանելուց անմիջապես հետո անհրաժեշտ կլիներ վերադառնալ:

Բայց, բարեբախտաբար, աշխարհն առանց բարի մարդկանց չէ, եւ մանկապարտեզի հարևանությամբ գյուղ գտնվեց, իսկ գյուղում հարցուփորձի միջոցով կինը գտավ Լյուբա տատիկին, մի տարեց կնոջ, ով ազատ բազմոց ուներ սենյակում: Կինը (նրա անունը Լենա էր), գիշերելու տեղ փնտրելով՝ շրջեց ամբողջ գյուղով մեկ: Շաբաթ օր էր, և գյուղացիները նստած էին դռնակների մոտ՝ տախտակների, գերանների վրա, սանդղամուտքերին ու նստարան-

ներին: Նրանք հագնված էին մաքուր ու տոնական, թեթև գինովցած, տեղ-տեղ ծխում էին բաղնիքների երդիկները, լողում էր քաղցր ծուխը, և հատկապես կանայք պատրաստակամորեն խորհուրդ էին տալիս Լենային, թե ումից հարցնել, և բոլորը Լենայի մոտ լավ տպավորություն թողեցին:

Ինքը՝ Լենան ամառային շորերով էր՝ թեթև սարաֆան ու կոֆտա, հունիս ամիսն էր:

Գիշերելու տեղ գտնելով՝ Լենան թեթև սրտով վազեց անտառի միջով դեպի մանկապարտեզ՝ երեխայի մոտ եւ նրա հետ անցկացրեց մինչև ընթրիք ընկած ժամանակաշրջանը ու ընթրիքից հետո էլի որոշ ժամանակ:

Զվարթ տրամադրությամբ, մայր մտնող արևի լույսի տակ, Լենան գյուղ վերադարձավ ջրափոսերով խճողված անտառային ճանապարհով, ամենուր համեստ, սպիտակ աստղիկներով ծաղկում էր իծամորին: Անտառում ու բացատում կանգնած էր նուրբ ու քաղցր բուրմունք, դեռևս գարնանային երկինքն անհատակ էր:

Նա նորից քայլում էր գյուղական լայն, ավազոտ փողոցով դեպի իր համեստ տնակը, բայց այժմ երջանկությունից լրիվ շշմած:

Գալով Լյուբա տատի մոտ, Լենան շտապեց հանել իր համեստ ուտելիքը՝ քաղցրաբլիթներն ու ապխտած պանրով հացի կտորները. տատն ուրախացավ, նրանք թեյ խմեցին, իսկ հետո Լենան ցանկացավ զուգարան գնալ:

Այստեղ պարզվեց, որ նման տեղ Լյուբա տատը չունի:

- Գնա բակ,- պարզամտորեն ասաց պառավ կինը:

- Ինչպե՞ս թե բակ:

- Դե, բակ: Մենք բոլորս էլ էնտեղ ենք գնում, հավերի,

գառների մոտ: Վերջացնես՝ հողով կանես, բահը անկյունում է:

Լենան ուղղվեց դեպի խոտերի դեզը ու ձախ թեքվելով, բացեց տախտակե դուռը: Այնտեղ դեպի ներքև տանող երերուն աստիճաններ կային, ծածկի տակ, թառին նստած քնել էին հավերը, չորս շագանակագույն-սև գառնուկներ խմբված պառկած էին չոր խոտով ծածկված գետնին:

Լենան շփոթահար կանգ առավ:

Այդ ընթացքում բարակ պատի այն կողմից ձայն հնչեց, ասես շանթ արձակվեց պարզ երկնքից:

- Դու խմի՛ր կակավոն, դեռ մի բանկա կա,- ասաց այդ կանացի կոպիտ ձայնը:- Բատոնն էլ կեր:

Կլկլոց լսվեց: Հետո ինչ-որ մեկը բարձրաձայն ֆսֆսացնելով, բռնված քթով սկսեց ճպճպացնելով ուտել ուղիղ Լենայի գլխավերևում:

Եվս մի կանացի ձայն խռպոտ ասաց.

- Գնամ փողոց:

- Նստիր, ես կակավոն ու՞մ համար եմ եփել:

- Դե:

- Նստիր, նստիր կեր, կհասցնես դեռ կռվել:

- Դե, տատ:- Գոռաց լցված բերանով ու հայհոյեց:

- Էլի փորձես դուրս պրծնել, էլի կստանաս,- ասաց տատն ու նույնպես մորով հայհոյեց:

Բարձրաձայն ֆսֆսոցն ու ճպճպացնելը, ինչպես խոզանոցում, շարունակվեցին:

Լենան մնացել էր կանգնած ու հիմար վիճակում: Նա որոշել էր սպասել, մինչև տատն ու թոռը հեռանան: Սակայն սպասումը երկարեց: Լենան՝ քաղաքաբնակ կին,

անգլերենից թարգմանչուհի (տեխնիկական տեքստեր) մնացել էր քարացած ու չէր կարողանում ինքն իրեն ստիպել ենթարկվել հանգամանքներին: Նա չէր համարձակվում անգամ թեթևակի շարժում անել:

Մի տաս րոպե այդպես կանգնելով (քանի դեռ պատի այն կողմում ճպճպացնում էին, ֆսֆսացնում, հայհոյում, վզակոթին հարվածում, կլկլացնում), Լենան ձեռնունայն հեռացավ, անմիջապես դուրս շպրտվեց խրճիթից ու արագ քայլերով դաշտի միջով ուղղվեց դեպի ծանոթ անտառ, որը նույնպես, մոտակա ուսումնասիրությունից պարզվեց, որ մի տեսակ նոսր էր, սակայն թփեր, այնուամենայնիվ, կային:

Հետո Լենան անշտապ քայլերն ուղղեց դեպի գիշերակաց, մի քիչ նստելու համար նստեց լճակի մոտ, որսալով մայրամուտի շողերը: Շուրջը հանգիստ էր, տաք, տարածվել էր խոտի սուր հոտը, ջրից ճահճահոտ էր փչում, զնգզնգզցին մոծակները, արևը կանգնած էր հորիզոնում, իսկ հետո Լենան վրա տված զգացմունքներից հառաչելով՝ շարժվեց դեպի Լյուբա տատի թևի տակը:

Վերջին երկու տարիների ընթացքում Լենան չէր հանգստացել, հիվանդ հայրը գրեթե չէր կարողանում ինքն իրեն սպասարկել, Լենայի ծնողները ծեր էին, մայրը վառվել էր հիվանդանոցում, թաքուն ծխում էր անկողնում, հիվանդանոցում պառկեցնելու հենց առաջին օրը, ինչ-որ կերպ հաջողացրել էր Լենայից թաքցնել ծխախոտը, իսկ լուցկի, ըստ երևույթին՝ հայթայթել էր հիվանդասենյակում պառկածներից: Մայրն արդեն մի տարի էր՝ չէր քայլում, և հաջողվել էր նրան հիվանդանոցում պառկեցնել շնչուղիների բորբոքման պատճառով: Հայրը քայլում էր, բայց նա

արդեն ութսունին մոտ էր, եւ նա քիչ բան հասկացավ, երբ կինը ընդմիշտ հեռացավ, միայն մտնելով նրա սենյակ՝ անընդհատ հարցական փնթփնթում էր. Լյոլյա՞, Լյոլյա՞:

Ընդ որում՝ Լյոլյա էին կոչում հենց Լենային:

Մոր անունը Լենան աշխատում էր չհիշել, ցավալի էր, մամա ու մամա:

Բարեբախտաբար, հայրը պահպանել էր հասուն մարդու բոլոր ունակությունները՝ մեքենայաբար կրկնում էր մանկությունից սովորած շարժումները, չնայած ինքնուրույն ուտել արդեն չէր կարողանում: Փոխարենը նա կանոնավորապես թերթ էր կարդում, երբեմն՝ գլխիվայր, և փոքրիկ Պաշայի խնդրանքով կարող էր արտաբերել իզվեստիա բառը, երբ Պաշան մատնացույց էր անում ու հարցնում, թե ինչ բառ է սա:

Ապագայի մասին Լենան չէր ուզում մտածել, միայն անընդհատ կախարդագործում էր քնաբերներով, դրանք այնպես ընտրելով, որ հայրը գոնե քներ, բայց ամբողջ օրով չընկներ կենդանական ապատիայի մեջ: Բայց և անհրաժեշտ էր հանել ավելորդ գրգռվածությունը, որ վրա էր հասնում գալապերիդոլից հետո: Հոր հիվանդության հաջորդ փուլն անշարժությունն էր:

Սակայն ինչքան հայրը մոտենում էր այդ շեմին, այնքան Լենան ավելի էր շարժվում ու ճարահատյալ ուրախանում, ինքն իրեն ասելով, որ ևս մի օր ապրեցինք:

Այսօր հարևանուհին կկերակրի հորը, նա կպառկի, ինչպես միշտ, ջանասիրաբար շոշափելով սավանը ու հարթեցնելով այն իր մեծ չոր ձեռքերով, աղոթքի պես կասի Լյոլյա-Լյոյլա ու կքնի. բոլոր դեղերը փոշիացրած ձևով խառնված են կարտոֆիլի խյուսին եւ յուրաքանչյուր կե-

բակրաժամի համար սառնարանում դրված է մի կաթսայիկ: Լենան նույնպես մաքրասեր ու կարգապահ է, ծնողներին է քաշել:

Լենան ապրում էր՝ ասես անհերթափոխ սանիտարուհի, նրա և միակ ուրախությունը խաղաղ երեկոներն էին, որ երբեմն բաժին էին հասնում իրեն՝ հոր ու Պաշայի հետ, երբ հայրն անհանգիստ չէր, չէր գոռում, անգամ քթի տակ դլենդլեն էր անում «Հոսում է գետը» երգի պես մի բան, հին կազակական երգ:

Պաշկան մաշկի բաց գույն ուներ, մազերն ասես ծղոտե տանիք լինեին, աչքերն աշխուժով լի, փոքրիկ, հինգ տարեկան, սակայն արդեն փորձում էր կարդալ, հատկապես հեռուստաէկրանի մակագրերը: Փոքրիկը հաճույքով մնում էր պապիկի մոտ, չէր լացում, երբ մայրը շաբաթը մեկ անգամ վազում էր հանձնելու և վերցնելու թարգմանությունները: Պապը նույնպես ակնհայտորեն սիրում էր տղային ու փորձում էր խոսել նրա հետ իր լեզվով:

- Նա հինգ ստաժով էր,- ասում էր պապը թոռանը: Ահա թե որտեղ է թաղված շան գլուխը:

Կամ էլ արտաբերում էր.

- Հանգիստ թողեք իմ լռությունը:

Թոռնիկը չհասկանալով ասածների իմաստը, միևնույն է՝ իրեն պաշտպանված էր զգում պապիկի կողքին և ամբողջ խումբը՝ տարեցը, փոքրը ու Ֆոմոչկա փիսոն ուրախությամբ դիմավորում էին Լենային աշխատանքից, չնայած բնակարանում նրա բացակայության ժամանակ հատակի վրա խառնակույտ էր լինում, ինչպես խուզարկությունից հետո. թափթփված էին գրքերը, բարձերը, թերթերը, ափսեները, աթոռները կողքի էին շրջված:

Լենան շտապում էր հավաքել, Պաշան հոգատարորեն օգնում-խանգարում էր նրան, պապն ուրախանում էր ու մրթմրթում իր անհեթեթությունները, չնայած դրանցում շատ խորհրդավոր իմաստ կար, եթե խորամուխ լինենք:

Եվ ահա Պաշան քաղաքից դուրս մանկապարտեզում է, ամբողջ ամռանը, իսկ Լենան ազատ երեկո անցկացնելու հնարավորություն ստացավ մայրամուտին, լճակի ափին, հանգստության մեջ:

Լենան ուրախ, ամբողջությամբ այրվելով արևից (այդօր նա Պաշայի հետ նստել էր Պախրա գետի ափին), վերադառնում էր Լյուբա տատի մոտ, մտածելով, որ հաջորդ շաբաթ-կիրակի էլ կարելի է փորձել գալ. ինչ երջանկություն է, որ կա հարևանուհին՝ հասարակ կին, խուլ ու համր նկարչի կինը, ով յուրովի սիրում էր պապիկին ու խղճում Լենային այն դժբախտությունից հետո:

Գյուղում, դռնակների մոտ դեռ նստած էին գյուղացիք, ծերերը՝ կեպկաներով, տղամարդիկ՝ մայկաներով՝ բաղնիքից հետո և պառավ կանայք՝ գլխաշորերով:

Երկու երիտասարդ զբաղված էին մոտոցիկլով, որը մի անգամ ոռնաց ահավոր ոռնոցով ու անմիջապես հանգավ:

Բոլոր գյուղացիները, սակայն, կարծես քարացան, երբ հայտնվեց Լենան, նրանք նայում էին նրա վրա դուրս ցցված աչքերով: Երիտասարդները մեջքներն ուղղեցին իրենց մոտոցիկլի վրա եւ մի տեսակ ոչ բարի ժպիտով նույնպես նայեցին նրան:

Ցնդաբանություն է՝ մտածեց Լենան ու մտավ տնակը:

Ծածկոցի տակ Լենային դիմավորեց նոր դեմք՝ թոշակի տարիքի մի հսկա կին, խարտյաշ, բոբիկ, ձեռքին մի

թաց շոր: Կինը կանգնած էր տախտակե դռան մոտ ու նրա արմունկի տակից նայում էր նույնպես խարտյաշ, սիրունատես, գիրուկ մի տղա, կլիներ ութ տարեկան: Նա երշիկ էր ծամում:

- Մա՞ն էիք գալիս,- հարցրեց կինը:

- Այո, լավ է այստեղ,- արձագանքեց Լենան:

- Ամեն ի՞նչ արեցիք,- նորից հարցրեց կինը:

Լենան անհարմար զգալով՝ գլխով արեց ու պատրաստվում էր անցնել իր մոտ, սակայն կինը նորից սկսեց ինչ-որ բաներ հարցնել, հանկարծ սկսեց բարձրաձայն գովաբանել իր թոռ Յուրկային (նա այստեղ բոլոր մեծերին ծեծում է) և որ Յուրկան միանգամից մի կաթսա կակավո է խմում:

Հայրն ասում է՝ մարտիկ է մեծանում, մի տեսակ սահմռկելի առոգանությամբ ասաց կինը:

Կինը (նրա անունը Ռայիսա էր), արագ ամեն ինչ իմացավ բոլորովին իրեն կորցրած Լենայից ու վերջապես բաց թողեց, ընդ որում՝ այդ ամբողջ ընթացքում ձեռքին պահում էր հատակ լվանալու կեղտոտ ու թաց շորը:

Լենան վերջապես ցած իջավ իր բազմոցին, և այստեղ երկչոտությամբ նրան դիմեց Լյուբա տատը.

- Դու ման էիր գալիս, իսկ մենք միլիցիա ենք կանչել:

- Այո, իսկ ի՞նչ է պատահել:

- Ոչինչ, բայց մենք քո պայուսակից անձնագիրդ ենք նայել: Դե, կներես;

- Բայց ինչի՞:

- Դե, Ռայիսան ասաց, որ դու եկել ես այստեղ արհեստական վիժում անելու:

- Ես… վիժո՞ւմ, ի՞նչ վիժում:

- Դե, Ռայիսան ասաց, որ դու վիժել ես բակում, հող լցրել երեխայի վրա:

- Երեխայի՞,- ծիծաղելով բացականչեց Լենան:- Ի՞նչ երեխայի: Ինչպիսի՞ ցնդաբանություն:

Այստեղ նա տեղը բերեց, որ քանի դեռ նա անշարժ կանգնած էր բակում, Ռայիսան, թոռանը կերակրելով, ականջ էր դրել պատից այն կողմի ձայներին, ինչպես և Լենան, և ֆսֆսոցի, ճպճացնելու ու կակավոյի կլկլոցի միջով լսել է տրամաբանորեն իրար հետևող ինչ-որ շրշյուններ, գուցե՞ արյան կլկլոց: Ուրիշ էլ ի՞նչ:

- Դե, իսկական ցնդաբանություն է,- ասաց Լենան:

- Ոչինչ չգտան, ամբողջ բակս փորեցին-տակնուվրա արին,- մեղավոր թարթելով աչքերը՝ ասաց տատը:

Լենան այդ ընթացքում արդեն նայեց պայուսակի մեջ ու սկսեց այն կարգի բերել:

- Մենք քոնին ձեռք չենք տվել,- ասաց Լյուբա տատը: Միլիցիան խոստացել է վաղը գալ, նրանք պայթյուն ունեն քառասունհինգերորդ կիլոմետրում, մեկնեցին մոտոցիկլով:

Թեյնիկը եռաց: Լենան նորից կանչեց Լյուբա տատին պանրով հաց ու քաղցրաբլիթներ ուտելու, և ընթրիքի ժամանակ տատիկն ասաց, որ Ռայիսան արդեն երրորդ տարին է՝ վարձում է իր մոտ այն սենյակը, որտեղ տատը պահում էր անպետք իրերը և ուզում է, որ տունը գրեմ նրա վրա: Իսկ ես Վլադիմիրում զարմուհի ունեմ, արագ թարթելով՝ քթի տակ խոսում էր տատը: Ես նրա վրա եմ տունը գրել: Այ, Վասիլենան նվիրատվություն էր ձևակերպել որդու վրա, սակայն որդին մահացել է, իսկ հարսը բնակություն է հաստատել տանը ու Վասիլենային էլ քշում է՝ սա

քո տունը չէ, սա իմ տունն է:

- Դու հեռացիր այստեղից,- շշնջում էր տատիկը, տղաները սպառնում են ծեծել քեզ:

- Էդ ի՞նչ տղաներ են,- զվարթ հարցրեց Լենան:

- Դե, հարևան տղաները,- ասում էր Լյուբա տատը՝ Լենային նայելով անհասկանալի հայացքով, աչքերը չռելով՝ չգիտեղ վախից, թե այրող հետաքրքրասիրությունից:

Ասես խարույկի վրա են ինձ բարձրացնում, հանկարծ մտածեց Լենան: Կախելու են տանում: Ոչինչ էլ չեք անի:

- Որտե՞ղ ես պահում կացինդ, Լյուբա տատ:

- Խոտի դեզի մեջ, ծածկի տակ,- թեթևակի խեղդվելով պատասխանեց պառավը: Լենան վազեց խոտերի մեջ, ուղիղ Ռայիսայի անպետքական դռան (այնտեղ դռան հետևում ինչ-որ բան շարժվեց) դիմացից գտավ կացինը ու դրեց բազմոցի վրա՝ իր կողքին:

Աղջամուղջը երկարում էր, վերջապես վրա հասավ համեմատական մթություն: Տատը վառարանի մոտ հոգոց էր հանում, կրկնելով՝ Տեր Աստված, քո կամոք է:

Մի արևածագը շտապում է հաջորդել մյուսին, մեքենայաբար ինքն իրեն կրկնում էր Լենան, ուշի ուշով ականջ դնելով փողոցում տեղի ունեցողին: Սիրտն ուժգին տրոփում էր:

Փողոցում ցածրաձայն խլրտում էին ինչ-որ ձայներ, հաստատ երիտասարդներ էին խմբված: Հետո ձայները դարձան ավելի լսելի ու վերջապես մեկը մոտեցավ ու պատուհանի տակից ասաց.

- Լյուբա տատ, թող նա դուրս գա:

- Այո,- ձայնակցեց մյուսը,- զրուցել է պետք:

Խուլ ծիծաղեցին: Ինչ-որ բանով խփեցին պատուհանի

փեղկին:

Տատը համարյա լացելով ասաց.

- Պատուհանը կջարդեն: Դուրս գնա, տես՝ ինչ են ասում: Քեզ ոչինչ չեն անի: Իսկ իմ պատուհանը կջարդեն:

Լենան գիշերանոցով մոտեցավ պատուհանին, հետ քաշեց վարագույրը ու ցած նայեց: Մթին խումբը ավելի կույտավորվեց:

- Դուրս արի,- կռանալով ասաց մեկը: Վառվեց լուցիչը, ինչ-որ մեկը շտապեց ծխախոտ վառել:

Լուսավորվեց կապիկի պես դուրս ցցված շրթունքներով մի խոժոռ դեմք:

- Ձեռքինս կացին է,- բղավեց Լենան, կացինն ավելի մոտեցնելով ապակուն,- կա-ցին:

Պատուհանից հեռանալով՝ Լենան տատին ասաց.

- Կսպանեմ հենց առաջինին, ով կխցկվի:

Մի անգամ էլ ուժգին հարվածեցին փեղկին: Խոտերի միջից լսվեց Ռայիսայի ձայնը.

- Բացիր, Լյուբա տատ:

Նա սկսեց բռունցքներով հարվածել քաթանով պատած դռանը:

Տատը բացականչեց.

- Ինչու՞ եմ քեզ ներս թողել: Կփշրեն-կկոտրեն պատուհանս: Գնա այստեղից: Նրա մոտ կացին կա: Նա կացին ունի: Նայիր ծածկի տակ:

- Տատ, չբացես, ի սեր Աստծո,- ասաց Լենան:- Վաղը ես նրա մասին կհայտնեմ միլիցիային:

- Հեռացիր, հանուն Քրիստոսի, որտեղի՞ց եկար գլխիս,- չգիտես ում մրթմրթում էր տատը:

Միայն առավոտվա դեմ դադարեցին այդ բղավոցներն

ու դռան ու պատուհանի հարվածները:

Տանջահար Լենան քնեց ու անմիջապես արթնացավ, տատը վազեց դեպի խոտերը, դուրս եկավ: Արդեն լրիվ լուսացել էր:

Լենան հավաքեց իր պայուսակը, տատի համար սեղանի վրա փող թողեց, մտածեց ու թողեց նաև իր հացն ու պանիրը: Խեղճ էր պառավ կինը, ով ապրում էր երկու կրակի արանքում՝ կռվարար Ռայիսայի ու ժառանգորդուհու՝ Վլադիմիրից զարմուհու միջև:

Դժվար էր նորից քայլել գյուղի միջով կիրակի առավոտյան: Չգիտես ինչու, բոլոր տների մոտ մարդիկ կային կանգնած ու զրուցում էին, ինչպես խոշոր հանցագործի ձերբակալության ժամանակ: Նա աշխատում էր գնալ սովորական քայլով, իսկ մարդիկ նրա վրա նայում էին նույն չռված աչքերով, մի կին, անգամ, նրա հետևից ասաց.

- Կացին է թափահարում: Մեր տղաներին կացնահարել էր ուզում:

Լենան գնում էր գլուխը բարձր և հանկարծ հասկացավ, որ ժպտում է, ինչպես հանցագործ, բայց ոչինչ չէր կարող իր հետ անել, դեմքը ձգվել էր, ինչպես պլաստիկե տիկնիկի մոտ:

Առջևում անտառի ճանապարհն էր:

Ինչու՞ եմ Ռայիսային ասել՝ որտեղ է Պաշկայի մանկապարտեզը, վիատությամբ մտածեց Լենան:

Դաշտի միջով գնալիս Լենան առջևում նկատեց ապրանքներով բեռնված երկու կնոջ:

Նա հասավ նրանց հետևից: Կանայք գնում էին ոչ այն ուղղությամբ, որը պետք էր Լենային, ոչ դեպի մանկապարտեզ, այլ դեպի ավտոբուս, բայց Լենան նրանց

հետևից գնաց ուղիղ երկու կիլոմետր ու նստեց մոտեցած լիքը ավտոբուսը՝ ամբողջովին դողալով:

Մի կանգառ գնալով, Լենան, որպես հետքերը խառնող փորձառու լրտես, դուրս եկավ (կանայք աչքերը մեկ արած ակնհայտորեն նայում էին նրան), սպասեց հանդիպակաց ավտոբուսին ու մանկապարտեզի մոտ վերադարձավ մեկուկես ժամ հետո:

Ասես ոչինչ էլ չէր եղել, Լենան Պաշային տարավ դեպի գետը, այնտեղ միասին նստեցին ամբողջ քնելու ժամը՝ մինչև հետկեսօրյա ճաշը, իսկ հետո նորից նույն դողը ծնկներում՝ գնաց դեպի նույն կանգառը:

Այնտեղ այնքան մարդ կար (կիրակիի երեկոն), որ Լենան, մի կերպ կարողանալով վերջին ավտոբուսը խցկվել, ամբողջ ճանապարհը կանգնած էր մի ոտքի վրա, բոլոր կողմերից սեղմված մարդկանցով, սակայն արդեն բոլորովին ոչ սարսափելի, օտար գինովցած մարդկանցով. և մետրոյով ուրախ մեկնեց հոր մոտ, հավաքելու, լվանալու և կերակրելու, մաքրելու ու պառկեցնելու նրան՝ իր ծեր երեխային, եւ ամբողջ կյանքն իրեն ներկայացավ մաքուր ու լուսավոր, միայն պետք էր մոռանալ մերձմոսկովյան գյուղի սարսափը, Ռայիսայի ու գիշերային ամբոխի սարսափը:

Սակայն մոռանալ չհաջողվեց երբեք:

# Տաճ

# գաղտնիքը

Ես երբեք չեմ մոռանա՝ ինչպես եմ երեխաների հետ եկել իշխանությունների կողմից մոռացված փոքրիկ քաղաք, նպատակ ունենալով մի կերպ գոյատևել ամառային ամիսը: Դա հինավուրց արևմտյան քաղաք էր, չնայած որ՝ մասնակիորեն բնահողային ճանապարհներով, սակայն երեսուն կիլոմետրի վրա ծովով, հինավուրց ամրոցով՝ արևելքում գտնվող բոլոր կինոստուդիաների նկարահանման օբյեկտով, իսկ քաղաքից դեպի արևմուտք աղմկում էր միայն ծովը, գլորվելով Ֆինլանդիայի կողմը: Ամենաամառային ժամանակաշրջանն էր, քաղաքը լցված էր մարդկանցով, և մեզ բնակեցրին քանդման ենթակա մի տան մեջ: Այսինքն՝ այնտեղ ամեն ինչ կար. և ջուր բակում, և ոչ մեծ բալոնով գազի սալօջախ, սակայն արդեն ինչ-որ բան այցելել էր այդ տունը, ինչ-որ լքվածություն կամ մոռացում: Մեզ ցույց տվեցին չորս զուգահեռ կանգնած մահճակալներով սենյակը, իսկ պատուհաններից ջերմացնում էր արևը՝ երեկոյան մինչև սենյակի խորքը թափանցող, մի խոսքով՝ մենք, ինչպես ցանկացած փախստական, ուրախ էինք: Երևում էր՝ տունը շուտափույթ կարգի էր բերվել. վարագույրներ էին կախված և հատակն էր լվացված մի երկու շաբաթ առաջ, այնպես որ ժամանակի բարակ բրոնզափառն էր պատել տունը, սակայն աղբի ոչ մի հետք, ոչ մի կտոր թուղթ չկար: Մենք չգիտեինք, թե տանն ինչից քանի հատ կար, քանի սենյակ և այլն, մեր սենյակը երեք դուռ ուներ, խոհանոցից նույնպես մի ավելորդ դուռ տանում էր տան խորքերը, կային նաև դեպի վերև տանող աստիճաններ: Ինչ-որ գաղնիքներ էր թաքցնում այդ տունը, ինչպես որ կթաքցներ յուրաքանչ-

յուր հին տուն. ձայների անդրադարձումներ, ոմանց մահեր, ինչ-որ մեկի մենությունը: Տունն ավարտում էր իր գոյությունը, դա ակնհայտ էր ընդհանուր ողբերգական լքվածությունից, չնայած այդ հանգամանքը կոծկելու որոշ փորձերի՝ սոսնձել, կպցնել, ծածկել: Քսան հատ փայտե կախարաններ էին կախված մեխերի կմախքաձև ողկույզից, ասես՝ դատարկ անրակների կուտակ, ահնետացած պահարանների ու զգեստների հետք:

Մենք իրերը թողեցինք ու ճանապարհվեցինք, բնականաբար, դեպի ամրոց, որտեղ հասանք հանդիսավոր մայրամուտին: Մեզ դիմավորեց մայր չմտնող, կանգնած արևը, և ճանապարհ դրեց էլի նույն վիճակով, դրանք սպիտակ գիշերների մնացորդներն էին, սակայն երեխաները ոչինչ չէին հասկանում եւ աղմկում էին ինչպես ցերեկը, բղավում էին, համերգ կազմակերպեցին բաց անապատային բեմահարթակի վրա: Բոլորովին հունից հանված, երեկոյան արևի լրիվ լույսի տակ պառկեցին իրենց նոր, բայց հին, կոտրած զրահավոր անկողիններում ու միայն քնելուց առաջ գանգատվեցին, որ ճանճ է տզզում: Ես պատասխանեցի առաջինը, ինչ գլուխս եկավ, որ ճանճն ընկել է սարդոստայնը: Իրականում այդպիսին էր տպավորությունը. ուժգին, անգամ հուժկու տզզոցը մեջընդմիջվում էր դադարներով:

Քաղաքը քնեց, լռությունն ամբողջացավ, ես պառկել էի՝ հայացքս հառած լրիվ լուսավոր պատուհաններին, ու լսում էի այդ դադարներով զարհուրելի ճանճի կանչը՝ տզզզ-լռություն-տզզզբզզ-լռություն:

Հետո ես չդիմացա ու բառացիորեն մագլցեցի պատով՝

փնտրելու սարդոստայնը: Անկյունում անգամ ծանր ճանճասպան գտա, մարտական մասը ռետինե, կովի լեզվի պես մեծ: Ամեն ինչ զուր էր:

Զզզ-տժժժ- բզզզ և ոչինչ, դատարկություն:

Առաստաղի, հատակի, պատերի ու ճեղքերի մանրակրկիտ զննումից, պաստառներին ականջ դնելուց հետո ես տապալվեցի իմ զրահավոր ցանցի վրա ու սկսեցի մտածել՝ այդ ինչ է բզզում, դժժում, տժժում, քանի որ ձայնն անհասկանալի էր, միայն առանձին հատվածներ էին լսվում ուղիղ ականջի դիմաց՝ վզզ-վզզ ու լռություն:

Հետո պարզվեց, որ դա լռություն չէր: Պարզ լսելի դռռոցից հետո (կարծես ձայնը խափանումներով էր, դռդռացող ռադիոյի նման ինչ-որ բան, որը կարծես խոսում է, բայց որոշ ալիքների վրա դռդռող ձայներ է տալիս) - ահա այսպես, «վզզ» ու «բզզ»-երից հետո ես լսեցի ձայների արձագանքներ, կարծես շտապողական զրույց հեռվում, փողոցում: Ինչ-որ կանայք հուզված ու միապաղաղ դժժում էին, փնթփնթում նույն բանը՝ ինչ-որ մեկին համոզելով: Ես անգամ փողոցային տեսարան պատկերացրի. իբր մի քանի կին ինչ-որ բան են ապացուցում լուռ միլիցիոներին, ընդ որում՝ այդ ամենը հաղորդվում է վատ ռադիոյով: Ես սկսեցի տարբերակել ձայները: Հետո նորից սկսվեցին խափանումները, ռադիոն դռդռաց ու սկսվեց «դզզզ, բզզզ»:

Ես սկսեցի հասկանալ, որ կողքի սենյակներից մեկում ռադիոկետ է աշխատում ու համբերությամբ սկսեցի սպասել ժամը տասներկուսին, երբ վերջապես ամեն ինչ կլռի՝ սպասելով սլաքների զարկին ու ամենգիշերյա հզոր հիմ-

նին: Բայց այդ ի՞նչ ռադիոհաղորդում է: Ի՞նչ նորություններ են, այդ ի՞նչ ռադիոթատրոն է տեղի, ժամանակի ու գործողության լիակատար միասնությամբ, երբ ընթանում է ակնհայտորեն կանացի շարժման հետ կապված ինչ-որ հասարակական վեճի ուղղակի հեռարձակում:

Գիշերվա ժամը մեկն անց էր, սակայն այդ վատ ռադիոն դեռևս ցույց էր անում: Ու հազիվ թե դա որևէ արևմտյան ռադիոկայան լիներ, ես ինքս մի ժամանակ աշխատել եմ ռադիոյում ու գիտեմ, որ մեկ իրադարձությանն այդքան եթերաժամ չեն հատկացնի, մանավանդ, որ դա, այնուամենայնիվ, ճանճ էր: Իսկ շատախոսությո՞ւնը: Մարդկային ձանձրացուցիչ, կանացի դատարկախոսությունը չէր դադարում, բայց չէ՞ որ ուշ գիշեր էր: Չէ՞ որ ճանճերը գիշերը քնում են: Ինձ չես խաբի: Ես վեր կացա ու գնացի տանը ռադիոկետ փնտրելու: Ինչպես Կապույտ Մորուքի դղյակում, ես վախվորած բացեցի չգիտես ուր տանող դուռը ու խոհանոցից անցա մի փոշոտ տարածություն, որտեղ կար անիվները վերև արած հեծանիվ, որտեղ կանգնած էին դատարկ գրադարակն ու անպետք իրերով գրասեղանը: Պատուհաններից դուրս հաստատուն կանգնած էր այգաբացը: Այդ սենյակում հանգստություն էր տիրում: Այստեղից տանող ևս մեկ դուռ կար՝ խցանված ինչով միայն հնարավոր է: Պետք էր թքել ու հեռանալ, բայց իմ ու երեխաների գլխավերևում դռդռացող խելագար ռադիոյի մասին հիշողություններն ինձ ուժ տվեցին: Ինքնամոռացության մեջ ես սկսեցի տեղափոխել լագանները, հեծանիվը, կահույքը ու վերջապես ինձ վրա ձգեցի ավետյաց դուռը: Ուղիղ դռան առջև ես տեսա անկողին ու գլուխը դե-

պի ինձ, հոնքերը կպցրած, այդ անկողնում քնած էր սպի-տակահեր փոքրիկ ծերուկ ու ինչպես հասկացա՝ նրա հետ ինչ-որ բան այն չէր: Նա ուղղակի պստլիկ էր: Նրա լրիվ սպիտակած գլուխը ուժասպառությունից հետ էր գցված, եւ նա ամբողջովին հոգնածություն էր ճառագում: Ես սար-սափահար եղա ու արագորեն փակեցի ահավոր դռնակը, սակայն մի քանի վայրկյան անց տեղը բերեցի, որ այդ քնածը իմ խիստ հոգնած որդի Ֆեդյան է, ով մինչ այդ չէր քնել նաև գնացքում մի ամբողջ գիշեր (շահել էր ուղեկցոր-դուհու վստահությունը և գրեթե ամբողջ ճանապարհը հեր-թապահել նրա հետ: Ինչ-որ գործեր ունեին դրոշակների հետ կապված, դրան գումարած՝ ես եմ ընկել վերևի հար-կից, ուզում էի ծածկոցով ծածկել աղջկաս, ով քնած էր, բնականաբար, խորը ներքևում, եւ չեմ նկատել բարձրու-թյունների տարբերությունը, պարզապես քայլ եմ արել դե-պի նա ու վերջ: Հասկանալի է, երեխաները արթնացան: Եվ այդ ամենին գումարած՝ մի ժամ անց, առավոտվա դեմ մեր խցիկում տեղավորվելու եկավ մի երիտասարդ զինվո-րական ու զգուշացրեց, որ վաղ է իջնելու: Այնպես որ՝ չենք քնել ու խեղճ տղաս աչքիս հիվանդ ծերուկ թվաց: Թուհ, տուհ:)

Օհ, մայրերի հոգսեր ու իրարանցում:

Ես խայտառակված վերադարձա իմ ցուցարար ճանճի մոտ, ուղղեցի երեխաների վրայի ծածկոցները ու պառ-կած լսեցի նաև բազում ելույթներ, գանգատներ, հեկե-կանքներ ու չար մռթմռթոցներ: Գուցե մեղուներ են: Բայց մեղուները, ինչպես գիտենք, գիշերը քնում են: Ես նորից սկսեցի հակվել ռադիոյի մասին մտքերի կողմը, բայց այն-

տեղ էլ, այնուամենայնիվ, ընդմիջումներ կան, երաժշտություն ու հաղորդավարի ձայն: Առավոտյան աղջիկս վեր կենալուց առաջ խնդրեց, որ ճանճին հանեմ սարդոստայնից, որովհետև խեղճ են բոլորը, մոծակները, ճանճերը և բոլորը: Հինգ տարեկան երեխան բոլորին խղճում է:

Իսկ ճանճը շարունակում էր զնգալ ու տզզալ:

Ցերեկով մեզ մոտ եկան երկու բարեհամբույր կին, ըստ երևույթին՝ տանտիրուհին ու հավաքարարը, կամ հավաքարարը ընկերուհու հետ, ես այդպես էլ չհասկացա, քանի որ այստեղ, այս արևմտյան կողմերում բոլորը հագնվում ու պահում են իրենց համեստ ու սեփական արժանապատվության զգացումով, այսինքն՝ բարյացակամ: Ես ընդհանրապես այստեղ ոչ մի բան չէի հասկանում, թե ում տունն է սա, ով է ում բարեկամը, ու հատկապես, թե ում է պատկանում շքեղ, ճերմակ, երկհարկանի, համարյա եռահարկ տունը, նկուղային հարկում ավտոտնակով, երկար պատշգամբով ու մեծ քանակությամբ մաքուր լվացված լուսամուտներով, իսկ տունն այդ վեր էր խոյանում երկու քայլի հեռավորության վրա լքված՝ փողը ծռած աղբահորով, ժանգոտած կասկածելի ջրհորով, իր հոտերով ու, վերջապես, իր ձեղնահարկով տնից, որը մենք՝ երեք կանայքս, խմբովին այցելեցինք ու չհայտնաբերեցինք այնտեղ ոչ միացրած ռադիո, ոչ մեղուներ, այլ հայտնաբերեցինք պետքանոթ, որը հայտնվում է տանը հայտնի հանգամանքների առկայության դեպքում, որից հետո արդեն ամեն ինչ դուրս են տանում ու դեն գցում՝ ներքնակն ու մնացած ամեն ինչը:

Մենք համերաշխորեն այցելեցինք ձեղնահարկը, ռու-

սերեն ոչինչ չհասկացող երկու կին ու ես՝ իր ժամանակավոր բնի հոգսաշատ մայրս: Մենք երեխաների հետ ամեն ձևով ներկայացնում էինք «տզզզ»-ն ու «բզզզ»-ը ամբողջ գիշեր ու մատնացույց անում սենյակի անկյունները, և ականջ էինք դնում պաստառներին, սակայն գրեթե ոչինչ չէր լսվում: Քաղաքն արթնացավ, իսկ քաղաքը մեքենայացված էր, չնայած գտնվում էր աշխարհի ծայրին. բոլորը մեքենաներ էին քշում, դռռում էր շրջանակերպ սղոցը, բզզում էին երիտասարդների մոտոցիկլները, ճղճղում էին պատուհանների տակ վազող երեխաները և այլն: Կանայք, դաստիարակված ու ժպտացող, ոչինչ չլսեցին: Մենք շրջեցինք ամբողջ տունը, իսկ այնտեղ ընդամենը երեք սենյակ էր, պարզապես յուրաքանչյուր սենյակում երեքական դուռ կար, այստեղից էլ Կապույտ Մորուքի դղյակի տպավորությունը:

Մենք համերաշխ խմբով դուրս եկանք փողոց, պտտվեցինք տան շուրջը և այստեղ բացահայտվեց, որ ճեղքի միջով ձիաբոռեր են ներս են թռչում: Նրանք գործնականորեն դռդռում էին, ցերեկը՝ կամաց, նրանք գեր ու բրդոտ էին, եւ մենք բոլորս արձակեցինք որսորդական կանչ. «Տեսնում եմ նշանը»:

Հետո ամեն ինչ լուծվեց շատ պարզ, զույգ կանայք բացատրեցին, որ տանտերը կգա երեկոյան ժամը վեցին: Ես ենթադրեցի, որ մի քիչ քլորոֆոս ցանենք դրանց վրա ու դրանք կթռչեն-կհեռանան: «Ոչ»,- ասացին ժպտացող կանայք. նրանք կասկածում էին, որ քլորոֆոսը կազդի ձիաբոռերի վրա, դա երևում էր նրանց ժպիտներից:

Մենք երեխաների հետ քաղաքով մեկ երկար վազվզե-

ցինք՝ ավտոբուս փնտրելով, ինչպես թափառական ուղտավորներ, սակայն մեզ ոչ ոք չկարողացավ կարգին բան բացատրել: Դժվար է առանց լեզվի: Քեզ մեղավոր ես զգում ու ավելորդ՝ հացի օտար պատառի կողքին: Վերջապես մենք եկանք ավտոկայան, ժամը հինգի ավտոբուսի տոմս գնեցինք, ես բուֆետում հերթի կանգնեցի, իսկ երեխաներին նստեցրի շատ փոքր սպասասրահում, որտեղ հաճելի զով էր ու կիսամութ: Հետո մոտ վազեց աղջիկս, նա մի տեղ գնալու պետք ուներ, մենք նկուղում գտանք այդ վայրը, որ համապատասխանում էր միջինարևելյան չափանիշներին (աշխատող չկար), հետո նորից բարձրացանք արևմուտք, ես նորից նրանց նստեցրի նստարանին ու ծանոթ ճանապարհով գնացի բուֆետ, դեպի լուռ, կարգին տոթը, որտեղ շարված էր երկար, համբերատար արևմտյան հերթը, պահպանելով հեռավորությունը մի մարդուց մյուսը:

Մենք երեխաների հետ կերանք, խմեցինք, երկու թխվածքաբլիթ թղթի մեջ փաթաթելով վերցրինք մեզ հետ, երեկոյան երկու բլիթն էլ պայուսակիս մեջ ճմռթվել ու փշուր-փշուր էին եղել: Դա արդեն կատարվում էր երեսուն կիլոմետր հեռավորության վրա, ծովափին, սպիտակ ավազի վրա՝ սոճիների ու հանգստացողների շրջապատում, ովքեր իրար ձայն էին տալիս անհասկանալի լեզվով ու շատ պատշաճ տեսք ունեին:

Մենք ջուր խմեցինք գնած շշից, բաժանեցինք թխվածքի ճմռթված փշուրները, երեխաները լողացան երես տեղերում, արևը շարունակ կանգնած էր ու ջերմացնում էր, ջուրը պարզապես եռում էր, բայց ես անհանգիստ էի՝ երբ

է մեկնելու վերջին ավտոբուսը: Հարցուփորձի միջոցով, այստեղ ավելորդ մարդու օրինավոր զգացում ապրելով, ես, այնուամենայնիվ, պատառիկներից քամեցի «յոթն անց երեսուն» տեղեկությունը, մենք հավաքվեցինք ու քարշ եկանք դեպի կանգառ, որտեղ սպասեցինք ևս կես ժամ: Որպես փոքրի, աղջկաս տեղ զիջեցին, եւ մենք անգամ ճոխությամբ հասանք գիշերելու վայրը՝ մեր հին տունը, որտեղ էլ հայտնաբերեցինք կոտորածի հետքերը: Մեր սենյակից քլորոֆոսի ահավոր հոտ էր գալիս, ասես այն ամենուրեք ցողել են շռայլ ձեռքով ու հետո կրնկի վրա բացել բոլոր պատուհանները: Եթե տանտերը ցողեր միայն բնում, ապա նա չէր բացի մեր պատուհանները, ճի՞շտ է: Սակայն տանտերը ցողելով հիմա արդեն մեր բույնը, այդպիսով դուրս քշեց նաև մեզ, և մենք ամբողջ բնով տեղավորվեցինք հարևան սենյակում, որտեղ ամեն ինչ պատրաստ էր հանգստացողների ժամանման համար ու կային երկու պատրաստ անկողիններ: Ես հոգատարորեն չտրորված տեղաշորերը տեղափոխեցի մեր սենյակ, իսկ մերը բերեցի նոր սենյակ, ինքս պառկեցի հատակին, և վերջապես մենք երրորդ գիշերը հանգստացանք երերուն, տաք քնով, և քնի մեջ ես պաշտպանում ու խիզախորեն արդարացնում էի երազումս տեսած մեծ գրողին, որ հանկարծ այդպիսին էր դարձել լրիվ ոչնչությունից: Թե ինչու հանկարծ երազումս նման ապագա տեսա, անհասկանալի էր, իրականում դա կատարյալ, չարաբաստիկ ոչինչ էր, մշտական վախով կաթվածահար՝ իր կյանքի համար, իր թոքերի համար, իր ապագայի համար. նա հաճախ էր ասում, որ երկար չի ապրի և այդ կարգախոսի տակ կրծքի

քաղցկեղի հասցրեց երիտասարդ ու գեղեցիկ կնոջը, համենայնդեպս այդպես էին ասում մարդիկ, նա մահացավ հինգ վիժումներից հետո, և ամեն ինչ անցավ ավազի մեջ, նրա ամբողջ կյանքը, նա թողեց կնոջը, չէր սիրում ու թողեց, իսկ կինը աքսորյալ երեխա էր, ճամբարային, ու նրա մեջ կյանքն առանց այդ էլ հազիվ էր գոյատևում, հետո էլ անցավ ավազի մեջ, իսկ տղամարդու մոտ՝ մանավանդ: Ինչո՞ւ ես երազում տեսա, իբր նա հանճար է ու ես նրան պաշտպանում եմ: Իր աղջկան նա նույնպես լքել է, նրան դաստիարակել է հեռավոր ազգականուհին, ալիմենտներ, ըստ զրույցների՝ չէր էլ տեսել, մի խոսքով՝ պրծած գործ է, էլի կյանք առանց խղճի, պարտքի ու կարգուկանոնի մի նշույլի: Դե, թերևս, չսիրած կնոջ նկատմամբ մեծերից շատերն էին իրեց անհեթեթ պահում ու կործանում, ինչպես բոլոր ուժեղներն են կործանում իրենց խանգարող թույլերին, ինչպես ես կործանեցի դժբախտ մեղուների պարսը, որ խանգարում էր իմ քունը:

Հաջորդ գիշերն իսկ ես համոզվեցի դրանում: Մենք հետ քոչեցինք, ամեն ինչ կարգին էր, երեխաները քնեցին, պատուհաններում կանգնած էր անմար լույսը և հանկարծ կենդանի տնքոց լսվեց հեռվից, անդրաշխարհից: Նա, ով տնքում էր, դա անում էր ուշ-ուշ, տանջալից, վշտահար: Նա բոլորովին մենակ էր ու բոլորի կողմից լքված, դա ինքն էր՝ ճանճային մայրը: Այնտեղ, որտեղ նախկինում եռում էր աշխատանքային, չար-հոգսաշատ, կռվարար կենդանի կյանքը, այնտեղ հիմա ամեն ինչ սպառվել է: Քլորոֆոսից վախեցած թռչել-հեռացել են բոլոր աշխատող մեղուները, իսկ ինքը՝ մայրը, մնացել էր մենակ, քանի

որ մինչև վերջ, ըստ երևույթին, հովհարում էր, օդափոխում էր թևիկներով իր դեռ քնած հարյուրավոր երիտասարդ ժառանգներին, որպեսզի նրանք չխեղդվեն: Ով կարող էր թռչել՝ հեռացավ, իսկ նա մնացել էր ու օդափոխել: Նրա տնքոցը տնքոց չէր, իսկ դեռ կենդանի թևիկների օդափոխության համար դռդռոցը միայն տարածության օդափոխության համար էր: Նա ելք չուներ, նա պարտավոր էր օդափոխել:

Հաջորդ օրվա երեկոյան մենք ծանոթացանք զույգ տների տիրոջ հետ: Նա, ինչպես և սպասվում էր՝ պնդակազմ, արևահարված տղամարդ էր, արևմտյան տիպի գեղջուկ, իսկ տվյալ պահին՝ բեռնատարի վարորդ: Նա մեզ տարավ դիտելու նոր՝ յոթ սենյակով ու երկու արհեստանոցով տունը, տուն երեք մակարդակի վրա՝ ավտոտնակով, շոգեբաղնիքով, սպիտակեղենի չորացման համար ձեղնահարկով: Բակում էլ կար այդպիսի սպիտակ տնտմասնաշենք, և ջերմոցներ կային, և մորու մարգեր ու երկու դաշտային բազկաթոռ սիզամարգի վրա, և ազնվամորու մացառներ ու վերջ:

- Օ՜, այսպիսի տուն, դրա համար պետք է շատ երեխաներ ունենալ,- դուրս տվեցի ես ու խփեցի իսկը տանտիրոջ սրտին:- Դուք շա՞տ ունեք:

- Ես երեք տղա ունեմ,- ասաց տանտերն առանց առանձնահատուկ շուքի ու սկսեց թվարկել.- տասնութ տարեկան, տասներեք տարեկան, յոթ տարեկան:

- Օ,- ասացի ես:- Երբ մեզ բնակարան էին տալիս երեք երեխայի համար, մորաքույրը տալիս էր վկայականն ու նայելով ասում. ձեր ավագը տասնութ տարեկան է, շու-

տով նրան էլ է բնակարան պետք լինելու, կամուսնանա ու՝ վերջ: Եվ իսկապես… - չհասցրի ես խոսքս ավարտել, նկատի ունենալով հերթական աննրբանկատ կենցաղային միտքը, որ որդին շուտով կին կբերի, սա էլ երեխաներ ու անհրաժեշտ կլինի նորից ինչ-որ բան մտածել նրանց մասին,- երբ տանտերը խոսքս կտրեց ամենահետաքրքիր տեղում: Երևում էր՝ այդ հոգսերով չէր նա ծանրաբեռնված:

- …ահա:

Նա ինձ տարավ հյուրասենյակ, որտեղ ամեն ինչ պատված էր պաստառներով ու բոլոր հիսուն մետրերը փայլում էին բոլոր կողմերից՝ հարավից ու հյուսիսից, գումարած՝ լայն միջանցքը տանում էր դեպի խոհանոց, իսկ այնտեղ նոր հեռանկարներ էին բացվում դեպի արևմուտք, որտեղից բացվում էր վաղորդյան լուսայգը, իսկ այնտեղ երևում էին նաև աստիճաններ, և այդպես շարունակ ու շարունակ:

- Բայց սա դեռ երկար պիտի սարքեմ,- ասաց տանտերը:

- Ոչինչ,- եղավ իմ պատասխանը:- Ասում են, որ միշտ պետք է տանը ինչ-որ բան մինչև վերջ չանել, երբ տունը լրիվ սարքած-վերջացրած է, բնակիչները մահանում են,- վրա բերեցի ես:

- Ոչ,- պատասխանեց նա:- Այստեղ դեռ շատ աշխատանք կա. երբ ներսի աշխատանքները սկսում են ներքևից, ապա վերևում շատ բան թողնում են կիսատ ու այդպես էլ մնում է: Ես ներսի աշխատանքները սկսել եմ վերևից,- ասաց նա ու նրա աչքերը խելքով փայլեցին:

- Իսկ այն տունը, հինը, ի՞նչ եք անելու:

- Ստիպված եմ լինելու քանդել,- պատասխանեց տանտերը,- այդպես է պետք: Խանգարում է նոր տանը:

- Իսկ նա քանի՞ տարեկան է:

- Իննսուներեք: Ես այն գնել եմ երկու ծեր … կանանցից, այո: Մեկը մահանում էր, իննսուներեք տարեկան էր: Նա շրջափակման մեջ էր եղել, Լենինգրադ, այո: Հետո եկավ քրոջ մոտ և այստեղ մահանում էր:

Օ ստվերներ, ստվերներ, օ ձեղնահարկ պետքանոթով, օ ուրվականներ ու մահացողների տնքոցներ: Բայց տեսնենք՝ ինչպիսի ընթացք ունեցան իրադարձություններն վայրկյան անց:

- Իսկ դուք երկա՞ր եք կառուցել այս տունը,- տվեցի, ինչպես պարզվեց, հերթական հիվանդագին հարցը: Այստեղ բոլոր հարցերն անտեղի էին, ինչպես պարզվեց: Չնայած այդ հարցերով ես աշխատում էի գովաբանել, ամրապնդել այդ մարդուն, ով քայքայվում էր իմ աչքերի առաջ, ասելով հետևյալը.

- Ամբողջ անցյալ տարին կորավ, այո, ես բաժանվում էի կնոջից:

- Կնոջի՞ց,- հիմար հարց տվի ես:

- Այո, այդպես:

- Ծանր է,- արտաբերեցի ես, բայց նա թույլ չտվեց հանգամանքներին լրիվ կոտրել իրեն:

- Նորից ամուսնացա:

- Նորի՞ց:

- Այո, այդպես,- ասաց այդ անկոտրում մարդը, ով տուն էր շինել չգիտես ում համար, ով ապրում էր ոչ այստեղ,

առանց իր սիրելի երեխաների, որոնց թվարկում էր, ինչ-պես Հոմերոսը նավեր էր թվարկում:

- Դե ինչ, այլևս չի՞ տզզում,- ուրախ հարցրեց ինձ:

- Ոչ, միայն մեկն էր գիշերը տնքում:

- Չի անի: Ես նրանց այսպես ուղղակի դեպի ներքև պշշ, պշշ,- նա ցույց տվեց ցողման գործընթացը:

Նա, երևում է, հասկացել էր, որ նրանք ապրում են ոչ թե փողոցի կողմից, այլ ներսում, նրանք ներս էին մտել դեպի խոր ու անվտանգ տեղ, համարյա պաստառի տակ, եւ նա ցողել էր մեր սենյակում, մանկական անկողինների վրայից, շատ հանգիստ, գրեթե ինչպես մարդակեր: Նամանավանդ, որ նրանք ներս էին թռչում փողոցից ու կարող էին կծել, եթե ցողել այնտեղից՝ մուտքի կողմից, իսկ սենյակ դեռևս ոչ մեկը չի թափանցել: Դա անվտանգ էր նրա համար բոլոր առումներով:

Հետո նա ասաց, որ դա իր նոր կնոջ երեք երեխաներն են:

- ՁԵ՞ՐՆ ԵՆ:

- Այո, այդպես:

Ես մտքումս սկսեցի արագ հաշվարկել այդ իրավիճակը: Այդ ինչպես է, որ նա ամբողջ կյանքը երեխաներ է կուտակել կողքից, ամուսնացած լինելով ուրիշի հետ: Ու հետո հանկարծ թողեց այս մեկին ու ամուսնացավ այն մեկի հետ: Տասնութ, տասներեք ու յոթ տարիներ առաջ երեխաներ է ունեցել ու միայն հիմա՞ նրանց ճանաչել:

Սակայն նույն պահին էլ ես հասկացա, որ նրա վատ ռուսերենը, գումարած տղամարդկային ու մարդկային ցանկությունը՝ շտկել իրավիճակը գոնե մի վայրկյանով,

թեկուզ այս պահին, հենց հիմա, հետո կպարզենք ինչն ինչ է. որ այդ ամենը միասին վերցրած շփոթմունքի մեջ գցեց ինձ: Այնուամենայնիվ, նա բաժանվել էր իր երեք երեխաներից, նրանք ոչ մի անգամ չերևացին այն շաբաթվա ընթացքում, քանի դեռ մենք այստեղ ապրում էինք, քանի դեռ նա աշխատանքից հետո զբաղվում էր իր ահագին հյուրասենյակի հատակներով, որտեղ կարելի էր հյուր կանչել հարյուր հոգու, սակայն նա այդքան հյուր չէր կարող հավաքել, որովհետև մարդն իր կյանքի ընթացքում հյուրեր է ձեռք բերում իր ընտանիքի միջոցով, և երբ ընտանիքը ցրվում է, ցրվում են և հյուրերը: Նոր կյանքն իմ տանտիրոջ մոտ սկսվում էր առանց  հարազատների կեսի, առանց հյուրերի ու առանց իր սիրելի երեխաների, որ ամենակարևորն է:

Բայց. եթե նա սկսել է կառուցել տունը դեռևս ամուսնացած լինելով, ապա տան կեսը պատկանում է կնոջը, իսկ երեխաների՞ն: Նրանց ևս ինչ-որ բա՞ն է պատկանում:

Այստեղ արդեն ես մտքերով խառնվեցի փողերի մեջ, մահը շփոթեցի բաժանումի հետ, ալիմենտները՝ ժառանգության հետ, կենդանի թաղեցի տանտիրոջն ու սկսեցի բաժանել այս գեղեցիկ հսկայական տունը. այսպես, այսպես… և այսպես: Եվ ի պատասխան՝ ոչինչ:

Իսկ նա՝ տանտերը, կենդանի էր ու լուռ զեռում էր, համերաշխ ու լուռ զեռում էր նրա հետ, ում ես համարում էի տնային աշխատող, որովհետև «սա ձեր տո՞ւնն է» հարցին նա պատասխանել է «ոչ»… բայց դե նա ի նկատի ուներ, որ սա ամուսնու տունն է:

Նրանք երկուսով էին, լուռ, խաղաղ, աշխատող ու հա-

մերաշխ զույգ, նրանք մերթ զբաղվում էին տնով, մերթ ձեղնահարկով, այնտեղից հանեցին բուրդն ու ուղարկեցին մեզ փորձելու, արդյո՞ք կգնեմ: Հյուսում և հյուսում էին բույն, հեռացած պարս, պարսամորը երիտասարդների հետ լքած ինչ-որ տեղ, անհայտության մեջ:

Հաջորդ օրն իսկ ճանճը մահացավ:

# Շարունակությունը

Մի աղջկա սպանել են, իսկ հետո կենդանացրել: Բանն այն էր, որ հարազատներին ասացին, թե աղջիկը մահացել է, բայց դին չտվեցին (միասին ավտոբուսով գնում էին, սակայն պայթյունի ժամանակ աղջիկը կանգնած էր առջևում, իսկ ծնողները նստած էին հետևի մասում): Աղջիկը տասնհինգ տարեկան էր, պայթյունի ալիքը շպրտել էր նրան:

Մինչ «շտապ» էին կանչում, մինչ տեղափոխում էին վիրավորներին ու մահացածներին, հայրը պահում էր աղջկան ձեռքերի վրա, չնայած պարզ էր, որ աղջիկը կենդանի չէ, և բժիշկն էլ հավաստել է մահը:

Ասես կենդանի մարդ էր պառկած պատգարակի վրա, սակայն չկար ոչ շնչառություն, ոչ երակազարկ: Ծնողներին տուն ուղարկեցին, նրանք չէին ուզում գնալ, դեռ դիակը նրանց տալու ժամանակը չէր, պետք է կատարվեին մեր արդարադատության և դատական բժշկության մեջ անհրաժեշտ բաներ՝ դիահերձում և պատճառների բացահայտում:

Սակայն հայրը՝ վշտից խելակորույս, բացի դրանից և խորապես հավատացյալ քրիստոնյա, որոշեց առևանգել աղջկան: Նա կնոջը, ով գրեթե կորցրել էր գիտակցությունը, տուն տարավ, դիմացավ զոքանչի հետ զրույցին, արթնացրեց հարևան բժշկուհուն, նրանից սպիտակ խալաթ վերցրեց, այնուհետև վերցրեց տանը եղած բոլոր փողերը, գնաց մոտակա հիվանդանոց, այնտեղ դատարկ «շտապ» վարձեց (գիշերվա ժամը երկուսն էր) և, պատգարակով ու բուժեղբորով, նաև սպիտակ խալաթով մտավ այն հիվանդանոցը, ուր պահում էին իր աղջկան. հերթապահի մոտից

աստիճաններով իջավ ներքնահարկի միջանցք, հանգիստ մտավ դիարան, այնտեղ ոչ ոք չկար, գտավ իր երեխային, բուժեղբոր հետ դրեց նրան պատգարակի վրա և կանչելով բեռնատար վերելակը, իր բեռը բարձրացրեց երրորդ հարկ՝ վիրահատական-վերակենդանացման բաժին: Նա այստեղ ամեն ինչ ուսումնասիրել էր դեռ երեկ երեկոյան, երբ ընդունարանում որոշման էին սպասում: Այնտեղ նա բաց թողեց բուժեղբորը և հերթապահ վերականգնողի հետ կարճ զրույցից, փողերի կապը տալուց հետո նրան հանձնեց իր աղջկան՝ ինտենսիվ թերապիայի բաժանմունք:

Քանի որ չկար բժշկական եզրակացություն, բժիշկը որոշեց, որ ծնողը «շտապ» է կանչել և մասնավոր կարգով հիվանդին (ավելի շուտ մեռածին) բերել մոտակա հիվանդանոց: Բժիշկ-վերականգնողի համար ակնհայտ էր, որ աղջիկը կենդանի չէ, սակայն նա փողի խիստ կարիք ուներ: Կինը նոր էր ծննդաբերել (նույնպես աղջիկ) և վերականգնող-բժշկի նյարդերը ծայրահեղ լարված էին: Մայրը չսիրեց նրա կնոջը, և ահա նրանք հերթով լաց էին լինում, լալիս էր նաև նորածինը, հիմա էլ այս գիշերային հերթապահությունները: Անհրաժեշտ էր փող գտնել ու տուն վարձել: Այն, ինչ առաջարկեց այս մահացած արքայադստեր խելագար (ակնհայտ էր) հայրը, կհերիքեր կես տարի վարձած տանը ապրելուն:

Ոչ մի խոսք չասելով՝ բժիշկը գործի անցավ. կարծես նրա առջև իսկապես կենդանի մարդ էր, միայն պատվիրեց հորը հիվանդանոցային հագուստ հագնել և նրան պառկեցրեց կողքի մահճակալին, նույն ինտենսիվ թերա-

պիայում, քանի որ հիվանդը վճռականորեն չէր ուզում լքել իր աղջկան:

Աղջիկը պառկած էր մարմարի պես սպիտակ, դեմքը՝ աներևակայելի գեղեցիկ, իսկ հայրն իր մահճակալին նստած նայում էր նրան ինչ-որ տարօրինակ հայացքով: Նրա մի բիբը անընդհատ մի կողմ էր հեռանում, իսկ երբ այդ ցնորվածը թարթում էր, նրա բիբերը մեծ դժվարությամբ էին բացվում: Բժիշկը զննելով նրա՝ խնդրեց բուժքրոջը նրա սրտագրառումը կատարել, իսկ հետո արագորեն սրսկեց հիվանդին: Հայրն իսկույն անջատվեց: Աղջիկը պառկած էր՝ ասես քնած գեղեցկուհի, սարքավորմանը միացրած: Բժիշկն անում էր ամեն հնարավորը, չնայած նրան արդեն ոչ ոք չէր վերահսկում այն հեռացող հայացքով: Ճիշտն ասած, տվյալ երիտասարդ բժիշկը մոլեռանդ մարդ էր՝ նրա համար աշխարհում գոյություն չուներ ավելի կարևոր ոչինչ, քան ծանր, հետաքրքիր դեպքը, քան մահվան շեմին գտնվող հիվանդը, կարևոր չէ ով՝ առանց անուն-ազգանուն իմանալու:

Հայրը քնած էր և քնի մեջ հանդիպեց աղջկան: Այսինքն՝ նա մեկնեց նրան այցելության, ինչպես մեկնում էր քաղաքից դուրս, մանկական առողջարան: Նա ուտելիք հավաքեց, չգիտես ինչու միայն մի կոտլետով հաց, միայն դա: Ամառային հիանալի մի երեկո նա ավտոբուս նստեց (էլի ավտոբուս) «Սոկոլ» մետրոյի շրջանում և մեկնեց ինչ-որ դրախտային տեղեր: Դաշտում՝ նուրբ կանաչ բլուրների մեջ, կանգնած էր մինչև երկինք հասնող կամարներով հսկայական մախրագույն մի տուն, իսկ երբ նա անցավ այդ հսկայական դարպասները և մտավ բակ, ապա այն-

տեղ՝ զմրուխտյա բացատում, անմիջապես խոտերի միջից ցայտում էր տան բարձրության չափ շատրվան՝ միաձույլ շիթով, որը վերևում բաժանվում էր փայլուն փետրափնջի: Երկարատև ամառային մայրամուտ էր, հայրը հաճույքով մոտեցավ կամարի աջ կողմում գտնվող մուտքին ու բարձրացավ վերևի հարկ: Աղջիկը հորը դիմավորեց փոքր-ինչ շփոթված, կարծես հայրը խանգարեց նրան: Նա կանգնած նայում էր մի կողմ: Կարծես թե այստեղ անցնում էր նրա սեփական, անձնական կյանքը, որը հորն արդեն չէր վերաբերվում, նրա ինչ-որ գործը:

Բնակարանն ահագին էր՝ բարձր առաստաղներով ու շատ լայն պատուհաններով, և նայում էր դեպի հարավ՝ ստվերոտ կողմին, շատրվանին, որը կողքից լուսավորված էր մայր մտնող արևով: Շատրվանը պատուհաններից էլ բարձր էր ցայտում:

- Ես քեզ համար կոտլետով հաց եմ բերել, ոնց-որ դու սիրում ես,- ասաց հայրը:

Նա մոտեցավ պատուհանի մոտ գտնվող սեղանին, դրա վրա դրեց իր փաթեթը, մտածեց ու բացեց այն: Տարօրինակ էր՝ փաթեթի մեջ էժանագին սև հացի երկու կտոր էր: Որպեսզի աղջկան ցույց տա, որ դրանց միջև կոտլետ կա, նա անջատեց հացի կտորները: Դրանց մեջ գտնվում էր (նա իսկույն հասկացավ դա) մարդու հում սիրտ: Հայրն անհանգստացավ, որ սիրտը եփած չէ, որ այն չի կարելի ուտել,- նորից փաթաթեց այն թղթի մեջ ու անվստահ արտաբերեց.

- Ես շփոթել եմ կարագահացերը, ես քեզ ուրիշը կբերեմ:

Բայց աղջիկը մոտեցավ և մի տեսակ արտառոց հայացքով նայեց հացի կտորներին: Այդժամ հայրը փաթեթը թաքցրեց գրպանում և պահեց ափով, որպեսզի աղջիկը չխլեր: Նա կանգնել էր կողքին՝ գլխահակ ու ձեռքը մեկնած.

- Տուր ինձ, հայրիկ, ես քաղցած եմ, ես շատ եմ քաղցած:

- Դու չպիտի ուտես այդ գարշանքը:

- Ոչ, տուր,- դժվարությամբ արտաբերեց նա:

Նա դեպի հոր գրպանն էր ձգում իր ճկուն, անչափ ճկուն ձեռքը: Սակայն հայրը հասկանում էր, որ եթե աղջիկը խլի և ուտի այն, նա կմահանա: Ուստի շրջվելով՝ նա հանեց փաթեթը, բացեց այն և սկսեց արագորեն ուտել այդ հում սիրտը: Նրա բերանն անմիջապես լցվեց արյունով: Նա ուտում էր արյունով սև հացը:

«Ահա և ես մահանում եմ,- մտածեց նա,- ինչ լավ է, որ ես՝ ավելի շուտ, քան նա»:

- Լսու՞մ եք ինձ, աչքներդ բացե'ք,- ասաց ինչ-որ մեկը:

Նա դժվարությամբ բացեց կոպերը և տեսավ, ասես մշուշում, երիտասարդ բժշկի լայնությամբ տարահոսող դեմքը:

- Ես ձեզ լսում եմ,- պատասխանեց հայրը:

Ո՞րն է ձեր արյան խումբը:

- Նույնն է, ինչ որ աղջկանս:

- Դու՞ք վստահ եք:

Նրան անմիջապես ինչ-որ տեղ տարան, քուղով կապեցին ձախ ձեռքը, երակի մեջ սրսկիչ մտցրին:

- Ինչպե՞ս է նա,- հարցրեց հայրը:

- Այսի՞նքն,- գործով զբաղված՝ հարցրեց բժիշկը:

- Ո՞ղջ է:

- Իսկ դուք ո՞նց եք կարծում,- անցողակի պատասխանեց բժիշկը:

- Ո՞՞ղջ է:

- Պառկե՛ք, պառկե՛ք:

Հայրը պառկած լսում էր, թե ինչպես է մեկը խոկացնում ու լացում:

Հետո արդեն հոգ էին տանում նրա մասին, և նա նորից մեկնեց ինչ-որ տեղ, նորից շուրջբոլորը կանաչ էր, բայց նրան արթնացրեց աղմուկը. դուստրը պառկած էր կողքի մահճակալին, բարձր խոկացնում էր՝ կարծես օդը նրան չէր հերիքում: Հայրը նրան նայում էր կողքից: Նրա դեմքը սպիտակ էր, բերանը՝ կիսաբաց: Հոր ձեռքից դեպի դստեր ձեռքը կենդանի արյուն էր հոսում: Նա իրեն շատ թեթև էր զգում, նա արագացնում էր արյան հոսքը, ուզում էր, որ այն ամբողջովին ներհոսեր իր երեխայի մեջ: Ուզում էր մահանալ, որպեսզի երեխան կենդանի մնար:

Այնուհետև նա հայտնվեց այն նույն բնակարանում, այն ահագին մոխրագույն տանը: Աղջիկն այնտեղ չէր: Նա կամացուկ սկսեց փնտրել նրան, ստուգեց բազմաթիվ պատուհաններով այդ ճոխ բնակարանի բոլոր անկյունները, բայց կենդանի ոչ ոք չգտավ: Այդժամ նա նստեց թախտի վրա, հետո պառկեց: Նա իրեն հանգիստ, լավ էր զգում, կարծես աղջիկն արդեն տնավորվել է ինչ-որ տեղ, ապրում է ուրախ, իսկ ինքն էլ կարող է հանգստանալ: Նա (քնի մեջ) սկսեց ննջել, սակայն հայտնվեց աղջիկը, հեղեղի պես թափով մտավ սենյակ, անմիջապես հայտնվեց

կողքին, ինչպես հողմապտույտ, շառաչեց, ցնցեց շուրջն ամեն ինչ, եղունգներով մխրճվեց նրա աջ ձեռքի ծալատեղը, այնպես որ՝ մտավ մաշկի տակ, ուժեղ ծակեց, և հայրը սարսափից բղավեց ու բացեց աչքերը: Աղջիկը պառկած էր կողքին, ծանր շնչում էր, բայց արդեն այնպես չէր խռկացնում: Հայրը կիսաբարձրացավ՝ հենվելով արմունկին, տեսավ, որ իր ձախ ձեռքը ազատ է քուղից ու վիրակապված, ու դիմեց բժշկին.

- Բժիշկ, ես պետք է շտապ զանգեմ:

- Ի՞նչ զանգել,- արձագանքեց բժիշկը,- առայժմ զանգելու կարիք չկա: Պառկեք, թե չէ դուք էլ ... ճանապարհ կընկնեք ...

Սակայն հեռանալուց առաջ նա տվեց իր ռադիոհեռախոսը և հայրը զանգեց տուն, կնոջը, բայց ոչ ոք չպատասխանեց: Կինն ու զոքանչը, երևում է, առավոտից դիարան էին գնացել և այժմ դես ու դեն էին ընկած, չհասկանալով, թե ուր է երեխայի դիակը:

Աղջկա վիճակն արդեն լավ էր, բայց գիտակցությունը դեռ չէր վերականգնվել: Հայրը ձգտում էր մնալ նրա մոտ՝ վերականգնողականում, ձևացնելով, թե մահանում է: Գիշերային բժիշկն արդեն գնացել էր, դժբախտն արդեն փող չուներ, սակայն արել էին նրա սրտագրառումը և առայժմ թողել, ըստ երևույթին՝ գիշերային բժիշկն ինչ-որ բանի մասին պայմանավորվել էր, կամ սրտագրառումը վատն էր: Հայրը մտածում էր, թե ինչ ձեռնարկել՝ իջնել ներքև նա չէր կարող, զանգել չէին թույլատրում, բոլորը օտար էին, զբաղված: Նա պատկերացնում էր, թե հիմա ինչ պիտի զգային իր երկու կանայք, իր «աղջիկները»,

ինչպես նա անվանում էր նրանց՝ կինն ու զոքանչը: Նրա սիրտը ուժգին ցավում էր : Նրան կաթուցիկ միացրին, ինչպես և աղջկան: Այնուհետև նա քնեց, իսկ երբ արթնացավ, աղջիկը կողքին չէր:

- Բուժքույր, իսկ ու՞ր է աղջիկը, որ այստեղ պառկած էր:

- Իսկ դուք ինչո՞ւ եք հետաքրքրվում:

- Ես նրա հայրն եմ, ահա թե ինչու, ո՞ւր է նա:

- Նրան տարել են վիրահատելու, մի վերկացեք ու մի հուզվեք, ձեզ չի կարելի:

- Իսկ նրա ի՞նչն է ...

- Չգիտեմ:

- Աղջիկ ջան, կանչեք բժշկին:

- Բոլորը զբաղված են:

Կողքին տնքում էր ինչ-որ ծերուկ, պատի մյուս կողմում ինչ-որ մեկը, երևում է՝ երիտասարդ բժիշկ, ինչ-որ մանիպուլյացիաներ էր անում ծեր կնոջ վրա և խոսում նրա հետ, ասես հիմարիկ գեղջկուհու հետ՝ բարձրաձայն ու կատակով.

- Դե ... տատիկ, ապուր կուզե՞ս: (Դադար): Ի՞նչ ապուր ես ուզում:

- Հըըմմ,- մռնչում էր տատիկը ինչ-որ անմարդկային թիթեղյա ձայնով:

- Սնկով ապուր կուզե՞ս (դադար): Սնկով ուզու՞մ ես: Սնկով ապուր կերած կա՞ս:

Հանկարծ ծեր կինը պատասխանեց իր թիթեղյա բասով.

- Սունկ ... կոտոշներով:

- Դեհ, ապրես,- բացականչեց բժիշկը:

Հայրը պառկած մտահոգվում էր՝ ինչ-որ տեղ վիրահատում են իր աղջկան, ինչ-որ տեղ նստած է վշտից ցնորված կինը, կողքին իր տեղը չի գտնում զոքանչը... Նրան զննեց երիտասարդ բժիշկը, նորից սրսկեցին՝ քնով անցավ:

Երեկոյան նա կամաց վեր կացավ ու ոտաբոբիկ, մի շապիկով դուրս գնաց: Մինչև սանդուղք հասավ աննկատ և սառը աստիճաններով իջավ՝ ինչպես ուրվական: Իջավ մինչև նկուղային միջանցք, գնաց համաձայն սլաքի, որի վրա գրված էր «Պատանատոմիայի բաժանմունք»:

Այստեղ նրան ձայն տվեց սպիտակ խալաթով մի տիպ.

- Հիվանդ, դուք ինչու՞ եք այստեղ:

- Ես դիարանից եմ,- հանկարծ պատասխանեց հայրը,- ես մոլորվել եմ:

- Ինչպե՞ս թե դիարանից:

- Ես դուրս եմ եկել, սակայն այնտեղ են մնացել իմ փաստաթղթերը: Ես վերադարձել եմ, բայց ու՞ր են դրանք:

- Ոչինչ չեմ հասկանում,- ասաց այդ սպիտակ խալաթավորը, բռնեց նրա թևից ու տարավ միջանցքով:

Իսկ հետո, այնուամենայնիվ, հարցրեց.

- Դուք ի՞նչ է, կենդանացե՞լ եք:

- Ես կենդանացա, որ ոք չկար, դուրս եկա, իսկ հետո որոշեցի, այնուամենայնիվ, վերադառնալ, որպեսզի արձանագրեն:

- Հրաշալի է,- պատասխանեց ուղեկցողը:

Նրանք եկան դիարան, բայց այստեղ նրանց հայհոյանքով դիմավորեց բուժեղբայրը: Հայրը մինչև վերջ համբերատար լսեց նրա բոլոր հանդիմանությունները և հարց-

րեց.

- Իմ աղջիկն այստե՞ղ է, նրան պիտի բերեին վիրահատությունից հետո:

Նա ասաց ազգանունը:

- Ասացի չկա՛, չկա՛ նա: Գլուխս տարան: Առավոտից փնտրում են: Չկա նա: Բոլորին ոտքի են հանել: Հիմա էլ այս հոգեկան հիվանդը, գժանոցի՞ց է փախել, ինչ է: Որտեղի՞ց է նա:

- Այնտեղ՝ միջանցքում դարան էր մտել բաժանմունքների միջև,- պատասխանեց սպիտակ խալաթավորը:

- Տո, կանչիր պահակներին,- նորից սկսեց հայհոյել բուժեղբայրը:

- Թույլ տվեք զանգեմ տուն,- խնդրեց հայրը:- Ես հիշեցի, որ պառկած էի վերականգնողականում, երրորդ հարկում: Հիշողությունս ցնդել է, ես այստեղ եմ ընկել Վարշավկայի վրա պայթյունից հետո:

Այստեղ սպիտակ խալաթավորները լռեցին: Վարշավկայի պայթյունը տեղի էր ունեցել մեկ օր առաջ: Նրան՝ ոտաբոբիկ, դողացող, տարան այն սեղանի մոտ, որի վրա գտնվում էր հեռախոսը:

Կինը վերցրեց խոսափողը և իսկույն սկսեց աղեկտուր լաց լինել.

- Դու, դու: Որտե՞ղ ես թափառում: Նրա դիակը տարել են. մենք չգիտենք, թե՝ ուր: Իսկ դու թափառում ես: Եվ տանն էլ կոպեկ չկա, անգամ տաքսու փող չգտանք: Դու ես վերցրել, չէ՞:

- Ես ... ես գիտակցությունս կորցրել էի, ընկա հիվանդանոց, վերակենդանացման բաժին ...

- Որտե՞ղ, ի՞նչ հիվանդանոց:

- Այն հիվանդանոցը, որտեղ նա էր ...

- Իսկ ու՞ր է նա, ու՞ր,- ճչում էր կինը:

- Ես չգիտեմ, ես ինքս չգիտեմ: Ես բոլորովին մերկ եմ, ինձ համար հագուստ բեր: Կանգնած եմ այստեղ, դիարանում, ոտաբոբիկ: Սա ո՞ր համարի հիվանդանոցն է:

- Իսկ դու ինչու՞ ես հայտնվել այնտեղ, ոչինչ չեմ հասկանում,- շարունակում էր հեկեկալ կինը:

Նա խոսափողը տվեց սպիտակ խալաթավորին: Սա անտարբեր հանգստությամբ հայտնեց հասցեն ու դրեց խոսափողը:

Բուժեղբայրը նրա համար բերեց խալաթ ու ծռմռատված հողաթափեր, ըստ երևույթին խղճաց կենդանի մարդուն և ուղարկեց պահակակետ: Այնտեղ եկան կինն ու զոքանչը՝ ուռած, ծերացած դեմքերով, հագցրին նրան, գրկեցին, վերջապես լսեցին նրան՝ երջանկությունից լաց լինելով, և բոլորը միասին սկսեցին սպասել՝ փոքրիկ բազմոցին նստած, որովհետև նրանց ասացին, որ աղջկան վիրահատել են և նա վերականգնողականում է և որ վիճակը միջին ծանրության է:

Երկու շաբաթ անց աղջիկը սկսեց քայլել, հայրը նրան ման էր տալիս միջանցքներով և ամբողջ ընթացքում կրկնում, որ նա կենդանի էր պայթյունից հետո, որ դա պարզապես շոկ էր, շոկ: Ոչ ոք չնկատեց, իսկ իրեն ամեն ինչ պարզ էր ի սկզբանե: Ճիշտ է, նա ոչինչ չասաց այն հում մարդկային սրտի մասին, որ ինքը ստիպված էր ուտել, որպեսզի այն աղջիկը չուտեր: Չէ՞ որ դա երազում էր, իսկ երազինը հաշիվ չէ...

# Լեռան

# վրայից

Զարմանալի է խմբակային գոյության ազդեցությունը, հեռու իրական, առօրեական կյանքից, տնից և բարեկամներից: Առօրյայի ամբողջ բեռն անհետանում է գումար հայթայթելու խնդրի հետ միասին. դու տեղավորված ես, դու այստեղ ժամանակավոր ես՝ մեկ շաբաթով, արձակուրդի մեջ և այլն:

Այստեղ է, որ պատրանքը դարանակալում է մարդուն. այդպես էլ պետք է լինի, նախաճաշից մինչև ճաշ, ընթրիքից մինչև գիշեր և միայն մի բան է մտահոգում՝ ավելի ու ավելի լավ տեսք ունենալ, և արդեն գտնվում է մեկը, ով գնահատում է, հիանում, իսկ այստեղից էլ հեռու չէ հիացմունքը նրանով, ով հիացել էր:

Մենք հետևում էինք, մենք՝ նրանց մեծ հանգստյան տան դիմացի ապրողներս, այն կնոջը, ով վանող ու գռեհիկ տեսք ուներ և հենց դա էր աչքի ընկնում: Նա շատ էր ծիծաղում, ասենք՝ ավտոբուսով իր աշխատանքային հանգստյան տան տղամարդկանց ընկերակցությամբ ուղևորվելով շուկա՝ մրգերի հետևից կամ էլ տեղացիների մոտ՝ գինու շշի հետևից, ինպես բոլորս էինք անում: Նա իր երամի գլուխն էր և ահա ձեզ պատկեր՝ կարճ սանրվածք, ինչ-որ վարսահարդարական զսպանակներ, մազերի էժանագին գանգրացում, մահացած մազեր՝ նոր արված քիմիայից հետո, ապա՝ պոկած և կապտասև ներկած հոնքեր, բերանը՝ քսած, իհարկե՝ նույնպես էժանագին ձևով: Ամբողջ գեղեցկությունը, ինչպես ասում են, դեղատնից՝ շիշը 20 ռուբլի: Կարճ կիսաշրջազգեստ, բոկոտիկներ՝ ամենաէժան ու գռեհիկ ձևի, բայց և նորաձևության հավակնող, այս խոսքերը անցյալ դարից են և բավականին ճշգրիտ՝ հավակնությունների հարցում լինել բոլորի

պես՝ մյուսներից ոչ պակաս, ոչ մի բանում հետ չմնալ: Նա հավակնում էր, խեղճ կին, երջանկության, ուզում էր ճաշակել, պոկել մի կտոր իրական, իրեն անհասանելի երջանկությունից և այն կյանքից, որ բոլորը տեսնում են սերիալներում:

Եվ այսպես՝ լողափ, արև, իսկ նա ունի նորաձև բոկոտիկներ, թույն գանգուրներ, ներկած հոնքեր, սև ակնոցներ և անմիջապես (ուշադրություն)՝ հիացած արուների մի ամբոխ, նրանց հետ նա շուկա է գնում:

Տղամադու կողմը, ինչպես դա լինում է շների հարսանիքներին, բազմազան է, չորս առանձնյակ են, մեկը՝ բարձրահասակ, նույնպես տոնական հագնված՝ այս շոգին մոխրագույն կոստյումով, այսինքն՝ նա հագել էր ունեցած ամենալավ շորը, հետո՝ փորավորների ցեղից մի քեռի՝ մայկայով մի երիտասարդ, որը ոչ գյուղից էր, ոչ քաղաքից՝ երկար մազերով և չափազանց փոքր մեկը՝ (անպայման վերջից, բոլորից փոքր, անդրավարտիքը՝ փքված), այդ վերջինը ակնհայտ այս առիթով խմելու հույս ուներ:

Նա, այդ համընդհանուր Կարմենը, հռհռում է, բայց ոչ այնքան կոպիտ, որքան կարելի է ենթադրել, ոչ զիլ կլկլաձայն, հարբած ու զվարթ կնոջ ձևով, ով կանչում է ում որ պատահի, ամբողջ շրջապատին, քանզի նրանց ծիծաղը կոչնակ ոռնոց է: Կարմենը կարճ և խլացված է ծիծաղում, ոչ այնքան ակնհայտ, հո քսան մարդ չի հավաքելու, առանց այդ էլ արդեն շատ են: Իսկ մոխրագույն կոստյումով բարձրահասակ տղամարդը գնում է նրա հետ գլուխ գլխի, առաջինը այդ ոհմակի մեջ, շքեղ հագնված, լուրջ, քաղցած արուն, երամի մնացած անդամների նկատմամբ

ամենախիստ մտադրություններով:

Լրջությունն ընդհանուր առմամբ ավելի նշանակալից է և ավելի ծանր է կշռում, քան անկաշկանդությունն ու ազատությունը, թեթևությունն ու զվարթությունը: Լրջությունն է ղեկավարում պարահանդեսը և այստեղ, ինչպես ամենուր, մոխրագույնին հենց այդպես էլ կպչում է Առաջին Քեռի մականունը:

Կարմենը և Առաջին Քեռին ամենուրեք միասին են երևում, մնացյալ շների հարսանիքը կորել է, գետնի տակն է անցել: Առաջին Քեռին վերջապես բաժանվել է իր մոխրագույն կոստյումից և ման է գալիս կարգին մոխրագույն կիսատաբատով, կեպկայով և վերնաշապիկով, որն այստեղ է գնել,- երևում է՝ այդ նա է ընտրել, նրանք արդեն ընտանեկաններ են (ճամբարային գոտիներում այդպես են անվանում ընդհանուր տնտեսություն վարող միասեռ զույգերին):

Ընտանեկաններ Կարմենը և Առաջին Քեռին արդեն հանգիստ են քայլում, կինն այլևս չի հռհռում, տղամարդը տանում է նրա պայուսակը, նրանք ճաշարան գնում են այնպես, ինչպես աշխատանքի, լուրջ տեսքով գնում են լողափ, ինչպես գործերով կգնան, այդպես ավտոբուսով գնում են շուկա, ավտոբուսը միշտ լցված է, նրանք միշտ իրար սեղմված են կանգնած. կինը ներքևից (կարճահասակ նույնիսկ բարձրակրունկ կոշիկներով) նայում էր նրան, բայց աչքերով հասնում էր միայն քթին (դա երևում էր), աչքերին չէր նայում: Առաջին նշանը, որ կինը սիրահարված է, ուշադրություն: Տղամարդն ընդանրապես նայում էր գլուխների վերևից, բարձրահասակ քեռի, որը ամբոխի մեջ պաշտպանում է իր փոքրիկ էգին, և այնքան

ակնհայտ է դառնում բոլորին, որ այդ երկուսը սիրում են իրար ու առանձնացած են բոլորից, և ամբոխը նունպես ասես թե խոտանում է նրանց, հավանություն չի տալիս, հեռու է մղում, անգամ ընդհանուր աղբանոցի մեջ նրանք մի տեսակ դատապարտված են, յուրային չեն:

Այո, դա տեղի է ունեցել նրանց հետ՝ ամենամեծ դժբախտությունը: Տխրությունը փայլում է նրանց աչքերում, համարյա արցունքներ էին կանգնած:

Ավելին, հաշվետու ժամանակում նա՝ Կարմենը, մի տեսակ նստվել է, ձեռք է բերել քնքշություն և կարծես ոսկե լուսապսակ (հնարավոր է՝ հարավն է ազդել, արևայրուքը): Նրա մազերը խունացել են, թեթևակի ուղղվել, սպիտակ ալիքով շղարշվել, սա՝ մեկ: Երկրորդ, որ մաշկը մգացել էր, աչքերի գույնը բացվել ու փայլում էին: Ձգված կազմվածքով, բարետես, որևէ կինոաստղից ոչ պակաս, մեր Կարմենն ամբողջությամբ լուսավորված էր սիրով, խղճահարությամբ, ասես շփոթվել է, իրեն կորցրել,- իսկ Առաջին Քեռին ընդհանրապես չի փոխվել, չնայած նույնպես արևհարվել էր:

Բայց աշխատավոր մարդու մոտ, ով մշտապես իր վրա է կրում ամբողջ աշխարհի կոռը, այդ արևայրուքը ոչինչ չի փոխում: Ձմռանն աշխատավորը գույնը գցում է, ամռանը՝ սևանում, վերջ:

Սակայն նրա վրա էլ արդեն զգացվում էր սիրուն ուղեկցող տառապանքի, հրաժեշտի, թախծի դրոշմը:

Ասես բարձր լեռան վրայից թռչելով, մարդը սեղմում է ատամները ու քարանում, աչքերը կկոցված են, սիրտն ընկնում է, ամբողջ կամքն ուղղված է ստորոտին ուղղված վերջին հարվածին. բայց կենդանի մնալու մասին չէ խոս-

քը, այլ ավելի սարսափելի ինչ-որ բանի մասին, և այստեղ մարդը մենակ է: Կողքից դեպի ներքև է սլանում նրա սերը և այն պիտի հալվի այլ ուղղությամբ, հիմա ճանապարհները կբաժանվեն: Բանն անձնական մահը չէ, խոսքն այդ մասին չէ, բանը հենց հավերժական բաժանումն է:

Նրանք դեռ ետ ու առաջ էին անում տեղում՝ կառչելով մեկը մյուսից, երիտասարդության ինչ-որ վայրենի երաժշտության ներքո, պարող ամբոխի մեջ, տղամարդու արմունկից կախված է նրա պայուսակը, հետո նրանք վերջին օրերը պառկած են ծովափին: Բայց ոչ այնտեղ, որտեղ բոլոր մարդիկ, որտեղ հովանոցներն ու պառկելաթախտերն են, այլ հեռվում. զույգը հեռանում է հեռու, այնտեղ ոչ ոք չկա, և շուտով այդ երկուսն էլ բոլորովին կհալվեն ոսկե կուրացնող լույսի տակ, կկորչեն՝ հանգստացողների նոր խումբ է ժամանում:

Նրանք այլևս չկան, ծովափին անիմաստ դես ու դեն են թրեւում նոր սպիտակ մարմիններ, ճղճղան, ոչ մեկինը, իրենք իրենցով, եսասեր խոզուկներ, դնչեր, իսկ մեր սքանչելի զույգն այստեղ չէ, և Կարմենը՝ ոսկե խարտյաշը ու նրա հավատարիմ ամուսինը՝ Առաջին Քեռին, բարձրահասակ, ջլոտ, սև մաշկով, նրանք անցել են հավերժության գիրկը, թռչում են սառած բարձունքներում ինչ-որ տեղ, տարբեր ինքնաթիռներում, դեպի իրենց տեղերը, իրենց երեխաների ու ամուսինների մոտ, դեպի ձմեռ, ձյուն և աշխատանք:

Միայն Կարմենը անձնագիրը ձեռքին վազելու է փոստը ցպահանջ նամակի հետեւից, իսկ Առաջին Քեռին նրան հեռագրով կկանչի հեռախոսազանգի կետ և այնտեղ միջքաղաքային հեռախոսով նրանք նորից հոգինե-

րով կմիանան, հազարավոր կիլոմետրերի հեռավորության վրա միասին լաց կլինեն իրենց ճակատագրի վրա և լաց կլինեն ու ինչ-որ բաներ կգոռան ուղիղ տասը րոպե, այնքան, որքան տղամարդը պատվիրել ու վճարել է. ինչպես այն ժամանակ՝ ամռանը, երբ վճարված էր ուղիղ քսանչորս օրվա համար: Նրանք կբղավեն ու լաց կլինեն, խաբված հագստյան պատրանքով, դրախտի հավերժ լույսով հրապուրված ու լքված:

# Հնգածը

Արդեն քանի անգամ է կրկնվել այդ իրավիճակը, չնայած անհնար է զոհին կասկածել զոհ լինելու ցանկության մեջ, բայց. ինչքան էլ հաճախակի է կրկնվում այդ իրավիճակը (ամուսինը հեռանում է ուրիշի մոտ, կինը մահանում է), ամեն անգամ առաջ է գալիս նույն միտքը, որ ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ: Որ կինը մահացել է այ այդպես, լրիվ խզումից ուղղակի անմիջապես հետո (կամ երեք ամիս անց, կամ էլի որոշ ժամանակ անց), կինը մահացել է հենց այն պատճառով, որ խղճահարություն և բարեհոգություն էր ակնկալում ամուսնուց: Որ այդ մահը գանգատ էր: Որ կինն իր մահով ասես մինչև մահ կանչում էր իր ամուսնուն, սակայն արդյունքն ի՞նչ. ամուսինը, որպես կանոն՝ ինքն իր հետ ոչինչ չէր կարող անել և եթե դժվար պահին կողքին էր, ապա դա միայն ժամանակավոր էր, ինչպես ասում են՝ նստել մահճի մոտ, ջուր դնել բերանին, իսկ հետո կազդուրման դեպքում նա ծլկում էր ընդմիշտ, իսկ մահվան դեպքում, ինքներդ եք հասկանում՝ իր վրա էր վերցնում թաղումը և մնացածը:

Այսինքն՝ կնոջը թողնելով, ամուսինը ոչ մի կերպ չէր կարողանում ազդել իրադարձությունների վրա, նա հեռանում էր լարախաղացի պես, ինչքան արագ, այդքան ավելի անվտանգ, իսկ եթե նրա նոր ընկերուհին արդեն երեխայի էր սպասում, ապա ամբողջ գործը լուսավորվում էր և նոր պարտականությամբ, որը հնից ոչնչով պակաս կամ ավելի թեթև չէր: Եվ այստեղ, և այնտեղ կանայք են, և այստեղ, և այնտեղ երեխաներ են, հո չեմ պատռվելու, ապրել եմ այնտեղ, կապրեմ և այստեղ:

Մի անգամ ամուսինը թողեց կնոջն ու երեխային ու սկսեց ապրել վարձովի բնակարանում, այսինքն՝ բնակա-

րան վարձեց ոչ հեռվում, իբր կապերը լրիվ չխզեց, կարծես ձգեց թելը, բայց չկտրեց, որպեսզի շատ չբարդացնի առաջին կնոջ ու երեխայի կյանքը, ամեն ինչ աստիճանաբար հասցնել զրոյի. ու ամեն երեկո թեթև զբոսանքի էր գնում կնոջ ու աղջկա մոտ, գնում էր, նստում, թեյ էր խմում ու հեռուստացույց նայում, ֆուտբոլ ու հոկեյ: Հետո, գիշերը մոտենալուն պես, հեռանում էր նոր կնոջ մոտ, ով սպասում էր նրան վարձած բնակարանում ձևավորվող երեխայի հետ միասին: Այդ ամեներեկոյան թեյախմությունների իմաստն այն էր, որ մեր երեխային մենք չենք թողնում:

Հետո իրադարձությունները ծավալվեցին հետևյալ կերպ. ընտանեկան շրջապատում որոշակի քանակի այդպիսի երեկոներից հետո կինը հանկարծ նախասենյակում գետնին տապալվեց, խռխռացրեց ու մահացավ:

Այ հիմա հարց է առաջանում, դա ի՞նչ էր, այդ կաթվածը երեսունհինգ տարեկան առողջ, ջլապինդ, պարզ ու բարի կնոջ մոտ, ով իր ուսերին քարշ էր տալիս ամուսնուն, աղջկան, դպրոցում ուսուցչությունը և միշտ, բոլոր հանգամանքներում առաջինը որ անում էր, ծիծաղելն էր: Դա ի՞նչ էր, այդ ի՞նչ հնարք էր, ի՞նչ միջոց էր՝ ընկնել ու խռխռացնել: Մի՞թե այդքան սիրում էր իր քրքրված ամուսնուն, իր ևս մեկ երեխային, որին իր կարճատև կյանքի կեսի ընթացքում խնամում էր, ինչպես հիվանդի, կամ ինչպես թերզարգացածի, ով ի վիճակի չէր մաքուր հագնվել, իր կերակուրը տաքացնել, էլ չենք ասում, որ կարելի էր երբեմն ապուր եփել, կամ շորերը լվանալ (իր համար, միայն իր, ոչ երեխայի):

Մի՞թե այդքան սիրում էր նրան, չէ՞ որ գիտեր նրա բո-

լոր սովորությունները, նրա մանրահոգի եսասիրությունը, անտարբերությունը ուրիշների տառապանքների հանդեպ, մանավանդ, երբ ինքը տարբեր պատմություններ էր պատմում դպրոցից, ինչպես նաև նրա նողկանքը կնոջ գլխացավերի հանդեպ, ինչից կինը փսխում էր հիվանդ կատվի պես:

Ընդհանրապես նա լավ ընկեր էր, լավ սիրահետորդ էր աշխատավայրի կանանց համար, սիրում էր ասել՝ «ես ձեր ոտքերի առաջ եմ», նրան երկրպագում էին, նա ընկերական շրջապատի նեցուկն էր, օգնում էր ծանոթներին դժվար պահերին և այլն, կարող էր տնից տանել մի լավ գիրք ու նվիրել այն, եթե ծննդյան տոնի ներկայանալու ուրիշ բան չուներ և այլն: Բացի դրանից, նա գիտությունների դոկտոր էր, դասախոսություններով մեկնում էր այստեղ ու այնտեղ, արտասահման, նրան այնտեղ էլ էին սիրում: Նա աշակերտներ ուներ, որոնց օգնում էր ողջ ուժերով:

Բայց այ քեզ բան, տուն գալով նա կերպարանափոխվում էր, դառնում էր թթված, մանրախնդիր, զզվող, կարող էր գոռգոռալ աղջկա վրա, իսկ քանի տարեկան էր նա այդ ժամանակ՝ տասներկու. նա վեր էր թռչում ու աչքերը չռում, միայն այդքանը: Հորը ջղայնացնում էին նրա ճաշակն ու հետաքրքրությունները, երաժշտությունը, որ նա լսում էր, բարձր երգեցողության ու հեռուստացույցի հանդեպ նրա սերը: «Ու՞մ ես մեծացնում, ուսուցչուհի»՝ բղավում էր ամուսինը: Կինն ի պատասխան ժպտում էր, այդպիսին էր հետևանքը: Կինը միշտ էր ժպտում, միայն պետք էր իմանալ նրա ժպիտների միջև տարբերությունը, որոշ նրբերանգներ: Նկարագրվող դեպքերում դա, իհարկե, նրա սովորական լայն ու բարեհամբույր ժպիտը չէր,

այլ ինչ-որ ուրիշը, որը ոչ ոք չէր տեսել՝ ամուսնուց ու աղջկանից բացի: Չէր կարող պատահել, որ կինը նրա նողկանքով լի բղավոցին պատասխաներ սովորականի պես հարցական-ոգևորիչ, քնքուշ ժպիտով, որով միշտ արձագանքում էր ցանկացած անհասկանալի նախադասության կամ չլուծված հարցի: Դա նաև չէր կարող խղճահարության կամ ըմբռնումի ժպիտ լինել (այդպիսին լինում էր, երբ նա տեսնում էր ուրիշի բացթողումն ու հապաղում էր վիրավորել մարդուն):

Հնարավոր է՝ նկարագրված ընտանեկան իրավիճակների դեպքում կնոջ դեմքն արտահայտում էր ժպիտի նման ինչ-որ տարօրինակ բան, բայց այդ մասին ոչ ոք չգիտի: Աղջիկը չի ասի, նա մեծացել է որպես միայնակ գայլ, անցնելով անվճար պոռնկուհու, նկուղների, որտեղ հավաքվում է երիտասարդությունը, տրվող-աղջկա կյանքի բոլոր փուլերը, իսկ հիմա նա երեք երեխաների մայր է, ով իր բիզնեսմեն-ամուսնու հետ համերաշխ ապրում է Մերձմոսկովյան շրջանում: Բանն այն չէ, որ աղջիկն ի վիճակի չէր հասկանալու ժպտացող մոր դեմքի ամբողջ սոսկումը, երբ հայրը վերջապես նրան ասաց ապահարզանի մասին խոսքերը, որ պետք է բաժանվեն և անմիջապես հավաքվեց եւ իր հետ տարավ իր որոշ իրերը՝ համակարգիչն ու մարզագնդերը, իսկ մնացած ամեն ինչը թողեց, այդ թվում և նորագույն հսկայական հեռուստացույցը, բայց հետո, ըստ երևույթին, չդիմանալով այդ հեռուստացույցի հետ բաժանմանը, ամուսինը սկսեց ամեն երեկո գալ ու դիտել մրցախաղերը: Այսինքն՝ աղջիկն ունակ էր ամեն ինչ հասկանալու, սակայն ոչ ոքի երբեք ոչինչ չէր պատմում, մոր մահից հետո ձգտում էր ապրել լուռ ու մե-

նակ, այդպես լռակյաց, հայրը նրան տարավ տատի մոտ, այդպես էլ լուռ մի շաբաթ անց նա հեռացավ այնտեղից և տասներեք տարեկանում ձեռքից ձեռք ընկավ, գնաց այնտեղ, որտեղ նրան ընդունեցին գրկաբաց (բառացիորեն): Իսկ ուրիշ ու՞ր գնար՝ հարազատ բնակարանի բանալին չուներ, այնտեղ ոչ ոք դուռը չբացեց, աղջիկը նստեց բակում, ընկերուհիներն ու ընկերները դուրս եկան զբոսնելու, նրան տարան նկուղ՝ ուրիշ քնելու տեղ չուներ, ու վերջ:

Հետո աղջկան գտան ոստիկանները, դուրս հանեցին նկուղից ու հարազատները (տատն ու հայրը) պահում էին նրան տարբեր հիվանդանոցներում՝ վեներոլոգիականից մինչև հոգեբուժական, իսկ ոստիկաններն ուզում էին գաղութ ուղարկել, բայց հարազատները չտվին, ու կյանքն այդպես էլ ընթացավ. հոր մայրը բղավում էր նրա վրա հոր պես, նա ուժ չուներ աղջկա հետևից գիշերները վազելու, իսկ հետո, երբ լրացավ աղջկա տասնութ տարին, նա բնակվեց սեփական բնակարանում, նրան այլևս ոչ ոք չէր խանգարում ու նա վերջնականապես պոռնկացավ՝ ամբողջ բակը և բոլոր հարևան բակերը հավաքվում էին նրա մոտ, բնակարանը՝ դատարկ, կեղտոտ, առանց կահույքի, բայց պատերին աղջկա համար տղաների ծեծկռտուքների հետքերով վայրի հռչակ ստացավ: Նա մշտական պահանջարկ ուներ ու ոչ ոքի չէր մերժում, թերևս խմբից գտնվում էր մեկը՝ գլխավորը, ով ներս չէր թողնում այս մեկին ու այն մեկին, եւ բոլորը հետևում էին դրան, գոռալով, որ այստեղ երեխա կա (նա արդեն երեխա ուներ):

Մի խոսքով՝ այդ անբարոյական Մարինան չէր, որ կարող էր պատմել այն մասին, թե ինչպիսին էր մոր դեմքի արտահայտությունը, երբ նա օրը ցերեկով ընկավ նախա-

սենյակում ու խռխռաց ամբողջ բնակարանով մեկ: Իսկն ասած, կարելի է ենթադրել, որ դա սովորական մահամերձ արտահայտություն էր՝ ազնվաբարո, մոմե, անշարժ դեմք, հունական ողբերգության դիմակ՝ բաց բերանով, այդքան բան: «Փրկեք», «երեխային չլքես» կամ նման այլ արտահայտություն այդ դեմքի վրա կարդալ հնարավոր չէր, մոր հոգին արդեն հեռացել էր, և այդ հոգու հետ հեռացել էին աղջկա մասին բոլոր հոգացողությունները, նրան վերաբերող բոլոր երկրային տանջանքները, բոլոր այն մտքերը, թե ինչպես է մեծանալու հոր կողմից լքված աղջիկը-, այդ ամենը հեռացավ:

Մարինան, այսուհանդերձ, տարիների ընթացքում օրինակելի մայր դառավ ու խնամում է իր երեխաներին, ինչպես կատուն իր ձագերին, իսկ ամուսինը նրա մեջ ամենից առաջ գնահատում էր ազնվաբարո լռակյացությունն ու այն, որ նա հմուտ սիրուհի է, այնպես, որ այստեղ ամեն ինչ բարեհաջող է:

Ամուսինը գտնվեց, երբ Մարինան հանուն փողի ու տեղական ոստիկանությունից հեռու մնալու համար, իր երկուսենյականոց բնակարանը փոխեց ավելի փոքրի հետ, ու քանի դեռ բոլոր հին ընկերները չէին սովորել այդ ճամփան, գտնվեց Կամչատկայից մի երիտասարդ տղամարդ, ով սենյակ էր վարձել նույն մուտքում եւ օգնեց տեղափոխել իրերը: Մարինան նրան անմիջապես դուր եկավ եւ նույն երեկոյան, բավականին շուտ, նա կատակով եկավ նրա մոտ գիշերելու և այդպես էլ կպավ:

Ինչ վերաբերվում է նրա հորը, ապա նա թողեց և այն ընտանիքը, հետո հեռացավ նաև նորագույն կնոջից ու փոքրիկ երեխայից, այնպես որ՝ տպավորություն կա, որ

նա այդպես էլ չգտավ կնոջ իդեալական կերպարը, յուրաքանչյուրը յուրովի անդուր էր դառնում նրա համար, կարծես նա միշտ մտածում էր այն մեկի՝ առաջինի մասին, ով պառկած էր փոքրիկ նախասենյակի լայնքով, ծանր աշխատանքի արտահայտությունը դեմքին, այն միակը, ով մահացավ իր պատճառով:

# Աստվածածնի դեպքը

Մայր ու որդի միաժամանակ սիրավեպեր էին ապրում ու մի անգամ՝ կիրակնօրյա նախաճաշին, որդին ասաց իր ընկերուհու անունը՝ Նատաշա Կանդաուրովա: Մայրը ծիծաղեց, որովհետև իր նավաստու ազգանունը ևս սկսվում էր «Կան»-ով, եւ մայրն ասաց այդ ազգանունը: Բայց որդին ոչինչ չմտապահեց: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչու ինքը հանկարծ բարձրաձայն ասաց «Նատաշա Կանդաուրովա», նա փորձում էր մոր հետ ծիծաղել զուգադիպության վրա, բայց իրականում շատ վախեցած էր: Եվ երբ մայրը սկսեց ծիծաղելով ինչ-որ բան պատմել իր նավաստու մասին, նա վեր կացավ ու գնաց խոհանոց: Մայրը շարունակում էր սենյակից խոսել՝ ժպտալով իր պատմածի բովանդակության վրա, բայց նա ոչինչ չէր հասկանում և քարացած կանգնել էր լվացարանակոնքի մոտ: Վերջապես մայրը լռեց՝ նրանից ակնկալելով նմանատիպ պատմություն Նատաշա Կանդաուրովայի մասին: Եվ զգացվում էր, որ նա լռում էր մի տեսակ կշտացած, կարծես ստացել էր՝ ինչ ուզում էր ու հիմա պատրաստ էր նրան թևի տակ առնել, մխիթարել իր փորձով, և իր հերթին նրանից ստանալ մխիթարություն: Մոր ծիծաղը մի տեսակ հիմար էր, կանացի, գրգռված՝ երկու «Կան»-երի դեմ իրենց փոքրիկ ընտանեկան միության կանխազգացումով: Նա կարծես երջանիկ էր իր անսպասելի հաղթանակով, երջանիկ էր այն բանից, որ որդին վերջապես մեծացավ և հասկացավ նրա կյանքը ու մորն էլ թույլ կտա հասկանալ իր կյանքը:

Տղան կանգնած էր լվացարանակոնքի մոտ գտնվող երկու աղյուսի վրա ու ատամներն էր մաքրում հաճախ կանգ առնելով ու նայելով մի կետի, իսկ հետո պարանո-

ցից քաշեց սրբիչը, այն կախեց մեխից և ոտքը զգուշորեն դրեց տախտակին, որը փռած էր մինչև դուռ՝ նոր ներկած հատակի վրայից: Տախտակը ճկվում էր, և նա մտախոհ սկսեց ճոճվել դրա վրա: Նա ինքն իր համար հասկացավ, որ Նատաշա Կանդաուրովային մատնեց միայն նրա համար, որ բարձրաձայն արտաբերի «Նատաշա Կանդաուրովա»: Նա անընդհատ մտովի խոսում էր Նատաշայի հետ, բայց դա քիչ էր նրա համար, պարզվում է: Պարզվում է՝ նրան անհրաժեշտ էր բարձրաձայնել այդ անունը մի կույր պարծենկոտության և մոռացության մեջ: «Կանդաուրովա»՝ ասաց նա բարձրաձայն, ինքն իրեն փորձելով, թե կարո՞ղ է, արդյոք, ավելի ուժգին ճզմել ինքն իրեն: «Կանդաուրովա» բառը նա մինչև վերջ չարտասանեց, դրա փոխարեն երգեց «Կա…ա» և երգելով դուրս եկավ աստիճանների վրա: Մայրը երևի հասկացավ այդ «Կա…ա»-ն, բայց ձայն չհանեց նրա հետևից, այլ մնաց նստած սենյակում՝ խոնարհված կեղտոտ ափսեների ու բաժակների վրա:

Նա արդեն շատ անգամ էր տանջվել մորից, երբ մայրը մանուկ հասակում տաշտի մեջ լողացնում էր նրան, ասելով, որ որոշ տղաներ հաճույքի համար զբաղվում են հիմարություններով, և որ դա շատ վատ է, որ դրա համար կարող են հիվանդանոց տանել ու սրսկել: Եվ երբ նա մի քիչ էլ մեծացավ, մայրը սկսեց նրան պատմել, թե ինչպիսի ծանր ծննդաբերություն է ունեցել, նա ընդամենը տասնութ տարեկան էր և նրան վիճակվել էր եզակի դեպք, որ լինում էր հարյուրից մեկի մոտ՝ Աստվածածնի դեպքը. նա ծիծաղում էր, որ պառկեց ծնարանի սեղանին՝ լինելով կույս, սակայն բժիշկը վիրահատական միջամտության չդիմեց և

նրան կին դարձրեց որդին... Մայրն այդ ամենը նրան պատմում էր մթության մեջ, երբ որդին արդեն պառկած էր ծալովի մահճակալի վրա՝ բոլոր կողմերից ծածկված վերմակով, իսկ ինքը փոխում էր շորերը գիշերվա համար և ծնկներով սողոսկում էր իր անկողնու մեջ՝ չոր ձայնով ներբանը ներբանին քսելով: Որդին պառկած էր՝ հայացքը հառած առաստաղին և սարսափից ատամները սեղմած: Այդ բառերը՝ կույս, ծննդաբերություն, նա դեռ նոր էր սկսում փնտրել բառարաններում ու հանրագիտարանում, այդ բառերի մեջ կար մի տեսակ անտանելի արգելք, գաղտնիք, անհրաժեշտություն, որ չէր կարելի խախտել և որը պիտի կուտակվեր նրա մեջ աստիճանաբար, որպեսզի նա վերջիվերջո կարողանար համակերպվել դրան: Բայց մայրը նրան չէր խնայում: Նա կարծես վաղուց չունեցած հարազատ ընտանիքի կարոտով էր լցվել, ու միայն սպասում էր, երբ մի քիչ կմեծանա տղան, որպեսզի նրան էլ ավելի մոտեցնի իրեն՝ բացատրելով նրան, թե որքանով է տղան պատկանում մորը, որքան է նա իրենը: Եվ դրանից է, որ նա չէր տանում անգամ անմեղ հիշողություններն այն մասին, թե ինչ փոքրիկն էր նա, թե ինչպես էր մայրը հանրակացարանում ստիպված միայն գիշերները ընդհանուր խոհանոցում փռում խանձարուրները, իսկ ցերեկով նրան թույլ չէին տալիս, և ինչպես ինքը լինելով հղի, ժանյակ էր գործում, որպեսզի խանձարուրների ծայրերը դարձնի ժանեկապատ, որպեսզի նրա երեսը պաշտպանի ճանճերից, բայց որ նա միաժամանակ կարողանար շնչել: Եվ թե ինչքան էր նա ատում իր ամուսին Ստեպանովի մարմնի հոտը, նրան թվում էր, որ Ստեպանովից կսկծեցուցիչ մազի հոտ էր գալիս, թե ինչպես նա այդ

Ստեպանովին իրեն մոտ չէր թողնում, և հանրակացարանի բոլոր աղջիկները հսկում էին նրան, երբ նա պառկած էր և նրա սիրտը խառնում էր միայն այն մտքից, որ Ստեպանովը կարող էր անգամ մի քիչ մոտենալ իրեն:

Տղան ստիպված էր հիշել այդ ամենը ու պահել իր մեջ և ամաչել «ծննդաբերություն», «կույս» բառերից, որովհետև դասընկերների համար դա բոլորովին այն չէր, ինչ իր համար: Նա մնացածների նման չէր: Եվ երբ երեխաները դասամիջոցին դպրոցից դուրս հին նստարանների վրա միմյանց պատմում էին տարբեր դեպքեր և թե ինչն ինչ է նշանակում, նա ինքն իրեն ստիպում էր ծիծաղել նրանց հետ, որպեսզի ոչ ոք չնկատի, որ նա սարսափելի գաղտնիք ունի՝ «կույս» և «ծննդաբերություն» բառերը նրան էին վերաբերվում, նա դրանցում ամոթալի մասնակցություն էր ունեցել:

Տղան մտերիմ ընկեր չուներ, ում հետ կարողանար ամեն ինչ քննարկել, ամեն ինչ պարզել և որին նա կարող էր վերջապես խոստովանել, որ ծննդաբերության ժամանակ ինքն է իր մորը կին դարձրել:

Իսկ հետո, երբ նա մեծացավ և սկսեց մորը ներողամտությամբ վերաբերվել, դրանում նա անսպասելի ապավեն զգաց իր համար, իր ձևավորվող արժանապատվության համար, նա դադարեց հիշել իր մանկական ամոթի պատճառների մասին, չնայած երբեմն առանց որևէ պատճառի նա սարսափելի տխրում էր: Բայց նա իր մեջ արագ ճնշում էր այդ թախիծը: Իսկ մայրն արդեն չգիտեր, թե ինչպես նրան մոտենար, և վախենում էր ինքն իրեն նորից ցավ պատճառել եւ բորբոքել կարոտը նրա հանդեպ, ով ամեն անգամ հանգիստ հեռու էր քաշվում: Թեև տղան

երբեմն քիչ-միչ զրուցում էր մոր հետ մանր-մունր բաների, հաճախ կարդացած գրքերի մասին: Մայրն ամեն անգամ այնպես էր տրվում այդ զրույցներին, այնպիսի ուրախությամբ էր նրան ընդառաջ գնում ու կլանում նրա ամեն մի խոսքը, որ տղայի համար նեղվածք ու անհարամար էր դառնում պաշտելի որդու այդ դերը, և նա նորից էր մեկուսանում ու հեռու քաշվում, մորը թողնելով տարակուսանքի ու ինքն իրենից վախի զգացման մեջ:

Մի անգամ մայրը դադարեց ուշադրություն դարձնել իր նկատմամբ տղայի վերաբերմունքին և ուղղակի ասաց նրան, որ իրեն պետք է հիվանդանոց ուղեկցել: Մայրը ցրված էր առավոտից, երբ նա պատրաստվում էր դպրոց գնալ, ու  վեր չկացավ տղայի համար ճվածեղ անելու, այլ մնաց պառկած ու փակ աչքերով նայում էր պատուհանից: Երբ տղան վերադարձավ դպրոցից, ապա թեթևակի անտրամադիր էր, որովհետև զգում էր, որ մայրն արդեն  չի տառապում իր գերազանցությամբ, այլ մեծահասակի ինչ-որ գործեր են նրան զբաղեցնում, որոնք հասկանալու համար ինքը դեռ չէր հասունացել: Եվ որ ընդհանրապես նա շատ քիչ բան գիտի մոր մասին, և որ մայրը իրենից բացի կյանքի այլ բովանդակություն ունի:

Տղան հնազանդությամբ գնաց նրա կողքով, ճիշտ է՝ նա չէր ուզում, որ մայրը հենվեր իրեն, որովհետև դրանում շինծուություն էր տեսնում՝ եթե ինքը չլիներ, մայրը կգնար առանց որևէ մեկին հենվելու: Սակայն մայրը չզգաց որդու մտքերը, չնայած սովորաբար նա զգում էր այն ամենը, ինչ զգում էր որդին: Մայրը հենվեց որդու ուսին և տղան մորն ուղեկցեց մինչև ավտոբուս: Ամառային ամայի երեկո էր, շուրջը ոչ ոք չկար: Հիվանդանոցի մոտ էլ

մարդ չկար: Երբ նրանք բարձրացան քարե սանդղամուտքը, մայրը սեղմեց կոճակը ու առանց հետ նայելու սկսեց սպասել: Հետո նա շրջվեց և արագորեն, կարծես զբաղված լիներ, համբուրեց տղայի ճակատը: Դռների մեջ նրան դիմավորում էր գիրուկ դայակը:

Տղան մնաց մենակ ու սկսեց հետ ու առաջ քայլել քարե սանդղամուտքին, կարդաց ապակե դռան մյուս կողմից փակցված հայտարարությունը. «Ծննդկանների ընդունելությունը՝ բակից»: Տղային սարսափելի տհաճություն պատճառեց «ծննդկան» բառը, սակայն նա փորձեց քմծիծաղ տալ, որպեսզի խեղդեր իր մեջ մանկական տխրությունը: Շուտով դուռը սկսեց բացվել, մյուս կողմից դայակը չարչարվում էր՝ դեպի իրեն քաշելով բռնակը ու չէր նայում տղային: Այդպես, չնայելով, նա անցքի միջով մի տոպրակ խոթեց՝ մեջը օրաթերթով փաթաթված, տռզած մի բան: Մոր սպիտակեղենով այդ անհեթեթ տոպրակը ձեռքին՝ նա շրջվեց, որ գնա, իսկ դայակն արագ փակեց դուռը ու սկսեց ձգել բռնակը, որպեսզի կողպի դուռը:

Նա բոլորովին մենակ մնաց այն փողերի հետ, որ իրեն էր թողել մայրը: Դասարանը շուտով ցրելու են, և նրանք, ում քառորդային ու տարեկան գնահատականներն արդեն նշանակված էին, չարաճճիություններ էին անում ու աղմկում: Նա կարդում էր բոլոր դասերին, նրան թեթևության ու ազատության նախկինում չունեցած զգացում էր համակել: Գծագրության վերջին ժամին, երբ նա իր գծագիրը ձեռքին սպասում էր, որ ուսուցիչ Նիկոլան կարտասանի իր ազգանունը, հանկարծ դասարան խցկվեց տնօրենի քարտուղարուհի Զոյա Ալեքսեևնան ու բարձր արտաբերեց նրա անունը: Նա տհաճ վախի զգացում ունե-

ցավ, վեր կացավ ու գնաց քարտուղարուհու հետևից: Առաջին հարկում, սեղանի վրա դրված էր հեռախոսափողը: «Քե՛զ են ուզում,- նշանակալիորեն ասաց Զոյա Ալեքսեևնան,- մայրիկիդ մոտից է, հիվանդանոցից»: Նա վերցրեց խոսափողը ու լուրջ ասաց. «Հեռախոսի մոտ», բայց ի պատասխան միայն ինչ-որ շրշյուն էր լսվում: Հետո մոր ձայնը հեռվից կանչեց. «Դու ինձ լսու՞մ ես»: «Հեռախոսի մոտ»՝ նորից նշանակալիորեն ասաց նա: Նա լավ չգիտեր, թե ինչպես խոսել հեռախոսով: «Ինչպե՞ս ես»՝ հարցրեց մայրը: Զոյա Ալեքսեևնան կանգնել ու սեղանի վրա ինչ-որ թղթեր էր կարգի բերում: Երևում էր, որ նա դժգոհ է, որ աշակերտն այդքան երկար զբաղեցնում է տնօրենի հեռախոսը: «Դու այդտեղ ինչ-որ բան ուտու՞մ ես»՝ ճնշված հարցրեց մայրը: «Այո, այո»՝ ասաց նա և իբր մորը պատասխանելով, և միաժամանակ կարծես ոչինչ չլսելով խոսափողի մեջ: Մայրը հեռվից կանչեց. «Գուցե այցելես ինձ: Այստեղ բոլորի մոտ ...»՝ նա ոչ թե բղավեց, այլ կարծես շնչակտուր եղավ: «Այո՛, այո, իհարկե, իհարկե,- քիչ անց արձագանքեց նա:- Դե լավ, ցտեսություն, թե չէ քառորդային, տարեկան գնահատականներ են դնում ...»՝ ավելացրեց նա: «Ինձ արդեն վիրահատել են,- շտապեց մայրը:- Ես այստեղ շատ արյուն եմ կորցրել, հասկանում ես, բայց ամեն ինչ կարգին է: Ամեն ինչ կարգին է»՝ բղավեց մայրը և այդ պահին տղայի կոկորդում կարծես մի չորություն պայթեց, ու նա ամբողջությամբ ջղաձգվեց, որպեսզի լաց չլինի: «Ամեն ինչ լավ է լինելու»՝ ասաց նա: «Ամեն ինչ կարգին է,- ջերմությամբ կրկնեց նա, ներելով մորը:- Ես կգամ քո հետևից ու կտանեմ քեզ այդտեղից, գրողի ծոցը»: Նա դրեց խոսափողը ու արագ շրջվեց հե-

ռանալու, որպեսզի չտեսնի Զոյա Ալեքսեևնային: Ինչ-որ բան ցնցեց նրան, գուցե սեփական բարությունը: Դրանից հետո երկար ժամանակ նա թեթևություն ու խանդաղատանք էր զգում, նա թույլ չէր տալիս մորը վեր կենա ու մի անգամ ինքը գնաց դեղատուն բամբակ գնելու, իսկ սննդամթերք գնում էր ամեն օր: Մայրը չէր կպնում տղային քնքշություններով ու բացատրություններով, այդ ժամանակն արդեն անցել էր, նա արդեն սովորել էր դրան: Մայրը լուռ պառկում էր փորի վրա կամ մեջքի, գլուխը թեքելով տղայի կողմը: Նա աչքերով հետևում էր տղային, ինչ էլ որ անելիս լիներ սենյակում, և միայն հազվադեպ բարձրացնում էր ձեռքն ու մազերը հարդարում ականջների հետևը:

Հետո նա կազդուրվեց ու սկսեց քայլել, որպեսզի տղային գոնե երկրորդ հերթով ուղարկեր պիոներական ճամբար, սակայն որդին ասաց, որ չի գնա ոչ մի դեպքում: Մայրը դադարեց այդ մասին հոգալուց, իսկ երեկոները կամացուկ հեռանում էր տնից, դռան առաջ չխկացնելով պայուսակով: Դուրս գալուց առաջ նա միշտ ստուգում էր՝ արդյո՞ք բանալի ունի:

Նա հիմա, ինչպես սովորաբար, մանր-մունր առիթներով չէր խոսում: Սակայն երբեմն նա մոռանում էր ամեն ինչի մասին, նրա հավերժական լարվածությունը ցնդում էր ինչ-որ տեղ, նա խոհանոցում քթի տակ դլեն-դլեն էր անում իր կարճ ձայնով. «Ու միայն այն... կողմով... ուրիշի հետ... հանդիպման»:

Դա սովորաբար լինում էր լավ եղանակին, արևոտ օրերին, կիրակի առավոտյան: Նա պատուհաններից քաշում էր վարագույրները, անկողիններից սավաններն ու բարձերի երեսները եւ ամբողջ կույտը ձեռքին գնում էր լվացք

անելու: Իսկ տղան այդ ժամանակ, ենթարկվելով այն նորին, որ ծնվել էր իր մեջ վերջերս, բոկոտն լվանում էր հատակը՝ անվարժ տրորելով շորը:

Սակայն այս կիրակի նա հատակը չլվաց, որովհետև հատակը նոր էին ներկել, իսկ մինչ այդ նա մոր հետ Աստծո մի ամբողջ օր քերել ու լվացել էր այն: Բայց նա այդ պատճառով չէ, որ չլվաց հատակը: Անգամ եթե հատակը կեղտոտ ու չներկված լիներ, միևնույնն է, նա այդ անիծված կիրակի, երբ ինքն իրեն կոխկրտեց՝ բարձրաձայն արտաբերելով Նատաշա Կանդաուրովայի անունը, չէր լվանա հատակը, այլ բերանը կախ դուրս թռավ աստիճանավանդակ, որպեսզի քթի տակ երգի. «Նա ..ա», իսկ իրականում շարունակի ձգել «Կա ... ա...»...

Մայրը կեղտոտ ամանեղենի շուրջ նստած մնաց ոչ այն պատճառով, որ խիստ հուզված էր կամ նրան տխրեցրել էր որդու խոստովանանքը, որ ինքը Նատաշա Կանդաուրովա անունով ընկերուհի ունի: Ինքն իրեն անունը ոչինչ չէր նշանակում. դեռ այն ժամանակ, երբ նա վեցօրյա մանկապարտեզում էր, մայրն ամեն շաբաթ նրա մոտ գալով՝ հարցնում էր՝ ու՞մ հետ ես ընկերություն անում, և նա լրջորեն պատասխանում էր, որ Սվետլանա Յագոդինինայի ու Լենա Պերովայի հետ. մայրը մինչ այժմ հիշում էր այդ անուններն ու ազգանունները, որոնք կրկնվում էին յուրաքանչյուր կիրակի: Դրանք բացարձակապես ոչինչ չէին նշանակում նրա համար: Մայրը պարզապես ուրախանում էր, որ որդին ընկերություն ունի, որ նա մենակ, միայնակ չի պառկում քնելու քսանվեց հոգու համար նախատեսված ննջասենյակում կամ գնում ճաշարան: Նա ամեն անգամ ստուգում էր՝ արդյո՞ք շարունակում է

որդին իր ընկերությունը Սվետայի ու Լենայի հետ:

Այնուամենայնիվ, տղան ամեն անգամ կառչում էր մորից, երբ նա հեռանում էր մանկապարտեզից՝ թողնելով նրան մենակ: Երբեմն մորը հաջողվում էր աննկատ հեռանալ և դաստիարակչուհիները հետո պատմում էին, կամ պատահում էր մոռանում էին պատմել. չէ՞ որ մի ամբողջ շաբաթ էր անցնում, որ տղան փնտրում էր մորը պահարանների հետևում կամ դաստիարակների զուգարանում, որովհետև մայրը նրա ներկայությամբ մի անգամ մտել էր այդ զուգարանը ու փակվել այնտեղ, իսկ տղան վախից սկսել էր հուսաբեկ հրել դռնակն ու քաշել կողքից ցցված մեխը, բռնակին բոյը չէր հասնում: Հետո նա բազում անգամներ համբերատար կանգնում էր դաստիարակների զուգարանի դռան առաջ ու սպասում մինչև դուռը բացվի: Կամ գիշերային դայակները պատմում էին, որ նա նորից գիշերը կանգնել էր անկողնու մոտ ու լաց եղել, և ոչ մի կերպ չէր ուզում պառկել քնելու:

Մի անգամ, սակայն, ծնողական օրին, ամռանը, երբ մայրը առանձնապես շլացրեց իր երկնագույն զգեստով ու եռաշերտ մարմելադի տուփով, նա կորցրեց վերահսկողությունն իր նկատմամբ ու ձեռքից բաց չէր թողնում մոր երկնագույն զգեստի փեշը, չնայած անգամ նստել էր նրա ծնկներին: Որդին այդ օրը առանձնապես նվաղ ու գունատ թվաց մորը, նա հազիվ էր ուտում երշիկով հացը և հանկարծ մոր ծնկներից շրջվելով դեպի նա՝ ասաց. «Մայրիկ, իսկ ես հիշում էի քեզ»: Մյուս ձեռքով նա բռնել էր մոր զգեստից, իսկ յուղոտված բերանը փայլում էր:

Երբ հնչեց ճաշի զանգը ու բոլոր ծնողները իրար խառնվեցին աստիճանների մոտ, որոնցով բարձրանում էին

երեխաներն իրենց նվեր-փաթեթները վերցրած, նա հասկացավ, թե դա ինչ է նշանակում ու սկսեց հաց ու երշիկ փսխել: Մայրը հանգստացրեց նրան, սեղմեց իրեն ու ճոճեց ծնկների վրա, և տղան հավատաց մորը, որ նա չի գնա: Սակայն դաստիարակչուհին արդեն հավաքել էր բոլոր երեխաներին լվացարանի մոտ, տաղավարի մոտով տարան լվացած մառլյայով ծածկված դույլը՝ մեջը երկրորդ ճաշատեսակը, ծնողները լվացասենյակի պատուհանից օդային համբույրներ էին ուղարկում ու շտապելով հեռանում տաղավարի մոտով, և այդ ժամանակ մայրը խորամանկության դիմեց: Նա ասաց. «Դու վաղուց մայրիկի համար ծաղիկներ չես հավաքել»: Տղան գլխով արեց, բաց թողեց մոր զգեստի փեշը ու դուրս եկավ տաղավարից: «Վարած ծաղիկները չպոկե՛ս, այլ միայն նրանք, որոնք ինքնուրույն են բուսնում»,- կանչեց նա տղայի հետևից: Նա երբեք բաց չէր թողնում որդուն դաստիարակելու հնարավորությունը, ափսոս միայն, որ նրանք հազվադեպ էին միասին լինում, և տղան մորն այնքան էլ չէր լսում, այլ այդ կարճ ժամանակը օգտագործում էր միայն, որ լիներ նրա կողքին: Նա գիշերներն էլ վեր էր կենում, վեհերոտ կանգնում իր ծալովի անկողնու մոտ, իսկ հետո արագ վազելով հասնում մոր անկողնուն, վերմակի վրայով վեր մագլցում ու անհամարձակ շունչ քաշում, մինչև մայրն ասում էր նրան, որ պետք է գնա իր տեղը: Սակայն նա, այնուամենայնիվ, մագլցում էր մոր մոտ, և մայրը ծածկում էր նրան վերմակով ու ամբողջ գիշեր հոգ տանում նրա մասին, այնպես, որ մայրը կարգին չէր քնում և հաճախ առավոտյան հայտնվում էր որդու ոտքերի մոտ կուչ եկած, որպեսզի նրա համար հարմար լիներ: Քնի մեջ մայրը չէր մտածում,

այլ պարզապես այնպես էր անում, որ տղայի համար լավ լինի: Իսկ արթմնի նա հասկանում էր, որ պետք է անել ոչ թե այնպես, ինչպես նրան հարմար է, այլ այնպես, ինչպես հարկն է: Եվ ահա տղան իջավ խոտերի վրա ու կորավ թփի հետևում, իսկ նա արագ բարձրացավ նստարանից, վազեց մինչև դարպասները ու ծանրորեն գնաց դեպի ավտոկայան: Նա չկանգնեց ցանկապատի հետևում ու չլսեց, թե ինչպես տղան կվերադառնա տաղավար, լուռ կքայլի տախտակե հատակի վրայով, իսկ հետո կշտապի տուն ու շարունակ կկանգնի դաստիարակների զուգարանի դռան առաջ ու կքաշի դռան մեխը…

Իսկ հաջորդ անգամ, երբ մայրը եկավ տղայի հետևից, ընդմիշտ նրան տանելու ուրիշ մանկապարտեզ, ծաղիկների հետ դեպքից անցել էր արդեն մեկ ամիս: Մայրն արդեն մոռացել էր ծաղիկների դեպքը, նա էլ էր, երևի, մոռացել: Բայց տղան մոր գալուն չուրախացավ: Նա համբերատար կանգնած էր մինչև մայրը կոճկեց նրա բոլոր կոճակները, կապեց կոշիկների քուղերը և գլխարկի երիզահանգույցները: Մայրը համբուրեց նրան, նրա այտը սառն էր, դյուրաթեք: Նա անցողակի նայեց մորը, նրա աչքերը նայում էին հոգնած, ասես նա ինչպես հարկն էր չէր պահում բիբերը:

Բայց մայրն ի՞նչ աներ: Նա այդ ժամանակ դեռ տակավին երիտասարդ էր: Եթե դա հիմա լիներ, նա գլխիվայր կկանգներ, միջից հազար կես կդառնար, բայց չէր խաբի նրան ծաղիկների հետ կապված ու չէր հեռացնի նրան իրենից, երբ գիշերը նա չգիտես ինչից վախենալով՝ գալիս էր իր մոտ: Սակայն տղան, տարօրինակ է, ծաղիկների դեպքը բոլորովին չէր հիշում: Այդ դեպքը կարծես

անմիջապես ցնդել էր նրա հիշողությունից, կարծես այն չի էլ եղել: Տղան երբեք չէր հիշատակում այդ դեպքը, իսկ մայրն էլ երբեք այդ մասին նրան չէր պատմում, չնայած բնականից հաղորդասեր էր ու հոգով պարզ: Բայց այդ դեպքը նա երբեք չէր հիշեցնում, միայն ինքը միշտ հիշում էր ու ինքն իրեն նախատում:

## Լյուդմիլա ՊԵՏՐՈՒՇԵՎՍԿԱՅԱ

### Հեղինակի եւ նրա ստեղծագործության մասին

Արձակագիր, դրամատուրգ, բանաստեղծ Լյուդմիլա Ստեփանի Պետրուշևսկայան ծնվել է 1938թ. մայիսի 26-ին, Մոսկվայում: Նրա պապը խորհրդային լեզվաբան, պրոֆեսոր-արևելագետ Նիկոլայ Յակովլևն էր, ԽՍՀՄ մի շարք ժողովուրդների գրերի ստեղծող: Պատերազմի տարիներին ապրել է բարեկամների մոտ և Ուֆա քաղաքի մանկատանը:

1961թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի լրագրության ֆակուլտետը: Աշխատել է որպես մոսկովյան թերթերի թղթակից, խմբագրությունների աշխատակից, հեռուստատեսության խմբագիր:

1960-ական թվականներին սկսել է գրել բանաստեղծություններ, պատմվածքներ: Առաջինը տպագրվել է «Դաշտերի միջով» ստեղծագործությունը, որը լույս է տեսել 1972 թվականին, «Ավրորա» հանդեսում: Դրանից հետո Պետրուշևսկայայի արձակը չի տպագրվել ավելի քան տաս տարի:

Մասնագիտական թատերախմբերը Պետրուշևսկայայի պիեսները սկսել են բեմադրել 1980-ական թվականներից: Այդ ժամանակից Պետրուշևսկայայի անունը հայտնի դարձավ ընթերցողների լայն շրջանակներին: Տպագրվե-

ցին նրա արձակ ստեղծագործությունները՝ «Անմահ սեր. պատմվածքներ»(1988), «XX դարի երգերը. պիեսներ»(1988), «Կապույտ հագած երեք աղջիկները. պիեսներ»(1989), «Էրոս աստծո ճանապարհով. արձակ»(1993), «Տան գաղտնիքները. պատմվածքներ»(1995), «Աղջիկների տունը. պատմվածքներ»(1998) և այլն:

XXI դարի սկզբից Պետրուշևսկայան հրատարակում է պատմվածքների ու հեքիաթների նոր հավաքածուներ: Գրում և ցուցադրում է նկարներ, մասնակցում է տարբեր գեղարվեստական նախագծերի:

2013թ. դարձել է Օլեգ Տաբակովի ամենամյա մրցանակի դափնեկիր՝ մշակույթի ասպարեզում ունեցած ձեռքբերումների համար, ստանալով «Ռուսական դրամատուրգիայում ներդրման համար» մրցանակը:

Լյուդմիլա Պետրուշևսկայան այրի է, ունի երեք երեխա. որդիները՝ Կիրիլ Խառատյանը և Ֆյոդոր Պավլով-Անդրեևիչը լրագրողներ են, դուստրը՝ Նատալյա Պավլովան, զբաղվում է երաժշտությամբ:

Պետրուշևսկայայի պատմվածքների և պիեսների գործողությունները տեղի են ունենում առօրեական, հեշտությամբ ճանաչվող հանգամանքներում. ամառանոցային տնակում, աստիճանահարթակում և այլն: Հերոսուհիների անհատականություններն ի հայտ են գալիս գոյության համար հյուծիչ պայքարի ընթացքում, որ նրանք վարում են կյանքի դաժան պայմաններում: Պետրուշևսկայան ի ցույց է դնում առօրեական կյանքի անհեթեթությունը, որի պայմաններում որոշվում է նրա կերպարների բնավորությունների ոչ միանշանակ լինելը:

Հեղինակի լեզուն զուրկ է այլաբանություններից, երբեմն չոր ու կցկտուր է: Պետրուշևսկայայի պատմվածքներին բնորոշ են «նովելիստական անսպասելիությունը»

(Ի. Բորիսովա): Այսպես, օրինակ, «Անմահ սեր»(1988) պատմվածքում հեղինակը մանրամասն նկարագրում է հերոսուհու կյանքի դժվար ճանապարհը, ընթերցողի մոտ տպավորություն ստեղծելով, թե իր գլխավոր նպատակը կենցաղային դժվարությունների նկարագրությունն է: Սակայն Ալբերտի՝ հերոսուհու ամուսնու անսպասելի ու ազնվական արարքն այդ «պարզ կենցաղային պատմության» ավարտին առածի իմաստ է հաղորդում: Պետրուշևսկայայի կերպարներն իրենց դրսևորում են համապատասխան կյանքի այն դաժան հանգամանքներին, որոնցում ստիպված են ապրել:

Սակայն Պետրուշևսկայայի հերոսներից ոչ մեկը հեղինակային լրիվ պարսավանքի չի ենթարկվում: Կերպարների հանդեպ այդպիսի վերաբերմունքի հիմքում ընկած է հեղինակին բնորոշ «ժողովրդականությունը... որպես էթիկա և էսթետիկա, և՛ մտածողության միջոց, և՛ գեղեցկության տիպ»:

Պետրուշևսկայայի պատմվածքներն ու պիեսները թարգմանված են աշխարհի շատ լեզուներով, դրամատիկ ստեղծագործությունները բեմադրվում են Ռուսաստանում և արտասահմանում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ես սիրում եմ քեզ.....5
Հրեուհի Վերոչկան.....16
Ո՞վ պատասխան կտա.....21
Շներով տիկինը.....25
Կյանքը թատրոն է.....31
Բոհեմ.....41
Օ՜ երջանկություն.....45
Հանգստապուրակի դիցուհին.....52
Գտիր ինձ, երազ.....75
Շոպեն և Մենդելսոն.....93
Անմեղ աչքեր.....98
Կյանքի իմաստը.....106
Ինչպես Պենելոպան.....111
Որքան շատ բան գիտեն կանայք.....136
Էլեգիա.....153
Վաթեռլոյի կամուրջը.....164
Ինչպես ծաղիկը այգաբացին.....177
Մութ ճակատագիր.....196
Հայր ու մայր.....200
Էրոս աստծո ճանապարհով.....208
Սիրելի կինը.....236
Անմահ սեր.....241
Երբեք.....248
Տան գաղտնիքը.....262
Շատրվանով տունը.....278
Լեռան վրայից.....290
Ընկածը.....297
Աստվածածնի դեպքը.....305

Լյուդմիլա Պետրուշևսկայա.
*Հեղինակի եւ նրա ստեղծագործության մասին.....319*

ԼՅՈՒԴՄԻԼԱ
ՊԵՏՐՈՒՇԵՎՍԿԱՅԱ

# ՄԵՐ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՌԵՔՎԻԵՄ

## պատմվածքներ

Թարգմանությունները ռուսերենից՝
Գայանե ԲԱԽՏԱՄՅԱՆ

Ստեփանակերտ 2016

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Գ. Բաղդասարյան
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 20.5 պպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան

**«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»- 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015

Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 1) - 2016
Ցու Ջիան. «Անձրևից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
Հեռ.: +37497252323